



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСКУССТВ

Н. Ц. ПАПУХЯН

НАРОДНОЕ ЗОДЧЕСТВО
СЮНИКА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1972

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԳԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ե. Ծ. ՊՈՊՈՎԻՑ ՅԱՆ

ԱՅՈՒՆԻՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ

A/3908
III



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ Գ.Ա. ՀՐԱՄԱՆԱԿ 201Թ ՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1972

Ուսումնասիրության նյութը Սևանի ավագանից
մինչև Արաբսի Հռվիտը տարածող շրջանների ժո-
ղովրդական ինքնատիպ ճարտարապետությունն է։ Հա-
զարամյակների խորքից եկող այդ ժառանգության
նյութական մնացորդները հեղինակի կողմից շա-
փաքրվել, լուսանկարվել և մի շաբթ օժանդակ աղ-
բյուրների օգնությամբ վերլուծության են ենթարկվել։
Շոշափված են հին քաղաքների, ավանների և գյուղերի
կառոցապատման, տարրեր բնույթի շենքների ու
շինությունների կառուցվածքալին, համադրվածքային
և գեղարվեստական առանձնահատկությունները։ Պատ-
մա-աղղաղական, արվեստագիտական հարցերի կազ-
քին արդի ճարտարապետության համար առաջ են
քաշված մի շաբթ գործնական ինդիրներ։

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի մշակութաին ժառանգության մեջ ուշագրավ տնդ է զրավում ժողովրդական ճարտարապետությունը: Այն ստեղծվել, աստիճանաբար կատարելագործվել ու փոխանցվել է սերունդից սերունդի: Այդ է պատճառը, որ մեզ հասած շինություններն ունեն ընդհանրացած ձևեր, ուր լայնորեն օգտագործված են տեղական շինանյութերը: Ժողովրդական ճարտարապետությունը արտացոլելով ժողովրդի նյութա-անտեսական միջավայրը, նրա սոցիալական, կենցաղային և մշակութային հարաբերությունները՝ այն արժեքավոր փաստական ազբյուր է պատմագրական-արվեստագիտական տարրեր բնագավառների համար: Միաժամանակ ընդգրկելով շենքերի և նրանց համակառուցցների ստեղծումը՝ այն կապված է տեխնիկական, քաղաքավայրաբարական և տնտեսական բնույթի մի շարք գործնական խնդիրների հետ:

Մոնումենտալ ճարտարապետությանը հատուկ ամրության, տնտեսականության, հարմարավետության, գեղեցկության տարրական սկզբունքները նախ ծագել և զարգացել են ժողովրդական ճարտարապետության մեջ: Վերջինս կապված լինելով զանգվածային շինարարության հետ, անտարակույս սիխտի հիմք հանդիսանար անցյալի քաղաքացիական և պաշտամունքային կառուցվածքների ճարտարապետության շատ ձերերի ստեղծման և զարգացման համար: Հետո հետեւ ավելի ստուգ են դառնում ժողովրդական ճարտարապետության փոխանցվող սկզբունքներն ու յուրահատկությունները, որոնց շնորհիվ հայկական մոնումենտալ ճարտարապետությունը ձեռք բերեց նշանակալից առաջադիմություն:

Այս հարցերը և առհասառակ ժողովրդական ճարտարապետությունը, մասնագիտական ուսումնասիրության նյութ դարձան հիմնականում սովորական իշխանության տարիներին: Մինչ այդ գիտական աշխարհն անտեսում էր դրանց նշանակությունը հայկական ճարտարապետության առաջացման և զարգացման հարցերի պարզաբանման համար, ուսումնասիրում էին լոկ մոնումենտալ կառուցցներ, արհեստականորեն դրանք համեմատության մեջ զնելով այլ երկրների ճարտարապետական նմուշների հետ: Այդ պայմաններում այնքան էլ զարմանալի չէ, որ գիտնականներից շատերը, հաշվի շառնելով տեղական մշակութիվ ինքնատիպությունն ու ինքնուրույնությունը աշխատում էին օտարամուծ հատկանիշներ գտնել մշակութիվ այս բնագավառում և երեխն, նույնիսկ, այն ամբողջությամբ խարսխել Արևմուտքի կամ Արևելքի քիչ թե շատ հոչակ ստացած մշակութիների վրա:

Ժողովրդական ճարտարապետությունն այժմ ուսումնասիրվում է ու

միայն որպես պասսիվ արվեստագիտական-պատմական երևութ, այլ իբրև ժողովրդի շինարարական-ճարտարապետական բազմազարյա փորձ: Հայաստանի բնական պայմանների բազմազանությունը թելաղում է հատուկ ուշադրությամբ վերաբերք ժողովրդական ավանդություններին, որոնք առավել հստակ կարող են ներկայացնել տվյալ վայրի կառուցողական պահանջների այս կամ այն կողմքը: Այս իսկ նկատառություններով ձեռնարկել ենք ժողովրդական ճարտարապետության տեղական առանձնահատկությունների ուսումնասիրությանը անձամբ կատարած չափազությունների, լուսանկարուների, նկարների, ազգագրական, հնագիտական-պատմական, արխիվային նյութերի և ազգաբնակչության մեջ անցկացրած հարցուփորձի հիման վրա: Աշխատության նյութերը վերաբերում են Հայկական ՍՍՀ հարավ-արեւելյան շրջաններին, որոնք անցյալում Մյունիքի հիմնական մասն են կազմել:

Մյունիքը տարածվել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասում և աշխարհագրական տեսակետից ներկայացրել խստորեն սահմանագործված մի լեռնային երկիր: Արևմուտքից այն եղերված է եղել Գեղամա, Վայոց ձորի և Զանգեզուրի լեռնաշղթաներով, արևելքից՝ Սևանի լեռնաշղթայով, Ղարաբաղի բարձրավանդակով և Հագարու գետի հովտով: Մյունից աշխարհի մեջ են մտել նաև որոշ տարածություններ Զանգեզուրի լեռնաշղթայի և Արաքսի հատման ու Հագարու գետի աշախինյա մասերից: Քրային ցանցը բավականաշափ խիստ է և առատ, գետերը պատկանում են Արաքսի ավազանին կամ թափվում են Սևանա լիճը: Սևանի ավազանից զուրս նրանք մեծ անկուսներ ունեն և հոսում են անզնդագասոր կիրճների միջով: Երկիրն ակրոսող ձորերի ու հովտների անզերը շարքերը զուգակցվելով ապառաժների, ծառաստանների, անտառների ու մարգագետինների հետ, կազմում են լեռնաշխն բնության առինքնող ներգաշնակություն: Արևմուտքից-արևելք ճգված բնական սահմաններն այդ երկիրը բաժանում են փղիկական առանձնահատկություններով օժտված լեռնագավառների, որոնք նաև վարչական միավորներ են հանդիսացել:

Մյունիքը Մեծ Հայքի տասնեհինգ աշխարհներից (նահանգներից) մեկն է եղել: Նրան սահմանակից էին Այրարատ, Վասպուրական, Արցախ, Ուտիք և Գուգարք աշխարհները: Արտաշես Առաջինի (մ.թ.ա. 189—160թթ.) թագավորության կազմում Մյունիքը արգեն իր կարևոր տեղն ուներ և հիշյալ ժամանակաշրջանից մինչեւ արաբական տիրապետությունը (7-րդ դար) գտնվում էր Մյունից հպարազուր նախարարական տոհմի իշխանության տակ: Արաբական տիրապետության մեջ, թեպետ անմիջականորեն ենթակա էր Մյունից իշխաններին:

Բագրատունիների ժամանակ Մյունիքը մասնատվում է: 9-րդ դարի վերջերին Մյունից իշխանների տիրապետության տակ երկիրը բաժանվեց երեք մասի: «Մյունիքի մեծ մասը եղեցիս կենտրոնով պատկանում էր Փիլիպեի որդի Աշոտ Գահներեց իշխանին: Բաղք գավառը Կապան կենտրոնով՝ Զագիկ իշխանին, իսկ Գեղարքունիքը՝ Կոթ կենտրոնով՝ Գրիգոր Սուփանի տիրությն էր կազմում»¹: 10-րդ դարից Գեղամա լճի ավազանը ենթարկվեց Բագրատունիներին:

1 թ. Առաքելյան, Թաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., Երևան, 1958, էջ 90:

970 թ. երկրի հարավում ծնունդ առավ և շուրջ երկու հարյուր տարի դրություն ունեցավ Սյունիքի թագավորությունը, որն իր ամենածաղկուն շրջանն ապրեց 11-րդ դարում: Մայրաքաղաքը զարձավ Կապանը, և նրա անոնով էլ վերակոչվեց Սյունիքի թագավորությունը:

1170 թ. Բաղաբերդի անկումով սկսվեց սելջուկների կարճատև տիրապետությունը: 13-րդ դարի սկզբներին Հայկական այլ հողերի հետ վրացական պետության կազմի մեջ է մտնում նաև Սյունիքը, ուր իրենց տիրապետությունն են Հաստատում Պոռչան և Սյունյաց Օբբելլան իշխանները: Վերջներս կարողանում են պահպանել իրենց տիրապետությունը նաև մոնղոլական պետության կազմում, որպես բացառություն մեծ Ղանից ստանալով ներքին լայն ինքնավարության—ինչուական իրավունք:

Հետագա ժամանակներում (մինչև 19-րդ դար) շնորհիվ իր աշխարհական գիրքին, սովորություններին, իշխող վերնախավի տեղական ներկայացուցիչների գոյությանը Սյունիքը ազգագրական և մշակության առողջությունը:

Հայկական իշխանության և տեղական խոշոր ազնվականների վասալական տիրապետության վերացումից հետո տնտեսական կյանքը անկում ապրեց թե՛ Սյունիքում և թե՛ ամբողջ Հայաստանում: 14—16-րդ դր. ընթացքում խոշոր բնակալարերը քայլայիկով հասան գյուղական մակարդակի, ասպատակող հրոսակների հաճախակի ու տեսական ոտնձգությունների հետևանքով երկիրը ընկավ ողբերգական կացության մեջ, բնակչության զգալի մասը ոչնչացավ կամ զիմեց արտագաղթի: 16-րդ դարում հաստատված պարսկական տիրապետությունը թե՛ կոքր ինչ աշխուժացրեց տնտեսական կյանքը, բայց ըստ Հովիթյան շփոխեց երկրի ներքին գործությունը:

16-րդ դարի երկրորդ կեսից Սյունիքի բնակավայրերից փոքր ինչ զարգացան Գավառն ու Կյորեսը (Գորիս): 17-րդ դարի կեսերից զգալի շափով աշխուժացան առևտուրական հարաբերությունները, սակայն տնտեսական հետամնացության և խանական բռնությունների զժնդակ պայմաններում այդ աշխուժացումը բռնու վերելքի շնանգեց, երկրի ներսում նույնիսկ շարունակվում էր տնտեսական քայլայումը՝ նայիրների, մելիքների ու խաների միջև տեսական ընդհարումների պայմաններում: Հայ վաճառականն իր գործունեությունը տեղափոխեց մայր երկրից գուրս, այնտեղ, որտեղ նպաստավոր պայմաններ կային տնտեսական հարաբերությունների զարգացման համար: Եազ Աբրասի ժամանակ ստեղծված նոր Զուլան անգամ շկարողացավ տոկալ ուազմա-ավատական ճնշմանը և իր նշանակությունը կորցրեց 18-րդ դարի երկրորդ կեսին: Այդպիսի ճակատագիր ունեցավ նաև Ագուրիսը: Երևանի ամբողջ խանության մեջ միակ բաղաքը Երևանն էր, որի արտագույթունն ու առևտուրը խիստ սահմանափակ բնույթ ունեին: Ուսումնասիրվող շրջաններում առավել մեծ բնակավայր էր Մեղրին, որն այնուամենայնիվ բաղաք շղարձավ:

Ժողովրդական հարտարապետության մեջ էական փոփոխությունների պատճառ են Հանդիսացել 19-րդ դարի գաղթերը: Այս տեսակեափից նշանավոր է 1826—1827 թթ. ուսւ-պարուկական պատերազմի ժամանակ ստեղծված շարժումը: Պարսկաստանից գաղթեցվում է 45—50 հազար մարդ, որոնք տեղավորվում են Երևանի ու Նախիչևանի երեսմնի խանության սահմաններում, մասամբ նաև Սյունիքում և Արցախում: Գաղթականների Սյունիք

Եկող մասը գերազանցապես բնակություն է հաստատել ներկայիս եղեղնաձորի, Ազգպետովի, Սիսիանի և չնչին մասով այլ շրջաններում: Մյուս խոշոր տեղաշարժը տեղի ունեցավ 1828—1829 թթ. ուստի թուրքական պատերազմից հետո: Գաղթականական այս հոսանքից մեղ հետաքրքրում է այն հատվածը (շուրջ 4200 բնակչություն) որ բնակեցվեց Սևանա լճի ավազանում: Հարկ է նշել սակայն, որ գաղթականական այս հոսանքի նախօրյակին Բասարգեար և Սկունք գյուղերում արդեն իսկ սկսել էին բնակություն հաստատել Գիաղինից և այլ կողմերից եկած խմբեր: Այս ժամանակվանից առաջացան Գեղարքունիքի, Վայոց ձորի և Զանգեզուրի հյուսիսային մասերի, բուն Զանգեզուրի և Մեղրու ազգագրական շրջանները:

Վերաբնակեցումների դրեթե բոլոր գեղքերը կատարվել են ցարական կառավարության գործոն մասնակցությամբ և գիտությամբ: Մալականների՝ ուստի աղանդագործների, փոքր գաղութներ են ստեղծվել Սևանա լճի հյուսիսային կողմերում և այժմյան Սիսիանի շրջանի Բազարաց գյուղում (երկուսն էլ գյավոր ճանապարհների վրա՝ ուազմական տեսակետից կարեոր գիրքերում): Բազարքենտի մալականները գաղթեցվել են 1877 թ. Շուշու Պալուճա գյուղից և ընդամենը 81 տուն են եղել²: Հետագայում դրանք Բազարչափ մոտ կառուցել են Ցորիսովկա գյուղը:

Մյունիքի գյուղերի և առանձին բնակելի համակառուցցների կառուցապատման հարցերի համար որոշիչ նշանակություն են ունեցել մարդկանց կենցաղային հարաբերությունները: Գյուղական համայնքն իր գյուղունք պահպանել է գարեր շարունակ, հակառակ ներքին սոցիալական փոփոխություններին, որով և պայմանավորված է Հայաստանում սոցիալ-տնտեսական հարաբերությունների յուրահատկությունը: Սոցիալական-կենցաղային դրվագքի այս ավանդականությունը մեղ հնարավորություն է տալիս որոշ գաղափար կազմել ժողովրդի անգամ հեռավոր անցյալի ապրելակերպի և հատկապես ճարտարապետության մասին³:

Հին հայկական գյուղական համայնքները մեծ մասամբ արյունակցական-ազգակցական խմբավորումներ են եղել: Տոհմացելական այս համակեցություննը բավականաշափ ուժեղ է եղել թուրքահայաստանում, որտեղ կյանքի անապահովությունն ու մշտական կողովուները հարկադրել են մարդկանց համախմբված ապրել: Արդ է պատճառը, որ թուրքահայ գաղթականներն իրենց հետ են բերել ալդ համակեցության սովորությունը⁴: Արյունակցական բավականաշափ մեծ խմբավորումներ ներկայացնող գերդաստանները աշխատանքում և հարկային համակարգում ձանաշվամ էին իրեկ միանական, ամբողջական միավոր՝ օգախ, ծովս, տուն, երդ անվանումներով: Միանգամայն պարզ է, որ այս անվանումները կապված են գերդաստանը պատսպարող բնակարանային համակառուցցի հետ, ուր համագրվածքային և կենցաղային նշանակությամբ գերիշխում է երդիկավոր սենյակը: Պատահական չէ, որ մեծ զիստաները, մինչև 19-րդ դարի վերջերը, պատսպարում էին նույնիսկ մինչև 50—60

² Տե՛ս Յ. Խալայան, Սիսիան, «Ազգագրական հանգիս» (Երկրորդ տարի), 3-րդ գիրք, Տ. 1, 1898, էջ 198:

³ Տե՛ս Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, Երևան, 1939, էջ 39. Նույնի, շին Հայաստանի կուսարան, Հայ. 3-րդ, Երևան, 1941, էջ 68, 69, 155:

⁴ „Народы Кавказа“ (этнографические очерки), том II, М., 1962, стр. 524.

Հոգուց կազմված կերպաստաններ⁵: Ա. Խախանովը անցյալ դարի վերջերին նկարագրել է Վարդենիկում ապրող և մի ճարկի տակ պատսպարվող 48 հոգուց բաղկացած ալյափիսի մի գերպաստան⁶:

Պարսկաց զաղթականների, ինչպես և բնիկների մոտ թեև գերգաստաններ զոյլություն են ունեցել, բայց արտակարգ մեծ տների բացակայությունը մեղ ենթադրել է տափս, որ նրանք զերացանցապես պատսպարվել են իրար կից բնակարանային համակառուցներում. Թերևս գերգաստանների ավելի վաղ բացարարություն էր պատճառը, որ բնիկների մոտ անհետացել են նաև մեծ բնակարաններ:

Այսպիսով Սյունիքի ճռով պրդական ճարտարապետությունն ունեցել է բնական, հասարակական-պատմական բավականաշափ յուրօրինակ և ինքնամփոփ միջազգայր: Վայրի բնությունը դարեր շարունակ այստեղի լեռնականների հուսալի պատվարը հանգիստանալով՝ նրանց համար տնօրինել է տնտեսական-քաղաքական հաստուկ ապրելակերպ, ուղեկցված կենցաղային-նյութական մշակույթի ավանդականությամբ: Այստեղ նվազողների հետ եկել ու գնացել են բաղմաթիվ օտարազգիներ, որոնք բնիկ տարրի նկատմամբ ավելի ցածր աստիճանի վրա լինելով և ավելի թշ աղերս ունենալով նրանց գարերի լնիթացքում արմատացած կենցաղային բարերի հետ, նյութական մշակույթի բնագավառում նկատելի հետքեր չեն թողել⁸: Միջազգային տնտեսական կապերն ու 19-րդ դարի գաղթականական շարժումներն են միայն իրենց կնիքը գրել երկրի մշակութային կյանքի, մասնավորապես ժողովրդական ճարտարապետության վրա:

⁵ Աղքագրագետ-պատմաբան է. Կարապետյանի կարծիքով այսպիսի մեկ ընդհանուր սենյակում կարող էին ապրել երկու հարյուր և ափելի մարզոց բաղկացած գերդաստաններ: Այդ շի կարող արագածարանական համարվել եթե միջին հաշվով յուրաքանչյուր մարզու համար անգամ 2 քառ. մետր մակերես հաշվենք, որու կամ որ գլխաւունը պարե է, որ 400 քառ. մետր և ափելի տարածություն սնենար: Դվինի կաթողիկոսարանի եռամբեկի դահճանին անզամ այսպիսի տարածություն շի ունեցել (275 քառ. մ), որ մասց դուռական հասարակ տունը (տե՛ս Թ. Կ. Կարապետյան. Արմանակ սեմեյնաց (ծնննա, Երևան 1958, էր 69).

⁶ А. Хаханов. Из жизни армии Новобузетского уезда Эриванской губернии. «Этнографическое обозрение», кн. XVIII 2. М., 1893, стр. 158

⁵ *Ш. Б. Կարայան, Միստա, «Ազգագրական հանդես», 13-րդ գիրը, № 1, Թբիլիս, 1898, էջ 233—235. Г. Чурсин Амрике Зангишвили, оттиск из «Научных записок», том I, под редакцией А. А. Болотникова и Н. М. Степаняна, Тифлис, 1931, стр. 240.*

⁸ Սեղունդիկի արշավանդներից հետո Սյունիքում բնակություն են Հաստատել Ներկային աղբյուջանիների նախնիները, որոնց յուրացը են ներկային շատ սպլիութիներ. Կրանց բնակավայրերը և շնչառությունները տեսականիներից քրիստոնյաց էնցով չեն տարբերվում: Խոհ մասակի տարբերությունները կապատճեն են եղել բոյքուրիկան անհանդիպման և հիսուսների պատճենի մեջ:

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՌՈՒՅՑԱՊԱՏՈՒՄԸ

Բնակավայրերի կառուցապատման խնդիրները բննարկելիս պետք է նկատի ունենալ, որ ժողովրդական ստեղծագործությունը զգալի տեղ է գրավում այդ բնագավառում։ Մասնագիտ ստեղծագործողների դերը սահմանափակվել է մի քանի եկեղեցական, ռազմական և քաղաքացիական բնութիւնների կառուցմամբ։ մինչդեռ աշխատավոր խավին պատկանող և նրա ձեռքերով կառուցված շինությունները՝ զլիավորապես բնակելի տները, ծածկել են բնակավայրերի գերազանց մասը։ Այդ պատճառով էլ կառուցապատման եղանակներն աշքի են ընկել իրենց ավանդականությամբ։ Զնայած գրան, առանց իրարից խիստ մեկուսացնելու կարելի է կառուցապատման որոշակի առանձնահատկություններով՝ տարրերել հնագույն բնակավայրերը, միշնադարյան քաղաքներն ու ավանները, միշնադարյան և հետագա ժամանակների գյուղերը և 19—20-րդ դդ. քաղաքները։

**Ա. ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՈՒ ԱՎԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Մյունիքի տարածքում քաղաքաշինարարության տարրական սկզբունքները դրսևորվել են շատ վաղ։ Ապացուցված է մարդու գոյությունն այստեղ գենու հին քարի դամանակներում։ Սակայն կառուցապատման համակարգերի երկան գալը պատկանում է շատ ավելի ուշ ժամանակների, եթե մարդկային խմբավորումներն անցել են նստակյաց կյանքի։

Բրոնզեզարյան հնագույն բնակավայրեր հանդիսացող բերդշեներն իրենցից ներկայացրել են անմշակ։ մեծ քարերով, առանց շաղախի շարված պարիսպներով ամբացված դժվարամատչելի բարձունքներ, հրվանդաններ ու քարափներ, որոնք իշխում էին շրջապատի վրա։ Պարիսպները դասավրդվել են հաճախ ոչ միայն գագաթի մասում, այլև լանջերի վրա, կազմելով հորիզոնական ուղղությամբ իրար զուգահեռ, երբեմն նաև լանջով վերից վար հատումներ ունեցող համակարգեր։ Հաճախ թամբաձեւ միանալով շրջակա բարձունքներին, բերդշեները հնարավորություն ունեին արհեստական շրամատակարարման համար։ Բնակելի կառուցները տեղավորված են եղել պարսպից ներս, հաճախ նաև դրսում՝ այնքան խիտ դասավորությամբ, որ

¹ Տե՛ս C. Տարձարյան, Պալեոլիտ և Արմենիա, Երևան, 1954; Եոյիի, Նախադարձան համարակությունը Հայաստանում, Երևան, 1967։

Նրանք մեծ մասամբ ընդհանուր պատերով են կցվել իրար; Բազմաթիվ այդպիսի բերդշեներ են եղել Սևանա լճի ավազանում: Առանձնապես նշանավոր է Սիսիանից 2—3 կմ հյուսիսի գանգով Ղոշունդաշ (Ջրաց քար) կոչվող բերդշենը:

Հավանաբար ուշ բրոնզի ու վաղ երկաթի դարաշրջանում պարսպապատվել են նաև բերդշեների արտաքին բնակարանները և ամրոցը գարձել է միջնաբերդ ու հշխանավորի բնակատեղ: Այս տիպի բնակավայրերին հատկանշական է շափաղանց խիտ և անկանոն կառուցապատում՝ արդեն ոչ թե մեկ բաժանմունք ունեցող, այլ բազմապիսի նշանակություն ունեցող մասերից կազմված բնակելի համակառուցներով: Միջնաբերդի շուրջը այսպիսի խիտ համախմբումը թելագրված էր պաշտպանական անհրաժեշտությամբ, որոշակի նշանակություն է ունեցել նաև զգուցատնտեսության հանրային արտադրություն լինելու հանգամանքը: Այդպիսի բերդշեները ուրարտական արձանագրություններում հշշատակվել են որպես քաղաքներ: Դրանց մերձակայքում եղել են գերեզմանոցներ կիկլոպյան բնույթի գամբարաններով: Սևանա լճի ավազանում այդպիսի միծ բնակավայրերի շուրջը տարածվել են համապատասխան երկրներ:

Քաղաքաշինարարության որոշակի զարգացում և կառուցապատման սկզբունքների կայունացում է նկատվում ուրարտական ժամանակաշրջանում, եթե միջնաբերդ ունեցող ամրացված բնակավայրերի կառուցապատման սկզբունքը պահպանվում և զարգացման նոր աստիճանի է հասցվում: Այդ ժամանակ այն ունեցել է ցեղապետին կամ թագավորին սպասարկող ամրող անձնակազմը և նույնիսկ գույքը պատասպարելու ընդարձակ տարածություն: Այդ ժամանակներում, հավանաբար նաև ավելի ուշ, հաջենի բերդշենը գեռ շարունակում էր պահպանել իր ուսպանական նշանակությունը: Այժմյան Կամոյի և Ծովինարի տեղերում եղած քաղաքների հետ անտարակույս այն պետք է միացած լիներ առափնյա կարեռ հանապարհով: Դրա հյուսիսային ծացքը, այսինքն լճի ամբողջ ավազանի մատուցները, պաշտպանում էր հաջենի ամրոցը, նույն գերն էր կատարում ծովակի ամրոցը լճափի հարավ-արևելյան մասում: Լճափին բավականաշատ խիտ գասավորված այդ ժամանակաշրջանի բնակավայրերն ունեցել են անտառապատ միջավայր: Մյունիքի խորերը տանող ձանապարհների ու բնակավայրերի մասին տուայժմ տեղեկություններ շունենք:

Հայկական կենտրոնացված պետական իշխանության կազմավորումից հետո զգակի փոփոխություններ են կրում տոհմացեղական կառուցապատման ավանդույթները: Բերդշենը գագարում է բնակավայրի մասեկ տիպարը լինելուց, քանի որ վերանում են սոցիալ-անահասական այն պայմանները, որոնք անհրաժեշտ էին գարձնում նրա գոյությունը: Սակայն այդ կառուցապատման սկզբունքները պահպանվել են մինչնադարյան քաղաքաբանիք բնակավայրերի հիմնական տարրերի ընդերքում և նրանց փոխադարձ գասավորության մեջ: Ամրոցը և իր միջնաբերդը, նրանց կից բնակավայրերի համախմբված, խիտ և անկանոն կառուցապատումը բազմապիսի շինություններով, ամրոցի շրամատակարարամբ, բնակավայրի ամրացումը պարիսպներով, միջնադարյան քաղաքներին և ավաններին բնորոշ քաղաքաշինարարական տարրեր են, որոնց հախնական դրսությունները տեսնում ենք բերդշեների մոտ:

Մյունիքի բնակավայրերի զարգացման համար խոշոր նշանակություն են ունեցել մայրուղիները, որոնք բարեկարգ ձանապարհներ են եղել՝ իշեահա-

տներով և կամուրջներով: Բոլոր ավաններն ու քաղաքները կառուցվել են այս ձանապարհների վրա կամ նրանց շատ մոտ: Գվին—Պարտավ ձանապարհի ջյուսիսային ճյուղի վրա նշանափոր բնակավայրեր էին թերդկունքը, նորատուս նավահանգիստը, Գեղարքունին (Գավառը). Կոթ ավանի մոտ ձանապարհի ջյուսիսային և Հարավային ճյուղերը միացել են: Հարավային ճյուղի մեծ բնակավայրերն էին Արփան, Եղեգիսը, Հորսը, Խարաշկոսը, Սուլեման և այլն: Ճանապարհի մնացած հատվածում աշքի են ընկել Մաքենիսը կամ Ազատ քաղաքը, Վասակաշենն ու Սոթը: Ուշ միջնադարում նշանափոր էր նաև Մեծ Մազրա մելիքանիստ բնակավայրը: Նախիւնան—Պարտավ ձանապարհի վրա աշքի են ընկել Շաղատը, Անգեղակիթը, Սիսիանը, Ուզը, Աղուղին, Վաղադինը, Որոտանը, Զագեծորը (Գորիսը) և Տեղը: Արաբսի ափամերձ ձանապարհի վրա հատկապիս ուշ միջնադարում զարգացել են Կարթեանն ու Մեղրին: Հյուսիսից Հարավ ձգվող ձանապարհի վրա նշանափոր էին Մող կայանը, Ակոնը (Բաղարչայը), Շաքին, Զագեծորը, Կապանը, Աձանանը, Տաշտունը և Մեղրին²:

Բնակավայրերի նման շինարարությունը հաղորդակցության նպատակից բացի ունիցել է նաև կենցաղային, արտադրական և պաշտպանական նկատմառումներ: Խիստ բնակեցված այս լեռնային երկրում հիշյալ տիպի հարմարություններ ունիցող նոր վայրեր գտնելու գրեթե անհնար լինելու պատճառով ավաններն ու քաղաքները զարգացել են հին բնակավայրերի, հատկապիս ամրոցների տեղերում և մերձակայքում. մի հանգամանք, որն առավելագույն շափով նպաստել է քաղաքաշինարարական ավանդությունների պահպանմանը:

Հնագույն բնակավայրերը, անգամ քաղաքները, բազկացած էին քաղաքաշինարարական երկու հիմնական տարրից՝ ամրոց-գլուխից և նրան կից կամ նրան շրջապատող բնակավայրեցից: Կառուցապատման այս ձեր ընդհանուր է եղել ոչ միայն Սյունիքի, այլև ամբողջ Հայաստանի և բազմաթիվ ոյլ երկրների համար: Միջնադարում ավատական հարաբերությունները փոքր ինչ փոխեցին բնակավայրերի շինարարության այս կարգը և արեւելան այլ երկրների նման՝ Հայաստանի քաղաքներում հանդիս եկավ քաղաքաշինարարական երեք տարր՝ ամրոց-միջնարերգը, շահաստանը և բնակելի արվարձանները: Ընդ որում արվարձանները գյուղատնտեսական, արտադրական կարիքների և աշխատավորների բնակության համար էին նախատեսված, իսկ շահաստանը՝ իշխող խավի, հոգևորականության, զինվորականության և վաճառականների, հնեւեապիս այն ավելի բարեկարգ էր և ճարտարապետությամբ հարուստ: Քաղաքներում ավելի կանոնավոր էին կառուցապատմած հրվանդանի միջնաբերդից քաղաքային դարպասները՝ ձգվող շառավղային փողոցները կամ միջնաբերդ-բարձունքի շուրջը տարածվող շառավղա-շրջանային փողոցները:

Սյունիքի բնակավայրերի դարպացմանը խթանող առանձնահատուկ պայմանները քաղաքատիպ բնակավայրերին հաղորդեցին յուրահատուկ տեսք, որն զգալի երապով տարբերվում էր Հայաստանի այլ շրջանների բնակավայրերի վերոհիշյալ կանոնականությունից: Ալստեղ բնակավայրերի զարգացումն ընթացավ կառուցապատման շատ ավելի ազատ եղանակով, խստորեն համապատասխան տեղական պայմաններին: Ավելի ուժեղ

² Սյունիքի միջնադարյան բնակավայրերի մասին տես Ն. Ս. Պապովյան, Քաղաքաշինարարությունը միջնադարյան Սյունիքում, ուշմիածին, էջմիածին, 1965, № 10 և 1966, № 2:

արտահայտված ավատական տիրապետությունը, պալատական շքախմբերի ու իշխանական ընտանիքների սակագույթյունն անդրադավ որոշ ավանների և նույնիսկ բաղաքների կառուցապատման բնույթի վրա (Կոթ, Արփա): Այս բնակավայրերում շահաստանի և արվանի բաժանում չենք տեսնում, պահպանվել է ստրկատիրական ժամանակներից եկող ամրոց-դղյակի՝ իշխանական «կացվածի» ու նրան կից բնակելի խիտ կառուցապատված մասի պարզ համակցումը: Ավանդականության այս ցայտուն գրաւորման կողքին մենք տեսնում ենք նաև շահաստանի գոյությունը առանձին բնակավայրերում (Եղեգիս, Սիսավան), որոնք տնտեսական և քաղաքական կարելությամբ, դասակարգերի բազմամբոխ կուտակումներով տարրերվել են վերոհիշյալ բնակավայրերից: Այս գեղագում էլ, սակայն, շահաստանը նույնը չէր, ինչ որ միջնադարյան Հայաստանի բաղաքների շահաստաններն էին: Բացակայում էին հատուկ տոկտրական-արքական գոյությունները, շենքերը (Եղեգիս): Թերեւս ավելի ճիշտ կլիներ ազնվականների, հոգևորականության և գինվորական դասերին հատկացված մասը ուղղակի թաղ անվաննել:

Սյունիքում ամրոցը, որ հաճախ հանդիսացել է նաև իշխանական գլուխ, կառուցվել է իշխող, բարձրագիր, գդվարամատչելի տեղում, ուր հնարավոր է եղել լեռնարազուկի միջոցով ջուր հասցնել:

Ամրոցից գուրս կառուցված ապարանքները առանձնացվել են աշխատավոր ժողովրդականությամբ, ինչպես օրինակ, եղեգիսում (Ամրատաբերդի տակ, ձորի աշակինյա, արևմուտքից հարավ-արևմուտք թեքվող մասում) և հասկանալի է, որ նրանք ունեցել են ամենանպաստավոր գիրք թե՛ պաշտպանական և թե՛ կենցաղային հարմարությունների տեսակետից: Բնակավայրերի դյուրամատչելի կողմից ճանապարհը նախ մտնում էր աշխատավորների բնակատեղը և ապա միայն հասնում զյոյզ կամ ամրոց: Բարձր խավի թաղում կառուցված եղեղեցիները ավելի հարուստ ու գեղեցիկ են հարդարվել: Բացանիկ երեսությունը է եղեգիսի մայրում գտնվող Զորաց եկեղեցին, որը նախատեսված է եղել բացօդյա արարողությունների համար:

Աշխատավորները՝ «երդումարդերի ամբոխները» զրադեցել են բնակավայրի մեծ մասը, որը կառուցապատված է եղել շափականց խիտ, տարրեր բնույթի գուղաժամակ կառուցներով և ըստ տեղանքի ու կառուցապատման հնարավորությունների անկանոն փողոցներով բաժանված է եղել առանձին թաղերի (Եղեգիսի հարավ-արևմտյան մասը): Փողոցները եղերվել են խուլ պատերով ու ցանկապատերով: Մեծ բնակավայրերի արդիսի կառուցապատումը չափեաք է տարօրինակ թվա, եթե նկատի ունենանք, որ անգամ բաղաքամայր Անիի շահաստանում եղել են խուլ պատերով եղերված փողոցները: Թերեւս գյուղերի նման այստեղ ևս բնակիչները թաղերի մեջ աղքակցական խմբավորումներով են տեղաբաշխվել: Հավանաբար նշանակություն է ունեցել նաև բնակչության ըստ մասնագիտության և ըստ աղքային պատեկանելության խմբավորվելը: Այդպես էին Կապանի աշխատավորական թաղերը: Այդտեղ մի թաղամաս հատկացված էր գրեաներին: Այս մասի առեալական շենքերի և շուկաների մասին տվյալներ չունենք, բայց պետք է հնթաղրել, որ այդ նույնական են ծառայել հատուկ հրապարակներ, ինչ-

պիսիք նկարագրում է արաբ պատմիչ Ալ-Խսթաջըին Պարտավի մասին գրած առղերում³: Բնակավայրերին կից Հրապարակներ են եղել նաև զորախաղերի, թատերական ներկայացումների և տոնախմբությունների համար⁴:

Նկատի ունենալով պարսպապային ամրությունները մնացորդները և պատմական հշատակությունները՝ պետք է հնագործել, որ երբեմն պարսպապատվել է նաև բնակավայրը առավելապես վտանգավոր, խոցելի մասերում (Կապաճ, Եղեղիս): Աշխատավորական թաղերը հիմնականում չեն պարսպապատվել: Այս տեսակետից բացառիկ երևույթ է Կապանը, որն ամրացվել է ամբողջությամբ, սակայն ունեցել է նաև անպարիսպ մասեր՝ բնական ամրություններով:

Բնակավայրերին մերձակա տարածություններում էին գտնվում գերեզմանոցները, որոնք համարի բնակավայրի զարգացման և տարածման հետեւանով ընկնում էին կառուցների մեջ: Եղեղիսում իշխանական և հոգենոր անձանց գերեզմանները կան ազնվականության և աշխատավորական թաղերի միջև ընկած տարածություններում: Սովորաբար պանթեոններ էին համարվում եկեղեցիների շուրջը տարածվող Հրապարակները:

Բնակավայրերին անմիջապես կից Հողատարածությունները մշակվել են բնակիչների կարիքների, մասամբ նաև գյուղատնտեսական վաճառքի հումք արտադրելու համար: Մեծ բնակավայրերին մերձակա ճանապարհների եղորդին, լավ տեսանելի տեղերում կանգնեցվել են մահարձաններ և խաչքարեր՝ ճարտարապետական գեղեցիկ ձևավորմամբ (Եղեղիս, Կոթ, Լոռ և այլն):

Ուշ միջնադարում, կապված երկրի քաղաքական և տնտեսական անբարենպաստ պայմանների հետ, ճանապարհներձ և հեռավոր բնակավայրերի տարբերությունները վերացել են, Սյունիքը իրոք դարձել է խուլ մի երկիր: Եթե նկատի շունենանք Արաբսի ափամերձ ճանապարհն ու Մեղրու քարգավաճումը, գրեթե ոչ մի զարգացում չի նկատվում բնակավայրերի կառուցապատման մեջ: Միայն Ռուսաստանին միանալուց հետո կատարվել են որոշ փոփոխություններ, որոնց մեջ զգալի դեր են կատարել գաղթականների շինարարական ավանդույթները: Գյուղերի մի զգալի մասն իր միջնադարյան կառուցապատմամբ հասել է մինչև սովետական իշխանության հաստատումը:

Բ. ԳՅՈՒՂՋԵՐԻ ԿԱՌՈՒՅՑԱՊԱՏՈՒՄԸ

Գյուղերի կառուցապատման հարցերն ուսումնասիրելիս պետք է նկատի ունենալ, որ մեզ հասած չին զյուղերի մնացորդները կրում են ցարական իշխանության քաղաքականության խոր կնիքը: Յուրաքանչյուր գյուղ ուներ իր կալվածները, որոնք գտնվում էին նրա շրջակայրում: Անկախ նրանց, թե զյուղը կալվածատիրոջ կամ պետության սեփականությունն էր, խստորեն սահմանագծվում էր նրա տերիտորիան, որի տնօրինումը հանձնվում էր համայնքին:

ՀԱՅԱՀ պետական կենտրոնական պատմական արխիվում պահպան-

³ Н. Карапулов. Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане. I. Ал-Истахрий. «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», выпуск XXIX, Тифлис, 1901, стр. 9.

⁴ Ա. Օրբելիան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 202; Ա. Զարյան, ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Բ, Տիֆլիս, 1858, էջ 155:

վել են գյուղերի տերիտորիաների հատակագծման փաստաթղթեր, կազմված որակալ հողաշխարանների կողմից: Դրանք կրում են ոչ միայն տեխնիկական հիմնարկները ներկայացնող անձանց, այլև տվյալ և հարեւան գյուղական համայնքների ղեկավարության ներկայացուցիչների ստորագրությունները: Յարիզմի օրոք գյուղերը երբեք չեն հատկագծվել և բարեկարգվել և մնացել են իրենց միջնադարյան տարերային ու անկանոն կառուցապատման վիճակում:

Միջնադարյան բաղաբներն ու ավանները գտնվել են գլխավոր մասնապարհների վրա, իսկ գյուղական բնակավայրերը հիմնականում ընկած են եղել ձորերում ու հովիտներում, ղեպի ուր և ձգվել ու հյուղավորպել են լեռնային ճանապարհները: Այդպիսի ճանապարհներ էին ընկած նաև ղեպի բնակավայրերից հեռու կառուցված գանական համակառուցները, որոնցից մի քանիսը այնքան մեծ ու մարդաշատ են եղել, որ կարող էին բնակավայրեր համարվել, պիտույքներին անհրաժեշտ բոլոր կառուցներով՝ պահեստներով, կացարաններով, արտադրական և արհեստագործական շենքերով հանդերձ: Իրենց համալսարաններով նշանավոր են եղել Տաթեկի և Գլածորի վանքերը: Բազմաթիվ արածետներով, կածաններով և ուղիներով լեռնային գյուղերը կապված են եղել նաև միմյանց հետ:

Հին գյուղերի տեղագրման առանձնահատկությունների ուսումնասիրությունը ցուց է տալիս, որ Սյունիքի բնակավայրերի տեղի ու դիրքի ընտրության համար նկատի են առնվել՝ աեղանքի արևածայացության, բնակավայրը քամիներից զերծ լինելու, անտեսությունը վարելու, այդ թվում ոռոգովի հողերը և արոտներն օգտագործելու, ազըցուներին մոտ լինելու, պաշտպանության, բնական գեղեցկություններն աշքի առաջ ունենալու, կեղաղացքերն ու անձրևաշրերը արագ հեռացնելու, տոթակեզ վայրերում ձորերով իշնող զեխյուններից օգտվելու, թափկող ջրի ուժը չրաղացների համար օգտագործելու, լվացքի համար հոսող մեծարանակ ջուր ունենալու և մի շարք այլ գործններ: Վայոց ձորի ու Զանգեզորի աղբքշանական գյուղերին հատկան է մերձավորությունը լեռնային արոտներին:

Սյունիքի բնակավայրերի համար առանձնահատուկ նշանակություն են ունեցել պաշտպանական նկատառումները: Նրանք կառուցվել են կամ ամրոցների մերձակայքում, կամ խոր ձորերի խուզ անկյուններում և կամ մերձակա բնական թաքստարաններ (բարձրադիր քարանձավներ, անտառներ, բարդ լեռնածալքեր) ունեցող վայրերում: Այս պատճառով երբեմն իրեւ բնակատեղ ընտրվել են այնպիսի վայրեր, որտեղ ջուր բերելու համար զգալի աշխատանք է կատարվել: Ուշագրավ օրինակ է Գորիսի շրջանի Խնածախ գյուղը՝ Մելիք-Հայկացյանների ոստանը, որտեղ խիստ զժվար է եղել գտնել ձորերում թաքնված գյուղերը: Նրանք տեսանելի են գաղնուում

5 Սյունիքի բնակավայրերի զգալի մասի անվանումների «Ճոր» արժանակ կազմված լինելը նրանց տեղագրումն է մատնանշում (օրինակ՝ Զորագյուղ, Կոռնիձոր, Զորաշեն, Այգեձոր, Շալիձոր, Առաջաձոր, Շվանիձոր և այլն):

միայն շատ մոտիկից, ուղղակի ձորի վերևից կամ ձորամիջի ճանապարհի վերջին անկյունադարձից: Պաշտպանական նկատառումներն այնքան կենսական են եղել, որ երբեմն մարդիկ ընական վտանգներն ավելի ստորադաս են համարել: Որոշ գյուղեր կառուցված են ուղղակի վտանգավոր ճեղքածքներ բնեղութ ժայռերի տակ (օրինակ՝ Խոտն ու Շինուհայրը, նկ. 1): Ժողովրդական զրուցներում է, որ անհիշելի ժամանակներից Ղափանի շրջակայքի գյուղերն ունեցել են իրենց «տիրք»-երը (զիրք), որոնք բարձրադիր փոքրիկ աշտարակներ են եղել՝ կառուցված դեպի գյուղը տանող ճանապարհի վրա⁶:



Նկ. 1. Խոտն գյուղը

Գորիսի շրջանի բնակիչները հաշվի են առել նաև լանջերի ու ժայռերի բնական հարժարությունները՝ ժայռափոր բնակարանների և այլ օժանդակ կառուցվածքների համար, որոնք առավել դիմացկուն են եղել երկրաշարժերի

⁶ Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը պատմա-աշխարհագրական առումով, Երևան, 1966, էջ 80:



ու բնական այլ երևույթների հանդեպ, մանավանդ թշնամու հրոսակներից պաշտպանվելու համար: Այդ նպատակով բնակավայրերից դուրս փորվածքարանձավներն օգտագործվել են պարբերաբար միայն: Դրանցից շատերը պահպանվել են նախկին գրությամբ, տեղ-տեղ երևում են նրանց մուռքերի



Նկ. 2. Տեսարան հնձորեսկից

մեջ ամբացված հորիզոնական ձողափայտեր՝ կախված ստարանի կամ փոկի մաշվածքներով⁷: Քարանձավալային մշտական կամ ժամանակավոր բնակարանները հատ-

⁷ Արաբների նման զորեղ թշնամու ղեմ սլոմեցիների պաշտպանական այդ միջոցի մասին Հ. Գրասիմանակերացին հատուկ տողեր է գրել (ան' Յովհաննու Կարողիկոսի Գրավիանկերացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 245—246): Այդ մասին մի ոչազբավ վկալություն է Արանձամ Կրևոսցի կաթողիկոսի խոսքերը 18-րդ դարի սկզբներին հնձորեսկի գրության մասին (Արքանման Կարողիկոսի Կրետացոյ Պատմութիւն անցցից իւրաց և նատր շահին պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 74):

կանշական են եղել ամբողջ Զանգեգորիին, բայց խնձորեսկը առանձնանում է յուրօրինակ կառուցապատումով։ Այստեղի գրեթե բոլոր բնակարանները ամբողջությամբ կամ հիմնական մասով քարանձավներ են եղել, չնայած նրան, որ բնակավալը շրջակայի ամենամեծ գլուխն է Հանդիսացելու հնձորեսկը գտնվում է Գորիսից 8 կմ արևելք, ժայռապատ խորը ձորի մեջ (նկ. 2): Հանցերի ստորին, երբեմն էլ նվազ թեքություն ունեցող մասերի վրա եղել են նաև կամարակապ նախամուտքերով ավելի բարեկարգ ժայռափոր բնակարաններ կամ օժանդակ այրեր ունեցող զլիատներ: Նույնիսկ արտադրական-տնտեսական և կամ պաշտամունքային կարիքների համար փորձած են եղել այրեր: Միայն տեղ-տեղ նեղ ու ոլորապոտված ճանապարհներ ձգվել են մի բնակարանից մյուսը: Գյուղի ստվերանկարի տեսակետից էական նշանակություն են ունեցել տարբեր ժամանակներում կառուցված երեք քարաշեն եկեղեցիները, հատկապես գյուղի կենտրոնական մասինը, ինչպես նաև գարձյալ կենտրոնական գիրք զրավող մելիք Փարամազի ամայաթը (ապարանքը) և փորբիկ ամբողջ ժայռի վրա⁸: Գյուղում այստեղ-այստեղ ցրված են եղել նաև մատուռներ, խանութներ, արհեստանոցներ և վիմափոր ձիթհաններ: 19-րդ դարում կառուցվել են երկհարկանի, նույնիսկ եռահարկ բնակելի տներ, որնք որոշ շափով փոխել են բնակավայրի տեսքը:


Հաճախակի դարձած վտանգների ժամանակ փոխօգնության լավագույն պայմաններ ստեղծելու տեսակետից նպատակահարմար են եղել Սյունիքի բնակավայրերի կառուցապատման հնավանդ եղանակները՝ հոծ զանգվածի տեսքով և սանդղաձև: Կառուցապատման այս երկու եղանակներին էլ հատկանշական է կից շենքերի հաղորդակցումը անցքերի ու բացվածքների միջցով: Քրանով հնարավոր էր դառնում իրեր և կրակ փոխանակել, ինչպես նաև իրար ձայն տալ՝ հատկապես նկատվող վտանգի դեպքում:

Բնակավայրերի հիշյալ խիտ կառուցապատմանը սկսու կապ է ունեցել նաև բնտանիքների մասնատման ժարագատներից շենուանլու սովորութիւններու: Հավանաբար մեծ նշանակություն է ունեցել հողի սեփականատիրությունը: Կարևոր ազգակներ են հանդիսացել շինարարական աշխատանքները, շինանյութը, վատելանյութը ինայելու անհրաժեշտությունն ու ծավալների տարածական կայունությունը՝ հատկապես երկրաշարժերի նկատառությունը:

Կառուցապատման խտացմանը նպաստող որոշ գործուների ազգեցությունը առանձնահատուկ կերպով է գրանորվել Մեղրիում: Սկսած ուշ միջնադարից, համեմատաբար մեծ թափով 19—20-րդ դդ., Մեղրի ավանում մարդիկ հարկադրված են եղել հին տան վրա երկրորդ հարկ բարձրացնել:

⁸ Իր շրջապատի գերեզմաններով նշանակոր է 1663 թվականին գյուղի հարավ-արևելյան կողմուն կառուցված «Անապատ» կոչող եկեղեցին: Նրա հյուսիսային մասում են զանգված Մխիթար սպառապետի և Եղիք Բարխուտարի տապանաքարերը: Մելիք Փարամազի ամարաթը գրեթե լիովին քանդվել է: Մեզ հաջողվեց չափազել նրա վերջին մնացորդը՝ ախոռը Փարպան այժմ բացակայող կամարակալ քարի վրա արտաքուստ եղել է հետևյալ արձանագրությունը. «Ե վահելուն Մէլիք Քառու որդի Մէլիք Փարմանն թվին ՌՄՁԵ» (1836), (Ս. Բարինսկայան). Գիվան հայ վիմագրության, պարակ 2-րդ, Երևան, 1960, էջ 63): Գյուղի կենտրոնում, ժայռի վրա գտնվող բերդը նույնական ալժմ գոյություն չունի, և ընդհանրապես հնձորեսկը ավերակույտի է վերածվել բնակչների տեղափոխվելու պատճառով: Նոր հնձորեսկը կառուցված է հին գյուղին կից սարահարթի վրա:

կամրջաձև սենյակներով ու պատշգամբներով միացնել ճանապարհների երկու կողմում ընկած շենքերը, բարձակավոր պատշգամբներով մեծացնել ընակարանի օգտակար մակերեսը: Շենքերի խտացման հետևանքով փողոցները ստացվել են շատ նեղ (մինչև 1,8—2 մ), իսկ նրանց դարձվածքների ու խաչմերուկների մոտ շենքերի անկյունները հատվել, բթացվել են: Այսպիսի երեսովիների դրսերումներ կան նաև Մեղրու շրջանի այլ բնակվայրերում⁹ (նկ. 10, 27, 60):



Նկ. 3. Տաթև գյուղը

Չափաղանց հետաքրքիր են տեղանքի պայմանների, ավանդույթների և կամ այլ նկատառումների հետևանքով դրսերպիված սանդղաձևության առանձնահատկությունները: Կառուցապատման այս եղանակի գեպքում մեծ կարևորություն է տրվել կողմնորոշման հարցին: Կառուցների խտության պատճառով դա ամբողջ բնակավայրի կամ նրա մի հատվածի համար ընդհանուր հարց է հանդիսացել: Այդ պատճառով սարալանջի դիրքի ընտրությունը առաջնակարգ նշանակություն էր ձեռք բերում:

Սարալանջերի ոռոգովի մասերը գերծ են պահվել կառուցապատմից, իսկ գյուղի հասույցների խիս զանգվածը առվորաբար տարածվել է նորանից բարձր, լանջի միջնամասում (նկ. 1): Ուղղման համակարգերի բացակայության գեպքում շինությունները տեղավորվել են ավելի ցածր, մինչև ստորոտը, իսկ կից հարթ տարածությունները թղթները են մշակման համար (նկ. 3): Կառուցապատման տեղական պայմաններից բխող եղանակներով հնարակոր է

⁹ Բնակավայրերի ծայրահեղ խիս կառուցապատումը, Հովե կտորները հատկանշական են եղել ընդհանրապես Մերձավոր և Միջին Արևելքի երկրներին, որի մասին բազմիցս անդրագիտել են ճանապարհորդները (որինակ՝ P. Am. Jaubert. Voyage en Arménie et en Perse, Paris, 1821, p. 15).

սպարձել շենքերի խիտ դասավորության պայմաններում ապահովել նրանց արկահայցությունը: Այդ խտությունն առավել ևս մեծանում էր կառուցները մասամբ լանջի մեջ խորացնելու գեպքում: Սուռումուռ ճանապարհները կորչում էին աստիճանաձև զասավորված կտուրների մեջ, որոնք մեկը մյուսի համար բակ և նույնիսկ ճանապարհ են ծառայել: Նշված եղանակով կառուցապատված գյուղերը բարձրից դիտելիս ձուլվում են բնության հետ, մինչդեռ ցածից՝ ծափաների, ճանալվանդ պատշգամբների ստվերներով հաճելի տեսարան են ստեղծում: Բնականաբար ցանկապատված բակերն այսպիսի գյուղերում քիչ են եղել և նշվագույն շափերի համոզ տարածություններ ունեցել, զուրկ կանաչապատումից:

Բոլոր բնակավայրերում եկեղեցու շենքը կենտրոնական, իշխող գիրք է կրավել հատուկ առանձնացված հրապարակի վրա, որտեղ երևելու մարդկանց գերեզմաններն են տեղափորվել: Մատուռներն ու վանքերը գրեթե միշտ կառուցվել են բնակավայրերից դուրս, հաճախ բավականաշատ հեռու:

Ակնառու գիրք են գրավել նաև ուշ միջնադարի տեղական իշխողների՝ միլիոնների բնակարանները, որոնք Սուռությունը ու Արցախում «ամարաթ» են կոչում: Դժբախտաբար այդպիսի շենքերից շնչին մնացորդներ կան միայն, որոնք, այնուամենայնիվ, որոշ պատկերացում են տալիս իրենց ճարտարապետական համագրվածքի և կառուցապատման առանձնահատկությունների մասին: Դրանք Սուռությունը գյուղական շենքերից մեկուսացված չեն, բայց տարրերվում են թե՛ գիրքով, թե՛ մեծությամբ և թե՛ հարդարումով: Ամարաթները կառուցվել են գյուղի կենտրոնում (սովորաբար եկեղեցուն մոտ), որը հանդիսանում էր տոհմի ոստանը: Դրանք ունեն հարմար գիրք գլխավոր ճանապարհների նկատմամբ և ազատ տարածություն՝ սպասարկող անձնակազմի, հյուրերի և վարչական գործողությունների համար¹⁰: Մելիքանիստ ունակավայրերից աշքի են ննկել հնածախն ու Տեղը¹¹:

Գյուղապետերի բնակարանները ևս ակնառու գիրք են ունեցել, բայց քիչ են տարրերվել գյուղացիների շինություններից: Դրանց, ինչպես նաև բոլոր ուներտ գյուղացիների մոտ, նկատվել է բնակարանային բաժանմունքների ծավալի և քանակի առավելություններ: Կապիտալիստական հարաբերությունների ձևավորման շրջանում (19-րդ դարի երկրորդ կես) այդ խավը գյուղ է բերել բնակարանաշինական բաղադրյալին կամ ավանային տիպի առանձնահատկություններ (պատշգամբներ, բաղաքատիկ սենյակներ և այլն): Դատական և բանտարին կառուցվածքներ համարյա չեն եղել¹²:

¹⁰ Տաթևի մելիքական աների մասին տե՛ս B. Chantre, A travers l'Arménie Russe, Paris, 1893, p. 105—106.

¹¹ հնածախը հայտնի է որպես Մելիք-Հայկավայրանների ստանը, որտեղ զարգացած է եղել ոչ միայն գյուղատնտեսությունը, այլև արհեստագործությունն ու վաճառականությունը: 19-րդ դարի վերջերին այնտեղ 180 տուն բնակելություն է եղել (Դ. Ալիշան, Սիսական, Վենեսիլի, 1893, էջ 264): Տեղը հիմադրել է Սուռունաց թագուհի Շահանդուխտը (Սմբատ 1-ինի կինը) և նիկոնը Տաթևի վանքին 998 թվականին Այժմ նշանակալից կառուցներ շունեցող, բայց անցյալում աշքի ընկնող ավատական ստաններ են եղել նաև Զոռ, Բասրպեշար, Մազրա, Գաշենդ Եղեղնաձոր, Մալիշև, Մող, Գնեղվազ, Մարտիրոս, Անեղվաղթ, Բոնակոթ, Գարբառ, Հացավան (Սիսիանի շրջան), Վաղաղի, Վերշեն, Շինուայր, Տաթև, Արծվանիկ, Եղվարդ, Կարմեն և շատ ուրիշ բնակավայրերը:

¹² Վարչական միջոցառումները կատարվել են իշխողի բնակելի համակառուցյուն, նրա բակում և կամ ուղղակի հրապարակի վրա, շափականց խիտ կառուցապատման դեպքում՝ նաև

Մէլիքներն ունեցել են նաև իրենց ամրոցները՝ բնակավայրի մեջ կամ նրանից գուրս: Սյունյաց լեռնաշխարհում բաղմաթիվ ավերակ ամրոցներ կան, որոնց մի մասը գործել է մելիքների ժամանակ: Բնակավայրերում դրանց հետքերը չեն մնացել: 18-րդ դարում նշանավոր է եղել Հալիծորի քերդը Ղափանի մոտ, որի ավերակները զնուն մնում են: Խնձորեսկի սուլյանին հայտնի բերդը կործանվել է երկրաշարժից: Նշանավոր են Մեղրու աշտարակածի ամրությունները:

Լանջերի վրա տեղավորված Յին պյուղերի սանդղածե կառուցապատումը աւարերվել է գաղթականների շինարարական ավանդույթների ազգեցությամբ կառուցված բնակավայրերի կառուցապատումից: Մեղրու շրջանի հարավային գոտում, Եղեգնաձորի, Ազիզլեռնովի և Սիսիանի պարսկահաջայ վերաբնակիչների գյուղերի Յին հատվածներում (օրինակ՝ Ծվանիձորում, Մեղրիում, Ուղում, Մալիշկայում, Շատինում և այլն) սանդղածե կառուցապատման մեջ կամ ուղղանկյուն դարպաններով և բարձր ցանկապատերով բակեր, որոնք մեծ թեքությունների վրա նվազագույն շափեր ունեն և համեմատաբար ընդարձակ են քիչ թեքություն ունեցող վայրերում: Բնակելի համակառուցները չեն խորացվել գետնի մեջ, ինչպես բնիկ լեռնաբնակների մոտ: Որպես օրինակ կարելի է նշել Հաղատ գյուղը, ուր արդեն 19-րդ դարի առաջին կեսում տները կառուցվել են գետնի երեսին: Թոնրի միջոցով շեռուցվող սենյակն այդ դեպքում շափականց ցուրտ է եղել, ուր սնգիկը հապիվ գրոյից մի աստիճան է բարձրացել¹³: Բնակելի համակառուցները համար ցրված էին այդիների մեջ, եթե տունը ուղղակի փողոցի եղողին էր կառուցված, նրա բացվածքներն ու պատշգամբը ուղղված էին հակառակ կողմք՝ գեպի բակը կամ այգին, իսկ ձամփան եղերող պատերը բացարձակապես խոռ էին՝ հակառակ բացվածքների արևածալաց լինելու անհրաժեշտության: Դա պատճական չէ. ինչպես կտեսնենք հետագայում, բնակարանաշխնական այդ ձևերը սերտ կապ ունեն՝ պարսկահայ շինարարական ավանդույթների հետ: Ցանկապատերի, զնուրի, դարպանների և խուլ պատերի անվերջ շարանով էլ պայմանավորված է. ճանապարհի կամ փողոցի ճարտարապետությունը: Միայն Մեղրիում, որտեղ երկհարկանի տներն զգալի տոկոս են կազմում, լուսամուտներն ու պատշգամբներն ուղղված են գեպի փողոց, բայց գրեթե միայն երկրորդ հարկում:

Հին բնակավայրերի վերափոխման խիստ բնորոշ օրինակ է մելիքանիստ-Բոնակոթ գյուղը, որը ընկած է Սիսիանին մեղծակա մի հովտում: Գյուղի մոտով հոսող գետի երկու ափերին՝ տներով են եղել ուռենիներ: Ցեխաշար պարիսպներով կավակերտ տները եղերել են անկանոն փողոցները: Աշքի հնրնկել ընդամենը մի քանի երկհարկանի տներ, որոնց թվում՝ Մելիք-Թանգան-ների նախկին ապարանքը: Գյուղի արևելյան կողմում գտնվող եկեղեցին:

Կտորների վրա: Իսկ բանտարկել են պատճական, բայց ամբափակ շենքում: Որպես բանտ են օգտագործել նաև գոմն ու հացի հորը: Այդ մասին հավաստի տեղեկաթյուններ են տալիս նաև կաթողիկոսը, Ե. Լալայանը և որբիչներ (տե՛ս նսալի կարողիկոս Զասան Զարգիսան, Պատմութին կամ Ցիշտատկ անցից՝ դիպելոց լաշխարհին Աղոստանից, Շոշի, 1839, էջ 17—18. Ե. Լալայան, Արսիան, էջ 229): Հորերի օգտագործումը իրեր բանտ ժամանակարգական տեսակետից շատ հին է, այն համար է սորկատիրության ժամանակաշրջանը:

¹³ Eli Smith. Missionary Researches in Armenia, London, 1834, p. 252.

միաժամանակ Հանդիսացել է մելիքների դամբանատունը: Եկեղեցու բակում է եղել ծխական զպորցի շենքը¹⁴:

Կառուցապատման համակարգերի վերոհիշյալ Հակազրությունը շափառաց Հետաքրքիր տեսք է ընդունել Մերու շրջանում, որի հարավը տևական ու անմիջական շփման մեջ է եղել Պարսկաստանի հետ: Խորապես զգացի է Հյուսիսային ու Հարավային գոտիների բնակավայրերի կառուցապատման հակագրությունը, չնայած որ բոլորն էլ սանդղաձև են կառուցապատված նղել: Հյուսիսային բարձրագիր գյուղերում (Վանք, Կալեր, Լիճք, Տաշտուն) ինչպես և Զանգեզուրի գյուղերում, կանաչապատ տարածություններ չեն եղել: Հավանաբար դրա պատճառը եղել է կլիմայի խստությունը, որովհետև ավելի հարավ բնակավայրերը, թեկուզ ամենախիտ կառուցապատման պայմաններում, կանաչապատված են: Հյուսիսում բարձր ցանկապատեր չեն շինվել, մինչդեռ տար շրջաններում գրանք պարտադիր են եղել տնամերձ փոքրիկ բակերը ձանապարհից մեկուսացնելու համար:

Հայտնի են տափարակների կառուցապատման մի քանի եղանակներ, որոնք կիրառել են Հատկապես զաղթականները: Յանկապատված բակերով և տնամերձ ալղիներով ու բանջարանոցներով կառուցապատումը գերազանցապես հատկանշական է եղել պարսկաց զաղթականների բնակավայրերին, կանոնավոր տղղաշար կառուցապատումը՝ Սիսիանի շրջանի ոուս վերաբնակիչներին, իսկ հոծ կառուցապատումը՝ Սևանա լճի ավազանի թուրքահաջ վերաբնակիչների և մասամբ էլ Վայոց ձորի բնիկների բնակավայրերին: Կառուցապատման հիշյալ տարբերությունները 19-րդ դարի ազգագրական շրջաններին են համապատասխանում:

Սևանա լճի ավազանում գյուղերը խիտ դասավորությամբ կիսագետնափոր հոծ զանգվածներ էին, մասնաւում մի քանի ձանապարհով ու փակուղով, կանաչապատումից գուրկ, իրար միացած կտուրներով: Գյուղի անհարթ տարածությունը, կավաշաղախ ու ցածրագիր բարե պատերով պարփակված փոքրիկ բակերը անծանոթի համար նկատելի էին միայն շատ մոտ տարածությունից, մասնավանդ ձմռանը, երդիկներից բարձրացող ծովիը միայն ցուց էր տալիս կյանքի գյուղերուն այդ ձուռնածածկ հողաթմբերի տակ: Սևանա լճի ավազանի ձորերում կան կառուցապատման նույն ձևի հատ ու կենտ գյուղեր: Կամոյլ մոտ, հարթ վայրերում, եղել են ավելի նոսր կառուցապատված բնակավայրեր՝ կիսագետնապատություններով: Այստեղ միայն անցյալ դարի վերջներին են սկսել բնակելի համակառուցները գետնի երեսին կառուցել:

Սովորաբար բնակելի համակառուցից ոչ հեռու, երբեմն էլ անմիջապես կից, եղել են արտապական շենքերն ու արհեստանոցները (ձիթհան, պայտարանոց, զարբնոց և ալյո): Դպրոցը, վարչական շենքը, ճարտարապետական տեսակետից ոչ ուշագրավ, անգմբեթ եկեղեցիները կառուցվել են մեկուսի, առանձին հրապարակով:

Այս բնակավայրերում, ինչպես և Սյունիքի մյուս գյուղերում դեպի եկեղեցին տանող ձանապարհը համարվել է գլխավոր, մյուսներից փոքրինչ լայն է եղել, բայց զարձյալ անկանոն, որովհետև ուղիղ ձանապարհները հատկանշական չեն լեռնային շրջանների գյուղերին: Հազվագեպ էր պատա-

¹⁴ Ա. Լալայան, Սիսիան, էջ 175—176:

Հում, որ գյուղը ընկած լիներ հաղորդակցության ճանապարհների կամ նրանց խաչմերումի վրա: Ազգիսի դեպքում գյուղամիջի լայն ճանապարհը հենց հաղորդակցության ուղին էր լինում¹⁵:

Ազգակցական-համայնական յուրատեսակ կացութաձևի վերապրումային մնացորդները առավել շափով անդրադարձն են այս բնակավայրերի կառուցապատման մեջ: Ազգակցական խմբերի ըստ թաղերի բաշխման ավանդությը ալսուել ի հայտ է եկել բավականաշափ հստակ:

Կապիտալիստական հարաբերությունների ազգեցությամբ հնավանդ բարբերի փոփոխման հետեւնքով գերդաստանների կազմալուծման պրոցեսն անդրադարձավ նաև գյուղի կառուցապատման վրա: Նախ պատեհական օջախին կից, փոքր բնակելի համակառուցներ ստեղծվեցին և ապա դրանք աստիճանաբար առանձնացան, կառուցվեցին ազատ կանգնած վերգետնյա շենքերի տեսքով: Հետզետե փոխվեց նաև համակառուցի բաղկացուցիւ տարրերի փոխհարաբերությունն ու կազմը:

Եղեգնաձորի շրջանում ազգիսի գյուղերի պահպանված մասերում նկատվում են բնակելի համակառուցներ, որոնց բաժանմունքները միավորվում են ոչ թե փակ նախարարով, կամ միշտնցրով, ալլ բաց պատշաճով: Սովորական իշխանության օրերին երկրի պատշաճով կյանքի շնորհիվ լայն տարածում ստացան այս ձեի կառուցվածք ունեցող շենքերն ու նրանց համակառուցները: Ազգիսի խիստ տարածված են Սելիմի ձորի գյուղերում:

Միխանի շրջանի Բաղարշալ և Բորիսովկա բնակավայրերը համեմատաբար հարթ և աղասա տարածության վրա են և ունեն կանոնավոր կառուցապատում ուղիղ փողոցներով, իրարից որոշ հեռավորության վրա զասավորված, որոշակի կողմնորոշում (հարավ-արևմուտք և հարավ-արևելք) ունեցող ուղիղ կամ փոխուղղահայաց թեերով և ուղիղ անկյուն կազմող բնակելի համակառուցներով: Բակերն ու տնամերձ բանջարանոցները գրեթե շենցանկապատված և ունեն ոռոգման կանոնավոր ցանց: Փողոցները եղերգած են շենքերի սիթմիկ-դասավորված շաբերով: Կառուցվածքները կամ երկարությամբ մի գծի վրա են, խուզ ճակատներով գեպի փողոց ուղղված, և կամ՝ իրար զուգահեռ, տողաշար կառուցապատմաբ, կողքի նեղ ճակատներով գեպի փողոց դարձած: Կիմայի խստության պատճառով ժառքը համարյա շկան:

Գյուղի կառուցապատման պատկերն ամբողջացնելու համար անհրաժեշտ է նշել նաև անասուններին հատկացվող շենքերի տեղը գյուղի նկատմամբ: Սևանա լճի ավազանում գոմի ու փարախի հսկա ծավալները մտել են բնակելի համակառուցիք մեջ, միասնական ծածկի տակ: Զանգեզուրի գյուղերի գերազանց մասում նույնպես գոմերը, փարախներն ու ախոռները մտել են բնակելի համակառուցների մեջ՝ թաղակապ երկար շենքերի ձևով: Ամենայն հավանականությամբ անասունների շենքերը մեկուսի կառուցելու սովորության բացակայությունը արդյունք է անապահով կյանքի և անասունների նկատմամբ պահանջվող մշտական խնամքի անհրաժեշտության:

Անցյալում հավանաբար եղել են նաև գյուղի ծայրին կամ նրանից փոքր ինչ

¹⁵ Սևանա լճի ավազանում կառուցապատման նշված եղանակի համատարած լինելու մասին ուշագրավ վկայություն է տակա Պերճ Պոռշյանը, որն անձամբ շրջել է այս վայրերով (տես՝ Պերճ Պոռշյան, Հունոն, Երկերի ծաղովածու, 1953, հա. 2-րդ, էջ 597), տես' նաև Ա. Տեր-Մարկարօս, Սելո Գեօզալլարա, „Сборник материалов для описания местностей и племен Кавказа“, Выпуск XIII, отдел I, Тифлис, 1893.

Հետո կառուցված գոմեր, որոնք չեն պահպանվել: Տեղ-տեղ բնակավայրերից քավականաշափ չեռու, բարձրադիր արտօսավայրերի լեռնածալքերում, որտեղ ջուր է հոսում, կան զին գոմերի մնացորդներ, որոնց տեղում այժմ մեծ մասմամբ կառուցվել են նորերը: Վայրոց ձորում գրանք ամառանոցավին բնակավայրեր էին դուղական պարզունակ կառուցներով, իսկ Մեղրու շրջանում անասունները զյուղից գուրս պահելը ընդհանուր սովորություն է եղել: Այդ նպատակով կառուցված զին շենքերի միայն հատուկինտ նմուշներ են որահպաններ: Սեղոնային բնակավայրեր են այս շրջանի ցածրադիր գոտու բնակավայրերի ամառանոցները, որոնք ընկած են հիմնական բնակավայրերին մերձակա հովատուն վայրերում: Միայն Կարմեանցիք օգտվում են երեք ամառանոցներից, որտեղ պատսպարանները գերազանցապես ժամանակավոր բնույթի են: Ծվանիձորցիք ունեն քարաշեն փոքրիկ կառուցներով մի ամառանոց, որը կազմակերպված բնակավայր է, շենքերի մեծ մասը դեպի արևմուտք, մնացածը՝ հարավ ուղղված, կենտրոնում ելեղեցով և շենքերի սանդղաձև բայց համեմատաբար ազատ դասավորությամբ: Այդ շենքերը ցուրտ եղանակներին օգտագործվել են նաև անասնապահների կողմից (նկ. 4, 39դ):



Նկ. 4. Ծվանիձորի ամառանոցը

Կրոնական-ավանդական սովորություն է եղել բնակավայրերի շուրջը, բարձունքների վրա խաչքարեր կանգնեցնել «մարդկանց պատուհասներից փրկելու նպատակով». այդ խաչարձաններից շատերը պահպանվել են մինչև հիմա: Տարածված է բնակավայրերից ոչ հեռու, բարձր տեղերում ըստ աշխարհագրական կողմերի՝ չորս խաչարձան կանգնեցնելու սկզբունքը¹⁶: Այդպիսի մի նմուշ է Գորիսի շրջանի հնածախ մելիքանիստ գյուղը: Հե-

16 Տե՛ս Ս. Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառին, Վաղարշապատ, 1895, էջ 484:

տարրին այն է, որ այդտեղ խաչարձանները կանգնեցվել են տարրեր ժամանակաշրջաններում:

Սյսպիսով Սյունիքում առկա են եղել կառուցապատման չորս համակարգեր. ա) խիտ կառուցապատում կառուցների հոծ զանգվածի տեսքով (Սևանա լճի ավագան և Արփա գետի ավագանին պատկանող Հարավից շրջանի գուղբե՞ն Շորս, Աղավնաձոր և ապն), բ) համեմատարար ազատ կառուցապատման, արևահայաց ճակատներով ու բացվածքներով, թիւ թե շատ կանոնավոր փողոցներով: Այս կառուցապատման եղանակը հատկանշական է 19-րդ դարին և հատկապես պարսկահայ գաղթականների տարածման շրջաններին (Մերփայի ավագանի մեծ մասը, Միսիանի ու Դափանի շրջանների որոշ մասը՝ ուր հին գուղբերի՝ Ռուփի, Լեռնաշենի, Անգեղակորի, Արծվանիկի մնացորդները վկայում են Զանգեզորի կառուցապատման հին ավանդութիւնների միասնականության մասին), գ) սանդղած կառուցապատում լանջերի վրա, հատկապես Ռուտանի ու Մեղրագետի, մասամբ նաև Օթչիի ավագաններում՝ ամրող հին Զանգեզորում, դ) 19-րդ դարում առաջացած կանոնավոր տողաշար կառուցապատմ (Միսիանի շրջանի Բազարչայ և Բորիսովկա գյուղերը):

20-րդ դարում, հատկապես սովետական իշխանության հաստատումից հետո, գյուղերի կառուցապատման պատկերն զգալի փոփոխություններ էրեց: Դրա առաջին արտահայտությունն էր կառուցապատման համախմբված, խիտ վիճակից նորացման անցնելը՝ բակերի և նողամասերի մեծացումը, շրջակա կանաչ տարածությունները գյուղի մեջ ընդգրկելն ու նոր տնտեսածեր այդինքների ու բանջարանոցների ստեղծումը: Այնուամենայնիվ սկզբնական շրջանի հատկագուման աշխատանքների բացակայությունը և գարերով արմատացած ավանդութիւնները պատճառ հանդիսացան որոշ տեղերում խիտ կառուցապատմը պահպանելուն: Սոցիալիստական տնտեսածեր էապես փոխեց գյուղի կառուցապատման հնավանդ կարգը, ստեղծվեցին կենցաղային ավելի հարմար պայմաններ, նեղ ու անհարթ ձորերից և խիտ կառուցապատված անբարեհամբուլը վայրերից հին գյուղերն սկսեցին տեղափոխվել զեպի սարահարթերը կամ մերձակա ազատ տարածությունները, կանոնավորվեց գյուղերի կառուցապատումը, ստեղծվեցին ավելի ուղիղ փողոցներ, կառուցվեցին արդիական տիպի, առողջապահական և կենցաղային տեսակետից շատ ավելի հարմար շենքեր: Ենիւշար պատերի փոխարեն ամենուր քարուկիր շենքեր ստեղծվեցին, գյուղի աշբի ընկնող վայրերը կարդարվեցին նույնիսկ հուշարձաններով և աղբյուրների նոր բարաշեն կառուցներով, ջուրն սկսեց կանոնավորապես մատակարարվել հատուկ ցանցի միջոցով: Նշանակալից երեսությ էր գյուղերում հասարակական շենքերի, երեխմն նաև հասարակական կենտրոնների ստեղծումը, հիմնադրանցային և ուսումնական շենքերի կառուցումները իրենց անհրաժեշտ մեկուսացումով, կանաչապատմամբ և կից ազատ տարածությունների ստեղծումով: Գյուղը շրջապատվեց գյուղատեսական արտադրությանը վերաբերող նոր տիպի շենքերով, բնակելի մասից լրիվ մեկուսացած տեղերում կառուցվեցին անասնապահական մեծ շենքեր, նրանց մոտ՝ սիլոսի աշտարակներ, գյուղի ծայրին, հարմար տեղերում՝ տարրեր բնույթի մասնագիտական շենքեր:

Այժմ գյուղերի բարեկարգման գործը գրվում է առավել առաջադիմական հիմքերի վրա, կազմվում են բոլորովին նոր գյուղերի, ինչպես և հների վերակառուցման ամրողական նախագծեր, աճում է բանվորական ավանների թիվը նախկին գյուղատեսական հիտամենաց շրջաններում:

Գ. ՈՒԾ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՎԱՆՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱՍՊՎԵՏԱԿԱՆ
ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՑԱՓԱՍՈՒՄԸ

Մյունիքում ուշ միջնադարում բաղաքներ, նույնիսկ ավաններ, գոյություն չեն ունեցել տնտեսական հետամնացության պատճառով, բայց իրենց դիրքի և տնտեսական նշանակությամբ ավաններ դառնալու հավակնություններ են ունեցել Կամոցի տեղում եղած Գավառ (հետագայում Նոր Բայկեն) կոչվող բնակավայրը, Գորիս և Ղափանը: Միայն Մեղրին կարելի էր լիարժեք ավան համարել: Ղափանում որոշ չափով զարգացել էր պղնձարդյունաբերությունը, սակայն սկզբնական շրջանում դա շրջակա բնակավայրերի զարգացման վրա շատ թիւ է անդրագաճել: Բանվորական հացարաններն ու բնակարանները այնպիսի վիճակում էին, որ շատ հեռու էին ավանսատեղծ տարրեր հանդիսանալուց: Բանվորներն ապրում էին փայտի կամ բարե սրահակների մեջ, ուր մի երկար միջանցքի երկու կողմերում երկհարկանի թմբեր էին դասավորված: Ընտանիքավոր բանվորներին առանձին սենյակ չէր նախատեսվում: Նրանք բնակվում էին մեկը մյուսին կցված հյուղակներում¹⁷: Բայց արդեն 19-րդ դարի վերջում կապիտալիզմի զարգացման առդյունքն էր արտադրության փոքրի ինչ արգելականացումն ու բնակարանների նկատելի բարեկարգումը: Մարզաքան տիկին Բ. Շանտրը գրում է այդ մասին, «Ընդարձակ և հարմարավետ բնակելի շենքերը կցված են գործարանին, որի մեծ հնոցները կրակ և կայծեր են արձակում: Ամբողջ այդ շահագործարանը գտնվում է մի հայկական ընկերության ձեռքում»¹⁸: 1909 թվականին Ողջի գետի վրա շահագործման է հանձնվում 600 կիլովատ կարողությամբ ջրափորի հիդրոէլեկտրակայացանը, որն էներգիա է մատակարարում պղնձահանքերին ու գործարաններին և լուսալորում հարուստների բնակարանները: Բացիում են առևտրական կետեր, արհեստանոցներ, սրճարան և դեղատուն¹⁹: Մրանք բաղաքի կազմավորման նախանշաններ էին. Ղափանը բաղաք դարձավ սովետական իշխանության օրոր միայն:

Նախասովետական ժամանակաշրջանի վարչական և տնտեսական հարաբերությունների կենտրոններն էին Կամոն և Գորիսը: Դրանք գրուական վիճակից համեմատաբար մեծ զավառական կենտրոններ դարձան Հայաստանը Ռուսաստանին միանալուց բավականաշափ հետո (19-րդ դարի 2-րդ կեսին):

Մ Ե Ղ Բ Ի

Մեղրին աշքի է բնկել պարուկական տիրապետության վերջին շրջանում իրեկ մելիքանիստ: 1766 թվականին հայ ազգային-ազատագրական պայքարի գործիշ Հովսեփ Էմինն անցնելով այստեղից՝ բնակավայրը բաղաք է անվանել, ուր, նրա ասելով, եղել է «Հասարակապետություն», 3000 տուն, զարգ սցած գյուղատնտեսություն, կտավագործություն և ջուզհակություն²⁰: Քաղաքական ձնշման, հարստահարությունների և պարբերական գաղթերի ու կոտորածների

17. «Народы Кавказа», том II, стр. 511.

18. B. Chantre, Աշված աշխ., էջ 511:

19. ՏՇ'ս Խ. Ա. Ավետիմյան, Զանգնալորի բնակչությունը և բնակավայրերը 40 տարում (1920—1960), Երևան, 1963, էջ 59:

20. ՏՇ'ս Գ. Ալիշան, Միսական, էջ 304:

պայմաններում մեղքեցիք երկար ժամանակ պահպանել են իրենց ազգային-կենցաղային յուրահատկությունները և առևտրական հարաբերությունները Հարեւան երկրների ու քաղաքների հետ:

19-րդ դարի վերջին քառորդում տեղական մտավորականությունը գործուն մասնակցություն է ունեցել բնակավայրերի բարեկարգման աշխատանքներին: Եղիտասարդների մի խումբ, որը հաճախ գրական երեկոներ էր կազմակերպում, բազմապիսի այլ հարցերի հետ «մշակում» է գորողի բարեկարգման և տնտեսական բարեկոփուլունների որոշակի ծրագրի: Խմբակի մասնակիցները լուծում են գյուղի պլանավորման, փողոցները սալահատակելու, ստորեկրցա խողովակներով խմելու ջուր բերելու, բաղնիք կառուցելու, գյուղամիջան ձանապարհները բարեկարգելու և բնակչությանը հուզող այլ հարցերը²¹:

* * *

Մեղրին գտնվում է Մեղրագետի ստորին՝ մասում, բավականաշափ լայն ձորի մեջ: Գետի ափերին, բարձր լանջերի վրա ընկած են նրա երկու թաղերը, որոնք իրենց կենտրոններում ունեցել են առանձին եկեղեցիներ: Աշախնյա լանջի վրա տեղավորված է այսպես կողմած Փոքր թաղը, իսկ ձախափնյա մասում՝ Մեծ թաղը, որի ստորին մասը կոչվել է Մաշթաղ (Միջնաթաղ): Սրանք աստիճանաձև գասավորված են լանջերի միջին մասերում, ինչպես հատուկ է Զանգեզուրի բնակավայրերին: Ստորին մասերը, որոնք Հարմար են այգե-մշակության համար, շեն կառուցվապատվել (նկ. 10): Այգեստանի մեջ ցըլած են եղել բազմաթիվ հնաձաններ, ընդ որում յուրաքանչյուր ալյետեր ունեցել է իր սեփական հնաձնը, որը համար ծառալել է ոչ միայն որպես արտադրական կառուցվածք, այլև ամառանոց՝ ստվերախիտ ժամանու տակ: Փոքր թաղը ավելի ուշ շրջանում է առաջացել: Բնակավայրի կորիզը հանդիսացել է Մեծ թաղի եկեղեցու շուրջը ամֆիթատրոնաձև դասավորված մասը, որի ստորոտում են եղել հասարակական շենքերը (գպրոց, ժողովասրահ և այլն) և շուկան: Այս մասը այժմ ևս բնակավայրի կենտրոնն է, ուր տեղավորված են հասարակական և վարչական շենքերը: Սոսի հսկա ծառերով ատվերագրված նախկին շուկայի տեղում այժմ հրապարակ է կենտրոնական փոքրիկ պուրակով: Ավանի ձախափնյա այս մասը շրջապատված է եղել ամրություններով: Առանձին կանգնած աշտարակների մնացորդները շահ-պանվել են ժայռերի վրա: Այս մասում եղած կառուցվածքների ստորին և վերին մակարդակների տարրերությունը հարցուր մետրի է հասնում:

Մեծ թաղի հասարակական կենտրոնից գետի բնակավայրի բոլոր կողմերը ձգվում են նեղ փողոցներ, որոնք խովելով կառուցվապատման մեջ, հետպհետե նեղանում են և դառնում անկանոն: Մեծ և Փոքր թաղերի փողոցներից շատերն ունեն արտասովոր թերություններ, որոնք մեղմացնելու համար նրանց սալարկած մակերեսները երբեմն աստիճանաձև մասերի են քածանել: Ուշագրավ երեսով են շենքերի մեխանիկական վնասվածքներից, խուսափելու համար կատարված անկյունալին մասերի բթացումները, որոնք երբեմն ամբողջ պատի բարձրությունն ունեն կամ վերշանում են կտուրին չհասած: Ստորին մասում պատերի անկյունը փոքր բարձրությամբ

21 Խ. Ա. Ավետիսյան, Զանգեզուրի բնակչությունը և բնակավայրերը 40 տարում (1920—1960), էջ 19:

Էրբեմն լրացվում է քարե շարվածքով, որը ծառայում է իբրև նստարան-Անկունալին բթացումները հիմնականում երթևեկությունը զուգացնելու համար են: Դրանք հանդիպում են նաև Հայաստանի այլ վայրերում, նույնիսկ այլ երկրներում²²: Կարձ ցանկապատերի, զարպաների և շնորհերի որթատունկով զարդարված շաբերից դուրս կարկառված պատշաճմբներով, երբեմն նաև կամրջաձև շինություններով այս փողոցները խիստ յուրօրինակ տեսք ունեն:

Նախքան 17-րդ դարը Մեղրին այլ տեսք է ունեցել. գրեթե ամբողջովին կառուցապատված է եղլէ մեծ մասամբ միահարկ, հարթածածկ, սյունաշարդ նախարած ունեցող գյուղատիպ շենքերի խիտ, աստիճանաձև զասավորությամբ: Այդ մասին են վկայում նոր կառուցների մեջ առնված հին շենքերի մնացորդները:

Ներկայումս ավանը, ժողովրդական ավանդություններին հակառակ, կառուցապատված է ստորին մասում (ձորով գեղի վեր ու վար) բազմահարկ բնակելի շենքերով²³: Մրագրված է կառուցապատել Մեծ և Փոքր թաղերի միջև ընկած ամբողջ տարածությունը և խիտ մասերի բնակչության տնտեսությունը այնտեղ, որպեսզի կառուցապատման ընդհանուր խտությունն իջնի 40 տոկոսի: Մեզլին բնագարձակվում է նաև գեղի կայարան տանող խճուղու ուղղությամբ. այստեղ նախիկին լերի տարածությունները ծածկվում են առանձնատներով և կանաչ տնամերձներով: Այստեղ է գտնվում արդյունաբերական թագավասը: Բնակավայրը աճել է նաև գեղի արևմուտք. Վարդանաձոր տանող ճանապարհի վրա առաջացել է կանաչապարդ Այգեստան թաղամասը, որը հաստատվել են պարսկահայց շատ նոր հայրենագարձներ:

Կ Ա Մ Ո

Կամո քաղաքը (նոր Բայազեա) հիմնադրվել է 1829 թվականին Հին Բայազետից եկած հայերի կողմից՝ միշնագարյան Գավառ, հնում Գեղարքունիք, բնակավայրի տեղում: Հստ հնագիտական տվյալների բնակավայրը գոյություն է ունեցել նախառարարական ժամանակներում և շնայած պարբերական կոտորածներին և գաղթերին, այստեղ միշտ էլ բնակչություն է եղել: Շիրիմների ու խաչարձանների հոյակերտ նմուշների առաջարկությունը նյութական և հոգևոր հարստության լավագույն արտահայտությունն են (նկ. 5):

Սկզբում գավառը առևտորական փոքրիկ ավան էր, ուր տոնավաճառային բնութիւն առևտոր էր կատարվում հատկապն ամռանը, երբ բազմաթիվ բուշուներ այս կողմերի արտօնություն էին գալիս իրենց անասուններով: Նոր բնակիչներն ստացել են քաղաքացիներին հատուկ իրավունքներ, սակայն վաճառականության զարգացման համար համապատասխան պայմաններ սկիզբու պատճառով նրանց մի մասն արտաքաղթել է²⁴: Հստ երեսութիւն տեղա-

²² Օրինակ, ալգիսի անկունային հատումներ են կիրառվել Սոյրեշանի հսմափլրի շրջանի Բասգալ գուղում (անու M. Ասենոս, Լ. Երշանական, Ա. Սալամզած, Իշտորիա արхитектуры Азербайджана, М., 1963, стр. 355).

²³ Յավոր լանջերի կառուցապատման ավանական եղանակը, հակառակ գոյության ունեցող առաջարկը տեսակեների, շարունակում է անտեսներ, որի հետևանքով լինալին բնակավայրերի կառուցապատումը փունկցիոնալ, անտեսական և գեղագիտական առումով շատ է տուժում:

²⁴ Յովի. Շահինարունեանց, Սոյորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատաց, Հա. Բ, էջմիածնի, 1842, էջ 237:

կան առեսուրը ցածր ապրանքափոխանակման սահմաններից դուրս չի եկել²⁵, գրա համար էլ վաճառականներն իրենց գործունեության շառավիղը հասցրել են թիֆլիս, Թավրիզ և Երևան²⁶: Բնակչության մեծամասնությունն զրագել է գյուղատնտեսությամբ, բայց արհեստագործությունն ու ձկնորսությունը զգալի կշիռ են ունեցել:

Հին բնակվալրի շինարարական կյանքի մասին չնշին տեղեկություններ կան միայն: Հայտնի է, որ ուրարտական թագավոր Սարգուրի որդի Ռուսան ալստեղի ժայռաբրդի վրա հիմնել է տաճար և բերդ, իսկ 1374 թվականին ոմն Վասիլ իշխանի որդի Ամիր Վահապը եկեղեցի և շրատար առու է կառուցել²⁷:

Քաղաքի հիմնադրման և զարգացման գործում զգալի դեր է կատարել Արծրունիները առօնը: Մկրտիչ Արծրունու զիմավորությամբ այսպես են հաստատվել վերաբնակիչները, նրա եղբայր Բարսեղ աղայի միջոցներով իրար կից կառուցվել են հոգեոր և արքունի գարողությունները, շինվել բազմաթիվ կրպակներ, որոնցից հինգի հասուլթը հատկացվել է հոգեոր գլորոցին և այլն²⁸: 1857—1860 թվականներին այստեղ պաշտոնավարած թիֆլիսեցի կապիտան, իշխան Խաչակ Արելյան Ապամելիքյանց գավառապետի թելարքանքով մի շարք վրա կառուցվում է Գարյուղ բարեկարգ կրպակ՝ նոր եկեղեցու գիմացը: 1876 թվականին Գեորգ Գորոյանի ծախսով կամուրջ է շինվում (նկ. 5դ): Եթ այլ նշանավոր գերդաստանի ներկայացուցիչ Մարիկոնյան Վարդան աղան հաշերի թաղում համապատասխան մակարությամբ աղբյուր է կառուցում²⁹:

Քաղաքաստեղծման պատկերն առավել հստակ երևում է քաղաքաշինական հարցերին վերաբերող պատմական դիվանագիրն փաստաթղթերում: Դրանցից պարզվում է, որ Նոր Բայազետով ճարտարապետ, անգամ տեխնիկական անձնակազմ չի ունեցել՝ հողաշինարարական, շինարարական և ճարտարապետական հարցերը լուծելով համար³⁰: Սակայն գորություն է ունեցել նահանգապետի կողմից հաստատված զիմավոր հատկագիծ, որը պահպել է նահանգական վարչության շինարարական բաժնում³¹: Վերջինս գտնվելով Երևանում անմիջական զեկավարություն չի ցուցաբերել կատարվող հատակագծման և շինարարական աշխատանքներին և այդ փաստաթուղթը չի օգտագործվել տեղում: Այն ծառայել է քաղաքաշինական աշխատանքների վերաբերյալ հսկողությունը մերժ հեռվից և մերժ գործուղված հողաշինարարների միջոցով իրականացնելուն³²:

Գործող օրենսդրության համաձայն քաղաքաշինական և ճարտարապետական այն աշխատանքները, որոնք հասարակական և պետական միջոց-

25 Տե՛ս «Կավказ» թիրթ, 1899, № 48:

26 Մ. Սմբատյանց, նշված աշխ., էջ 92:

27 Ե. Բ. Պուտրովսկայ, Վանկու պարտ, Մ., 1959, стр. 31—32, 89. Թ. Ավրալիելյան, Երկու էջ Հայաստանի ռոռուման պատմությունից ու նորանց գործնական հետհանքությունները, Երևան, 1927, № 9, էջ 46:

28 Այս տոհմի նման գործունեությունը միանգամայն հասկանալի է գառնում մի տեղեկության շնորհմամբ, ըստ որի Մկրտիչ Արծրունին շրջանառության մեջ է դրած եղել պեղիք բան տաս հազար թուռմանի հասնող գրամագրություն (տե՛ս Ա. Շոլոհ, Իсторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852, стр. 877):






29 Տե՛ս Մ. Սմբատյանց, նշված աշխ., էջ 36—108, և Լալայան, նոր Բայազետի գավառ, «Աղքագրական հանդես», 18-րդ դիվը, Թիֆլիս, 1908, էջ 115:

30 ՀՍՍՀ կողման, ֆոնդ 92, ցուցակ 1, գործ 79, թիրթ 7—8:

31 ՀՍՍՀ կողման, ֆոնդ 92, ցուցակ 1, գործ 481, թիրթ 8:

32 ՀՍՍՀ կողման, ֆոնդ 94, ցուցակ 1, գործ 2221, թիրթ 4:

Աղաւնակ Տ. Հ. Կ.



ներով են իրականացվել, ենթակա են եղել շինարարական բաժանմունքների հսկողությանը վարչատեխնիկական տեսակետից միայն, իսկ նախագծերի և նախահաշիվների կազմում ու նրանց իրազործումը թողնվել է տեղական համայնքների կամ զեմստվոյական Հիմնարկությունների տնօրինությանը. շինարարական բաժանմունքը վերջիններիս կողմից հատուկ վճարումով կարող էր առանձնացնել աշխատանքների հսկողության և նույնիսկ իրականացման համար մասնագետների³³: Փաստաթղթերից երեսում է, որ հասարակական կառուցաւմների իրականացման համար քաղաքային իրավասուների ժողովը հատուկ որոշում է կայացրել, որը քաղաքագլխի հատուկ զեկուցագրով ուղարկվել է նահանգապետին՝ ի հաստատություն: Ֆինանսական բարդությունների հետ կապված հարցերը լուծվել են Կովկասի քաղաքացիական մասի պետի գրասենյակի կողմից:

Քաղաքի բնակիչներն իրենց անհատական միջոցներով իրավունք են ունեցել բնակարան և այլ անհատական շենքեր կառուցելու: Մինչև 1901 թվականը կառուցապատումը գրեթե ամբողջապես կատարվել է ժողովրդական վարպետների կողմից: 1899 թվականին հասարակական նշանակություն ունեցող մի շենքի համար հրավիրվել են վարպետներ, որոնք նախահաշիվ են կազմել ըստ ընդունված շուկայական գների, նախագծի փոխարեն տվել են շենքի նկարագրությունը միայն³⁴: 1901 թվականի որոշման համաձայն քաղաքում կառուցաւմ սկսելու համար թույլտվությունը արփում էր քաղաքագլխի կողմից շենքի հատակագծի ու ճակատների գծագրերը ներկայացնելու դեպքում³⁵: Ահա այդ ժամանակվանից մասնագիտական ստեղծագործությունը տիրապետող դիրք է գրավել քաղաքի կառուցապատման մեջ, բայց, քանի որ միակ կառուցպանները ժողովրդական վարպետներն էին այդ տարեթվից հետո էլ կառուցապատման հարցերում որոշակի դիրք է կատարել ժողովրդական ճարտարապետությունը, հանդես գալով երկրորդական պլանի վրա: Շենքերի նախագծերի պատվերներ է ընդունել նահանգական վարչության շինարարական բաժինը³⁶:

Կամոն (Նոր Բայազետ) գանգում է Սևանա լճի արևմտյան ափին, Նորատուսի թերակղզուց մոտ վեց կիլոմետր արևմուտք տարածվող և հյուսիսային քամիներից պաշտպանված գոգավորության մեջ: Սկզբում տարածվել է Գավառագետի հյուսիսային ափերին, իսկ հետագայում ընդգրկել է նաև աշակինյա որոշ տարածություն: Միջնադարում բնակավայրի զարգացման համար պետք է զգալի նշանակություն ունեցած լիներ այստեղով անցնող Դվին—Պարտավ ճանապարհի հյուսիսային ճյուղը, որն այժմ էլ քաղաքի մայրուղին է:

Հիմնադրման ժամանակ բնակավայրը փաստորեն գյուղի բնույթ է կրել և ըստ բնակչության բանակի, և ըստ կառուցների տիպարների³⁷:

³³ ՀՍՍՀ ԿՊՊ, ֆոնդ 34, ցուցակ 1, գործ 1516, թերթ 7:


³⁴ ՀՍՍՀ ԿՊՊ, ֆոնդ 92, ցուցակ 1, գործ 7:

³⁵ ՀՍՍՀ ԿՊՊ, ֆոնդ 92, ցուցակ 1, գործ 164, թերթ 5—7:

³⁶ ՀՍՍՀ ԿՊՊ, ֆոնդ 94, ցուցակ 1, գործ 882, թերթ 54—56:

³⁷ 1833 թվականին եղել է 500, 1860 թվականին՝ 810 և 1870 թվականին՝ 1101 տուն (Մ. Սմբատյանց նշված աշխ., էջ 87): 1908 թվականին 1329 տուն է եղել, այսինքն 9836 հողի (Ե. Լալյան, Նոր Բայազետ գավառ, էջ 115): 1866 թվականից ցուցակերի համաձայն այնտեղ ապրելիս են եղել 7488 հողի, և ըստ ազգաբնակության թվի քաղաքը նահանգում երկրորդ տեղն է բնակչության հետո (ՀՍՍՀ ԿՊՊ, ֆոնդ 34, ցուցակ 1, գործ 2216):

Արևոտը կամ սուն պատվիրաւ



գառուցապատումն սկզբնական շրջանում ընթացել է նահապետական ձևով: Գլխատան ճարտարապետական համակառուցքը եղել է գերիշխող, որի մեջ ապրել են անդամ հասարակության ամենաազգեցիկ ներկայացուցիչները, ինչպես, օրինակ, Մամիկոնյանները³⁸: Այստեղ եղել են նաև քաղաքաբանիկառուցամասեր համակառուցները մեջ առնված կամ, համեմատաբար ավելի սակավ, առանձին ձևով, որոնց թիվը հետաքայում, տնտեսական կշանքի աշխուժացման հետ բազմապատկից է, ինչպես նշեցինք, աստիճանաբար ստեղծվեց ինքնատիպ ճարտարապետությամբ մեջ քաղաք³⁹:

19-րդ դարի վերջերին գլխավոր հատակագծի հիման վրա քաղաքը վերակառուցվել է, չիմնվել է գլխավոր, փոխուղղահայաց փողոցների կանոնավոր ցանց՝ բնակելի թաղամասերով, որոնք համարակալված են եղել: Պաշտոնական գրագություններում հշատակվում է մինչև 34 համարը կրող թաղամաս: Դրանք կանոնավորապես բաժանված են եղել սեփականատերերի միջև Ուշագրավ երեսովից է փողոցների ուղղությունների համապատասխանեցնելը շենքերի լավագույն կողմնորոշմանը:

Քաղաքը հիմնականում չորս մեծ թաղից էր բաղկացած: Ամենահինը Բանտի թաղն էր, որը տարածվել է բարձրադիր առապարի՝ բերդագլխի հարավային ստորոտում, գետափին (նկ. 5ը, 5գ)⁴⁰: Այս թաղը մինչև այժմ էլ իսկ ու անկանոն կերպով է կառուցապատված, չնայած շենքերը փոխել են նրա տեսքը և քաղաքատիպ դարձել: Թաղի, հատկապես ստորին մասում, կանաչապատ տարածությունների վրա ճաշակով շենքեր են եղել, որոնց պատշաճամբներն ու բացվածքները հիասքանչ ներդաշնակություն են կազմել գետափնյա տեսարանների հետ (նկ. 6): Այստեղ է բխում «Բայազեն» հանքային ջուրը: Գետափնյա ստվերախիտ տարածությունները սիրված զբուավայրեր են:

Բանտի թաղից Հյուսիս ընկած էր Կալերի թաղը, որն առաջինից բաժանված էր բարափի բարձունքով⁴¹: Սկզբում թաղի կենտրոնական մասում եղել է պարսպապատ մի ազգի՝ Հորդ ազբյուրով, որի շուրջը տեղալորպած էին թիթեղապատ կտորով մի քանի շենքեր: Մնացած ամբողջ թաղը կառուցապատված է եղել հողածածկ շենքերով, մեծ մասամբ մեկ հարկանի: 1908 թվականին այգու տեղում կառուցվել են ծխական զպոցներ և քաղաքային տուն:

Այսոց փոքր ինչ Հեռու մինչև այժմ էլ կանգուն է ս. Աստվածածին նորաշեն եկեղեցին, որը կառուցել է ճարտարապես Միքոպյանը իր նախագծով՝ նրանից հյուսիս ծխական երկսեռ զպոցի հասարակ շենքն է տեղալորպած


³⁸ С. Д. Лисавциан. Из материалов по изучению жизниц Армении, „Известия Кавказского Историко-Археологического Института“, том VI, Тифлис, 1927, стр 136—139.

³⁹ 1890 թվականին քաղաքի մեծ մասը կավաշեն է եղել և միայն հատուկներ երկարականի տներ են եղել (տե՛ս Ս. Փափազեան, Հնութիւնը Վանօրեից, «Կաղաքունիք» (ալբում), Վաղարշապատ, 1890):

⁴⁰ Թաղի անվանումն առաջացել է գետափին ձկներ որսալու համար կառուցված պատնշշիք՝ բանտի անվանումից: Այս վայրերի բնակեցման մասին ե. Լալայանը գրում է, «Եթե առաջն զավթականները ելենովկայի կամ նորատուի պես հրաշալի, լճափնյա տեղերը թողել են ու եկել այստեղ բնակություն հաստատել, զրա պատճան ամն է եղել, որ ավանի հետությամբ են կառողացել այս զետի մեջ ծովկ որսալ, քան լճի, և մեկ էլ զեղարթունին զիխազորապես այս գետում էլ լինում» (Ե. Լալայան, Նոր Բայազեն զավառ, էջ 112):

⁴¹ Թաղն իր անվանումն ստացել է այդտեղ պատրաստված բազմաթիվ կալերից: Այն քաղաքի 20-րդ դարում կառուցապատված մասերից մեկն է,

եղել (նկ. 5 ա): Եկեղեցու առաջ, գետի արևմուտք տարածվել է շուկայի ընդարձակ հրապարակը՝ հյուսիսից ու հարավից եղերված խանութների շարքերով: Հրապարակի արևմտյան կողմը փակվել է երկհարկանի բնակելի շենքով, որի առաջին հարկում բացվել են խանութների կամարակապ մուտքեր (նկ. 7):



Նկ. 7. Եկամտաբեր տուն Կամոյում

Քաղաքում եղել է մոտ հարյուր առևարի և նույնքան էլ արհեստավորական կրպակներ: Կալերի թաղի այգախիսի կառուցապատման համար վճռական դեր է կատարել նրա հանգուցային դիրքը քաղաքի տարբեր մասերի միջև: Այստեղ են հատվում առափնյա մայրուղին և Հացառատից նորատուս գնացող խճուղիները⁴²:

Տալիսի թաղը տարածվել է շուկայից հարավ և Բանափ ու Կալերի թաղերից արևմուտք⁴³: Այստեղ է գտնվել ոստիկանատունը մի բնդարձակ հրապարակով, քաղաքային միակ բուժարանը, պետական եռդասյան գպրոցը, բաղնիքը, երկու հյուրանոց և այլն:

⁴² Հանգուցային այս դիրքը հաջի է առնվել սովետական ժամանակաշրջանում: Քաղաքի համար 1929—30 թվականներին զիմանքոր հաստիկափիծ է կազմել Ա. Թամանյանը, լիովին հաշվի առնելով առկա կառուցապատմուն ու տեղանքի զրությունը: Այնուհետև երկու նոր զիմանքոր հատակագծեր են կազմվել «Հայպետհասազիք» խնտառատունում: Այօմ սողից հասվող գործոցների եղբարին, քաղաքի կենտրոնական մասում բարձրանում են բնակելի և հասարակական նոր շենքեր:

⁴³ Այս թաղը զիմանքորապիս կառուցապատվել է 1835—1840 թվականներին Տալիդա գրացի զավառապետի օրոք, որից և ստացել է իր անունը:

հաշերի թաղը գտնվել է Հյուսիս-արևմտյան մասում և իր անունն ստացել է այստեղ տեղադրված բաղմաթիվ խաչքարերից: Նշանավոր է իր սառնորակ աղբյուրներով, որոնք բաղաքի ջրամատակարարման համար էական նշանակություն ունեն: Այստեղ է տարածվում քաղաքային այգին, իսկ նրանից արևմուտք՝ այլ այգիներ և ձկնարուծարանը: Այս թաղում գեղեցիկ առանձնատների կողքին բարձրանում են մի քանի նոր հասարակական շենքեր, որոնք ուղիղ փողոցների անմիջապես եզրերին են, բակերի և իփակուղիների խորքում գերւու կանգուն են հին բնակելի տներ:

Չնայած կանոնավոր, ուղիղ փողոցների առկայությանը՝ նախասովետական շրջանում բաղաքի գտնվել է անբարեկարգ զրության մեջ: Այդ մասին ե. կալվայանը գրում է, «Ոչ մի փողոց բարած չէ, այս պատճառով և կուրացուցիչ, սարսափելի փոշին և նոյյան ցեմբը անպահաս են: Մայթեր երևում են մի քանի գիխավոր փողոցներում: Լապտերներ կան... բնդամենը՝ 40 հատ, այնպես որ գիշերները տիրում է Սպամա մութը»⁴⁴:

Մեր գարասկզբին սկսվել է կառուցապատվել Բանտի և Տալիզի հանդիպակաց գետափը: Երկու ափերը միացվել են ճանապարհով ու կամուրջով⁴⁵: Այս միջոցառումը խոչըր նշանակություն ուներ այն տեսակետից, որ բաղաքը միացվում էր բնդաման համար մասամբ մանափակ հնարավորւթյուն ունեցող տարածության հետ: Սակայն բաղաքի բնդարձակումը նախատեսվել է զեսի Հյուսիս արևմուտք, որը տրանսպորտային և ճարտարապետական գծվարտիյունների հետ է կապված: Նոր գիխավոր հատակագծում հաշվի չեն առել նաև հին բաղաքի ճարտարապետության լավագույն հուշարձանները պահպանելու և այլ հոյակապ ժառանգությունը ցուցադրելու անհրաժեշտությունը:

Այսպիսով Կամո բաղաքը կառուցապատվել է ոչ միանգամբց: Ավելի քան կես դար նրա կառուցապատումն ընթացել է առանց որևէ մասնագիտական հսկողության, գյուղատիպ շենքերով: Գետափնյա Բանտի թաղի անկանոն, խիտ կառուցապատումը զրա խորը կնիքն է լրում: Ուշագրավ երևույթ է գետափնյա շենքերի ճարտարապետական կապը բնդության հետ: 19-րդ դարի վերջերից կիրառվող մասնագիտական հսկողությունը բաղաքի կառուցապատումը զուրս չի բերել ժողովրդական ավանդույթների սահմաններից, բայց զգալի կանոնավորում է մտցրել: Բանտի թաղից և նախագարյան բնակավայր առապարից հյուսիս ընկած Կալերի թաղի խիտս որոշակի հատակագծային լուծումը արգեն ցուց է տալիս կառուցապատման վրա մասնագիտական հսկողության որոշակի դրսերում: Այստեղ են կենտրոնացվել հասարակական շենքերի մեծ մասը: Այստեղ կարելի է տարբերել հատակագծային երկու խորմբ, մեկը եկեղեցու մոտ գտնվող հասարակական շենքերի, իսկ մյուսը՝ շուկայի մեծ հրապարակն իր կից շինություններով: Քաղաքի կենտրոնական մասի այգիների լուծումը թելադրված է եղել ճանապարհների դիրքով: Ավելի արևմուտք տարածվող Տալիզի ու հաշերի թաղերում ուշագրավ երևույթ

⁴⁴ Ե. Լալայան, Նոր Բայակես գավառ, էջ 114: Նոյնպիսի տեղեկություններ կան նաև նահանգապետիկ գաղաքագլուխ գրագրություններում (ՀՍՍՀ ԿՊՊ, Փոնդ 94, ցուցակ 1, գործ 1325): Այժմ փողոցներն ասֆալտապատված, ծառազարդ ու կանաչազարդ են և բաղաքն իր առողջարար միջավայրով ամռանը գետի իրեն է գրավում շատ ճանապարհների:

⁴⁵ Այդ մասին տեղեկանում ենք նահանգապետին ուղղված զավառապետի 1902 թվականի ժամանակի 3-ի գեկուցադրից (ՀՍՍՀ ԿՊՊ, Փոնդ 94, ցուցակ 2, գործ 53):

է փողոցների ուղղությունների համապատասխանեցնելը շնչնքերի լավագույն կողմնորոշմանը: Խաչերի թաղի՝ իբրև հանգստի վայր օգտագործելու մասեցումը միանգամայն ձիւս է: Այստեղ օդն առողջարար, ջուրն առատ է, և լեռնային բնության սրանչելի տեսարաններ են բացվում: Գավառագետի հարավային ափը քաղաքի ընդարձակման համար տալիս է անսահմանափակ հնարավորություններ:

Գ Ո Բ Ի Ս

Յարական իշխանության ժամանակ առանձնապես մեծ էր կարևոր ճանապարհների հանգուցակետում գտնվող Գորիս քաղաքի դերը իբրև Զանգեզուր գավառի առևտրական և վարչական կենտրոն: Նրան էին ենթարկվում Հայկական ՍՍՀ Սիսիանի, Գորիսի, Ղափանի և Մեղրու շրջանները, ինչպես նաև Աղբյուրեցանական ՍՍՀ Լաշնի շրջանի մի մասը, սակայն նրա առևտրական կապերի տարածման շառավիզն անհամեմատ մեծ էր:

Մինչ քաղաք գտնվածը Գորիսը (պատմական Զագեձորը, իսկ ժողովրդի բարբառով Կյորեսը կամ Շենը) եղել է Զանգեզուրի մեծ գյուղերից մեջ Որոտանի վտակ Գորիս գետի ձախափնյա մասում: Քաղաքի հիմնադրման աշխատանքներն սկսվել են 1850 թվականին⁴⁶, սակայն շինարարական և հատակագծման աշխատանքները Հիմնավոր ու կազմակերպված բնույթ են ստացել 1870 թվականին Ստարացի գավառապետի ժամանակ Մանուչար-բեկ ՄԵԼԻՔ-Հյուսեինյանի գործոն մասնակցությամբ⁴⁷: Գորիսը պաշտոնապես քաղաք դարձավ XIX դարի 80-ական թիվ. վերջինին: Նրա զարգացման համար մեծ նշանակություն է ունեցել Անդրկովկասում ճանապարհաշինության զարգացումը, մասնավորապես Շուշի—Գորիս ճանապարհի շինարարությունը 1869—1877 թվականներին⁴⁸:

Քաղաքում առաջին հերթին բնակություն հաստատեց ունենոր դասակարգը: Ստեղծվեց առանձնատներով, վարչական և առևտրական շնչնքերով կազմված քաղաքի կենտրոնական մասը՝ որոշակի հատակագծով և առաջադիմական բարեկարգումով: Հասարակության սոցիալական շերտավորումը խիստ որոշակի կերպով անդրադարձավ քաղաքի կառուցապատման և ճարտարապետական դիմագծի վրա: Հասարակական խմբավորումները բնակվել են տարբեր փողոցներում և թաղամասերում: Աշխատավոր խավը առավելապես բնակվել է գետափնյա փողոցի շրջակայրում կամ վարձակալել է նկուղային հարկերը: 20-րդ դարի սկզբում քաղաքում 3146 բնակիչ է եղել, որոնք զբաղվել են երկրագործությամբ, այդեղործությամբ ու առևտրով: Շուշի առանձնապես կենդանացել է, երբ սար գնացող թուրքերը անցել են ավանով⁴⁹:

⁴⁶ Տե՛ս Դ. Ալիշան, Սիսիան, էջ 262:

⁴⁷ Տե՛ս Ե. Լալայան, Զանգեզուր, «Աղյաղրական հանդիս», 4-րդ գիրք, Թիֆլիս, 1899, էջ 27:

⁴⁸ Այդ, ինչպիս և այլ ճանապարհների կառուցման վերաբերյալ օրենսդրական և վարչական միջոցառումների մասին մեր ՀՍՍՀ ԿՊՊԱ, Փանդ 94, ցուցակ 1, գործ 1516: Գորիսի նշանակությունը որպես առևտրական կենտրոն զգալի չափով նվազել է 1908 թվականին Հռովմաշերեւան երկաթաւագծի շինարարության պատճառով: Որպես ճանապարհային հանգուցակետ և վարչական կենտրոն նրա ունեցած նշանակությունը առավել ես նվազեցրեց Հայկական ՍՍՀ 2-րդ հնագամյակի տարիներին (1933—1937 թիվ): Կառուցված Ղափանի երկաթաւագծի, բայց իբրև շրջկենտրոն անհամբնաց վերելք ունեցավ շինարարության բնագավառում:

⁴⁹ Տե՛ս Ե. Լալայան, Զանգեզուր, էջ 26—28:

Կամոցի շինարարական-ճարտարապետական աշխատանքների կատարման օրենքներն ու իրականացման ձեզ կարելի է վերագրել նաև Գորիփին. ճիշայն թե պետք է նկատի ունենալ, որ վերջինս հնթարկվել է Ելիզավետպոլի պետական Հիմնարկներին և բացի այդ այստեղ ճարտարապետության մեջ սկզբից և այս մասնագիտական ստեղծագործությունն է ական դեռ է կատարել: Այնուամենայնիվ շատ բնակելի շենքեր կառուցվել են առանց նախագծի, ուստի և զուտ ժողովրդական ստեղծագործություններ են: Այդ մասին ուշադրավ վկայություններ են Ազրբեջանական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվում պահպանվող Ելիզավետպոլյան նահանգական վարչության շինարարական բաժանմունքի փաստաթղթերը: Այդ փաստաթղթերի մեջ Գորիփի բաղադրին վերաբերող նախագծերի կողքին կան առանձին շենքերի չափագրություններ, որոնց վրա մակարդակած է, թե որտե՞ղ չնայած կառուցվել են առանց նախագծի, այնուամենայնիվ, Համապատասխանում են բաշարի համար առաջարկվող շինարարական պահանջներին: Քաղաքի ճարտարապետության մեջ Զանգեզուրի ժողովրդական ավանդական գծերն այնքան ակնբախ են ներկայանում, որ անհնարի անջատել այն ժողովրդի ստեղծագործական ժառանգությունից: Բացի այդ համեմատելով շենքերի նախագծերը կառուցնեղի հետ՝ զգալի տարբերություն ենք գտնում: Վարպետները ստեղծագործական ժողովրդով են կառուցել շենքի տարբեր մասերը, մանավանդ հարդարանքին վերաբերող մանրամասնությունները:

Արխիվային փաստաթղթերից երեսում է, որ նշահարման աշխատանքներ են կատարել զավառական ինժեներներ հարցեներոն և Կոշովը, իսկ հետագայում շինարարական աշխատանքների մասին մասերը, մանուշանը:

* * *

Գորիփս գյուղը շատ նման է եղել Զանգեզուրի ծորաշեն գյուղերին: Այնտեղ ծորը լայնանալով՝ մի անհարթ գոգավորություն է ստեղծում, սպիտակ, վարդագույն և գորշ գույներով երտանգավորված ժայռոտ ու բարբարոտ մի տարածություն, որտեղ կոնաձև քերծեր են բարձրանում, իսկ եռակատար սարահարթի վրա մոլեզնող հողմերը չեն թափանցում: Բնության բազմազան երանգավորումներով՝ գեղեցիկ տեսարանները, մաքուր օդի ու սառնորակ ջրերի առկայությունը բնակության շատ հարմար պայմաններ են ստեղծում: Զախափնյա ավերակների ներկա վիճակը, ինչպես նաև մի շարք աղբյուրներ⁵⁰ տեղեկություն են տալիս այն մասին, որ Շենք բաղկացած է եղել ժայռափոր կառուցվածքներից և ժամանակի ընթացքում նրանց կցված, ինչպես նաև աստիճանաձև կառուցված զյուտներից: Խիտ կառուցապատումով և ծուռումուն ճամփաներով կազմված այս մելքանիստ գյուղի աննշան ուխտատեղիներից բացի կենարունում եղել է մի հասարակ հին եկեղեցի, իսկ նորա մոտ՝ Մելիք-Հյուսեինյանների նախկին ապարանքը: Շենք ունեցել է նաև իր իշխանաւունները:

Արդի բաղաքի տեղում, այսինքն հովտի աջափնյա մասում բնակելի շենքեր չեն եղել: Այստեղ է տեղավորվել գավառի առևտուրական կենտրոնը

⁵⁰ Ա. Զալալիան, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայստան, էջ 309. Յ. Cha ntre, աշվածաշխատ, էջ 88, 90. Յ. Լալայան, Զանգեզոր, էջ 26—28. Ա. Բակոնց, Կյորես, Երկեր, Երևան, 1955, էջ 297—357:

Հանդիսացող համբավավոր շուկան: Այդ հին շուկայում եղել են կերպասաւ-
վաճառների, ներկարարների, համետ կարողների, պայտարաների և այլոց
գետնամած խանութները: Շուկայի հրապարակով է անցել գյուղից դեպի
խորհարքները և արոտները տանող հին ձանապարհը⁵¹:

Սկզբից և եթե քաղաքի կառուցապատման սխեման հասարակ ուղղանկյուն
ցանց է եղել աշխարհի կողմերի նկատմամբ փոքր ինչ շեղ ուղղություն ունեցող
փողոցներով ու նուանց միջև հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ձգվող
կանոնավոր ուղղանկյուն թաղամասերով: Վերջիններս մասնատված են
զույգ առ զույգ կցումով շարք կազմած, հավաքար մեծության (յուրաքանչյու-
րը 400 քառ. սաժեն) հողամասների, որոնցից յուրաքանչյուրում մեկ շենք է
նախատեսվել: Նախագծերում համարակալված են եղել ոչ միայն թաղա-
մասները, այլև յուրաքանչյուր հողամաս: Ամենամեծ թաղամասներն ունեցել են
տասներկու հողամաս, իսկ ամենափոքրերը՝ չորս: Թաղամասների կառուցա-
պատման այս կանոնավորությունը փոքր ինչ խախտվել է հետագայում
կառուցապատման խտացմամբ, բայց փողոցների ցանցը մնացել է նույնը:
Քաղաքը նեղ ու երկար հատակագծով ձգվում է ոչ շատ լայն հովտի մեջ,
իշխելով մոտավորապես հյուսիսից հարավ (նկ. 8): 20-րդ դարի սկզբներին
զգված են եղել հինգ եղիկայնական և հինգ լայնական փոխհատվող քարեկարգ
փողոցներ: Երկայնական ուղղությամբ ձգված երկու փողոց ունեցել են 21.
մնացածը 17 մետր լայնություն: Նշանարողները ենթարկվել են Ծուսաստանում
1742 թվականից գոյություն ունեցող հրամանին, որով Մոսկվայի փողոցների
լայնությունը սահմանված է եղել 8 սաժեն: 1752 թվականին այդ շափերը փոխ-
վել են մինչև 10 սաժեն, որը մոտավորապես կազմում է 21 մետր⁵²:


Քաղաքի հատակագծային վիճակը պայմանավորված էր հատկապես
շուկայի գոյությամբ, որը կառուցապատման ցանցի կենտրոնում «նավթի պա-
հեստներից մինչև Մաթեոս քեյի տունը, այնտեղից գրութինայի գորանոցը և
հայոց եկեղեցին՝ մի ամբողջություն էր, մի ամբողջական շուկա, որ կենտրոնն
էր Զանգեզուր ընդարձակ գավառի՝ Սևանա լճից հարավ, Մինչև Արաքս»:
Այս շուկայի հյուսիսային ծալքը հին շուկան էր, իսկ նրա շարունակությունը
կազմով հրապարակում բազմաթիվ խանութներ և արհեստանոցներ են եղել,
որոնց մեջ աշբի են ընկել պասաժի խանութները: Այս ընդարձակ վաճառա-
տեղին էր Հորդում խառնիճաղանձ ամբոխը «յոթ ձանապարհով, նա հոսում էր
գավթարիանայի, քաղաքային ինքնավարության, գատարանի, ոստիկանա-
կան վարչության, հարկային տեսչի, պետական գանձարանի և սուբահանողի՝
նախկին կալանատան յոթ դարպաններից, որոնք շացվում էին շուկայի վրա»⁵³:
Այստեղ է գտնվել նաև քաղաքային այգին, փոկ քաղաքի եղրին գոերի մեջ
թափվող գյուղական մի հորդահոս աղբյուր է եղել, որի ջուրը քաղաքից մեկ
կմ հյուսիս գտնվող բարաշեն գմբից մոտից է բերվել⁵⁴: Հետզհետեւ քաղաքը
ավելի ու ավելի բարեկարգ տեսք է ստացել, փողոցներն ու մայթերը սա-
լարկվել են ու կանաչապատվել:

51 Տե՛ս Ա. Բակունց, նշված աշխ., էջ 314, 323, 341, 344:

52 Տե՛ս Գորիս քաղաքի հատակագծման նախագծի «Բացատրագիր» կազմված ճարտարագետ
Պ. Խոլեցյանի և մի խոմբ ինժեներների կողմից:

53 Ա. Բակունց, նշված աշխ., էջ 323, 328:

54 Ե. Լալայան, Զանգեզուր, էջ 26—28:



Նկ. 8. Գորիս քաղաքը

Գորիսի թաղամասների կանաչ այգիներով ծածկված տարածությունը քարակերտ շնորհի ու բարձր ցանկապատերի մի շղթայով է պարուրված: Փողոցները մայթված են, կանաչապատված, մայթերի եղբերով անցնում են ոռոգման ջրերի առուները: Շենքերն իրենց բակալին պատշգամբների և լանջավոր ծածկերի հետ ուղղանկյուն հատակադառվ պրիզմատիկ ծավալներ ունեն, որոնք երկարությամբ դրված են փողոցներին ուղղահայտաց, հողամասի բարձր մասում: Տները նեղ ձականներով զեպի փողոց ուղղելու այլ սկզբունքը թելագրված է փողոցների խաչմերուկների միջև ընկած հատվածներում ըստ հարավորին ավելի շատ շենքեր աեղավորելու, լավագույն կողմնորոշումն

ապահովելու և տվյալ հողամասի մեջ ճանապարհամերձ բակերի ավելի մեծ տարածություն ստեղծելու անհրաժեշտությամբ։ Բակերը շենքերի միջև ընկած տարածություններն են, որոնք պարսպապատ են փողոցի կողմից ու վերջինիս հետ հազորդակցում են կամաբակալու զարպաններով։ Գրանը շեն խճռված օժանդակ կառուցյաներով, որոնք բակում անշաղն տեղ են գրավում։ Գետափնյա ոչին ճանապարհի՝ աները միշտրկանի են ի տարրերություն քաղաքամիջի շենքերց, որոնց մեծ մասը մեկ և կես կամ երկու հարկանի է։ Այստեղի հողամասերը նույնպես սահմանվել են 400 քառ. սաժմանակի մեջ ժամանակի ընթացքում կառուցապատում խտացել է։

Այսպիսով, քաղաքաստեղծման առաջին տասնամյակներին բնակավայրը մեծ չի եղել և տարածվել է շուկայի ընդարձակ տարածության շուրջը՝ կենտրոնում ունենալով առերգական, վարչա-հասարակական շենքեր։ Փողոցների կանոնավոր ուղղանկյուն ցանցը շենքերի լավագույն կողմնորոշումն ապահովելու սպատակով է ստեղծվել։ Այն աստիճանաբար տարածվել է զեպի հյուսիս նույն սինեմայով⁵⁵։ Այժմյան քաղաքը մի քանի անգամ մեծ է ճնից, նրա կառուցապատման մեջ զեղ զդալի բարեփոխումներ են կատարված։

* * *

Ուշ միջնադարի ավաններին ու նախասույնետական քաղաքներին վերաբերող տվյալներն ամփոփելով կարող ենք նշել հետևյալը։

Ուշ միջնադարի ավաններում շարունակվել են տարերային կառուցապատման գյուղական ավանդությունները, սակայն տնտեսության հետ կապված կենցաղային պայմանները այդ բնակավայրերին յուրօրինակ տեսք են հաղորդել։ Փողոցների կանոնավորումն ու որոշ բարեկարգումը, բնակավայրերի ավանատիպ կոմունալ հարմարությունները, բնակելի և տնտեսական-արտադրական շենքերի աստիճանաբար քաղաքատիպ դառնալը քաղաքաշինարարական առաջադիմության ցայտուն գրւելու դրսերումներ են հանդիսացել։

Նախասույնետական քաղաքներում զարգացման այդ պրոցեսը հանդես եկավ բավականաշափ հստակ ձևով և ավելի բարձր մակարդակով։ Մասնագիտական ստեղծագործական աշխատանքն ու հսկողությունը էական դեր կատարեցին քաղաքների կառուցապատման մեջ, որտեղ գլխավոր նվաճումը հատակագերի համապատասխանեցնելն էր այն ժամանակվա կենցաղի, տնտեսության ու երթևեկության պահանջներին, մասամբ նաև տեղանքի առանձնահատկություններին։ Ժողովրդի ավանդական-ստեղծագործական դերն այստեղ թեև սահմանափակ, այնուամենայնիվ բավականաշափ հստակ գրւելովց։ Նախ և առաջ այն հանդես եկավ բնակելի տների հորինվածքում, այնուհետև տան բակի, տնամերձ հողամասի, ցանկապատերի ու դարպանների, ինչպես և ճանապարհի փոխադարձ դասավորության մեջ։ Ստեղծագործական աշխատանքի մեջ ժողովրդական ավանդությունների անուղղակի, իսկ շինարարական պրակտիկայում ուղղակի գրւերում—ահա նախասույնետական քաղաքաշինարարության ամենաբրուշ գիծը։

55 Այդպահանկյուն ցանցի հետաղ կիրառումը՝ առանց հաշվի առնելու նեղացու և ավելի զարգաց տեղանքը, հանգեցրեց ընդլայնական փողոցների արտակարգ մեծ լեռությունների (մինչև 25 տոկոս)։ Այս սխալի կրկնություններից խուսափելու համար զդալի աշխատանք է կատարված այժմ։

Թե գյուղատիպ և թե բաղարատիպ բնակավայրերի դիրքի ընտրության և կառուցապատման համար մեծ նշանակություն է ունեցել ջրի մատակարարման և հեռացման հարցը: Նախընտրելի է համարվել բնական աղբյուրների՝ ակերի առկայությունը նախ կենցաղային, ապա նաև ոռոգման կարիքների համար: Մինչև օրս էլ շատ գյուղեր կենցաղային կարիքների համար բնական աղբյուրներից են օգտվում: Հին ժամանակներից ի վեր օգտագործվել են նաև լճի և գետերի ջրերը: Լճափնյա թերակղզիների վրա հաստատված թերզիների բնակիչները ուղիղ ջրի աղբյուր չեն ունեցել բացի լճից: Մի շարք հրվանդանների մրա կառուցված թերզիներ գետնուղիներ են ունեցել պաշարված ժամանակ գետից ջուր վերցնելու համար⁵⁶: Ուրարտական բնակավայրերը չեն կարող դոյլություն ունենալ առանց ջրամատակարարման, որոշ գետերում նաև ոռոգման համակարգերի, բայց որում ստրկական աշխատանքը մեծ հնարավորություն էր բնձեռում այդպիսի խոշոր ձեռնարկումների համար: Եվ իրոք, Սևանա լճից հարավ, Ծովակ գյուղի մոտ կա մի հին ջրանցք, որի հունը փորկած է ժայռի մեջ⁵⁷:

Այսպիսով կենցաղային և պաշտպանական հարմարություններ ունեցող բազմաթիվ ջրագուրկ վայրեր բնակեցվել են գեռ շատ հնուց, օգտագործելով ջրմուղի արհեստական կառուցները: Թեև ջրամատակարարման դժերը գրեթե չեն պահպանվել, բայց ակնհայտ է, որ գեռես բրոնզի դարաշրջանում այդպիսի բներ են, քանի որ գագակի թվով թերզիներ ջրագուրկ վայրերում են կառուցված⁵⁸: Նույնը կարելի է ասել ավելի ուշ կառուցված բնակավայրերի մասին, որոնցից շատերի ավերակները առ այսօր մնում են: Նրանց լրվելու պատճառը արհավիրքների հետևանքով ջրամատակարարման համակարգի ոլուցացումն է: Անգամ ոչ մեծ բնակավայրերի համար բավականաչափ հնուռ տեղից (մի քանի կմ) ջուր է բերվել: Այդպիսի օրինակներ կան Բասարգեշարի շրջանի Ծովակ և այժմյան Մարտունու շրջանի Թագավորութիւն մերձակայքում, ուր ներառում են կավե խողովակներով կառուցված ջրմուղի հետքեր⁵⁹: Կավե խողովակներով ջրմուղի օրինակ է նաև Տաթևի ջրմուղը, հայտնի են Զանգեզուրի և հատկապես Մեղրու շրջանի բնակավայրերի ծածկած առուները. կարելի է հիշել նաև հնածախ, Նյուվաղի, Շվանիծոր, Ալգարա, Կարման գյուղերինը: Բավականաշափ պարզ է ծածկված առուների (քանքան, քահղիկ) կառուցվածքը, որոնց հատակն ու ծածկը քարե սալերով են կազմված: Դրանք երկարավուն ուղղանկյուն կտրվածք ունեն այնպիսի նվազագույն մեծությամբ, որ մաքրելու համար մի մարդ կարողանա կուցած անցնել նրա միջով: Ջրմուղի այս համակարգերի ավելցուկ ջուրն օգտագործվել է նաև ոռոգման համար:

⁵⁶ Տե՛ս Թ. Ավդարելիյան, Նոր Բայազետի նորագուտս սեպագիրն ու նրա հնագիտական միջավայրը, «Տեղեկագիր ՀԱԽՀ գիտության և արվեստի ինստիտուտ», Երևան, 1927, № 2. Ս. Բայխուսարցան, Վելիթուսի երկիրը, «ՀԱԽՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատություններ», Երևան, 1935:

⁵⁷ Ե. Ե. Պատօնօսէկուն, Վանքու սարցեա, ստ. 140—141.

⁵⁸ Հճափնյա կամ լճի տեղում եղած բնակավայրերը շրով մատակարարվել են Գեղամա լեռնազավածի նախալեռներից, որ գեպի լիճը ձգվող թերթ հարթավայրերի որոշ հատվածներում հայտնաբերվել են ոռոգման ցանցի գեպի լճափ աղբյուր կերպություններից մեջներից մեջներից, «Քիառության և տեխնիկա», Երևան, 1965, № 2,էջ 45):

⁵⁹ Տե՛ս Ե. Լալայան, Գամբարանների պեղումները խորհրդապահին Հայաստանում, Երևան, 1931, էջ 110, Մ. Սմբատյանց, նշված աշխ., էջ 518:

Աղբյուրները կառուցվում էին բնակիչների համար հարմար տեղերում: Դրանք բնակվայրին մոտեցնելու համար շատ հաճախ ջրմուղ են անցկացրել նաև կարծ տարածության վրա: Ընդհանրապես ջրմուղով աղբյուրներն ունեցել են առավել հարմար դիրք ձանապարհների և բնակելի համակառուցների նկատմամբ, եղել են կառուցապատումից ավատ վայրերում, ձամփեղին, հաճախ նաև զյուղի ծալքին: Նրանց դիրքը պայմանավորված է եղել ակերի դիրքով և կամ նրանցից բերվող ջրմուղի կառուցման հարմարություններով⁵⁰: Եղեգիսի օրինակը ցույց է տալիս, որ բաղաբներն ու ավանները ունեցել են ջրմուղի բավականաշահ զարգացած, կանոնավոր ցանց՝ տարրեր տրամաշափի կավե խողովակներով:

Պակաս նշանակություն չեն ունեցել ոռոգման համակարգերը հատկապես այգեգործության և բանջարաբուծության համար: Սարահարթերը, բարձր լեռնալանջերն ու հովտները, որոնք ոռոգման հնարավորություններից գուրկ են եղել, ծառայել են իրեն արտեր և արտաներ, իսկ ոռոգման ենթակա համեմատարար ցածր լանջերին, հովտներում և մանավանդ ձորերում մշակվել են զյուղամերձ այգիներն ու բանջարանոցները: Այդ է պատճառը, որ բնակվայրերի գերազանց մասը գտնվում է ձորերում, լեռնածալքերում և ոչ շատ բարձր լեռնալանջերի վրա: Զանգեզուրի ձորերի գառիթափ լանջերին անհնար լինելով մեծ կառուցումներ կատարել մարդիկ ստիպված են եղել առուներ անցկացնել կարծ տարածությունների վրա, ուստի և այգիները մշակվել են խոր ձորերի ստորին մասում, իսկ սարահարթերը գերազանցապես օգտագործվել են իրեն արտեր և արտաները⁵¹:

Ոռոգման ջրի օգտագործումն առանձնապես կենսական է եղել Մելրու մերձարեկագրային հարավի համար, ուր տեղավորված է շրջանի զյուղերի մեծ մասը, այս վայրերում ոռոգման ջրի մեծ խնայողություն է կատարվում (նկ. 9): Բացի ջրի նպատակահարմար օգտագործելուց առուները հաճախ սաւլարկվել են, նրանց կորուստները նվազագույն չափերի հասցնելու համար: Աշխատասեր զյուղացին մշակել է ամեն մի թիվ ազատ հողը, որի մասին Գ. Շիրմազանը գրում է. «Վահրավոր զյուղի մոտակայքում բարձր ժայռից բխում էր մի փոքրիկ աղբյուր: Աղբյուրի չուրն օգտագործելու նպատակով ժայռի գրեթե անմատչելի թեքության վրա, մեծ ոգվարություններով պատրաստել են դարատափներ, շալակով հող տեղափոխել և տնկել են խաղողի լավորակ այգին»⁵²:

Սստագորի կամ Շվանիծորի մերձակալքում 19-րդ դարի սկզբներին

⁵⁰ Հստ երեսութիւն աղբյուր կառուցելը պատվավոր գործ է համարվել: Նրանցից շատերը կառուցվել են անհատների կողմից իրենց մերձավորների հիշտակը պահպանելու համար: Բնակչան զրությամբ չուրը հասարակական սեփականություն է համարվել զյուղական համայնքների ներսում: Մասնաւոր է եղել արհստական կառուցմը, ինչպես և աղբյուրը, եթե այն իսկամ փակ բնույթ է կրել: Աղբյուրները ստվարաք կառուցվել են համայնքի ուժերով կամ անհատի կողմից՝ համարակության համար (տե՛ս C. A. Եղազարօս, Առաջական ու հայտնի պարագաների մասին, 1889, էջ 245—248).

⁵¹ Մինչև պարսկական տիրապետությունը այդպիսի կառուցվածքների դոյլության մայիս մի աշակերդ վկասություն է տալիս Ս. Եղիազարովը: Նա գրում է. «Գրեթե մարդի յորբանշուր անկյունում մինչև իսկ այժմ կարելի է զննել հակամական ոռոգի կառուցների հետեր, որոնք մարզամասությունները ստվարաք կառուցվել են համայնքի ուժերով կամ անհատի կողմությունում (C. A. Եղազարօս, Խըզական պարագաների մասին, էջ 234):

⁵² Գ. Շիրմազան, Պրիագի Հայաստանի սուրբմատ պատմությանից, Երևան, 1962, էջ 162:



Նկ. 9. Կարճեանի ջրանցքը

կանգում է եղել ներկայիս գործող գեղեցիկ, բարաշնն, միակամար այն ջրանցքը, որի միջոցով ջուրը ձորի մի կողմից մյուսն է տեղափոխվում այգիների ոռոգման համար: Եվրոպացի գիտնական Դյուրուս դը Մոնպերեոն այս կառուցքը տեսնելով՝ զարմանք է հայտնում և միաժամանակ իր հիացմունքն արտահայտում, նշելով շրջակայրում ջրի բաշխման գործում գոյություն ունեցող կարգ ու կանոնը: Նա գրել է. «Այս ջրանցքներն ու ջրանցուցները մեծ աշխատանք և զոհողություն են արդում, բայց նրանք անհրաժեշտ են բերքածավար ստանալու համար, նրանց խնամքի հսկողությունը, հատկապես նշանակված ժամվա ընթացքում ջրի բաշխումը յուրաքանչյուր սեփականատիրոջ նրա գոշտի և խաղողի այգու համար՝ յուրաքանչյուր գյուղում հանձնված է մի անձնավորության, որը կարգավորումների ձիշտ հսկողությունն իր ձեռքումն է պահում անսխալ⁶³:»:

Հիդրոտեխնիկական բարդ և բավականաշափ մեծ կառուցում է 10-րդ դարում Սլովյան Հակոբ եպիսկոպոսի նախաձեռնությամբ կառուցված ջրանցքը, որը Գորիսից մոտ 10—12 կմ Հյուսիսից Զագեծորի բարձունքներից բխող Վարաբակի կամ Ակների աղբյուրներից մինչև Տաթևի վանքի Յաքոս կոչված վայրը, մոտ 30 կմ ճանապարհ կտրելով, կենդանություն է տալիս ձորին: Աւագրության է արժանի այն հանգամանքը, որ սա կառուցված լինելով վանքի տնտեսական կառիքների համար, խմելու ջուր է մատակարարել նորեցիներին, խոտանանցիներին, շինուհայրեցիներին, հալիձորցիներին և այլ գյուղերի⁶⁴:

⁶³ *Davos de Montpereux. Voyage autour du Caucase*, Paris, 1839, էջ 47 (Եղանգական գրության ժամանակակից ժամանակակից էջ 19, ամեն նաև B. Chantre, նշանակած աշխատանքում, էջ 134):

⁶⁴ Տե՛ս Ա. Օրբելյան, Եղիշած աշխատանքում, էջ 254—257:

Զդանցը մեծ հմտությամբ է շինված, շրջանցելով մի շարք ձորեր ու չեղեղատներ առանց արհեստական կառուցվածքների, որի համար էլ մշտական հսկողություն է պահանջել⁶⁵: Վերջին գուուի մոտ ջրանցքի ափին բարձրացող մի մեծ քարի վրա 1294 թվականի մի արձանագրություն կա նրա հիմնական վերանորոգման վերաբերյալ⁶⁶: Այժմ Ակները խմելու ջուր են մատակարարում Գորիս քաղաքին և այլ բնակավայրերի:

Առանձնապես հանդուզն և բարդ աշխատանք է Գնդեվազի ջրանցքի կառուցումը 1098 թվականին⁶⁷: Այսունզ ևս չի ըից օգտվելու իրավունք է վերապահվել մի շարք գյուղերի բնակիչներին, որնց թվում պրակեցիներին և կեչուոցիներին (թենի արգելվում էր չուրը օգտագործել ոռոգման նպատակով): Զրանցը սկիզբ է առնում Որոտանի ակունքներից, ունեցիլ է երկու ջրամբար՝ գիշերը չուր կուտակելու համար: Այն այժմ ոռոգում է 887 հեկտար տարածություն⁶⁸: 19-րդ դարում Որոտանի ջրերն Արփա փոխադրող ևս մեկ ջրանցք է կառուցվել վայրկանում 1 մ³ ջրթողությամբ⁶⁹:

Իրեն արտակարգ բնույթի հիգրոտեխնիկական կառուցվածք հայտնի է նաև Գավառանո առուն, որը կառուցվել է 14-րդ դարում՝ Վասիլ իշխանի որդի Ամիր Վահագի կողմից: Այն սկիզբ է առել Աղմաղանի սարերից, Քյարիմբերանդ գյուղի մոտ բաժանվել երկու մասի, մի ճյուղով ոռոգել է Քյարիմբերանդի արտերը, իսկ մյուսով՝ Գավառի ջրազուրկ հանգերը⁷⁰:

Ջրահեռացման կառուցների մասին առաջմմ մեզ ոչինչ հայտնի չէ, այդպէսիսիք կարող էին լինել ավաններում և քաղաքներում միայն, այն էլ իշխանականների բնակված մասերում: Գյուղերում կեղտաջուրը բնակավայրի միջով անցնող ջրատար առուներն էր թափվում՝ խառնվելով աղբյուրներից հոսող ավելցուկ չըի հետ: Հասկանալի է, որ այդ պայմաններում ջրերի հեռացման համար պետք է բնակավայրի հանապարհներն ու փողոցները որոշակի թերություն ունենային, և իրոք բնակավայրերը մեծ մասամբ թերագիր վայրերում են կառուցված:

Ե. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄԸ

Նկատի ունենալով լեռնալին գյուղերի շափազանց խիտ կառուցապատումը՝ կարող է թվալ, թե Սյունեցի լեռնականը բնավ չի մտածել կանաչապատման առողջապահական և գեղարվեստական նշանակության մասին: Սակայն իրականում հակառակ պատճենն ենք տեսնում: Հայ գյուղացին օգտագործել է միշավայրի բոլոր հնարավորությունները՝ բանջարաբռստանային կուտուրաների և պտղատու ազգիների մշակման համար: Լեռնալին դժվարին պայմաններում ոռոգման բազմաթիվ համակարգերի անցկացումը ինքնին վկայում է այդ շանքերի մասին:

Ինչպես նշեցինք, խիտ կառուցապատումը հիմնականում կենցաղալին և պաշտպանական հենական անհրաժեշտություններով էր պայմանավորված,

65 Տե՛ս Գ. Շիրմազն, նշված աշխ., էջ 158—159:

66 Տե՛ս Ա. Թարխովայրյան, Դիման հայ վիմագրության, պրակ Բ, էջ 78:

67 Տե՛ս Ա. Օրբելյան, նշված աշխ., էջ 262—263:

68 Տե՛ս Գ. Շիրմազն, նշված աշխ., էջ 149:

69 Տե՛ս Ա. Աղախանյան, Զրային տնտեսության զարգացումը Հայաստանում, Երևան, 1960, էջ 38:

70 Տե՛ս Բ. Ավդալիբջյան, Երկու էջ Հայաստանի ոռոգման պատությունից ու նրանց գործնական հետևարձները, «Հյուզաւուսության համար», Երևան, 1927, № 9, էջ 46—47:


իսկ բնակավայրի դիրքի ընտրությունը կապված էր բնակլիմայական պայմանների ըստ հնարավորի առավելագույն նպաստավորության հետ: Շատ դեպքերում անտառներն են ծառայել էրեն շրջապատի բնական կանաչաղութում, բայց մեծ մասամբ կանաչապատումը կատարվել է արձնաստական միջոցներով: Չորեքում ընկած, գյուղերի զգալի մասն օգտվում էր հոսող ջրի ու նրան հզերող կանաչ զոտու շնորհիվ առաջացած օդի թարմությունից:

Կետ կառուցապատված քարձաղիք գյուղերում, որոշ ազատ տարածություններ այնուամենալիվ օգտագործվել են ստվերախիտ ծառեր անկելու համար՝ լայն հանապարհների եզրերին, աղբյուրների ու փոքր հրապարակների կամ հարթակների մեջ, հատկապես եկեղեցու առաջ: Այդ ծառերի տակ հավաքվել են մարդիկ, հանգստացել անցորդները: Մասատունկ չի եղել միայն այնտեղ, որտեղ կիմայի խստությունը արգելը է հանդիսացել:

Փոքր ինչ այլ է եղել պատկերը ցածրադիր, այգեմշակությամբ զբաղվող բնակավայրերում: Այստեղ էլ, ինչպես նշել ենք, առկա են եղել խիտ կառուցապատման որոշ գրւեռորումներ: Բայց հատկապես 19-րդ դարում ցածրադիր բնակավայրերի գերազանց մասում հանդես են գալիս ներքին կանաչ տարածություններ, որոնց մեջ ցրված են եղել բնակելի տները: Գյուղի ներսում տնկվել են առանձին ծառեր, իսկ փողոցներին ու ճանապարհները մնացել են մերկ, մեծ մասամբ խուլ պատերով եզրերված: Ճամփեղին կառուցված տներն իրենց բացվածքներով ուղղված են գետի կանաչ տարածությունները: Ներքին կանաչապատման մեջ ոչ մի կարգ չի եղել, ամեն մի տառեր հարցը լուծել է ըստ իր ճաշակի: Գյուղերում գերազանցապես մշակվել են պտղառու ծառեր, բայց չըների եզրերին, հատկապես ջրաղացների մոտ, տնկել են ունենիներ: բարդին մեծ մասամբ մշակվել է շինափայտի համար:

Կանաչապատման հարցերում Մեղրու շրջանի ցածրադիր զոտու բնակիչները վաղուց զգալի նվաճումներ են ունեցել, որով և արժանացել են ճանապարհորդների զրվատանքին: Ջրամատակարարման ոեժիմի զարմանալի կարգապահությունը, մարդկանց քրտնաշան աշխատանքը ոռոգման համակարգերի ու կառուցների ստեղծման, պահպանման ու շահագործման համար հիշեցնում է հոչակավոր Գողթնը, որին անմիջապես կից են այս վայրերը: Ոչ միայն այդիների, այլև բնակարանների կանաչապատումը մարդկանց ուշադրության կենտրոնում է եղել: Օգտագործվել է ամեն մի հնարավորություն բնակարանների զանազան մասերն ստվերափորելու և բուլսերով զարդարելու համար: Վաղուց հետեւ բացի ծաղկիներից կենցաղ են մտել մերձարևադաշտին մշակությունները, որոնք հանդիպում են գրեթե ամեն մի բակում կամ պատշաճմբում: Նրանք դրվում են թաղարների, արկղերի ու տականների մեջ, որոնք ձևանը մի բանի ամիս առաջ առաջափառվում են շենքերի ներսը: Բայց ամենից ավելի սիրված է որթառուները, որն իր մագլոցով յցուղերով հանում է տան ստվերավորման կարիք ունեցող ամեն մի մասը, չվախենալով կարձատե, ոչ իսկու ցրտերից, բաշինելով մարդկանց իր հյութառաս պառուղները⁷¹:

71 Այս տեսակներից որշակի նմանություն կա ուրբեկական ժողովրդական ճարտարապետության հետ: Բայց երկույթն այն հատկանշական է եղել Արեւելքի տաք շրջաններից շատերին ընդհանրապես: Այդպես կանաչապարփել են Բուխարայի նեղ բակերը, իսկ Ֆերգանայում որթառուները ունեցել են շենքեր անմիջական հարցարանքի գեր (տե՛ս В. Л. Воронина, Народные традиции архитектуры Узбекистана, М., 1951, стр. 48—49): Նույնը կարելի է տակ վացական ժողովրդական ճարտարապետության վերաբերյալ (տե՛ս М. Гагаканиձե, Грузинское деревянное зодчество, М., 1959, стр. 129):



Նկ. 10. Մեղրի ավանը

Որթատունկով են ծածկում նաև շրջապատի ազատ տարածությունները, բակը, հաճախ տնամերձ այգու զգալի մասը, նրա ճյուղերը ու արածվում են ցանկապատերի ու դարպասների վրայով գեպի փողոց, փակուղի կամ բակ, ինչպես և պատշաճ բների վրա: Այդ նպատակին են ծառալեցվել հատուկ ոիթմով դասավորված շրոտների մեջ ու փոքր ցանցերը (նկ. 9, 10դ):

Այս բնակավայրերում ճանապարհները և փոքրիկ հրապարակներն ստվերավորված են սաղարթախիտ հակա ծառերով, որոնց մեջ գյուղական

սպայմաններին առավել լավ են համապատասխանում ընկուզենիները։ Մեղ-
քիում գենես կանգուն են մոտ կես հազարամյա հասակ ունեցող հաստարուն,
ազգարթախիտ սրափներ (չինարի ծառ), որոնց տակ՝ ստվերոտ տարածու-
թյունները մինչև այժմ մարդկանց հավաքավայրեր են հանդիսանում։ Քիչ
չեն նաև բարդիները, որոնք գեղեցիկ ստվերանկարներ են ստեղծում։

Մեղրու կանաչապատման հատկանշական կողմերից մեկն էլ այն է, որ
ալգիները մատել են ավանի մեջ։ Մեծ և Փոքր թաղերն իրարից բաժանված են
ալգիների մեջ կորած ձորով։ Մեղրու ալգիները ձգվում են նաև մի քանի
մեր ձորով վեր ու վար։ Եց ամբողջ ալգեստանի մեջ ցրված հնձաւանը իւրք
հանդիւսացել են ամառանոցային շատ հաճելի բնակարաններ։ Այժմ մարդկի
տոթ եղանակներին ոչ թե հեռանում են բնակավայրերից, այլ գարերի
ընթացքում հարուստ փորձ ձեռք բերելով, կարգավորել են տան շրջապատի
միկրոկլիման՝ օգտագործնելով բնության մեջոցները։

Միջնադարյան բազարների ու ավանների կանաչապատման մասին
մեղ գրեթե ոչինչ հայտնի չէ. բայց վստահ կարելի է ասել, որ աշխա-
տավոր ժողովրդի զրագեցրած մասը զորք է եղել կանաչից, միայն ծալրա-
մասերում են տարբածվել մշակվող հողամասերը։ Հավանաբար վերնախավի
զրագեցրած թաղը ծառազարդ էր, քանի որ այն ավելի նոր ու կանոնավոր էր
կառուցապատվում։ բացի այդ պատմիչի հիշատակած եղեգիսին վերաբերող
ծալրոցները անտարակույս այս մասի համար պետք է ստեղծված լինենի⁷²։
Եղեգիսի այս թաղամասից փոքր ինչ հեռու էր զտնվում Ս. Զալալյանի հիշած
տունահանդիսների հրապարակը, շոշապատված «ծաղկածին» և «մար-
գարտարուս» վայրերով ու թավաթուփ մալրիներով⁷³։

* * *

Մյունիբի բնակավայրերի կառուցապատմանը վերաբերող տվյալների
ուսումնաժիրումից եղանակացնում ենք, որ այստեղ անհիշելի ժամանակներից
դպալի աշխատանք է կատարվել բնակավայրերում, նրանց շրջապատում և
ամբողջ երկրում տնտեսական-կենցաղային հարմարավետ պայմաններ ստեղ-
ծելու ուղղությամբ։ Բարեկարգ հանապարհների, ջրամատակարարման հա-
մակարգերի, ալգիների, պարտեզների, բանշարանոցների, արտերի և արոտնե-
րի ստեղծումը, շահագործումն ու պահպանումը շատ հաճախ փորձի, գիտելիք-
ների և բարձր մաշակի արդյունք են հանդիսանում։ Քաղաքաշինարարական
երկույթների մեջ ամենաուշագրավը բնակավայրերի կառուցապատման է
հանդիսացել։ Նրա պատմությունն ակսվում է նախնադարյան բերդեն բնակա-
վայրերով և զարգացման մի անընդհատ շղթա կազմելով անցնում է ուրարտա-
կան և միջնադարյան քաղաքներով, ավաններով, զուրկերով և ընդգրկում ուշ
միջնադարի ավաններն ու նախատվետական քաղաքները։ Սակայն
նոր ժամանակների քաղաքաստեղծման փուլն առաջին հայացքից կարծես
հեռանում է այս ընդհանուր պրոցեսից։ բայց այստեղ էլ վերլուծությունն
ի հայտ է բերում ժողովրդական ավանդույթների անուղղակի ներթափանցումը
մասնագիտական ստեղծագործական պրակտիկայի մեջ։

⁷² Տե՛ս Ս. Օսրելյան, նշված աշխ., էջ 260։

⁷³ Տե՛ս Ս. Զալալյան, նշված աշխ., էջ 155։

ՊԱՏՍՄԱՐԱՆՆԵՐ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՌՈՒՅՅԱՆՆԵՐ

Ա. ՀՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՍՄԱՐԱՆՆԵՐ

Սյունիքի տարածություններում բնակություն հաստատած ցեղերի առաջին արհեստական բնակարաններից են եղել գոլմենատիպ բնակարանները՝ նրանց մասին դաշտար են տալիս բազմաթիվ պեղածո զամբարանները, որոնք գրեթե բոլոր հնագոտողների կարծիքով՝ կրինում են հնագույն տիպի բնակարանների ձևերը, թեև նրանք մեծ մասամբ պատկանում են հնագույն ժամանակագրական գաղափարների կամ արդի հանդես չգալու կարծիքը պայմանական է և արդյունք նյութերի սակալության։ 1959 թվականին Մ. Հասրաթյանը Սիսիանի շրջանի Ախության գյուղում պեղել է գոլմենատիպ կառուցյներ, որոնք ծառայել են ինչպես բնակության, այնպես էլ թաղման համար։ Դրանք ունեցել են ուղղանկուուն կամ ձվածիր հաստակագծեր, պատերը կառուցված են եղել հնակայական քարերի 3—4 շարքերով, իսկ գոլմեններն ամբողջությամբ ծածկված են եղել 5—6 անշահ քարե հսկա սալերով։ Այս գոլմեններում հայտնաբերված երկաթեղեն իրերը՝ կառուցյների ժամանակաշրջանը բնութագրելու համար մեր կարծիքով՝ անբավարար են, վերջինները կարող էին կառուցված լինել ավելի վաղ ժամանականներում և իրեր հաստատուն պատսպարան օգտագործվել նաև հետագայում։ Այս տեսակերպից են նաև Գուշունդաշի գոլմենները, որոնք մինչեւ 14 մետր երկարության, 2—3 մետր լայնության և մոտ 2 մետր բարձրության ծավալներ են ընդորուել։ Գրեթե ամբողջությամբ գետնի մեջ գտնվող պատերը կազմված են միշակ մեծության քարերով, որոնց վերնամասը գեղի ներս է թերված ծածկի թոփքը փոքրացնելու նպատակով։ Բոլոր գոլմենները ծածկված են եղել նախ քառ հսկա սալերով և ապա հողածածկ քարաթմբով կամ ուղղակի հողաթմբով։ Անշաղրավ է, որ այդ գոլմեններում մարդկային սոկորներ շեն հայտնաբերվել, իսկ բականման, ցանկապատված կից տարածությունները վկայում են նրանց իրեր բնակարան ծառայած լինելու մասին²։ Բայց և այնպես նրանց մեջ հավանաբար եղել են դամբարաններ, որոնցից մեկն էր բնակավայրի հարավային մուտքի մոտ գտնվող մեծ կրոմեխոր։ Ղոշունդաշում առկա են եղել նաև միջին

1 Տե՛ս A. A. Martirosyan, Раскопки в Головине, Ереван, 1954, стр. 16.

2 Տե՛ս C. D. Lissitsian, Кошун-даш. Мегалитическое городище в Сисиане (Запись), „Сборник в честь 45-летия И. Я. Марра“, М.—Л., 1925, стр. 709—721.

բրոնդի դարին պատկանող ավելի կատարելագործված բնակարաններ ուղղան-կուն և բոլորաձև բաժանմունքների համակցումով³:

Նախնադարյան մարդու համար գետնափոր-կիսագետնափոր և վերերկրյա դոլմենատիպ այս կառուցյանը, ինչպես և հավանաբար բարանձավների առաջ կառուցվող, ճյուղերով կազմված շվաքները հանդես էին գալիս իրեւ բնության ուժերի գեմ պայքարելու համար անհրաժեշտ միջավայրը կազմակերպելու պարզունակ միջոցներ:

Բնակարանի ձեւավորման պրոցեսը խորապես կապված է կրակի օդատա-գործման հետ, օշախով են պայմանավորված եղել նախնադարյան բնակա-րանների հատակագծային և ծավալային համագործադրեները: Դրանով կարելի է բացատրել հնագույն բնակարանների բոլորաձև կառուցվածքը, որի առաջին նմուշները պեղել է Ե. Լալայանը 1903 թվականին Վայոց ձորի Սովորան քահանաի կոչված վայրում⁴: Այդ ավերակները գտնվելիս են եղել Վերին Դալախիլու գյուղից մոտ 1,5 կմ հարավ-արևմուտք ընկած մի հովտում, որտեղ եղել են նաև բավականաշափ մեծ քարանձավներ: Բնակավայրն ունեցել է կիկլոպյան պարփակներ, որոնց հետքերը նկատելի են հովտի ուղղությամբ, ձգված արևմուտքից արևելք: Այս պարփակների միջև, գետնի մեջ, մանր քարերով, առանց շաղախի կառուցված բոլորաձև բազմաթիվ տներ են եղել, որոնք ունեցել են մոտ 1,5—3 մետր բարձրություն և ծածկված են եղել 3—4 հատ, մոտ 3—4,5 մետր երկարության և 80—120 սմ լայնության քարերով: Լալայանը շեշտում է, որ «ամեն մի խրձիթ մի սենյակից է և ունի մի դուռ, մեծ մասին գեպի արևելք բացվող»: Կտրի վրա մի անցք է եղել իրեւ լուսամուտ և օդանցք⁵:

Այստեղ Ե. Լալայանը հայտնաբերել է միայն քարե գործիքներ, իսկ պեղ-ված գամբանաթմբերից մոխրից բացի ոչինչ չի դուրս եկել: Վերջին հանգա-մանքը ցոյց է տալիս, թե զրանք դիմիկման հնագույն սովորութիւն ժամանա-կաշշանին պետք է պատկանած լինեն: Լճաշենի համապատասխան դամբա-րանները Հ. Մնացականյանը թվագրում է մ. թ. ա. երկրորդ հազարամյակի սկիզբները⁶: Թերևս զրանք ավելի վաղ ժամանակաշրջանի են:

Բոլորաձև բնակարանի հիշալ տիպարն առանձնահատուկ նշանակություն ունի բնակարանաշինության հետագա զարգացման համար, որովհետեւ հանդիսացել է այն նախանմուշը, որի հիման վրա բրոնդի գարաշշանում աստիճանաբար ձեւավորվել է գլխատունը և նրան կից ճարտարապետական համակառուցքը: Ուրարտուի գյուղիյանը անմիջապես նախորդող ժամանակա-շրջանում (մ. թ. ա. 2-րդ և 1-ին հազարամյակների սահմանագլուխ) բնակա-րանային համակառուցքի մեջ արդեն սկսում է բոլորաձև կենտրոնական բաժանմունքը: Գոյսարդինիվել ուղղանկյունով, պահպանելով ու զարգացման նոր աստիճանի հասցնելով գերանաշար բրգածե ծածկի արդեն իսկ գյուղուն

³ A. A. Մարտիրօսյան, Գործ Տեղաբանու, Երևան, 1961, ստ. 32.

⁴ Ե. Լալայան, վայոց ձոր, «Աղբարական հանդես», 13-րդ գիրք, Թիֆլիս, 1906, էջ 246: տե՛ս նաև նոյնի, Թամբարանների պեղումները խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 62—66:

⁵ Բնակավայրի հյուսիս-արևմտյան կողմում եղել են դամբանաթումբ-կրոմեխներ և տեղ-տեղ՝ մենակերպներ:

⁶ Հ. Մնացականյան, Հնագույն հուշարձանների նշանավոր օջախը, «Սովորական զրականություն», 1963, № 2:

ունեցող տիպարը: Սյունիքի տարածքում (Սևանա լճի ավազան, Սիսիսին և ալլն) և առջասարակ Հայաստանում մեղ հասած բերդշների բնակարանացին համակառուցներում, առանց բացառության, կենտրոնական համամիմիչ գեր է կատարել զիմատան այս նախատիպարը⁷:

Նախադարյան ամրոց-բնակատեղների բնակարանացին համակառուցների հատակագծային և ծավալացին լուծման մասին մանրամասն ուսումնասիրություններ չկան: Ենթելով - քարաշար գիմքերի ու հիմնապատերի աննշան մնացորդներից՝ կարելի է ենթագրել, որ տարածված են եղել կավաշեն տները, ինչպիսիք կային ցածրագիր շրջանների էներլիթյան բնակավայրերում (Շենգավիթ, Շրեշ-բլուր, Քյուլթափա, Գառնի): Դիտելով իրար կամած բազմաթիվ շենքերի ավերակները՝ կարելի է ենթազրել, որ դրանք եղել են զիմատան ճարտարապետական համակառուցի նախատիպարներ: Հավանական է թվում նախատան ծածկի ավելի հասարակ ձեզ, քան այն հազարաշենը, որը ներկայացված է Հ. Մարտիրոսյանի կողմից իբրև պեղածո զիմատան կառուցվածքի վերակազմության գծագիր⁸: Գլխատան ծածկի արտաքին ձևերին բոլորովին խորթ է ողորկ-զնդակեր. ուստի և մեզ բոլորովին անհավանական է թվում այդպիսի ձեզ և նրանից ենթելով կատարված համեմատությունները Մերձավոր և Միջին Արևելքի ծածկերի համապատասխան նմուշների հետ: Կարմիր բլուրի բնակավայրերի ստորին շերտի և այլ վայրերի գեռես շափազանց պարզունակ կառուցյներում ավելի տրամաբանական կլիներ պատկերացնել ուղղանկյուն դասավորությամբ կազմված բրդածե զերանածածկը, որն ավելի պարզ է կառուցման տեխնիկայով և հատկանշական ոչ միայն թերցերախիթի, այլև ուշ միջնադարյան Հայաստանի արևելքան շրջանների համար: Նույնը կարելի է ասել թերցերախիթի ուրարտական բազմաբջիջ բնակարանների ծածկի վերաբերյալ, այսուեղ նույնպես հավանական է ուղղանկյուն գերանաշարքերով ծածկը, քան այսպես կոչված սողոմաքաշը (Հազարաշեն):

Հնագույն պատսպարանների շարքին կարելի է դասել նաև ժայռափոր բնակարանները: Քարանձավանները կենցաղային նպատակների համար շատ վաղ են օգտագործվել: Հնագույն քարանձավները բնական ժայռափոռուններ են եղել, որոնք մուտքի կողմից պատճեղվել են անշաղախ քարե պատերով: Առանձնապես նշանավոր են Ծովակ գյուղին մերձակա լընդարձակ քարանձավները երկուական քաժանմունքով: Անհիշելի ժամանակներից ի վեր քարանձավաբնակությունը սովորությ է զարգածել Զանգեզուգի շատ բնակիչների համար, որոնք փորել են բնակարաններ և օժանդակ նպատակների ծառայող այրեր: Քրանք աստիճանաբար շրջապատվել են շինվածքներով, զառնալով համակառուցի օժանդակ մասը: Ժայռափոր կառուցյները ստեղծվել են բրոնզ և հատկապես երկաթի զորդիքների կիրառման ժամանակաշրջանում:

⁷ Տե՛ս A. A. Martirosyan, Գործ Տեյշեբանի, стр. 25—37. Բոլորանե հատակագծով տան Հայաստանում ներկթյան կացարանի տիպար հանգիստանալու մասին տե՛ս Է. Խանզարյան, Հայկական լիոնաշխարհի մշակույթը մ.թ.ա. 3-րդ հազարամյակում, Երևան, 1997, էջ 7-32; Ա. Հ. Սարգսյան, Նախնակարյան հաստակությունը Հայաստանում, էջ 133—150.



⁸ Տե՛ս A. A. Martirosyan, Գործ Տեյշեբանի, стр. 8—37, ինչպես նաև նույնի Новые данные по истории города Тейшебани, «Պատմա-լանսակարական հանգեստ, 1962, № 3, էջ 221—233».

Ժաւուակիոր կառուցվածքների բազմաթիվ նմուշներ են պահպանվել չստանձնապես Գորիսի շրջանում: Իրենց պարզագույն ձևերով այդ կառուցվածքները հիշեցնում են նախնադարյան ժամանակների պատսպարանները մարդկանց և անաստոնների համար, որոնք ցրված են ծակոտկեն քարաժայութեցի «քրերծերի» մեջ, ձորերի լանջերին, կոնաձև հոկա ժայռերում և կոչվում են «քրատակ» (քարատակ): Այդ «քրատակները» ծառայել են իբրև բնակարան, միաժամանակ՝ անասնանոց և բնակարան, գոմ, փարախ և կամ իբրև մարդկանց խոտանոց: Եղել են նույնիսկ արհեստանոցներ, իսկ Հին Գորիսի ստորին մատում, համբեկըրին տեղավորված քարավանատունը բաղկացած է եղել մի քանի քարայրներից:

Իբրև բնակարան ծառայող քարանձավները հիմնականում բաղկացած են մի մեծ քաժամունքից, երբեմն նաև հարակից խորոշ-սենյակներից: Այդ քաժամունքին ունի մի մուտք և երբեմն նաև նրանից ոչ շատ հեռու, առաստաղի մեջ, վլիմափոր մի երգիկ, որը ծառայում է ծխի հեռացման, օդափոխման, մասամբ նաև լուսավորման համար: Օդափոխումն արդյունավետ դարձնելու համար դռան վրա հաճախ հատուկ անցքեր են թողել: Հատակի մեջ երդեմն օշախի մի փոսիկ և նույնիսկ թոնիր է լինում, պատերի մեջ՝ խորշեր, իսկ պատերի տակ՝ վիմափոր սատարաններ, որոնք ծառայել են նաև իբրև մսուր: Պատերը հարթեցվել, բայց չեն ողորկվել, նրանց վրա երկում են նույնիսկ փորող գործիքի հետքերը: Մավալային կամ հատակագծային կանոնավոր, երկրաշափական ձև ստեղծելու ձգտում չի եղել բնավ (նկ. 11, 37թ): Հատակիները թեքությամբ իշնում են խորքից գեպի դուռը, որի առաջ նույնպես թեք մի հալբթակ է պատրաստված սրպես քակ: Երբեմն գեպի բակն են բացվում նաև օժանդակ կառուցվածքներ՝ մարագներ, հնձաններ և այլն: Կան քարանձավներ, որոնք կառուցվել են պաշտպանական նկատառումներով, զուրփ՝ են բակից և ուր կարելի է բարձրանալ պարանների օգնությամբ միայն: Քարանձավները ժամանակի ընթացքում լրացվել, ավելի հարմարավետ են զարձվել և շրջապատվել առջևից թագակապ կառուցվածքներով: Վերշիններս ճակատացնեն կամարներով նախարահներ են եղել, կենցաղային բազմաթիվ հարմարություններով՝ օշախով, թոնքով, պահարանախորշերով և այլն: Բակի տարածությունը մեծացնելու նպատակով կառուցվել են նաև կամարակապ հենապատեր: Եղել են հատուկինոտ ժայռափոր բնակարաններ, որոնք ներբին աստիճաններով միացած մի քանի հարկից են բաղկացել: Պրանք նույնիսկ պատշգամբ են ունեցել վերին հարկերում:


Որպես օժանդակ կառուցներ օգտագործվող քարանձավներն ընդգրկված են ամենաբազմազան շինությունների մեջ, որոնցից հնագույններն են հանդիսանում զլիստան համակառուցները: Ստորին հարկում սովորաբար լինում են մարազը, զոմը և փայտախը, մառանները գերազանցակես զլիստան մեջն են բացվում: Օժանդակ նպատակների համար քարանձավների օգտագործման լավագույն նմուշներ են երկհարկանի և եռահարկ այն կառուցները, որոնք խիստ ինքնատիպ լինելով հանդերձ հիշեցնում են քաղաքատիպ շենքերը: Իբրև մարագ և անասնանոց ծառայող այդպիսի քարանձավների թաղակապ նախամուտքերի կամարների վրա բարձրացել են բնակելի հարկի պատը և կամ սենյակների առաջ գտնվող պատշգամբի սյուները (նկ. 41): Քարանձավներին կից կառուցվել են նաև թաղակապ տներ (նկ. 11ա):

Ժայռափոր զոմեր հանդիպում են նաև մեկուսի կառուցված, տանը կից,



Կի. 11. Կլամափոք կառուցմանը

Համ բոլորովին առանձին, հատկապես զյուղի ծայրին (նկ. 12): Նրանք դեպի խորքը լայնացող հատակագծեր ունեն, դրսից՝ ուղղանկյուն նախասրահ, ներսի պատերի տակ՝ վիմափոր մսուրներ: Ներքին կառուցվածքին հակադիր, գոմերի նախամուտքերն ունեցել են ավելի կանոնափոր ձևեր, նույնպիսի խնամքով ու ճաշակով ստեղծված, ինչպես ժայռափոր բնակարաններինը:



Նկ. 12. Վիմափոր գոմեր Քարահունչում

Վիմափոր խոտանոցները սովորաբար եղել են կալերին կից, նրանց հարթակից ցածր, փորված լանջի կողքին: Վերևից երդիկի նման մի անցքով ցած է թափվել կալսած հարդը կամ ծղուտը: Նրանք հաստափոր 22ի տեսք ունեն և ցածից, մուտքի առաջ, հարթակ:

Որոշ քարանձավներ հատկացվել են այլ նպատակների՝ հատկապես պաշտամունքի (աղոթատեղի, ուխտավայր, ճգնարան): Վերջններս զբեթե միշտ քնակալվարերից գուրս են եղել: Մարտիրոս գյուղում Գեղարդաձորի հուշարձաններին ժամանակակից վիմափոր եկեղեցիներ կան, որոնք ունեն կանոնավոր երկրաշափական ձևեր, բայց քանդակագրոված չեն:

Ուշգրավ են Կամոյի ժայռաբլրի հարավային կողմի քարանձավները, որոնցից երկուսը կապված են իրար միացնող անցքով: Այստեղ են եղել նաև այն քարե ճրաշակերտ սենյակները, որոնց անդրադարձել են և Մ. Սմբատ-

յանցը, Դ. Ալիշանը, և Թ. Ավղալը եղանք⁹: Վերջինս այդ տեղեկությունները հավասարի համարելով նշում է, որ սենյակների մուտքը ժայռերի փուլ գալու հետևանքով փակվել է, բայց կարելի է բանալ, բանի որ նրանք հնագիտական խոշոր նշանակություն ունեն բեզզի կարեռությունը բացահայտելու տեսակետից: Այս սենյակներն առաջինը մանրամասնորեն նկարագրել է ուն Սարգիս Փիլոյան (վարժապետ, Հետազայռու Սևանա վանքի միաբան) 1888 թվականին գրած իր «Կորպած մարգարիտ» վեպում: Մարտայանցը գրում է, «Եթե ցերեկը մարդ ներս է մտնում սարի հարավային կողմի մուտքից ժայռի մեջը կ մի փոքր հառաջ է զնում, բացվում է առաջին մի դուռ: Դուն շեմքը երեք ամբողջ կոփած քարերից են: Եթե մարդ մտնում է ներս, երևում է առաջին մի խավարային լաբիրինթոս: Մի ակամա սարսուռ զգալով վառում է ձեռքի ճրագը և հետը տանում ներս և ի՞նչ է տեսնում և զգում... սարսափելու փոխանակ սկսում է ապշել, հիանալ, զմայլել մարդկային անսանձ սիրադրությունների վրա:

Ի՞նչ ճարտարապետությամբ շինված մեկ մեկու մեջ մինչև քանի քանի սենյակներ: Պատերը հզկած և վարպետությամբ միմյանց հացցրած քարեր են, և մի քանիսի յուրաքանչյուր պատը կամ առաստաղը՝ միապաղպաղ քարից է կտրած և քանդակներով զարդարված: Այդ տեղից մի ստորերկրյա ձանապարհ տանում է դեպի գետը, որտեղից, փնտիքն կարծվում է, չուր են տարել պատսպարվածները»:

Եղրափակելու համար հնագույն պատսպարաններին վերաբերող այս ենթարաժինը նշենք նաև բնակարանի մի այլ տիպար, որի գոյությունը մեր կարծիքով բավականաշափ տարակուսելի է: Դրանք ցցաշեն տներ են Սևանա լճի վրա, որոնց մասին իբրև ականատես գրում են հնագիտ Յ. Բայերնը և Յ. Լալայանը¹⁰:

Յ. Բայերնը 1849 թվականին նոր Բայազետի գավառի ելենովիկա գյուղի մոտ, լճի մեջ տեսել է զերանների զուգածուր զասավորությամբ երկու շարք և համարել, որ դրա վրա եղել է ցցաշեն խրճիթների երկու խումբ, կամ զուղեր միացնող մի կամուրջ: Յ. Լալայանը և լճի արևելյան կողմում, Գիլլի գետակը նրա մեջ թափվելու տեղից փոքր ինչ հեռու, չըի մակերեսութից մոտ մի մետր ցած նկատել է ցցված չորս գերան:

Այս գտառղությունները հնագիտական ոչ մի փաստարկումով չեն ուղեցված: Արձանագրված փաստերը ժխտեն անհնարի է: Բայց մենք կարող ենք տարակուսել նրանց նախնադարյան ժամանակների պատկանելուն հայտնած կարծիքների մասին: Միջնադարյան վիճական շատ արձանագրություններում նավերի ու ձկնորսարանի նվիրատվության հիշատակություններ կան, որոնցից եղանակնում ենք որ լին օգտագործել է երթևեկության և ձկնորսական նպատակներու: Հետեւաբար կասկածից վեր է նրա ափերի մոտ նավահանգստային կամ ձկնորսական փայտաշեն կառուցների գոյությունը իբրև հայ ապնիվականների սեփականություն: Հնարավոր է, որ այդ կառուցների մնացորդներն են վերոհիշալները:

⁹ Մ. Սմբատյանց, նշված աշխ., էջ 449; Դ. Ալիշան, Սիսական, էջ 43; Թ. Ավղալիքյան, նոր Բայազետի նորագույն սեպագիրն ու նրա հնագիտական միջավայրը, էջ 209—210:

¹⁰ Փ. Բայեր, О древних сооружениях на Кавказе, „Сборник сведений о Кавказе“ том I, Тифлис, 1871, б. Լալայան, Գամբարանների պեղումները, էջ 117.

Բնակելի տան հին տիպարների մեջ գլխատունն ամենատարածվածն է: Այն բնդունված է համարել լեռնային շրջաններին բնորոշ բնակարան, թեև օգտագործվել է նաև հարթավայրերում¹¹: Սյունիքին հատկանշական բնակարանն ուղղական գլխատունն է հանդիսացել: Այս հանգամանքը փաստարկող աղքագրական նյութերի կողքին կա նաև մի հին վկայություն: 19-րդ դարի սկզբներին Զանգեզուրով անցնելիս միաժամանակ Ելի Սմիան իր ճանապարհորդական տպագրությունների մեջ նկարագրելով այժմյան Սիսիանի շրջանի Կոր գյուղի մի գլխատուն՝ այն հատկանշական է համարում տեղիս համար¹²: Միայն 19-րդ դարի վերջերին է, որ բնակելի տան այդ տիպարը փոխարինվել է 2—3 սենյականոց, պատշգամբավոր, արեահայց տներով¹³:

Գլխատունը մի ուղղանկյուն սենյակ է, որի ամբողջ ծածկը կամ նրա կենտրոնական մասը քառակուսի, ուղղանկյուն կամ քազմանիստ հիմքով, հորիզոնական գերաններից կազմված յուրօրինակ գմբեթի ձև ունի: Վերջինս բարձրանում է սյուների կամ ուղղակի պատերի վրա և ծածկված է չերմամեկութիւն և անջրանցիկ հողե պատշաճով: Լուսավորության և օդափոխման համար գերանաշարերի գագաթում քառակուսի կամ բուրրաձև անցք է թողնելիք, որը կոչվում է երդիկ: Հին գլխատուներում լուսամուտներ բոլորովին չեն եղել բացի երդիկից, որը ճնում փակվել է փայտե վահանով, իսկ ավելի ուշ՝ պատկենած շրջանակով: Շամերի այս ձեզ հանապատմական ժամանակներից կիրառվել է օջախի ծովաքը հնացանելու, անձնեացրերի հոսքն ապահովելու, երկար գերանները խնայելու և կարծ գերաններով մեծ թռիչքներ ծածկելու համար (նկ. 13): Ավելի ուշ սկսել են կիրառվել կամարակապ հենամասերով և նույնիսկ ամբողջությամբ կամ մասամբ քարաշեն ծածկեր, որոնք ունենալով փայտաշեն ծածկերի ձեռքը՝ նույն դերն են կատարել:

Ինպէս նշվեց, նախնագարյան համայնական հասարակարգի վաղ շրջաններում սրանք միասինյակ կառուցյներ են եղել, որոնք հետագայում շրջապատվել են օժանդակ սենյակներով ու բաժանմունքներով: Միասինյակ տների մասին մի ուշագրավ վկայություն է տալիս Ժաք Սորիերը նշելով, որ 19-րդ դարի սկզբներին այս տիպի տներում միասին են ապրել մարդիկ և անասունները, իրարից մեկուսացած ընդունեն մի ցանկապատով¹⁴: Նույն կարգի մի վկայություն, արդեն Զանգեզուրի մասին, տալիս է Բ. Շանտրը: Նա գրում է, «Եթիկահողում բնակարանները քարից ու հողից են և հարթ կտուրները կրում են կոնաձև ծխնելույզներ: Այնտեղ մեծաբանակ շերամ են բու-

¹¹ Բրաձն ու հարթ ծածկեր ունեցող տան երկու տիպարների արգեն կազմավորված նմունքները հայտնաբերվել են որպատական թերեախնի քաղաքում (տե՛ս «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 28—32): Հայկական բարձրագանգառ գլխատուների գոյտիքան մասին առաջին վկայությունը տալիս է Քաննիքոնը Անաբաս. Պերսոն, հայության մասին, 1951, էջ 112):

¹² E. Smith, Աշխարհագրություն, էջ 232:

¹³ Е. Мелик-Шахназаров, Селение Арцваник, Занげзурского уезда Елисаветпольской губернии. Сборник материалов для описания местностей и племен Кавказа*, выпуск XXV, отдел II, Тифлис. 1898, стр. 14—15.

¹⁴ Jaques Morizet, Second voyage en Perse, en Arménie et dans l' Asie-Mineure, tom 2, Paris, 1818, p. 422—423.

ծում: Բուժարանները կազմում են հատակից 1—1,5 մետր բարձր գտնվող հյուսվածքներով: Դրանցից բուժում են նաև մի բանի տներում, որոնք կազմված են ընդամենք մի սենյակից (ընդդժումը մերն է—ն. Պ.), որտեղ քնում է ամբողջ ընտանիքը, օչախի շուրջը, որը գտնվում է սենյակի մեջ-տեղում, դրված են թիկիրի ճաւզեր և գրանց գրա է, որ աշխատում են խեղճ միջատներով¹⁵: Մեր հաշողվել է շափակել մի սենյականց բնակարանի մի բանի լրված նմուշներ:


Գլխատունը շնորուցվել է օշախով, թոնրով կամ բուժաբիկով: Օշախի ամենապարզ ձևը բարերով եղերված մի փոս է եղել¹⁶: Սյունիքում եղել են բարաշեն ու կավաշեն օշախների ավելի բարդ ձևեր, որոնք առհասարակ մեզ չեն հասել թոնիքը օշախի ավելի կատարելագործված ձեն է, որը շատ ավելի խորն է (մինչև մեկ մետր և քանի-երեսուն սմ), շրջանածկ, զեպի ցած լայնացող հորդիկոնական կտրվածքով: Թոնիքը կավաշեն է, երբեմն վերելից քարերով եղերված: Հատուկ օգանցքը, նույնպես կավից, սովորաբար խողովակածե, ապահովում է վառվող կրակն անհամեշատ թթվածնով: Երբեմն թոնիքները լինում են մեկից ավելի՝ հացի, ճաշի և տարացման համար առանձին-առանձին, հատկապես այն դեպքերում, երբ սենյակում բուժարիկ չլաւ¹⁷:

Հիշյալ կրակարանները ուղիղ երդիկի տակ չեն լինում սովորաբար՝ նրանց շորջը բոլորած մարդկանց, ինչպես և կրակը զերծ պահելու համար թափող անձրևաջրերից կամ փոշուց: Արևմայան Հայաստանում, հատկապես Բարձր Հայքում սենյակի մեջ՝ նույնպես երդիկավոր գմբեթով ծածկված մեծ խորշի ձևով առանձնացրել են խոհանոցային բաժանմունքը իր թոնրով, որը հնարավորություն է տվել տնեցիներին աղատվել ծիսից: Այս բաժանմունքն առչեց կամ բոլորովին բաց է եղել և կամ մեծ կամարակապ բացվածքով պատ է ոնեցել, իսկ հատակը փոքր ինչ (30—40 սմ) բարձր է եղել տան հատակից: Այսպիսի խոհանոցները երբեմն այնքան մեծ են եղել և առցեցից քաց, որ միաձուվել են սենյակի հետ և ստացվել է երկարեթ դաշիճի տպավորություն: Տվյալ լուծումը հավանաբար լայն տարածում է գտել հնում, երբ բազմանդամ գերդաստաններ պատսպարվում էին մի հարկի տակ: Այս կարգի տներն իրենց հատակի մակերեսի մեծության պատճառով օգտագործվել են հավաքույթների, մանավանդ հարսանեկան հանդեսների համար: Սյունիքում բնակարանի նման լուծումներ ըստ երևութին չեն կիրառվել,

¹⁵ B. Chantre, նշված աշխ., էջ 126:

¹⁶ Տե՛ս նաև Ղ. Կյորսու, նշված աշխ., էջ 233:


¹⁷ Թոնիքը վառելիս սկզբում ծովիր լցվում է ամբողջ տունը, մարդիկ հարկադրված ան լինում այդ ժամանակ հնառանալ սենյակից և կամ նստել հատակին, ուր ծովիր համեմատաբար նոր է լինում: Սովոր անցնելոց հետո թոնիք օգանցքը փակում են, այնս չծխացող կրակը երկար պահպակելու համար: Այդ ժամանակ հացբուխ կանաչք սկսում են հացը (մեծ մասամբ լսված) թիւն մի տափակ ամոր բարձր օգնությամբ կցվնելով թոնիք պատերին: Այնուհետև այն հանվում է երկարթ, կեռ ծայր ունեցող ձողով և մաքոր փոսոցի գրա շրպում մինչև սառչեն ու որոշ շափով շրանալը: Թոնիքի գրա սովորաբար խաչաձև երկար զնկով՝ փոքր ամսանվ ճաշ պատրաստելու հարավորության է ստեղծվում, թոնիք պատերը երկար ժամանակ տաք են մնում, և մարդիկ առանձակ համար հանգած թոնիքի գրա զնում են թուրանի՝ կոչվող քառակուսի կամ բոլորածի ցածը սեղանը և այն ծածկում մի հաստ սփռոցով կամ վերմակով: Այնուհետև այդ մեծ ծածկոցի տակ մինչև կործքը թաղվելով պահում են տնեցիները: Գյուղացիները սիրում են նաև տաք թոնիքի մեջ տարացնել իրենց սոքերը: Թոնիքները սանենում են նաև կավաշեն հուսի:



Նկ. 13. Գյուղատոն Արծվանիկում

միայն Սևանա լճի ավազանում հատուկենտ նմուշներ են ստեղծվել արևմտահայ գաղթականների կողմբց: Այդպիսի ձև է ունեցել նաև նոր Բայազետի վերնախավին պատկանող Մամիկոնյանների տունը:


Զանգեզուրում, սկսած անցյալ դարից, երբեմն տան համակառուցից մեկուսի, բակի մի անկյունում առանձին շենք են կառուցել իրեն խոհանոց, որն ունի միաթեք կտուրով՝ առջևից բաց սենյակի տեսք: Նրա առջևի մասը պատճեշված է եղել հացթուխներին քամուց պաշտպանելու համար:



Նկ. 14. Շխանցքածածկ քար Խնձորեսկից

Ծխից ագատվելու մի այլ միջոց է հանդիսացել բուխարիկը Զանգեզուրում, որը հավանաբար այստեղ տարածում է գտել անտառանցութիւն առատության շնորհիվ: Դա սենյակի պատերից մեկի կամարակապ բացվածքով կամ սրածայր ծխահավաք ելուստով մի խորշ է իր ծխնելուցով, որը կտորի վրա ավարտվում է ամենաբազմազան ձևի ծխանցքածածկ քարերով, որոնց մեջ նույնիսկ քանդակագրադ նմուշներ կան (նկ. 14): Տեղ-տեղ դրանք փոխարինվել են փոքրիկ կարասների վերնամասերով և կամ թեք ծածկով պատուհանի տեսք ունեցող կառուցամասերով: Այժմ այդ բուլորի փոխարեն թիթեղի հասարակ խողովակներ են զնում: Հիշյալ կառուցամասերը լինում են նաև հարթ կտորների երդիկների վրա: Բուխարիկի ստորին մասում, նրա բացվածքի մեջ, կողքերից քարե ելուստներ հնարան են ծառայել երկաթածողերի համար, որոնց վրա դրվել է կաթսան: Բուխարիկի խորշը հատակի մոտ սովորաբար պատճեշված է եղել քարե ուղղանկյուն մի եղբակալով, որը խանդարել է մոխրի ու կայծերի՝ սենյակի մեջ տարածվելուն: Նույնպիսի խնամքով կառուցվել են նաև բնակելի համակառուցից այլ բաժանմունքների բուխարիկները (նկ. 53): Իրեն բնակարանի մեծ կարեռություն ներկայացնող բաղկացուցիչ տարր բուխարիկը հաճախ մշակվել է արտակարդ նրբության հասնող քանդակներով, որոնք տանտիրոջ պարծանքի:

Բուխարիկի կողքերին գրեթե միշտ պաշարանախորշեր են եղել, իսկ վրան՝ պատի հարթությունից փորր ինչ գուրք եկող մի քար, որը լմբարձու




Նկ. 15. Գլխատան համակառուց Զարանլուղում (Գեղհովիս)

(լամպաթար) է կոչվել, մատնանշելով նրա նշանակությունը (Նկ. 13): Որ յնախորշեր կան ժողովրդական բնակելի տան գրեթե բոլոր պատերի մեջ, որոնք երբեմն հասնում են արտակարգ մեծ չափերի և ծառայում տարրեր նպատակների՝ համապատասխանաբար կոչվելով՝ առագաստ, ծալքատեղ, իուրյակի տեղ (ամբարտեղ), թախտատեղ և այլն: Այդ խորշերը հաճախ կամարակապ

Են, երբեմն սրբատաշ բարերով, երբեմն էլ ծածկվել են խնամքով պատրաստված փեղկերով: Հատուկ ուշադրություն է զարձվել այդ խորշերի հարմարությանը: Դրամը և արժեքավոր մանր իրերը պահպահ են գանձախորշերում, որոնք մեծ մասամբ դրսից սվաղված խոռոչներ են պատի մեջ: Անանա լճի ավաղանում դրանք պատի մեջ տեղափորված կավե անոթներ՝ կճուններ են, որոնք դրամը են հորիզոնական դիրքով և դեպի դուրս ուղղված բացվածքով: Վերջիններս ծածկել են սվաղով¹⁸ (նկ. 15): 19-րդ դարում Վայոց ձորի տների ընդհանուր պատերի մեջ բացել են լուսամուտած խորշեր, որոնք փակվել են փայտե փեղկերով:

Զանգեղութիւն գլխատներում մուտքի դռան կողքին, մարդահասակից բարձր, բարե կամ կավե միջնորմներ են եղեւ, որոնք ներս մտնողի աշքից մեկուսացրել են սենյակի ներքին տարածությունը և պաշտպանել այն օդի ցուրտ հոսանքից: Այս միջնորմներն ամրության համար աղատ ծայրի մոտ երբեմն ավարտվում են սլունով (նկ. 16):



Նկ. 16. Գլխատոն կենաչենում

Զանգեղութում և Վայոց ձորում սովորություն է եղել իրերը գետնից բարձր տեղափորելու համար տարրեր բարձրության պատերի ելուստներ կառուցել (ծանր իրերի համար ցածր, թեթև իրերի համար բարձր, նկ. 55): Հնում այդ նպատակի համար բատ երկութիւն օգտագործվել են պատից դուրս կարկասված բարե գոտիները ինչպիսին կա հնածախեկ վերնատանը (նկ. 22):

Սովորաբար գլխատան պատերը ներսից սվաղված են եղել և սպիտակեցված կառլինի (սպիտակ կավ) լուծուցիտով: Հատակը տոփանված հողից է եղել կամ ծեփված՝ հարդախառն կավաշաղախով, ծածկված մորթիներով և թաղիքներով: Ուներները խսիրի վրա գորգեր են փոել:

Կատարելով ննջարանի, խոհանոցի, ճաշասենյակի, հյուրասենյակի,

¹⁸ Կավե անոթները պատերի մեջ որպես իրեր պահելու տեղ օգտագործելու սովորություն տարածված է եղել նաև վաստաններ (Քարթիւի շրջան, տե՛ս Լ. Հոմանաց, Գյուղական արքան, Թիֆլիս, 1960, էջ 26).

յերեկալին սենյակի, մառանի ու երբեմն անզամ մարագի ու գոմի դեր՝ դլխատան մեջ պահվել են խիստ բազմազան իրեր: Կահավորումը շափաղանց պարզ էր, բարձրացած սակա վաղեատ գյուղացուն անշրաժեատ մի քանի անշարժ կաշուրքից, որն ընդգծում է կառուցվածքի բնակելի նշանակությունը: Բոլոր ընտանիքները անխտիր ամբար են ունեցել փայտե, հաղվագեալ կավե մի մեծ արկդ, հաճախ երկու մասից բազրացած: Այդ բաժիններում պահվում էր ալյուրն ու արմատիքը, որոնք ամբար են լցվել վերեկից, իսկ օգտագործած ժամանակ վերցվել ցածի մասում պատրաստված շարժագոնակից: Հնում արմատիքը պահվել են ուղղակի հատակի մեջ բացված բոլորաձև հորերում, այդ մասին վկացում են ուրարտական և նախառարարտական բնակարանների մնացորդները¹⁹: Այդ սովորությը հասել է մինչև 20-րդ դար: Ամբարների թվով ու մեծությամբ են որոշել մարդկանց ունկորության աստիճանը: Այդ հանգամանքը նկատի ունենալով է, որ Ս. Օրբելյանը հիշատակում է Եղեգիսի ամբարները²⁰:

Բոլոր գլխատներում քուրսին ծառայել է նաև իբրև ճաշասեղան: Այդպիսի սեղաններ հայտնաբերվել են Հաջենի զամբարաններից, որոնք վերաբերում են բրոնզի դարաշրջանին (3—2 հազարամյակ մ. թ. ա.):²¹ Հացը պահվել է փայտե հատուկ արկղերում, շատ տներում հացը (չորացած լավաշ) գարսել են ամբարում կամ առաստաղից կախված փայտամածի վրա և ծածկել շրովվ: Ընտանիքի պատվագոր անդամների նստելու և բնելու համար եղել են փայտե լայն բազմցցներ (թափանք, որմնաթախտեր): Ընտանիքի անդամների մեծ մասը սակայն քնել է հատակին փոված ներքնակների վրա, ընդ որում գերդաստանի յուրաքանչյուր ընտանիք կամ անդամ ունեցել է իրեն հատկացված տեղը: Մեծ գերգաստաններուա եղել են մինչև 6—7 հատ օրորոցներ: Ուշագրության արժանի են օժիտի բանդակազարդ կամ նկարազարդ արկղերը: Ոչ պարտադիր կահուք են հանդիսացել երկար, ցածր կամ բարձր պահարանները: Սևանա լճի ավազանում օգտագործել են հագուստի շարժական կախիչներ, որոնք սյանը հենված ձողեր են եղել՝ համապատասխան կեռերով, տարրեր բարձրության վրա: Ընդհանրապես առօրյա հագուստը կախվել է պատերից, սյուներից կամ նրանց վրա ամրացված ձողերից: Սյուներից կախվել են նաև զարդարանդակված փայտե թալիսմաններ, ճրագակալներ և աղամաններ: Կահուքը պատրաստվել է խնամքով, հանդիպում են զարդափորվածքներով պատված նմուշներ:

Շատ տների լուսավոր կողմում կամ պատին կից, հատուկ երդիկի տակ եղել են կտավագործական կամ գորգագործական դադաշներ: Զանգեզուրում բոլոր կանայք դաշտային աշխատանքից ազատ ժամանակ զբաղվել են արհետագործությամբ²²: Զուլհակությունն ու կտավագործությունը միայն տներում են կատարել²³:

¹⁹ А. Мартirosyan. Город Тейшебанин, բնակելի տներին վերաբերուղ բաժինները.

²⁰ Ս. Օրբելյան, Երված աշխ., էջ 193:

²¹ Հ. Մեացականյան, Հնագույն հուշարձանների նշանագոր օջախը, էջ 151:

²² Խ. Շիրակուն. Зангезурский уезд Елисаветпольской губернии, „Сборник материалов для описания местностей и племен Кавказа“, вып. XXXIV, Тифлис, 1^о04, стр. 190.

²³ „Сборник материалов для описания местностей и племен Кавказа“, вып. II Тифлис, 1891, стр. 103.

Գլխատունը բնակելի տան համակառուցում գլխավորն է եղել ոչ միայն ըստ նշանակության կամ հատկացման, այլև համադրվածքային տեսակետից թե հատակագծում և թե ծավալային լուծման մեջ: Մնացած բաժանմունքներն ըստ դիրքի, ձեմ ու ծավալի խստորեն ենթարկվել են նրան: Անասնապահությամբ զբաղվող շրջաններում գլխատան կից կառուցների մեջ զգալի տակ են զբաղում զոմերը, փարախներն ու ախոռները, մինչդեռ ալգեգործական շրջաններում ավելի շատ կառուցվել են մառաններ, մարագներ և հնձաններ:

19-րդ դարի վերջերին գլխատունը երբեմն կառուցվել է ամենափոքր չափերով (5—6 քառ. մետր), օժանդակ կարիքների համար, որոնք մեծ մասամբ անսյուն ծածկեր ունեին: Գերդաստանների պատսպարանները, սակայն, արտակարգ մեծ չափերի էին: Սեանա լճի ավազանում այդպիսի գլխատների մնացորդներն ունեն 100 և ավելի քառ. մետր մակերեւ, որոնք անկախ ծածկի ձեռնվել են սյունների վրա: Հաճախ տան մեծությունը համեմատական էր սյունների քանակին: Նահապետական այդ տներում են կատարվել գլուզի հարսանիքները, ուրեմն բոլորածեկ դասավորված սյունների (մինչև 12 հատ) ետևում, ամբողջ սենյակի պարագծով մարդիկ հարսանիկան շուրջպար են բռնել²⁴: Այդպիսի գլխատներում եղել է որմնախորշ առագաստի համար, որի բացակայության գեղքում այդ նպատակին է ծառայել տան վարագործված անկյուններից մեկը:

Գերդաստանների քայլքայման ժամանակ այս մեծ տների կողքին, նույն համակառուցում, երեան են եկել մի քանի հոգուց բաղկացած ընտանիքներ պատսպարող փոքր գլխատներ: Այդպիսի օրինակ է Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղում Զիրոյանների բնակելի համակառուցը: Ութ սյունների վրա բարձրացող գմբեթածեկ ծածկով բաժանմունքում, ընդամենը 118 քառ. մետր տարածության մեջ պատսպարվել է քառասունշորս հոգուց բաղկացած գերդաստանը: Այս համակառուցին կից եղել է գերդաստանի արտադրական շենքը՝ ձիթհանը, որի աննշան ավերակներն են մնացել միայն: Մեր գարասկղբին, գերդաստանի մասնատման հետևանքով, այս համակառուցին կից կառուցվել է ավելի փոքր չափերի մի ուրիշը՝ իր առանձին գիմատնով: Վայոց ձորի Աղավնաձոր գյուղում Մելիք-Զաքարյանների տունը ևս բնորոշ օրինակ է այս տեսակետից: Նրա կառուցման թվականը հայտնի չէ, նորոգման է ենթարկվել 1900-ական թվականներին: Տունը գտնվում է գյուղի կենտրոնում և փոխուղղահայց թերով տեղավորված է պարսպապատրակի շուրջը, ճանապարհների հատման անկյունում: Այն բաղկացած է տարբեր ժամանակներում, գերդաստանի մեծանալուն զուգընթաց կառուցված շենքերից, որոնցից հնագույնը մեծ տունն է: Տան մյուս բաժանմունքներն են երկու գլխատուն, մի պատշաճմբ, չին օթախը՝ երկշարկանի մի շենք տնտեսական և բնակելի հարկաբաժններով, գոմը և նորակառուց մի այլ բնակելի շենք: Վերակառուցումների հետևանքով համակառուցը կորցրել է իր նախկին տեսքը, քանդվել են չին, մեծ գոմերը, սակայն պահպանվածներն էլ որոշակի գաղափար են տալիս նախնական տեսքի և հնավանդ կենցաղից բխող նրա կերտպահքի մասին: Հին շենքերում, գլխավորապես մեծ տան մեջ է ապրել ամբողջ գերդաստանը՝ բաղկացած 52 հոգուց: Տանը մուտքից

²⁴ Գյուղական հարսանիքներում այնքան շատ մարդ է հավաքվել, որ տղամարդկանց համար մարդեր են գոմը և հատակին չոր խոտ ու փացներ դրել:

աշ, խորքում հարսները գորդ են գործել, լողանալու համար օգտագործել են ամբարի ետևի անկյունը, որը ծածկվել է վարագույրով։ Ամբարը ունեցել է քսան բռն ալյուրի տարողություն՝ եղեք ամսվա պաշար հիսուներկու հոգու համար (տնից գորս եղել են նաև շտեմարան-Հորեր): Իր համակառուցի հարմարություններով այս տունը օթևան է ծառայել նաև այստեղով անցնող պաշտոնական անձանց ու երեկի ճամփորդների համար:


Գլխատան համակառուցյներին անսահմանափակ քանակով կցումների սովորությն աստիճանաբար նվազել է 19-րդ դարի վերջերից: 20-րդ դարում հիշյալ համակառուցյներից շատերը շինվել են մեկուսի, առանձին հողամասերի մեջ, արդեն շատ ավելի հարմարավետ ձևով, առանց գետնի մեջ խորացնելու, բայց անհամեմատ փորք ծավալներով։ Այնուամենայնիվ հանդիպում են իրար կցված, սովորաբար երկու համակառուցյուց բաղկացած տներ, որոնք երկու եղբայրների են պատկանում: Վայոց ձորում և Զանգեզորում գլխատան փոխարեն հանգստ է զալիս հարթ կամ երկթեր ծածկ և լուսամուտներ ունեցող մի սենյակ թոնրով և երդիկով, որի մուտքը, ինչպես և մյուս սենյակներինը, բացվում է պատշգամքի մեջ (նկ. 26): Այս գեպերում համակառուցյների բոլոր բաժանմունքները, բացի գոմերից, ունեն պատուհաններ և քաղաքաբարի սենյակներ են ներկայացնում: Այժմ հանդիպում են կանոնավոր հատակագծերի մեջ վերցված հին գլխատներ, որոնց կառուցապատման հին կարգը խախտվել է:

Գլխատան հարտարապետական համակառուցյի հատկապես հատակագծային լուծման մեջ ընդհանրությունների կողքին էական տարբերություններ են եղել Սկանա լճի ավաղանում, Վայոց ձորում և Զանգեզուրում, ընդ որում սրանց սահմանակից վայրերում ընդհանրությունները փոխազդեցությունների հետևանքով բավականաշափ ուժեղ են եղել: Պատմական Մյունիֆին հատկանշական համակառուցյներ կանգուն են մնացել Զանգեզուրում, ուր կենցաղային սովորույթներն էլ պահպանվել են առավել քան մյուս շրջաններում: Մյուս շրջանների շինարարական առանձնահատկությունները ավելի սերտ կապված են ճնշող մեծամասնություն կազմող վերաբնակիչների հետ ներմուծված ավանդույթների հետ:


Սկանա լճի ավաղանում տան համակառուցյը մի փակ ամբողջություն է կազմել և դրսի հետ հարզրագակցվել է բաժանմունքները միավորող սրահի՝ նախամուտքի ցածրիկ գոնուլ: Սրահը խիտ կառուցապատման մեջ շատ գեպերում ստացել է երկար միջանցքի տեսք, որը պաշտպանում էր ներքին բաժանմունքները վատ եղանակի անմիջական ազդեցությունից: Սրահի թումբ կոշվող բարձրադիր մասը, որը հաճախ խորացված էր ամբողջ պատի կամ նրա մի մասի մեջ, ծառայում էր որպես իրերի և գործիքների պահեստ (նկ. 15): Շատ հաղվագեպ այն ծառայել է նաև կենցաղային այլ նպատակների²⁵:

Սրահի խորքում բացվել են գոմի ու փարախի, խև մուտքի մոտ՝ օթախ կոշվող հարթածածկ, քաղաքատիպ սենյակի դռները (նկ. 15, 17): Տան մասանների ու մարագների գոները գտնվել են դրանց միջև, հաճախ մասանի մուտքն ուղղակի տան մեջ է բացվել: Առանձին մասերի այսպիսի համա-

25 Հարսանիքների ժամանակ այս մասում հատուկ սեղան է դրվել հյուրերին տան շեմքից անմիջապես ներս հյուրասիրելու և համապատասխան դրամական նվերը (խալաթ) ստանալու համար:



ԴՐԱ 1316 Ն Տ Գ Ռ Ո Յ Հ



Նկ. 17 Գլխատան համակառուց Սովինարում

Խմբումն ու փոխադարձ դասավորությունը ապահովում էր համակառուցի խորացումը կառուցապատման ընդհանուր, և ոչ զանգվածի մեջ այնպես, որ ճակատացին մասում փոքրիկ բակին համապատասխանող մի պատի հատված էր մնում միայն։ Եվ որովհետև օթախը գետնափոր չի եղել ինչպես մյուս բաժանմունքները, նրա հատակը մի քանի աստիճանով բարձր է մնացել սրահից, ծածկն էլ համապատասխանաբար բարձրացվել է կտորի մակարդակից։

Գոմերն ու փարախները երկար, ուղղանկյուն, եռանակ շինություններ են եղել սյունաշարքերով բաժանված միշին՝ լայն և կողքի՝ նեղ մասերով։ Մուտքի մոտ գրամած է եղել քարե ջրամանը (գուլ), իսկ պատերի տակ՝ ամբողջ երկարությամբ քարակ գերաններով եղերված քարաշար մսուրները։ Խոշոր եղջերավոր անասուններին հատկացված զոմերում յուրաքանչյուր միջայունա-

յին տարածության մեջ մի անասուն է տեղավորվել, հետևաբար սյուների քանակն ու շինության երկարությունը անասունների զլխարանակից էր կախված: Գոմերի գոգավոր կամ երկթեր հատակները սալարկվել են, իսկ միշտամասում, անսունների շարքի ամբողջ երկարությամբ, մոտ 15 սմ խորություն՝ և մինչև մեկ մետր լայնությամբ փոս է եղել աղբը հավաքելու համար: Հաճախ գոմերն ունեցել են արտակարգ երկարություն և ցանկապատերով բաժանվել են հատվածների՝ անասունների տեսակին համապատասխան, նույնիսկ հավերը շեն անտեսվել: Բայց սովորաբար փարախներն առանձին են կառուցվել, որոնք ավելի փոքր չափերի, չսալարկած, հողե հատակով երկարավուն շինություններ էին (նկ. 15): Անասնանոցները լուսավորել են իրարից սրոշ հեռավորությամբ շենքի երկայնական առանցքով՝ ձգվող երդիկների շարքով: Պատերի մեջ տեղ-տեղ խորշեր են թողնվել ձրագ գնելու համար:

Գոմերն առավել ևս երկարածիկ են դարձել «օդա» կոչված սենյակների հետեանքով, որոնք կառուցվել են հատկապես անասուններին հսկելու համար, բայց օգտագործվել են նաև իրեն ձմեռալին կացարան, տղամարդկանց հավաքավայր, իսկ կանայք սովորություն են ունեցել առանձնանալու զլխարան մեջ: Այդ կացարանները գոմեր ոչ լրիվ մեկուսացած լինելու պատճառով անասունների շերմությամբ տաքացած օդը ներհոսում էր «օդա» և տաքացնում այն: Երկար կողմի խող պատի մեջ գրեթե միշտ ճրագախորշեր են եղել: Ցերեկային լուսավորումն ու օդափոխումը կատարվել է մուտքի մասի վրա, կտորի անմիշապես տակը՝ հաճախ թեր կերպով ամրացված փոքր լուսամուտի միջոցով: Հաղվագեպ երդիկներ են պատրաստվել ուղղակի առաստաղի միջնամասում (նկ. 37ա):

Տաք եղանակներին մարդիկ ամրուց ցերեկը տնից դուրս են անցկացրել՝ կտորների վրա, բակերում կամ եկեղեցու մոտ, քանի որ պատշգամբներ չեն եղել:

Մարագները տան համակառուցի պարտադիր մասեր շեն հանդիսացել, որովհետև չորացրած գոմաղբի սալիկները, ինչպես և խոտը, հաճախ շենքներից դուրս են կուտակվել (խոտը՝ կտորի վրա, գոմաղբը՝ բակում):

Սևանա լճի ավաղանում տները գետնափոր լինելու պատճառով փողոցները եղերող նրանց պատերը չափազանց ցածր են եղել: Տեղ-տեղ կտորները ձուլվել են ճանապարհի հետ և միայն բակի մեջ, ճակատային մասում է, որ նրանք փոքր ինչ զգալի են դարձել, այն էլ մուտքի և, վերջին ժամանակներում, լուսամուտներ ունեցող սենյակների շնորհիվ: Դրան առաջ, ձյան կուտակումից խուսափելու համար, հաճախ կորագիծ պատնեշ են կառուցվել:

Սևանա լճի ավաղանի զլխատների համաժառագուցների մեջ իր ցուցօրինակ համագրվածքով առանձնանում է Ս. Կիսիցյանի նկարագրած վերոհիշյալ կառուցը նոր Բայազետում (նկ. 24), որը տեղանքի համար հատկանշական փակ համակառուցի նմուշ է²⁶: Հետագայում կցված սենյակների միշտ գտնվող լայն նախասենյակի՝ սրահի միջոցով ներքին կապ է հաստատվել բառասյուն հացատան կամ զլխատան հետ, որն աշքի է ընկել ծածկի կառուցվածքով և մանավանդ իր «թնդրատնով»: Կցման տեղում զլխատան պատի և սյուների միջև ընկած մասը համեմատաբար լայն է, իսկ առաստաղը՝ բարձր:

Սրբատաշ քարի լայն կամարը, որը հետագայում փակվել է պատով ու-

26 С. Д. Лисицян, Из материалов по изучению жизни Армении, стр. 136—139.

Հին Բայազետից բերած գոնով, առաջնորդել է փոքր, բայց նույնպես գմբեթածածկ խոհանոցային բաժանմունքը: Այստեղ համակը փոքր ինչ բարձր է, իսկ ծածկը կառուցվել է առանց սյուների և շատ ավելի պակաս խնամքով: Հատակի միջին մասում թոնիրն է, որի ակը բացվել է կամարակապ մասի շեմքի տակ: Պատի մեջ հատուկ փուռ է եղել զանազան թիվածքների համար (հետագայում նույնպիսի մի փուռ էլ տան մեջ է կառուցվել): Ընտանիքի անդամները լողացել են ձախակողմյան անկյունում, որտեղ հատակը թեք սալարկված էր սրբատաշ քարերով կեղատաշորի հեռացման համար: Այդ անկյունը լողանալու ժամանակ վարագուրգել է զորով կամ գունավոր կտավով: Այդտեղ էլ լայն որմնախորշում, թաղված է եղել պատի մեջ ծխներույզ ունեցող մի փոքր թոնիր՝ չուր տաքացնելու համար: Որմնախորշերում տեղավորվել են խոհանոցային ամանեղենը, օրվա կարիքների պարենամթերքը և պատրաստի ուտելիքը: Թոնրատանը, երբ հյուրեր շեն եղել, ճաշել է ամբողջ ընտանիքը, հատկապես կանայք:

Նկարագրված բնակելի համակառուցը Սևանա լճի ավագանի գլխատաներից տարբերվում է ոչ միայն ծածկով, այլև խոհանոցային բաժանմունքով: Վերջինս այս վայրերի համար բացառիկ երկույթ է և լայնորեն տարածված է եղել Արագածի շուրջը բնակություն հաստատած գաղթականների բնակավայրերում և Վրաստանի հարավային շրջաններում ապրող Կարինի շրջակայթից և կած գաղթականների տներում²⁷: Այս տների մեջ կան ծածկի կառուցվածքի տարբերություններ, բայց համակառուցի առանձին մասերի ընդհանուր համադրածքով նույնատիպ են:

Վայոց ձորում և Զանգեզուրի հյուսիսային կողմերում գլխատանը կից բաժանմունքները հանդես շեն եկել մեկ մուտք ունեցող ամբողջական փակ համակառուցի ձևով: Հազվագեց միայն մասանների զոներն են բացվել գլխատան մեջ (նկ 18): Այստեղ տան համակառուցի ամեն մի գուռ ուղղակի կամ պատշգամբի միջով բացվել է զեպի բակ: Պատշգամբը ծառայել է իբրև բաց նախասենյակ՝ գլխատան առաջ: Հաճախ գեպի պատշգամբ են ուղղված եղել բնակելի մասի բոլոր զոները, երբեմն նույնիսկ լուսամուտները: Պատշգամբը հանդիսացել է ամառային նստավայր, եղել է արևահայաց և տաք եղանակներին կատարել է հացատան գրեթե բոլոր ֆունկցիաները: Այստեղ եղել են թոնիրներ և օցախներ, իսկ Սիսիանի շրջանում՝ նաև օցախների սուսարիկի ձևով: Պատշգամբի հատակը հաճախ բարձրացված է եղել մինչև 50 սմ կամ առջևի կողմից պատնեշված՝ հատկապես ցուրտ ու հողմաշատ վայրերում: Առջևից սյուներով պահպող ծածկը պաշտպանել է արևի հառագայթներից ու մթնոլորտային տեղումներից: Պատշգամբատիպ առանձին շինություններ կառուցվել են նաև բակի պատերի տակ:

Քաղաքատիպ սենյակներն այս վայրերում շատ ավելի վաղ են կառուցվել²⁸: Նրանց դռները պարտադիր կերպով բացվել են պատշգամբ-նախասենյակի մեջ: Հաճախ պատշգամբի մեջ են բացվել նաև գլխատան լուսամուտները:


Մարտագներն ու մառանները ամենաբազմազան դիրքեր են ունեցել տան համակառուցի մեջ: Եղել են մառանների նկուլային տիպեր՝ առավելապես դինգործությամբ զբաղվող տներում: Հնանը գտնվել է կամ մառանում

²⁷Տե՛ս Ե. Խալայան, Զավախիք, «Ազգագրական հանդես», 1-ին տարի, 1-ին զիրք, Շուշի, 1895, էջ 224—226:

²⁸Տե՛ս Ելի Սմիտի վերոհիշյալ նկարագրությունը Շաղատ գյուղի բնակարանի մասին: 63

կամ ավելի հաճախ ուղղակի գլխատան անկյուններից մեկում: Այս սովորույթն անշուշտ կապված է զինեգործության փոքրածավալ լինելու հետ: Բնակիչների պատմելով այն խիստ տարածված է եղել Խոյի ու Սալմատի հայաբնակ գյուղերում, որտեղից եկել են իրենց նախնիք:

Տան համակառուցի մեջ է մտել նաև գոմը, որը նույնպես առանձին մուտքով հաղորդակցել է բակի հետ: Վայոց ձորում դեռևս մնացած նմուշները մեծ ժամանակ կենտրոնական մեկ սյունաշար ունեն, որը պահում է երկիթեք կտուրը. լուսավորվում են երդիկներից (նկ. 18):





նկ. 18. Գլխատան համակառուց Արենիում

Զանգեղուրի գլխատան ճարտարապետական համակառուցյը աշքի է ընկնում իր թաղակալ շինություններով, մանավանդ գոմերով: Առավելապես դրանք պահպանվել են Գորիսի շրջանում: Անասուններին հատկացվող շենքերն այստեղ էլ, ինչպես Սևանա լճի ավաղանում, զգալի տեղ են բռնում համակառուցի մեջ: Տարածված են եղել նաև երկու սյունաշարով գերանածածկ՝ գոմերը՝ հատկապես Սիսիանի և Ղափանի մոտակայքում:

Գլխատանը կից թաղակապ, երկար, ուղղանկյուն շինություններ հատկացվել են տարբեր նպատակների՝ որպես բնակելի սենյակ, մառան, մարագ, գոմ, ախոռ և այլն, եղել են նաև թաղակապ կամ փայտածածկ բաց նախասենյակներ, երբեմն նաև հարթածածկ՝ ասնյակներ՝ առշեկց սյունավոր պատշաճբներով: Այդ բոլորը, բացի մասնաններից, երբեմն նաև հարթածածկ սենյակներից բացվել են մի փոքրիկ բակի վրա: Մասնանները բացվել են գլխատան մեջ, իսկ հարթածածկ սենյակները երբեմն կազմել են երկրորդ հարկ, շենքի ետնակողմից անցնող ճանապարհի վրա բացվող մուտքով:

Fig. 15. Plan of the temple of Minerva Lavinia

Scale 1:1000



(նկ. 19): Այս դեպքում երկրորդ հարկը առաջինի հետ հաղորդակցել է բարեաստիճաններով, որոնց տակ եղել են կամարակապ խորշեր, երբեմն սրբատաշ պարակալով, որոնք օգտագործվել են իբրև շնաբուն կամ գործիքների պահեստ:

Լանջերի վրա դասավորված համակառուցյների համար հատկանշական են ամբողջովին բաց ճակատը և կիսագետնափոր ծավալը, որի հետամասերը գրեթե ամբողջովիչամբ խորացվել են զետնի մեջ: Անձրևաջրերի հեռացման և մեխանիկական վնասվածքներից զերծ մնալու համար կտուրը եղերվել է որձաքարերով: Նման լուծումներ կան նաև այլ շրջաններում: Երբեմն կառուցապատվել են նաև ոչ արեահայաց լանջեր և որպեսզի պահպանվի բաց; արևաշայաց հակատի ավանդական սկզբունքը, համակառուցյը տեղագովիկ է երկայնական առանցքով լանջի ուղղությամբ, անշուշտ հոգափորման և հարթեցման զգալի աշխատանքներ կատարելուց հետո: Այս գեղքում ևս, թեկույք փոքր չափի, բակ է հարթեցվել կամ իբրև բակ օգտագործվել է հարեան շենքի կտուրը:

Ընդհանրապես, ինչպես նշեցինք, բակերն այսուղ չափազանց փոքր են եղել, երբեմն միայն հանդիպում են ցանկապատված բակեր, կամարակապ դարպաններով՝ ունկորների ու կալվածատերերի տան համակառուցյում (նկ. 43): Խիստ կառուցապատման պայմաններում տան համակառուցյին կից, նրանից բարձր կամ ցած գտնվող լանջերի ամրացումը կատարվել է կամարակապ հենապատերով, որոնք ունեցել են մինչև 1,5 մետր խորություն և որոնց մեջ կուտակել են վառեկիքի պաշարը: Այդ կամարակապ հենապատերի և հողային լիցքի միջոցով մեծացվել են տան առաջ գտնվող բակերը:

Գլխատան նախամուտքը եղել է անսյուն, ծածկված և առաջից բաց ցվիքի, սյունավոր պատշաճմբի ձևով կամ թաղակապ, որը տաք եղանակներին ծառայել է որպես ցերեկային կացարան և խոհանոց: Փակ թաղակապ նախամուտքերում երբեմն թմբեր են եղել նստելու և իբրև գարսելու համար: Նախամուտքի մեջ հաճախ բացվել է չյուրասենյալիք, որը խորքի ընդայնական պատի մեջ բուլարիկ է ունեցել, իսկ պատերի մեջ՝ պահարանախորշեր: Վերջին ժամանակներում այդպիսի սենյակներն ունեցել են նաև պատուհաններ: Բացառիկ ձևով է կառուցված Տեղ գյուղում Մելիք-Բարխուտքարի ժառանգների և անհին հյուրասենյալիք, որը բացվում է ուղղակի զինատան մեջ, իսկ հնածախի մելիքական բնակարանում երկու այդպիսի հյուրասենյակներ իրար վրա կառուցվելով՝ մի ուղղաձիգ ծավալ են կազմել (նկ. 20, 22):


Բնակելի հին համակառուցյների անասնանոցները թաղակապ ուղղանկյուն շենքեր են մասունքով կամ որմնախորշերով, երբեմն առաստաղի երդիկներով և կամ հազվագեց ճակատային ներ լուսամուտներով, որոնց բացվածքները զետի ներս լայնացել են: Միասնական թաղակապ շենքում ախոռը հաճախ զուգացվել է գոմի հետ (նկ. 19): Այս տիպի մի շարք զոմերում կառուցվել է նույնիսկ բուլարիկ մարդկանց համար:

Թաղակապ սենյակներում լուսամուտներ երեան գալու ժամանակ (19-րդ դար) երդիկավոր սենյակներին սկսել են փոխարինել թաղակապ, լուսամուտներով սենյակները: Հետզետե տարածվել են նաև պատշգամբով ու լուսամուտներով բաղարատիպ շենքերը:

Գլխատան ճարտարապետական տիպիկ համակառուցյներ են նաև աղջականների բնակարանները, որոնք կառուցվել են ծողովրդական վարպետ-

Ների կողմից և տարբերվել աշխատավոր ժողովրդի տներից իրենց գիրքով, մեծությամբ, բաժանմունքների քանակով, հարգարանքով և այլն:

Մելիքական կենցաղի և բնակարանի մասին հավաստի տեղեկություններ է տալիս կեռն. նա գրում է: «Երբեք խոշոր կալվածատերեր և արևելյան վասալներ՝ մելիքները մեծ հարստություն էին դիզում և ապրում էին ճոխության մեջ, հետեւով, իհարկե, պարսկական ճաշակին և բարձրաստիճան ավագանու նիստուկացին, բայց մնալով միաժամանակ կատարյալ ժողովրդական մարդիկ, ժողովրդի մեջ ապրող և ժողովրդի հետ շփվող՝ առօրյա կյանքի բոլոր մանրամասնությունների մեջ: Նրանք ունեին շատ խոշոր տնտեսություն և ծառաների հոծ բազմություն...»



Նկ. 20. Մելիք-Բարխուդարի ժառանգների ամառաթը

Մելիքների տներն էլ տարբերվում էին սովորական տներից իրենց չափերով և զեղեցկությամբ: Հյուսիսային Պարարագի ամենանշանավոր մելիք-ներից մեկը, Մելիք-Հաթամը շինել էր Ջրաբերդ գավառում երկու ապարանք, որոնցից մեկը՝ Մոխրաթաղ գյուղում, սրբատաշ քարերից (պետք է լինի անտաշ քարերից—ն. Պ.), զեղեցկաշեն, այսօր էլ մնում է կիսավեր դրության մեջ և ունի 12 սենյակ, իսկ մյուսը՝ Մալրաքաղաք անվանված տեղում, երկարկանի, վերին հարկը բաղկացած 15 սենյակից: Առանձնապես խնամքով շինված է Մելիքի ընդունարանը, որ ունի և այսուհետեւ գավիթ: Սենյակներն առանց պատուհանի էին, լուս ստանում էին առաստաղի մեջ բացած կոր ծակերից, որոնք համապատասխանում էին ավանդական երդիկներին: Երդիկների տակ շինված էին նույնպես ավանդական օջախներ: Բայց թվում է, թե այդ

օջախներում փայտի խարուկներ չէին վառում տունը տաքացնելու համար, զակառակ գեպը պատերն ու առաստաղները պիտի սկացած լինեին ծխից, մի բան, որ այժմ չէր նկատվում»²⁹:

Մելքական ամարաթները պատկանելով ուշ միջնադարին, իրենց մեջ պարունակում են ավելի վաղ ժամանակների պալատական ճարտարապետության շատ տարրեր: Ծողովրդական ճարտարապետության այս ուշագրավ կառուցյներին կանգրադառնանը հետագայում առանձին ուսումնասիրությամբ:

Տեղ գյուղի Մելիք-Բարխուդարի ժառանգների տունը կառուցված է բավականաշատ թեք տեղանքում, երկու լայն ճանապարհների միջև, որոնցից վերինը ընկած է կտորների մակարդակի վրա: Համակառուցը այդ ժամանի երկարությամբ ձգված շինության տեսք ունի: Ճակատային ծավալի կողմը, ինչպես առհասարակ գլխատների համակառուցյներին է հատուկ, ուղղված է դեպի բակը, որի առջևով անցնում է ստորին ճանապարհը (նկ. 20):

Այս համակառուցի կառուցվածքների մի մասը քանդվել է, մի մասն էլ հիմնական շենքերի հետ օրդանապես չկապվող, ուշ շրջանի անճաշակ հավելումներ են: Ինքը՝ բուն համակառուցը ևս միաժամանակ կառուցված տարրերից չէ կաղմված: Հնագույն մասը երկու բարակերտ գլխատուն, մի թաղակապ սենյակ և մի թաղակապ նախամուտք է: Գլխատները կառուցվել են իրար կողքի, մուտքերը բացվել են նախասրահի մեջ, որը հետագայում պատով մեշտեղից երկու մասի է բաժանվել: Նախամուտքից աջ և ձախ շենքի ճակատն են բռնել այժմ ձևափոխված, ըստ երկութին օժանդակ, նույնպես թաղակապ բաժանմունքներ, որոնց գոները բացվել են նախամուտքի մեջ: Զախակողմյան բարավորի վրա գտնվում է շինարարական արձանագրությունը³⁰:

Համակառուցի մյուս մասերը հետագա հավելումներ են, որոնցից ուշագրության է արժանի արեմտյան թաղակապ սենյակը, որի բուխարիկը մշակված է ընդհանրացած ձեերով, բավականաշատ գեղեցիկ:

Խնձորեսկ գյուղում Մելիք-Փարամագի ամարաթը նույնապես նշանակալից է եղել իր ձեերով: Դյուլի տեղագիտման հետևանքով նրա հիմնական մասը քանդել և բարերն օգտագործել են: Մնացել է մուտքի զարպասը և նրան կից ախոռն ու ծածկած բակի մնացորդը: Համակառուցի հիմնական շենքերը ընկած են եղել ավելի խորըն, ախոռին կից: Համակառուցը բաղկացած էր տարրեր ժամանակներում տեղանքի պատճառով խիտ կառուցված սենյակներից, որոնք ունեին ավանդական պահարանախորչեր, բուխարիկներ, կամարակապ բացվածքներ և նեղ լուսամուտներ: Կանգուն մասում երկացող հարդարանքը և մի բանի նրբարանդակ բարերը վկայում են ժամանակին համակառուցի աշքի բնինող ճարտարապետության մասին (նկ. 21): Ամարաթը վերակառուցվել է 1836 թ. ավանդական ձեերով, ուր աշքի են ընկել իրենց ետնամասերով ժայռի մեջ խորացող երեք գլխատներ՝ առջևից թաղակապ նախամուտքերով և պատշգամբաձև շինություններով: Ընդունաբանում եղել է գեղեցիկ ձևա-

²⁹ Առ, Հայոց պատմություն, Հատ. 3-րդ, Երևան, 1946, էջ 506, 510:

³⁰ «Թգ. ՌՄ/Բ. (1783) ի վեհաւումն. Մելիք Բարխուդարի որդի Դավիթ պէտ շինեցի այս ամարաթն իբրայիմ խանի ժամանակօվն»:

³¹ Տե՛ս Ստ. Լիսիցյան, Զանգեզորի հայերը, Երևան, 1969, էջ 98, 107:

Ախոռոք սովորական ուղղանկյուն ոչ մեծ թաղակապ շենք է: Դատելով պատերի մեջ եղած խորշերի քանակից՝ այնտեղ կարելի էր տեղափորել 7—9 ձի, 5—6 ձի էլ կարելի էր պահել առշնի թաղածածկ մասում: Կամարաշարի դռան հանդիպակաց հատվածն ավելի լայն է, որի հետևանքով այդ հատվածի կամարն ավելի բարձր է մյուսների համեմատ: Ծիթմի այս խախտումը կատարված է կենդանիների հանգիստ մուտքն ու ելքը պահպակելու նպատակով: Սյուն սարանի հատակը փոքր ինչ բարձր է բակից: Զիերին կերակրելու համար կառուցված խորշերը կամարակապ են: Կամարների տակ, պատի մեջ դրված են անցքեր ունեցող քարեր ծիերը կապելու համար: Համակառուցի շքամուռքով փակում է զյուղական համեմատաբար լայն հանապարհներից մեջի հեռանկար:




Նկ. 21. Մելիք-Փարամագի ամարաթի մնացորդները

Հավանաբար բոլորովին այլ տեսք է ունեցել հնածախի մելիքական տան համակառուցր, որի ավերակները գտնվում են ձորամիջով անցնող ճանապարհի բաժանման վայրում: Կանգուն են երկհարկանի թաղակապ մի շենք և մի գլխատուն (նկ. 22): Երկհարկանի շենքը տեղի բնակիչները կոչում են «բալախանա», որը պարակերեն վերնատուն է նշանակում³²: Երկու հարկերն ել

³² «Բալախանա» բառից առաջ են եկել «բալագան» և «բալկոն» բառերը (տե՛ս Շոպեն, նշված աշխա, էջ 894): Գրավոր ոչ մի հիշատակություն չկա այդ կառուցվածքի մասին: Բայց պյուտամիցի և շրջակալիքի վիճակությունների մեծ մասը 17-րդ դարին է պատկանում: այդ ժամանակ է կառուցվել նաև զյուղի եկեղեցին: Շենքի պարսկերեն անվանումը կասկած չի թողնում նրա այդ ժամանակաշրջանին պատկանելու մասին: Ըստ երկութիւն այն Մելիք-Հայկացանների ամարաթին է պատկանել: Մեր տեսակետը որոշ հիմնավորում է գտնում գյուղից արևելք, բլրի վրա կանգնեցված մի խաչքարի մասամբ եղծված արձանագրությամբ, որը գյուղի այլ կարևոր վիճակությունների հետ անտիպ է մնացել: Ներկայացնում ենք այն, փակագծերի մեջ վերցնելով կամարների բառերը: «Ի թագաւորութեան (Երբասայ) և (Անդան որդի) պարն Հայկացին կանգնեցի խաչ անուանն Պողոս վարդապետին բարեկոսութեամբ քրիստոնեից ի թվ. հայոց թէիք (1620): Երկրիս մոլլըն պարոն Հայկացին էր»:

Ալ 22. Մելիք-Հայկաց ամրաւթիւ մասնակիւթեա



ուղղանկյուն սենյակներ են իրենց բացվածքներով ուղղված հետի ճանապարհը, այսինքն հարավ-արևելքը: Երկրորդ հարկն ունի նաև մի դռու շենքի ետնամասում, որ կարելի է բարձրանալ, բրանցելով շենքը թեր հարթությամբ: Հսաներութիւնի բալախանան կապված է եղել մյուս շենքերի հետ, որոնք այժմ չկան: Երկրորդ հարկի այդ սենյակը թարմ օդ շնչելու, բնության տեսարաններով հիւնալու և ճանապարհները գիտելու լավագույն հարթություններ է ստեղծել, որովհետեւ նրա ճակատային, կամարակապ մասն ամբողջությամբ բաց է եղել³³: Այդ հանգամանքը փաստարկվում է ճակատային բացվածքի դեպի ներս խորացող սրբատաշ մակերեսների ու նրանց մեջ պարփակված մասի շարվածքի բոլորին տարբեր ձեր առկարությամբ:

Առաջին հարկը, ինչպես երևում է, եղել է ձմեռացին կացարան, ունի մի լուսամուտ ճակատային պատի կենտրոնում և մի դռու այդ պատի ձախ անկյունում: Ներսից երկայնական պատերի մեջ սրբատաշ քարե երեքական զեղեցիկ խորշեր կան, որոնցից հյուսիս-արևելյան պատի մեջտեղինը իշխում է մինչև գետին, կազմելով բուխարիկը: Այստեղ բացի խորշերից ու բացվածքների եղերից բոլոր մակերեսները ծածկված են կրաշաղախով, ինչպես և երկրորդ հարկում:

Գլխատունն այս շենքից հեռու է գտնվում, բայց օրգանապես կապված է վերշինին հետ իր ճարտարապետական ձևակորումով: Նրա ներսակողմը կառուցված է այս կարգի շենքերին հատուկ օրինաշափություններով ու մանրամասներով: Ունի երկու պահարանախորշ հյուսիս-արևելյան և հյուսիսարևմտյան պատերի կենտրոններում: Մուտքի ճակատն ուղղված է դեպի հարավ-արևելքը: Այդ պատի կենտրոնում ևս եղել է մի որմնախորշ, որը հետագայում լուսամուտի է վերածվել: Պատի գրսի ճակատը սովորական գիտաների տարրերից տարրերվող մանրամասներ ունի: զրանք սրբատաշ քարերով եղերգած կամարակապ երկու պահարանախորշերի մնացորդներ են, ինչպես նաև մի կամարակապ գուռ՝ շքամուտքի հասարակ ճարտարապետական մշակումով (անջատոցներով, ճակատակալ և ուղղաձիգ միակտուր քարերով): Ներսակողմի հատուկ որմնախորշերը ապացուցում են հարակից շենքի, թերևս թաղակապ կամարասրահի երթեմնի գոյությունը:

Գլխատուների շաբթին պետք է դասել նաև Հորս գյուղի այսպես կոչված «Մելիքական տունը», որն այժմ գուրկի է երգիից ու բրգաձև ծածկից, այուները տեղաշարժվել են, ճարակից կառուցվածքները քանդվել և այժմ գործածվում է իրեն ախոռ: Ե. Լալայանը հիշատակում է բացի սենյակից նաև մի սրահի գոյությունը, որն այժմ չկա³⁴: Եղել են նաև թոնիքներ հատակի մեջ, որոնք այժմ լցված են հողով: Փակված էր նաև հյուսիսացին պատի մեջ տեղադրված բուխարիկը: Տունը կիսաթաղված վիճակում է և ամբողջովին բրանցված տարածքներում: Բայց դիւնեն ճակատի մուտքի մասը, որ շարված է

³³ Վերնատունը պարսկական պալատական համակառուցներում տարածված կառուցամասն է հանգիստը: Ժ. Մորիկերը Ծանի պալատի բալախանայի մասին գրում է, թե այն ծառակելիք է եղել արքային մարմ օդ շնչելու և զորքը գիտելու համար (Ժ. Ալօրէ, Կշված աշխա, Հատ. 2-րդ, էջ 157): Այս բաղկացուցիչ մասու է եղել նաև Օրուելութի բնակելի աների (տե՛ս Ա. Սահման, Լ. Բրետանակոն, Ա. Կալառածը, Կշված աշխա, էջ 327, 331): Բայց պետք է նկատ անենուր, որ ֆունկիոնալ սրոշ բնոշանրությունների պայմաններուն նկանած իշխածուներ բնականական իշխածուներ են:

³⁴ Տե՛ս Ե. Լալայան, Շարուր Գարալաղյաղի գավառ, «Ազգագրական հանդէս», 12-րդ գիրք. Թիֆլիս, 1905, էջ 279:

կիսամշակ որձաբարով։ Այս պատի ներսի մասը ամբողջությամբ սրբատաշքարերով է շարված և ունի չորս գեղեցիկ, կրկնահարկ որմանախորշեր։ Մյուս պատերն անմշակ և կիսամշակ բարերով են շարված և կրում են վիրանորոգումների հետքեր։ Պրանք հավանաբար սվալված են եղել։ Մուտքին հանդիպակաց ընդլայնական պատի մեջտեղում բեմահարթակի նմանող մի մեծ ուղղանկյուն խորշ կա, առաջը բոլորովին բաց։ Այն ունի 14 բառ։ մետք մակերես, իսկ տան ցածի մասը՝ հարյուր (նկ. 23):

Պահպանված արդուոչի (զի, զիհի) փայտե սյուները և երեք միաշափու ու միանման բանդակաղաքը սյունախարիխսները երբեմնի գերանաշար գմբեթի գոյությունն են Հաստատում: Կա չափերով և ձևով տարրեր մի սյունախարիխսն են, թերևս գմբեթաձև մասից գույս գտնվող հորիզոնական մայր գերանները պահող սյուներից մեկը սրա վրա է դրված եղել:

Գլուղապետերի բնակարանները զգուղական մյուս կառուցներից շնչառագանգել, դրանք փոքր ինչ ավելի խնամքով են կառուցվել և ունեցել համեմատաբար ավելի բնդարձակ և շատ բաժանմունքներից³⁵:

Գլխատունն իրեկ բնակարանային տիպար լայն տարածում է գտնելով միայն Սյունիքում: Նրա տարածման շրջանակները բավականաչափ ընդարձակ են: Այս հանդես է զալիս ոչ միայն հարևան ժողովուրդների՝ վրացիների, աղքա-քանցիների, թուրքերի, պարսիկների մոտ, այլև Հեռավոր երկրներում, ոսպի-սին է, օրինակ, Հնդկաստանը³⁶:









Գ. ՄԵՂՐՈՒԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՐԹԱՇԱԾԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՈՒՆԸ


իրեկ բնակելի տան ուրուցն տիպար զյուղական հարթածածկ բնակարանային համակառուցը հատկանշական է եղել Մեղրու շրջանի գերազանց մասի համար: Նրա առանձին նմուշները հիշեցնում են մեղարոնը, որը Հայոստանում հայտնի է Ուրարտուի գյուղայն ժամանակաշրջանից: Այսպիսի տան համակառուցը նույնպես համադրվածքին զիմանցորդ գերբ պատկանել է մի բնակելի սենյակի, որը գլխատան նման բազմազան դեր է կատարել կենցաղում: Համակառուցը նույնպես մասամբ խորացվել է սարալանչի մեջ, ունենալով սյունավոր պատշգամբի կամ սենյակի ձևով նախամուտք և հողե ծածկ, կառուցված գերանների վրա: Այս ընդհանրությունների հետ առկա են եղել նաև էական տարբերություններ: Այստեղ համակառուցների մեծ մասում մի երկրորդ սենյակ հանդես է եկել բնակելի սենյակի ֆունկցիաներով, թեև հիմնականում օժանդակ նշանակություն է ունեցել (օգտագործվել է որպես մառան): Վերջինս տան հատակագծում այնքան սերտորեն է կղել շաղկապված հիմնական սենյակի հետ, որ նախասենյակի նման մեծ մասամբ միշտանցը

35 Այդպիսի մի բնակելի եռաշարք, թաղակապ սննդակներից կազմված համակառուցիչ մացարոր չափազել է իր Շինուազր գուգամ: Նրա ստորին հարկում զանազան պահանջման վրա գրած է. «Թիւ ՈՒՇՅԻՐ» (1830) ի վալելուն Սարբիսի որդի Մերկա Քօսիկն Փայտին: Մի հանապոր տաճմի ամառաթի լուսնվելի կեղև Վերիշեն յայտն կենարունական մասուն: Համաձայն բարպարակ բարպարի գրանադուռիւն այն հասուցիէ է 1681 թվականին ոմն Պինդարի որդի Միթմարի և նրա կիուց Զանապանի կողմէց իրենց որդուն՝ Ղարաբաննի համար:

³⁶ М. Ильин., Древнейшие типы жилищ Закавказья, „Сообщения Института Истории и Теории архитектуры”, выпуск 5, М., 1946, гл. IV, VII; Р. Я. Агабабян, Композиция купольных сооружений Грузии и Армении, Ереван, 1950, гл. II. Р. А. Гауберт, *Աշված տափան*, էջ 56. E. Smith, *Աշված տափան*, էջ 56. Выпруний, Десять книг об архитектуре, перевод Ф. А. Петровской, М., 1936; стр. 41—42.

Fig. 23. Zanabur. Mural paintings on the walls of the main hall





Ակ. 24. Ստ. Լիսիցյանի հրատարակած Համբարձումները

բեր է կատարել (նկ. 24, 25, 27): «Դրսի տուն» և «Ներսի տուն» (նեսմանց և գյուղամանց տոն) անվանումներն ինքնին ցուց են տալիս բնակելի հիմնական սենյակի ֆունկցիաների բաշխված լինելը այդ բաժանմունքների միջև: Մյուս տարբերիչ հանգամանքը օգափոխման և լուսավորման կազմակերպումն է: Կտորի մեջ բացված երդիներից ծովան այնպես արագ չեր կարող հնառանալ, ինչպես գլխատանք, քանի որ գրանք բացված են եղել հարթ կտորի մեջ. ուստի, որպես օգափոխման օժանդակ միջոց, սենյակների արտաքին պատերի վերնամասերում դեպի ցած լայնացող դրսի կողմից նեղ լուսամուտներ են բացել: Նոր պայմանները նպաստել են սենյակների ուղղանկյուն ձևի առաջացմանը: Այս հանգամանքը կառուցողին զուրություններ է ընծայել նաև տեղանքի հարթեցման ժամանակ. ուղղանկյուն ձգված ծավալը լանջի թեքության ուղղահայաց անհամեմատ ավելի քիչ հողափոխման աշխատանք է պահանջել, քան բառակուսուն մոտ հատակագծով նույն շափի մակերեսի դեպքում:



Մեղրու շրջանի զյուղական հին տիպի տան պարզագույն համակառուցը կազմված է եղել մի սենյակից և նրա առաջ՝ «անտ»-երի միջև պարփակված պատշգամբից: Այդպիսի տները համեմատարար շատ քիչ են եղել: Ամենաշատ տարածված համակառուցը բաղկացած էր երկու սենյակից և մի պատշգամբից, որոնք իրար նկատմամբ ունեն մի քանի դասավորություն: Ամենատարածվածը մի առանցքի ուղղությամբ սենյակների կցումն է ընդունական կամ ընդերկայնական կողմերով, կապված տեղանքի թեքության նկատմամբ համակառուցի դիրքից և կառուցողի ճաշակից:

Բոլոր դեպքերում պատշգամբը պարտադիր համախմբից տարր է հանդիսացել, որի մեջ են բացվել երկսենյակ համակառուցի սենյակներից մեկի կամ եռասենյակ լինելու դեպքում երկուսի դռները՝ երբեմն բարձրադիր զուրկեցում դրան փոխարինել է պատշգամբան խորը նախամուտքը (նկ. 24): Հիշյալ համակառուցներին կցվել է անասուններին հատկացվող մի փոքր բաժանմունք առանձին մուտքով, որը մեծ մասամբ իբրև ախոռ է ծառայել: Մեծ թեքությունների դեպքում բնակելի համակառուցը երկհարկանի է եղել կիսագետնափոր կամ լրիվ գետնափոր առաջին հարկը հատկացվել է անասուններ պահելու կամ օժանդակ ալլ կարիքների, այդ թվում հնձանի ու մաւանի համար: Եղել են թաքնված գետնահարկեր բողարկված մուտքերով: Գետնահարկերը կամ առաջին հարկերը երբեմն թաղակապ կտորուցվածք են ունեցել, ինչպես Զանգեզուրի գոնենք բոլոր մյուս շրջաններում:

Բնակելի սենյակը լանջին կառուցվելու գեպքում երբեմն պատի և լանջի միջև նեղ միջանցք են թողել՝ պատը խոնավությունից զերծ պահելու համար: Այդ միջանցքը բնակարանի ամենազով մասն էր, այդ իսկ պատճառով կողմերից ու վերևու փակվել է և ծառայել իբրև մասն:

Այժմ նշված կառուցների շնչին մնացորդները կան միայն, այն էլ ընդորկված նոր համակառուցների մեջ իրեն օժանդակ մաս: Երբեմն նոր համակառուցի մեջ շինվում է հնատիպ մի սենյակ՝ իբրև մասն կամ խոհանոց:

Տանը կից անասուններ պահող տնտեսություններից շատերը ունեցել են խոտանոցներ, որոնք պատճեշված, խորը սյունասրահի կամ սովորական սենյակների նման են եղել այն տարբերությամբ, որ պատերի վերնամասերում լայն բացվածքներ են ունեցել խոտը ներս գցելու համար: Դրանք մեջ



Կի. 25. Հին աներ ՄԵՂՐԻԿՈՒ

մասամբ անասնանոցին կից են շինվել: Գյուղերից գուրս, կալերի անմիջապես կողքին կառուցված խոտանոցների մեջ հարդի լցվել է կալի մակարդակին հավասարվող, խոտանոցի կտորին բացված անցրից:

Բնակելի տան ներքին մանրամասնությունները բավականաշափ նման են զլսատների համապատասխան մասներին: Սենյակների և պատշգամբի պատերի մեջ եղել են փեղկերով և անփեղկ բազմաթիվ խորշեր՝ իրեր պահելու համար, լայն տարածում են ունեցել իրար վրա սիմմետրի դասավորված մեծ ու փոքր խորշերը հիմնական կացարաններում, տարբեր մեծությամբ և հարդարման խնամքով (նկ. 25): Այստեղ էլ, ինչպես այլ շրջաններում, պատերին կային հատուկ ելուստներ՝ իրերը գետնից բարձր դասավորելու համար: Պատերի ստորին մասում տեղավորվել են փոքրիկ շարժադրությունների կից բնակելի համակառուցների հետ հաղորդակցելու և իրեր փոխանակելու համար բացվել են հատուկ անցրեր: Օդափոխման դժվարությունն ստիպել է չեռուցումն իրականացնել բուժարիների միջոցով: Թոնից և բուժարիկ եղել է նաև պատշգամբում:

Դ. ՔԱՂԱՔԱՏԻՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐ

Ուսումնասիրությունը ցուց է տալիս, որ լուսամուտներն ընդհանրապես հատկանշական չեն եղել Մյունիքի գյուղական ճարտարապետությանը: Սոցիալ անտեսական նոր պայմանների շնորհիվ դրանք, հավանաբար, հանդես են եղել ուշ միջնադարում և հատկապես 19-րդ դարի գաղթականական շարժումից հետո: Տնեկանական-մշակութային կապերի հետևանքով այդ ժամանակներում ներ են թափանցել բազարային ապրելակերպին հատուկ սովորություններ, որոնք անդրադարձել են բնակարանային համակառուցի կազմության վրա: Պատահական չեր, որ Մեղրին և Ղափանի շրջակայքը քաղաքատիպ կառուցամասերի և շիների ամենավազ տարածման վայրերն են: Գյուղական վայրերում այդ պրոցեսն արտահայտվել է նախ բնակելի համակառուցների կազմում բաղաքատիպ սենյակների հանդես գալով և ապա դրանց քանակի ու ծավալի մեծացումով, որի հետևանքով աստիճանաբար նվազել է հին տիպի բաժանմունքների նախ կենցաղային և ապա համադրվածքային նշանակությունը: Ի վերջո հանդես է եղել գյուղական բաղաքատիպ բնակելի տան տիպարը: Ուշ միջնադարի ավանային ճարտարապետությունը քիչ բանով տարբերվելով զյուղականից՝ ավելի մոտ է եղել բաղաքային ճարտարապետությանը: Զարգացման այս պրոցեսում մշակվել են հատակագծային միջավայրեր, որոնք հետագայում մուտք են գործել բաղաքային ճարտարապետության մեջ:

Գյուղական միջավայրում այնուամենայնիվ ավանդույթները շարունակեցին թելադրող հանդիսանալ բնակարանային ճարտարապետության ասպարեզում, նույնիսկ սովետական իշխանության հաստատման առաջին տասնամյակներում որոշ տեղերում շինարարությունը կատարվում էր հնավանդ ձևերով, բայց մի շարք առաջադիմական սկզբունքների կիրառմամբ: օրինակ՝ Սևանա լճի ավագանում շարունակում էին կառուցել զինատների համակառուցներ, որոնք, սակայն, գտնվում էին առանձին հողամասերի մեջ՝ իրենց հատուկ բակով և բանջարանոցով: Այս համակառուցների մեջ էական տեղ էին գրավում



լուսամուտները ունեցող սենյակները. երբեմն նույնիսկ գլխատան պատերի մեջ լուսամուտները են բացել:

Անասուններին հատկացվող շենքերը առանձին մուտքով մասամբ աշխատել են մեկուսացնել բնակելի մասից: Երբեմն տան առաջ սյունավոր պատշգամբ են կառուցել, որը բոլորովին հատկանշական չէ այս շրջաններին: Ել, որ ամենազդիալիրն է, այդ համակառուցներն այլևս չեն խորացվել գետնի ուեց: Հանգեցուրում լուսամուտների ավելի տարածված լինելու հանդամանը բնակելի տան համակառուցից լրիվ դուրս է մղել գլխատունը, փոխարենն ստեղծվել է խոհանոցային բաժանմունք՝ օջախ-բուխարիկով և նույնիսկ թոնրով (նկ. 26): Եղել են նաև թաղակապ, մեկ սենյակից կազմված տներ (նկ. 11ա): Միայն այն գեպում, երբ նոր սենյակները կցվում էին հնին, համակառուցից մեջ էր առնվում նաև գլխատունը և օգտագործվում բացառապես իրբեք իրանոց, երբեմն նույնիսկ այդ բաժանմունքը տվալ նպատակին ժառախլուց էլ է թաղարել և օգտագործվել է իրբեք մարտ, խոտանոց կամ զոմ ժառախլուց էլ է թաղարել և օգտագործվել է իրբեք մարտ, խոտանոց կամ զոմ (նկ. 31): Երկհարկանի շենքերում խոհանոցն ստորին հարկում է տեղակդրվել:


Քաղաքատիպ շենքերը կառուցվել են մեկուսի, նրանց կից տնտեսական-արտադրական բնույթի բաժանմունքներ շատ թիշ են հանդիպում: Անասուններին հատկացվող կառուցվածքները շատ փոքր ծավալ ունենալով՝ տեղակդրվել են փոքրիք բացի մի անկյունում, կամ ուղղակի շենքին կից: Բակերում երբեմն հանդիպում են նաև օժանդակ բնույթի մեկ-երկու անշան կառուցվածք: Մեկ հարկանի շենքերում հնձաններ համարյա շեն եղել, նրանք կառուցվել են երկհարկանի շենքերի առաջին հարկում միայն (նկ. 32): Միահարկ շենքերի հնձանները մեծ մասամբ այդինքներում են տեղակդրվել:

Ուսումնասիրելով Սյունիթիում կառուցված քաղաքատիպ բնակելի տները՝ նկատում ենք, որ ամենուրեք սյունավոր պատշգամբը հանդես է զալիս որպես համակառուցից բաղկացուցիչ տարր և կատարում է գրեթե նույն ֆունկցիաները, ինչ որ զինատան և հարթածածկ հին տափի բնակարանի պատշգամբը՝ Պահպանիկը է նաև համեմատաբար հարթ սեղերում միահարկ տներ կառուցելու և միայն տեղանքի նեղվածքի պայմաններում երկհարկ ու եռահարկ համարվածքներին դիմելու ավանդությունը: Խոհանոցային բաժանմունքը տան համակառուցից մեջ առնելու սովորությունը պահպանիկը է խիտ կառուցվապատման պայմաններում, իսկ տեղանքը աղատ լինելու դեպքում այն կառուցվել է բակում, շենքին կից կամ փոքր ինչ ճենու որևէ տնտեսական բնույթի կառուցվածքի կողքին: Այս հանդամաններին նպաստել է շեռուցման նոր ձևերի տարածումը: Երբեմն միայն հաց թխելու գործողությունն է տնից դուրս փոխադրվել, իսկ ձաշը պատրաստել են տան սենյակներից մեկում, սովորաբար խոհանոցի կամ պատշգամբի բուխարիկի կրակով: Զանգեգործում լայնուն օգտագործվել է թաղակապ և կամարակապ շինությունների վրա այլ կառուցամասերով հարկեր ավելացնելու ավանդությունը: Պահպանիկը է նույնպես շենքերի ստորին հարկերի առջևից կամարակապ նախամուտքերի վրա փայտեցնավոր պատշգամբը բարձրացնելու սովորություն:


Սյունիթի քաղաքատիպ բնակելի տները դիրքապահապես սենյակների միաշար գասավորություն ունեն, պատշգամբների հետ տարբեր համակցումներով ուղղի փոխադրվածայաց թերերով և կամ Ռ-ածե հատկագծով: Խիստ ուշագրավ է այն, որ բոլոր այդ համարվածքներում միջանցիկ օդափոխությունը գոյություն չունի, լավագույն դեպքում անկյունային օդափոխում է եղել:



60 V



100 W



100 W




Fig. 26. *Romanesque* ornamental stonework


Տարբեր վայրերում միջանցիկ օդափոխումից հրաժարվելը տարբեր հանգամանքներով է բացատրվում. 1. ձմեռվա խսությամբ, որը բացվածքների մակերեսը սահմանափակելու անդրամբշտություն է ստեղծում, 2. ամառվա զոլությամբ բարձրապից շրջաններում, 3. ձորերով իշնող զեխյունների մատչելիությամբ, 4. շենքի ետնակողմը ծածկող ծածկող լանջի գոյությամբ, 5. շենքի ետնակողմով անցնող ճամփի փոշոց և աղմուկից խոսափելու անդրամբշտությամբ, 6. շենքի ետնակողմից փշող հողմերի գոյությամբ, 7. ստվերախիտ ծառերի հովանու առկայությամբ, 8. խորը պատշաճամբի առկայությամբ, որը բացառում է ամառային արեւի ճառագայթիների ներթափանցումը բնակարանից ներս, 9. առաք գոտիներում (Վայոց ձոր, Մեղրի) գիշերային զովությամբ հագեցած տան միջրոկիման պահպանելու ձգտումով, որը ավելի շատ կիրառվել է Մեղրու խշանի հին տներում, որոնց լուսամուտները շափաղանց փոքր են եղել զբահից, պատերը՝ հաստ, իսկ սենյակները փրար միջից բացվող ընդ որում խորրուած տեղադրվել է բնակելի սենյակը: Երդիկներից և նեղ լուսամուտներից կատարվել է զանդաղ օդափոխում, իսկ գիշերվա ընթացքում սառած հաստ պատերը նպաստել են օդի զովությունը պահպանելուն:

Ծննդի կառուցման ժամանակ մարդիկ խոսափել են միջանցիկ օդափոխումից՝ բնակարանում կայուն չերմաստիճան, մաքուր և զով օդ պահպանվելու նպատակով: Այդ իսկ նպատակով շոգ վայրերում կառուցված բնակելի հյուսիս (նկ. 27, 60):

Սենյակների միաշար գասավորությունը պայմանավորված է հատկապես պատշգամբից հետ անմիջական հաղորդակցություն ունենալու ավանդույթով: Փոխուղղահայաց թեերով և Ռ-աձե համադրվածքները ավելի համախմբված են դարձնում հատակագծերը և ապահովում սենյակների միջև կարճ, արագ և հարմար հաղորդակցումը: Այսպիսով՝ խնայողաբար է օգտագործվում կառուցապատող տեղանքը հատկապես այն գեպերերում, եթե կառուցապատումը խիստ է: Այսպիսի համադրվածքներն ունեն նաև մի այլ հատկանշական կրող, նրանց առաջ գտնվող փոքրիկ բակերը դառնում են ավելի ինտիմ, համակառուցյից ավելի անբաժան: Այս կանաչապատ բակերը զարդարում են բնակարանը և զով ու խոնավ դարձնում նրա օդը (նկ. 10դ):


Ծննդերի կողմնորոշման վրա մեծ ուշադրություն է դարձվել, չնայած, որ բացվածքներ ունեցող ճակատները պատշգամբով են պաշտպանվել: Հարավահայաց են եղել զով, բարձրապից շրջանների բնակարանները: Տաք վայրերում նախընտրել են հյուսիս-արևմտյան, հյուսիսային, հյուսիս-արեվմելլան, հարավ-արևմելլան և հարավային կողմնորոշումները, նայած պայմաններին:

Աւանա լճի ավագանում կառուցվել են նաև սենյակների երկշապք դասավորությունը մաներ: Այս համակարգն առավել ևս համախմբում է սենյակները, հաղորդակցությունը նրանց միջև հեշտացնում և շեռուցման ժամանակացնում: Փոքր ճակատով տան բնակելի մեծ մակերեսի կառուցումը հնարավորություն է տալիս կրթատերու պատերի մշակվող մակերեսները, խնայելու շինանյութին ու աշխատանքը: Այս զեպքում միակերպմանի կողմնորոշման ավանդություց հրաժարվելով՝ ժողովրդական վարպետները ստեղծել են միջանցիկ օդափոխման և ըստ եղանակի սենյակների հատկացումը փոխելու հնարավորություն: Այդ կապակցությամբ լուսամուտներ են բացել, բացի երկու հակառակներից, նաև կողքի ճակատներում: Այսպիսի շենքերի կառուցման



Նկ. 27. Հին և նոր ժամերով տուն Մեղրիում





Ժամանակ ըստ երևոյթին թելագոռղ նշանակություն են ունեցել նաև լուսավորությունը և դիրքը արևի նկատմամբ։ Այնուամենայնիվ դրանք առավելապես քաղաքային պայմաններին են հատուկ, ուր քաղաքաշինական պահանջները գտնվել են համարյա մասնագիտական մակարդակի վրա։ Պահանջներով գեպի բակն ուղղված պատշգամբներ կառուցելու ավանդույթը՝ շինառարները սենյակների կեսը գեպի փողոց են ուղղել՝ ձակատը զարդարելով գեղեցիկ լուսամուտներով (նկ. 5, 28, 57, 58)։ Փողոցների ուղղությունները հիմնականում նպատակահարմար կողմնորոշում ունեն, իսկ անընդունելի




Նկ. 28. Բնակելի տուն Կամոյոսմ

կողմնորոշման գենքերը կառուցել են ներ ձականերով գեպի փողոց: Կլիմայի խստության պատճառով Կամոյի տների պատշգամբներից շատերն ապակեպատ են եղել: Եղել են նաև գեպի ծորի կանաչ տարածություններն ուղղված ապակեպատ պատշգամբներ (նկ. 6): Նշված վերջին տիպի շենքերում, ստորին հարկերի գեպի փողոց ուղղված մասերը կամ բացարձակ խոլ են կամ ունեն փոքր լուսամուտներ: Ընդհանրապես լուսամուտներն ավելի շատ են գեպի հարավ-արևելք և հյուսիս-արևելք:


Քաղաքացին ձարսարապետության այս սկզբունքներից շատերը մենք տեսնում ենք նաև Գորիսում: Այստեղ բնակավայրերի փողոցները, ինչպես նշեցինք, ուղղված են գեպի հարավ-արևելք և հյուսիս-արևելք, իսկ թաղամասերի երկար կողմերը՝ հյուսիս-արևմտաբերից հարավ-արևելք: Բոլոր բակերը գրեթե անխտիր շենքերից ցածր են, այսինքն՝ շենքերը կառուցված են զողամասի լայնքով՝ բարձր մասում, որով ապահովվել է շենքերի արևահայտությունը: Թաղամասերի շարքացին կառուցների հյուսիս-արևմտան պատերը (սովորաբար խոհանոցի պատերը) փողոցի ձականին հակադիր կողմում գերազանցապես խոլ են: Շենքերի երկայնական պատերի խլությունը բացարձակ է հյուսիս-արևմտաբերից փշող ցուրտ քամբիներով և հարեւան բնակելի համակառուցները լիփի բարձրից մեկուացնելու անհրաժեշտությամբ: Հարեւան շենքի խոլ պատը, սովորաբար այդին և փողոցի ցանկապատը լրիվ




Նկ. 29. Բնակելի տներ Գորիսում



(F)




(G)



↗

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45 46 47 48 49 50 51 52 53 54 55 56 57 58 59 60 61 62 63 64 65 66 67 68 69 70 71 72 73 74 75 76 77 78 79 80 81 82 83 84 85 86 87 88 89 90 91 92 93 94 95 96 97 98 99 100



1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45 46 47 48 49 50 51 52 53 54 55 56 57 58 59 60 61 62 63 64 65 66 67 68 69 70 71 72 73 74 75 76 77 78 79 80 81 82 83 84 85 86 87 88 89 90 91 92 93 94 95 96 97 98 99 100

бд-39. Гравюра из Альбома

մեկուսացնում են բնակագանները փողոցից: Այստեղ էլ, ինչպես Կամոյում, պատշգամբներից շատերն ապահովատվելով՝ ձմռանը փակ նախասենյալի դեր են կատարում (նկ. 8, 29, 30):

Ընդհանուր կառուցղական օրինաշափությունների կողքին Սյունիքի քաղաքատիպ բնակելի տներն ունեցել են իրենց առանձնահատկությունները՝ կապված միջավայրի այս կամ այն պայմանի հետ: Հատակագծային առանձնահատկությունները դրսեղովում են անգամ միատեսակ կերմայական պայմաններում: Կոնկրետ վերլուծությունը ցուց է տալիս, որ ամեն մի շենք ունեցել է այս կամ այն առավելությունը լուսավորման, արեւ ճառագայթների ընդունման, օդափոխման և շահագործման տեսակետից:


Կամոյում շենքերի կողմնորոշման հարցում նշանակություն են ունեցել Հյուսիսից և արևմուտքից փողող ձմեռային և Հյուսիսից փողող ամառային զով հոսանքները: Ճարտարապետական լուծումով քաղականաշափ հետաքրքիր է երրեմնի շուկայի հրապարակն արևմուտքից եղերող շենքը (նկ. 7): Իր հիմնական քաղաքածքներով այն ուղղված է դեպի Հյուսիս-արևելք: Այս դիրքը նպաստավոր է այն տեսակետից, որ զով հոսանքները կարող են թափանցել տան մեջ: Պետք է նկատի ունենալ, որ լուսամուտները բացվել են դեպի շուկայի հրապարակ, որ քաղաքաշինարարական-գեղագիտական որոշակի մոտեցում է արտահայտում (այդ նպատակին է ծառայում ամբողջ ճակատի ձևավորումը): Դամենագրվածք ունեցող շենքերը խուզ ճակատներով պաշտպանված են եղել ցուրտ հոսանքներից (նկ. 28): Դրանք ունեցել են պատշգամբ, ճարմարեցված այս կամ այն եղանակի պահանջներին, որոնք համախի բաց են մնացել ցուրտ հոսանքի ներթափանցման վտանգ լինելու դեպքում և ապահովատվել են ձմռանը և օգտագործելու նպատակով: Ջդալի թվով երկայնական ճակատով կարմիր գծի վրա գտնվող շենքերի փողոցի ճակատները ցուրտ քամիների հակառակ կողմումն են գտնվում և օրվա մեծ մասում արև են տեսնում (նկ. 58): Շենքի ետնակողմը և կողքի ճակատները թիւ բացվածքներ ունեն, կամ թիւ բոլորովին չունեն: Սառը հոսանքներից խուսափելու համար փողոցի հակառակ կողմումն են բակն ու պատշգամբը: Ամառ ժամանակ բնակիչներն օրվա մեծ մասն այստեղ են անցկացնում, ուր թափանցում է զով քամին և արև է լինում միայն երեկոյան:

Քաղաքի բնակելի տների պատշգամբների կողմնորոշումը միատեսակ չի եղել, ու հարմարեցվել է տեղանքին և մանավանդ օրվա տարբեր ժամերին կամ եղանակներին համապատասխանող այս կամ այն հարմարությանը: Օրինակ՝ եթե պատշգամբավոր ճակատն ուղղված է եղել դեպի հարավ-արևելք, անմատչելի է մնացել ձմեռային ցուրտ հոսանքների համար (չեն թափանցել նաև ամառային տաք հոսանքները, իսկ ձմեռանը արևոտ ու տաք է նշել): Դեպի Հյուսիս-արևելություն ուղղված պատշգամբները առավելություն են ունեցել այլ տեսակետից, դրանք թափանցելի են եղել ամառային զով հոսանքների համար և օրվա մեծ մասն ստվերի մեջ են մնացել (միայն երեկոյան է արևը թափանցել), դրա փոխարեն ձմեռային պայմաններն են վատեղել: Այս առավելությունները նկատի ունենալով՝ նկ. 57-ում ներկայացված շենքում պատշգամբ են կառուցել երկու ճակատիր ճակատների վրա:

Սեանա լճի ավազանի գյուղական վայրերում լայն տարածում գտած միաշար դասավորությամբ սենյակներով քաղաքատիպ տներում գիշավոր

Հակատները հառկապես փոշուց և ազմուկից գերծ պահելու դիտավորությամբ ուղղել են դեպի բակ: Եթե փողոցի կողմը ավելի նպաստավոր է եղել կողմնորշման տեսակետից, շենքը ամբողջությամբ կառուցվել է հողամասի խորքում՝ իսկ բակը, երբեմն նույնիսկ մշակելի տարածությունը ընկել է, առջևի մասում: Այդ տները տաք եղանակներին օգտագործելու համար մեծ կառ փոքր պատշաճը են ունեցել զինավոր ձակատում, իսկ աննպաստ կողմնորշում ունեցող ճակատները բացվածքներից զոտի են եղել: Այդ շենքերի կողմնորշում իրարից տարբերվել են ճանապարհների դիրքի և օչի հոսանքների ուղղությունների տարբերության պատճառով:

Գյուղական վայրերում եղել են նաև միջանցքավոր ու սենյակների երկար դասավորություն ունեցող շենքեր՝ զեպի բակն ուղղված պատշաճքներով և աշխարհի կողմնորշմամբ, որ ամառը զով լինի: Այս զեպքում աննպաստ կողմնորշում ունեցող (բամիների, հարակից կառուցների նկատմամբ) ճակատներում բացվածքներ թողնելուց խոսափել են:



Նկ. 31. Բնակելի տուն Անգեղակոթում

Միսիանի շրջանի կղիմայական պամանները որոշ նմանություն ունեն վերոհիշյալ գոտու պայմաններին: Փոքր ինչ տարբերվում են բամիների ուղղությունները ցուրտ հոսանքները փշում են հյուտիս-արևմուտքից և արևմուտքից, իսկ տաք հոսանքները՝ հակառակ ուղղությամբ: Հարավային կողմնորշումն այստեղ լավագույնն է համարվել: Օրինակ՝ Անգեղակոթի տները (նկ. 26, 31), ձմեռն անարգել ընդունում են արևի ճառագայթները առավոտից մինչև երեկո, ցուրտ հոսանքները դեմ են առնում խուլ պատերին, իսկ զով բամիներն ամռանն աղասա մտնում են շենքերից ներս, առանց հոսանքներ առաջացնելու տան մեջ, քանի որ միշանցիկ օգափոխումը կանխված է: Հարթակներն ու պատշաճքները ծառայում են ավելի շատ իրեն նախամուտք, քան ցերեկային ժամանցի վայր:

Բավականաշափ մեղմ կղիմայով աշքի է ընկնում նաև Գորիսի շրջանը, առանձնահատուկ էլիմայով՝ ինքը Գորիսը: Գորիսի տների կողմնորշման

Հարցում բազմազանություն չի եղել: Որոշակի ուղղություն ունեցող փողոցներով նախապես ծրագրվել է շենքերի որոշակի կողմնորոշում: Թաղամասերի երկար կողմերի վրա կառուցված շենքերը մեծ մասամբ ունեն դեպի Հյուսիսարևմտությամբ հուկ, երկայնական, անմշակ ճակատներ, նյանց հակադիր ճակատում եղած պատշաճմբներն ուղղված են դեպի հարավ-արևելք և ըստուն են զովությամբ համարակալու առաջարկությունը: Տաղամասերի կարձ կողմերի վրա գտնվող շենքերը լուծվել են ավելի ազատ և բազմազան, որովհետև նկատի է առնվել փողոցի ճարտարապետությունն աշխուժացնելու անհրաժեշտությունը: Այսպիսի լուծումների օրինակներ են 29ա և 29բ նկարները: Առաջինն ունի արևահայաց պատշաճմբ հարավ-արևելքից, ուր ազատ մուտք են գործում զով քամիները: Արեահայաց կողմից լուսամուտները քիչ են, շենքն օդափոխում է միջանցիկ եղանակով: Հյուսիս-արևմտյան ճակատի բացվածքների շատությունը փողոցի ճարտարապետությամբ է թելագրված: Մյուս շենքը անթափանցելի է ցուրտ հոսանքների համար, ամռանը զով քամիները ներս են մտնում հարավից և հարավ-արևելքից և միջանցիկ կերպով օդափոխում այն: Պատշաճմբը ուղղված լինելով դեպի Հյուսիս-արևելք արևի կիպիչ ճառագայթներից զերծ է մնում:


Մեզորու շրջանի բազաբատիպ բնակելի տները մեծ մասամբ իրենց խոր բակերով, պատշաճմբներով և բացվածքներով ուղղված են դեպի ձոր, աչք դիրքը նպաստում է բնակաբանների հովատիյանը: Միջանցիկ օդափոխման բացակայության պայմաններում բացառվում է տան մեջ հոսանքների առաջացումը: Որոշ շենքեր շատ քիչ արևի են տեսնում, որը խիստ բարենպաստ է զով միկրոկլիման պահպանելու տեսակետից (նկ. 10դ, 27, 60): Մի շարք շենքեր ուժեղ արևի ճառագայթների տակ են, բայց պաշտպանված են խոր պատշաճմբով: Հաճախ բազաբատիպ շենքերի կողմնորոշումը պայմանական լորպած է ձորի տեսաբաններով ու կիֆմայով:

Նկ. 56-ի շափագրությունն այդպիսի մի շենք է, կառուցված Շվանիձորում: Այն դեպի ձորին է ուղղված երկու ճակատով. արևը օրվա առաջին կեսին է միայն չերմացնում պատշաճմբները, որոնք ունեցել են ձորից դիտելու հատուկ ճարտարապետական մշակում:

Տաք կիֆմայի համար նախատեսված խիստ ինքնատիպ բնակելի շենք է նկ. 32-ը, որը կառուցված է եղեգնաձորի մոտ՝ Գետափ գյուղում: Այս պատշաճմբը հիմնական մասով դեպի Հյուսիս է ուղղված, իսկ ուղղահայրաց թեր արևելքից պաշտպանված է խիտ վանդակով, որից արևի ճառագայթները հաղիկ են անցնում: Պատշաճմբը, նրա մեջ բացվող զոներն ու լուսամուտները ուղղված լինելով դեպի այգին՝ ստանում են ձորամիջից փշող զովությունը, ինչպես նաև այգու խոնավ ու զով օդը:

Որոշակի ավանդությներով կապված բազաբային ու գյուղական բազաբատիպ տներն իրարից զանազանվել են տվյալ միջավայրի տնտեսական, մշակութային և կենցաղային հարաբերությունների տարրերության պատճառով: Քաղաքային և ավանային շենքերն ի տարրերություն գյուղականների արտադրական նշանակություն ունեցող բաժանմունքներ չեն ունեցել: Հազվագեց

Ալ. 32. Եղիշականի տառ գլուխքան





միայն առաջին հարկերում եղել են հնձաններ (*Մեղրիում*): Որոշ նմանություն կա գյուղերում և բաղաքներում առաջին հարկերը օժանդակ կարիքների հատկացնելու տեսակետից, սակայն պեսք է նկատի ունենալ նաև, որ գյուղական բաղաքատիպ շենքերը գերազանցացաքս մեկ հարկանի են:

Բաղաքների և ավանների բաղաքատիպ շենքերը գյուղականներից զանազանվել, են նաև ոչ միայն բաժանմունքների՝ բանակով և մեծությամբ, այլև սենյակների հատկացմամբ: Քաղաքային և ավանային շենքերի մեջ աշըի է ընկնում Հյուրասենյակը թե՛ իր հարդարմամբ և թե՛ մեծությամբ: Այն պարագիր կերպով ուղղված է եղել դեպի փողոց կամ շրջապատի տեսարաններից լավագույնը: Այս սենյակների որմնախորշերն իրենց ձևավորման խնամքով զգալի տարբերվել են մյուսներից: Մեղրու շրջանում ամբողջ պատերը սվազի շերտով բաժանել են ուղղանկյուն մասերի, որոնք հաճախ ընդգրկել են որմնախորշեր, որոնց որթմիկ դասավորությունը հիշեցնում է ժողովրդական հին տիպի բնակելի տների երկշարկ որմնախորշերը (նկ. 25, 33): Հյուրասենյակի լուսամուտը հաճախ կողքի նեղ ճակատի մեջ է տեղավորված, որի նպատակն է երկար պատն օգտագործել որմնախորշերի, երբեմն նաև բուխարիկի համար: Լուսամուտների ձևավորման վրա մեծ ուշադրություն է դարձվել սենյակի ձևավորման տարբեր են հանդիսացել նաև բուխարիկն ու առաստաղը: Հատակի վրա թիշ են ուշադրություն դարձրել, քանի որ նրանք գրեթե միշտ հողից են ու ծածկվել են փառցներով, նույնիսկ գորգերով:

Մեղրու տների հյուրասենյակներից աշքի է ընկնում նկ. 33-ում ներկայացվածը, որի կառացողներն Ազգությաներ են եղել: Դա հնատիպ շենքին կցված մի ուղղանկյուն մեծ սենյակ է՝ հողե հատակով. Նեղ պատերից մեկի մեջ են գտնվում դեպի հարավ-արևմուտք ուղղված երկու կամարակապ լուսամուտներ, գուռը հանդիպակաց պատի մեջ է: Դուն կողքերին երկու հարկով դասավորված որմնախորշեր կան, այդպիսի հնգական որմնախորշեր էլ երկայնական պատերի մեջ են, որոնք ծառայել են իրեր տեղավորելու համար: Հնում ընդունված է եղել, հատկապես վերին որմնախորշերում, ցուցադրել ամանեղենը: Երկայնական պատերից մեկի մեջ մեծ որմնախորշի փոխարեն զարդարուն բուխարիկն է եղել, իսկ լուսամուտների միջև՝ որմնաքանդակ: Վերին որմնախորշերի տակով գոտի է անցնում: Փիլի մեջ է առնված փայտակերտ առաստաղը: Մի ուրիշ հնատիպ համակառուցի կցած հյուրասենյակում նախշուն բուխարիկից բացի, նույնպես նեղ կողմի պատի մեջ, եղել է դեպի արեւելք ուղղված վանդակապատ լուսամուտ՝ գունավոր ապակիներով (նկ. 27, 34): Սենյակի գուռը բացվել է լեռնային հաճելի տեսարանների ուղղությամբ՝ դեպի հյուսիս ուղղված պատշգամբի կողմը:

Քաղաքային և ավանային տների մնացած սենյակները դասավորվել են ըստ հարմարության անպես, որ ննջարանները միջանցիկ շլինեն և ցերեկային կացարաններն ունենան ավելի շատ լուս, այսինքն գրավեն արևահայաց կողմը և ունենան ավելի շատ բացվածքներ, քան ննջարանները: Միջանցք կամ նախասենյակ եղել է մուտքի կողմում այդ նպատակին ծառայող պատըշգամբի բացակայության և կամ սենյակների երկշար դասավորության դեպում: Պատշգամբը գրեթե միշտ նախասենյակի դեր կատարելով հանդերձ, բաղաքատիպ շենքերում կորցրել է իրեր խոհանոց ծառայելու փունիցիան: Միայն գյուղական վայրերում, տեղ-տեղ կարելի է տեսնել բուխարիկով պատշգամբներ, որոնք օգտագործվել են նաև իրեր խոհանոց: Գետափ գյուղի



Խե. 33. Բեակելիք առնձ Սեղման

վերոհիշյալ շենքում պատշգամբի մի ծայրը սենյակի ձևով հատկապնական լայնացվել և պատճեցվել է, իսկ բաց կողմից ամբողջ լայնությամբ ու բարձրությամբ վանդակապատվել: Այստեղ՝ երկրորդ հարկում, առաջին հարկից բարձրացող հիմքի վրա նույնիսկ թոնիր են սարքել (նկ. 32):


Բնդանիրապես Սլունիքում պատշգամբներն ունեցել են ուղիղ, փոխուղղահայաց թեկություն Ո-աձեւ կառուցվածք: Ուղիղ պատշգամբները պարփակված են եղել կամ շենքի ծացքերից դուրս եկող պատերի և կամ մեկ կամ երկու ծայրից դուրս եկող սենյակների միջև: Սենյակների Ղ-աձեւ զասավորության ժամանակ պատշգամբի աղատ ծայրը սակավ դեպքերում է պատով պարփակվել, այն էլ բուխարիկ կառուցելու համար: Մի լուսամուտ ունեցող պատով փակված համազարմաքներ ունեն հատկապնակ գորիսի նոր տները, որտեղ պատշգամբի աղատ ծայրը փողոց դուրս գալով՝ կարող էր գյուղական տեսք հաղորդել բնակավարին: Փողոց դուրս եկող ճակատի այդ միջոցով մեծացնելը հնարավորություն է տալիս պահպաննել Գորիսի հին, Ո-աձեւ տների ճարտարապետական ոճը, մեկուսացնել պատշգամբում գտնվողներին անցորդների հայացքներից, մասամբ նաև փոշուց: Ղ-աձեւ և Ո-աձեւ համազորվածքները կապվում են շենքերի համապատասխան ձևերի հետ, ընդուրում այս երկուսը կարող են պարունակել շենքը դրսից և որ ավելի համախ է պատահում, բակեր կազմելով ընդգրրիկ շենքի մեջ: Նշված կառուցցներում պատշգամբներն ինտիմ բնույթ ունեն, ինչպես հատկանշական է այս շրջանների ժողովրդական ճարտարապետությանը, նրանք մեկուսացված լինելով փողոցից՝ ուղղված են դեպի բակ, այսի կամ բնության որևէ տեսարանը:

Կամոյում սենյակների երկար զասավորություն ունեցող շենքերի առաջին հարկերում երբեմն միշանցքածե, առջեկից կամարակապ մուտք (դալան) են կառուցել: Ընդհանիրապես առաջին, նկուղային, կիսանկուղային և անգամ վերգետնյա հարկերը տնտեսական նպատակների հատկացվելով է բացատրվում նրանց լուսամուտներ քիչ ունենալը, այն էլ փոքր բացվածքներով: Այդ հարկերի բաժանմունքների մի մասը նույնիսկ իրեն հնձան, ախոռ և կոմ են ծառայել: Բացառություն է կազմել Գորիսը, ուր որոշ տների կիսանկուղային հարկերը բնակելի են եղել և տրվել են վարձով: Երկրորդ, բացառիկ դեպքերում նաև երբորդ հարկ բարձրանալու համար կառուցվել են պատշգամբների հարթակների հետ շաղկապված բաց աստիճաններ:

Ժողովրդական ճարտարապետության մեջ առհասարակ և Մեղրու շրջանում հատկապնակ պատուհանները գետնից շատ քիչ են բարձրացվել (30—40սմ): Այդ բացատրվում է այն ժամանակ բարձր կահույքի բացակայությամբ: Մարդիկ ծալապատիկ նստել են հատակի փողոցների վրա, ձաշել և աշխատել այդ դիրքով, որը և պահանջում էր հատակի ավելի մեծ լուսավորում: Մեղմ ձմեռը Մեղրիում թույլ էր տալիս պատուհանները մեծ բացվածքներով կառուցել, այնուղիւն տարածված են եղել վանդակապատ լուսամուտները, որոնք համախ բաց են մնացել, կամ ծածկվել յուղոտած թղթով կամ՝ ապակիով (նկ. 34):

* * *

Այսպիսով դույմենների, արհեստական քարանձավների, բոլորածե բնակարանների յուրօրինակ տիպարներ էին բնակարանաշինության տարրական ձեւերը, որոնք հանդես են եղել մեր թվագրությունից հաղարամյակներ առաջ, տեսական նստակյաց կյանքի պայմաններում: Մ. թ. ա. առաջին հաղարամյակում, Հայաստանի շրջաններում, հիշյալ միաբան պատսպարանների զարգաց-



Նկ. 34. Մեղրու լուսամուտների վանդակներ

ման շնորհիվ արդեն վերջնականացես ձևավորված են եղել գլխատան և հարթածածկ բնակարանի տիպարները: Ուշ միջնադարում այս տիպի բնակարանային համակառուցյներում հանդես են եկել քաղաքատիպ սենյակներ, որոնց քանակն ու ծավալը մեծանալով՝ աստիճանաբար նվազեցրել են հին տիպի բաժանմունքների նշանակությունը. ի վերջո հանդես է եկել գլուղական քաղաքատիպ տան տիպարը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ 19—20-րդ դարերում հանդես եկած քաղաքատիպ, ինչպես և վերոհիշյալ գլուղական քաղաքատիպ բնակելի տներում առկա են եղել ճարտարապետական այնպիսի ակնհայտ ավանդույթներ, ինչպիսիք էին՝ պատշգամբի օգտագործումը որպես համախըմբիչ տարր կամ նախամուտք, սենյակների բացվածքների և ամբողջ շենքի կողմնորոշումը, ինչպես նաև ամբողջ շենքի ծավալային համագրվածքը: Քաղաքատիպ շենքերի ճարտարապետության մեջ ավանդույթների այս դրսնորումը ստեղծագործական մեթոդի լավագույն օրինակ է հանդիսանում:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՅԱՂԱՅԻՆ ԲՆԱԿՅԹԻ
ԱՅԼ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐ

Զ Ի Թ Հ Ա Ն

Մյունիքում ձեմի արտադրությունը բավական տարածված է եղել, ամենուր յարելի է տեսնել ձիթհանների մասցորգներ¹: Դժբախտաբար անգործության մատնվելու պատճառով նրանցից հատուկներ սնուշներ են պահպանվել: Առաջի նշանավոր հուշարձան է Տաթկի վանքի ձիթհաններ²: Այդ կառուցցների առանձնահատուկ կողմերի բնութագրման համար այստեղ ներկայացված է երկու նմուշ, որոնք իրարից տարբերվում են իրենց կառուցվածքով:


Իր առանձին մասերի լավ պահպանությամբ ուշադրության է արժանի Դարանձուղ զյուղում մեր շափազրած ձիթհանը (նկ. 35ա): Այս ձիթհանն ամբողջովին գետափոր է և բացվել է միայն վերջին տարիներին, երկար ժամանակ, թերևս հարյուրամյակներ անգործածելի մնալուց հետո: Չնայած հնությանը՝ իր կառուցմասերով այն միանգամայն նման է Սևանա լճի ավագանում և այլ վայրերում հանդիպող ձիթհաններին, ուստի կարելի է ներկայացնել իրեն բնութագրական նմուշ այդ կարգի կառուցցների համար³:

Գետնափոք ձիթհանի մուտքն արելերից է, գետնի մեջ խորացող ճանապարհ ու թեր միջանցքը տանում են ձիթհանի առաջին բաժանմունքը, որտեղ մշակվում էր կտավատը, խորքում մամլման բաժանմունքն է: Մուտքի մոտ ոչ մեծ տարածություն է գրավում աշխատող եղներին հատկացված սալարկած մասը՝ իր մսուրով և քարե զրամանով: Հատիկամշակման այս բաժանմունքի

¹ Հայաստանը Ռուսաստանին միանալու ժամանակ արեն անգործության էին մատնվել զրեթ բոլոր ձիթհանները. օրինակ՝ Սևանա լճի ավաղանի 27 ձիթհաններից ոչ մեկը չի գործել վայոց ձորում 37 ավերակ և ընդամենք երկու գործող ձիթհան է եղել: Ձիթհանների գերազանց մասը կտավատի համար է նախատեսված եղել (տե՛ս Շոպեն, նշված աշխ., էջ 861):

² Այս և այլ հուշարձանների մասին մանրամասները տեղեկություններ են որված և. Խայտայշատի Շալայասանի արտադրական կառուցվածքները (Երևան, 1961): Տաթկի ձիթհանի մասին տե՛ս նաև Ա. յակովսոն, Տաթևական մատուցությունների արքական պահանջանեցությունները (Երևան, 1947), № 9.

³ Քառակի վրայի արձանագրության համաձայն այդ ձիթհանը կառուցվել է թձջ (1657) թիգեկների ուն Ավանեսի կողմից: Մ. Սմբատանցի ու ե. լալային հաղորդած տեղեկություններից պարզվում է, որ սա իր ժամանակաշրջանի համար խոշոր մասշտարի արտադրող է եղել, որովհետև դրանցից առաջ, 1651 թվականին իր եղբոր՝ Զուկասի հետ նույն զյուղում կառուցել է մի այլ ձիթհան, որից պահպանվել են չնչին մնացորդներ (տե՛ս Մ. Սմբատանց, նշված աշխ., էջ 538. ե. լալայան, նոր թալակետ զավառ, էջ 152):



Черт. 35. Схема макета подводной лодки

կենտրոնական մասում է տեղափոխված հատիկատրորիչ հարմարանքը: Այս բաժանմունքում է գտնվում նաև հատիկը բռվելու և տրորված կտավատը մաղելու խորշերի հարթակը, ուր բարձրանում են քարե սատիճաններով:

Մամլիչ բաժանմունքի ձևութեան պայմանագրոված են մամլիչ սարքը տեղափոխելու, շարժման մեջ դնելու և վերանորոգելու նկատառումներով: Այն երկարավուն է, մի ժայռում բոլորացձեւ (եղների պատման համար), իսկ մյուս ժայռում ունի գերանների շարժումը՝ կայունացնող որմնափորշ ու սվալված փոս, որի հատակի մեջ է գտնվում քամլված ձեթը հավաքելու կարաբը:

Զիթհանի ծածկի մասերը բնակելի տների համակառուցների կառուցամասերի համեմատ տարբերություն չունեն: Առաջին բաժանմունքի ծածկի կենտրոնական մասը փոքր ինչ բարձրացված է գերանների խաշման միջոցով: Մամլման բաժանմունքն ունի հարթ, իսկ մինտունը՝ եղների պատման տեղը, զմբեթած ծածկ:

Զիթհաններ կան, որոնց մեջ մամլիչ սարքը տեղափոխված է հատիկի մշակմանը հատկացված բաժանմունքում, որն այդ պատճառով փոքր ինչ ընդդարձակ է:

Մամլիչ սարքի կատարելագործմամբ 20-րդ դարում հնարավոր է դարձել փոքր ինչ հեշտացնել բամելու պրոցեսը և փոքրացնել մակերեսը: Զիթհաններ կառուցվել են բարանձավաներում, որովհետև ի տարբերություն հին սարբավորումների նորերը զրավել են ուղղակի մամլման տեղի վրա, ուր հակազդի հնարան են ծառայեցվել առաստաղները: Հասկանալի է, որ ինչպիսի արհեստական կառուցյ էլ լիներ չեր կարող դիմանալ միախանիզմի ձնշմանը: Վիմափոր շենքի առաստաղի համաձույլ լինելը և առաստաղից վեր ժայռի հաստ շերտի գոյությունը հնարավոր են դարձել այդ փոփոխությունը:

Զափագրված ձիթհանը՝ սրանոցը, գտնվում է Խնձորեսկում, կամարներով ամրացված հարթակի տակ գտնվող վիմափոր մարագի մեջ (Նկ. 35թ): Վերին անցքը որից ցած է թափվել կալի հարզը, գտնվում է հարթակի ետնակողմում: Գուռը հարավային կողմում է, և բարանձավը զեպի ներս լայնանում է: Լայնանում է նաև զերին անցքից զեպի ցած ինչպես այդ սովորական է տվյալ տիպի կառուցյների համար: Մամլիչ սարքի խորշը հետագա փորվածք է⁵: Մուտքի մոտ, նրա ձախ կողմում գտնվում են բովն ու հարակից փոսերը՝ «աղանձելիի», «մաղելիի», «կրծոնքի» (մազի մնացորդ): Օչախի տարբեթյունը երկար պահելու, ալսինքն վառելանյութը խնայելու համար օջախի «Հերթը» (ծխանցքը) և գուռը փակվում էր: Մաղը կափամած էր առաստաղից: Սրանոցի բարի զերն ու կառուցվածքը նույնն է: Այսական ևս կալը ամուր որձաբարով ու կրաշաղախով է պատրաստված, չնայած նրան, որ անմիշապես փորված է ժայռի մեջ: Այդ բացատրվում է ուժեղ ձնշմանն ու շիմանը դիմադրելու անհրաժեշտությամբ: Սրանոցի կարևոր տեղերում ճրագախորշեր կան գիշերացին աշխատանքի համար:

⁴ Զիթհանի տեխնոլոգիական-աղանձական նկարագրությունը տե՛ս Ն. Մ. Պապյանյան, «Հայկական ժողովրդական ճարտարապետությունը Սևանա լճի պահպանում», ՀՍՍՀ «Տեղիկագիր» (հասարակական գիտություններ), Երևան, 1962, № 1:

⁵ 1920 թվականին սրանոցը սարբող Գյուղնագրայան Արտաշի տունը մի քանի քայլի վրա է եղել ձիթհանի գոնից, որով հնարավոր է եղել արտադրության պրոցես վրա մշտական հսկողություն սահմանել: Այդպիսի գիրք են ունեցել նաև զրեթե բոլոր արտագրողների տները:

Արտադրական խիստ տարածված կառուցվածքներ են նաև հնձանները, որոնք եղել են ներկառուցված՝ տների համակառուցներում կամ առանձին շենքի ձևով: Նրանք տարածված են եղել Վայոց ձորի որոշ տար շրջաններում և Զանգեզուրի հարավում, Հատիպես Մեղրու շրջանի ստորին մասում:

Հնձանների էական կառուցածմասերն են խաղողը ճզմելու ավաղանը և նրան կից փոսը հորը կամ ավաղանը: Սրանք տեղավորվում են շենքի կամ սենյակի մի կողմում. ընդ որում քամելու աեղը միշտ անկյունում է լինում՝ շենքի պատերը լրիվ օգտագործելու համար⁶: Ավաղանի երկու պատնեշներուց մեկի մեջ աստիճանածն մի անցք է թողնվում մարդկանց երթենեկի համար (նկ. 39դ): Այդ անցքը հատակից բարձր է այնքան, որ հյութը գուրս չհոսի, երբ ողկուզները նրա ստորին մակարդակից բարձր լինեն: Երբեմն այդ պատնեշի վրա է կանգնեցվում նաև ծածկի միջնագերանը պահող այտնը: Հնձանի մեջ ուշագրավ են նաև թարեները (պատի ելուստներ, որոնց վրա իրեր են դրվում), որմնախորշերը և պատերի տակ շարված կարասները:

Հնձանները մեծ մասամբ այդիններում են կառուցվել՝ հումքի տեղափոխման դժվարություններից խուսափելու համար: Նրանք օգտագործվել են նաև իբրև ամառանոցային շենք: Կենցաղային պահանջները ստիպել են մարդկանց հնձանները կառուցել բնակելի տների նման: Դրանք սովորաբար մի գոնով, ուղղանկյուն սենյակներ են ամենատարբեր հատակագծային շափերի ու բարձրության, ունեն մի քանի նեղ լուսամուտ պատերի վերնամասում: Գրեթե բոլոր գեպերում սյունեկի վրա եղել են փորագրազարդ խոյակներ, որոնց վրա երբեմն նաև արձանագրել են (նկ. 46 է): Մածկը նույնական հողից է եղել, հարթ կտորով: Այս հնձաններից ոչնչով շեն տարբերվում ներկառուցված հնձաններից շատերը: Հանդիպում են նաև թաղակապ ծածկով հնձաններ և ներկառուցված, և՛ մեկուսի շինությունների ձևով:

Ա Ն Ա Ս Ն Ա Ն Ո Յ

Մեկուսի կառուցված անասնանոցները հատուկ են կիսաքոչվորական անասնապահական շրջաններին: Չնայած Սյունիքի բնակավայրերի արտակարգ խուսիքանը՝ անասնանոցները գերազանցապես տների համակառուցների մեջ են վեցըվել:

Առանձին կառուցված գոմերը, ինչպես նշել ենք, եղել են գյուղի ծայրին կամ հեռու (մինչև մի քանի կմ): Այդպիսի շենքեր եղել են նաև ամառանոցային բարձրագիր վայրերում: Ինչպես ամառանոցային բնակարանները, այնպես էլ գոմերը շեն տարբերվել գյուղամիջի կասույցներից: Փարախները զանազանվել են իրենց և՛ մեծությամբ, և՛ կառուցածենով:

Բնակավայրերից գուրս կառուցված ջին անասնանոցները համարյա շեն պահպանվել, հատուկենա մնացրդներ կան այս կամ այն վայրում: 37 և նկարում ամառանոցային մի գոմեր տիպ է ներկայացված Մեղրու շրջանից,

⁶ Մեր ուսումնասիրած շրջաններից գուրս տարածված է եղել առագաստ կոչվող քամելու տեղի այլ գասակորոթյունն: Այն ունեցել է բոլորակ փոսի ձև, որի պատճառով կառուցվել է սենյակի կենտրոնական մասում՝ առանց եղերող պատերի (տե՛ս Հ. Խալիխալյան, նշված տվյալները, էջ 21–29, ինչպես նաև է. Զալորյան, Աշտարակի շրջանի մողովդական բնակարանի հարտարապետությունը, Երևան, 1964, էջ 24–67):

Հավանաբար 20-րդ դարի սկզբներին կառուցված: Լայն բացվածքները ցույց են տալիս, որ այդ շենքը ձմռանը չի օգտագործվել: Այդպիսի գոմերը սովորական եռանավ կառուցվածք ունեն և գետնի մեջ շեն խորացված:

37 նկարում ցույց է տրված մի փարախ, որը գտնվում է Շվանիձորի մոտ: Ընդհանրապես այս տիպի շինություններին հատկանշական է բազմանակ անհանոն կառուցվածքը: Սյուներն այնքան կարճ են և առաստղը ցածր, որ մարդ կուացած պետք է ման գա այնտեղ: Փարախի անկյուններից մեկում բարձրագիր հարթակով առանձնացվել է հովիվների բաժանմունքը, որն իր առանձին մուտքն ունի:






Զ Բ Ա Դ Ա Յ

Զրադացները ամենատարածված արտագրական կառուցվածքներն են: Դրանք որպես կենսական անհրաժեշտության առարկա եղել են գրեթե ամեն մի բնակավայրում, մեծ մասամբ նրան կից ձորում: Զրադացների գոյությունը պայմանավորված էր առաջին հերթին հոսող ջրի առկացությամբ: Կառուցման աշխատանքների մեջ կարենոր տեղ է գրավում ջրի անկման համար կառուցվող առուն (նկ. 36):

Պարզապես ջրազացը հողե հարթ, սակավ գեպքերում լանջավոր ծածկով մի փոքրիկ ուղանկյուն շենք է, տեղավորված թեր վայրում, սովորաբար մի գնով և մի փոքրիկ լուսամուտով: Շենքի տակ, նրա մոտավորապես միշտն մասում, որտեղ մեխանիզմն է տեղավորված, ընդամական ուղղությամբ գետնուղու ձեռվլ մի գերանածածկ անցք կա, որի միջով մարդիկ կարող են կուացած անցնել: Շենքի ստորին մասում բացվում է այս կարճ գետնուղու փոքրիկ մուտքը, որտեղից գուրս է հոսում օգտագործված ջուրը: Անիվը փշանալու դեպքում կարում են ջուրը և այդտեղով մտնում են խորքում տեղավորված անիվը նորոգելու համար: Գետնուղին վերջանում է անվից փոքր ինչ բարձր գանվող բավականաշափ մեծ մի անցքով: Նրա միջով՝ անվի հատամասում, առանցքից շեղված դրությամբ ինչեւմ է բարձրագիր առվից եկող թեր խողովակի նեղ ծայրը:

Առուն վերջանում է քարուկիր պատերով, կիսաբոլորաձև, ծայրում չըն քարի համար փայտտեղ կամ երկաթե ցանցով պատած մի անցք է թողնվում, որի մեջ հազված է թեր խողովակի՝ նավի լայն ծայրը: Խողովակի թեքությունն ու գետի ցած նեղացող կարվածքը նպաստում են ջրի հոսանքն ուժեղացնելուն և անվի վրա համեմատաբար մեծ ուժ գործադրելուն: Այս խողովակը սովորաբար պատրաստվում է ծառի բնից, նրա միջուկը փորելու միջոցով կամ տակառի նման օղակներով պնդացված տախտակներով: Վերջին դարերում կիրառվել են նաև երկաթե խողովակներ: Զրի ճնշիչ ուժը համեմատական լինելով խողովակի երկարությանը՝ կարճ խողովակներից խուսափել են: Խողովակը սովորաբար կայունացվել է բարակույտի միջոցով:

Զրադացքարի պատման սարքը պարզ կառուցվածք ունի: Գետնուղրու ետնամասում նրա ծածկի մակարդակին գտնվող երկու հաստ գերանների վրա ամրացված է անշարժ ջրազացքարը, որի վրա դրված է շարժականը: Այս քարերի իրար շփվող մակերեսները հարթեցված են, բայց շեն ողորկված: Մաշվելու գեպքում նրանց մակերեսները մուրճի հարվածներով խորուրորդ են դարձվում: Սարքի երկաթե ուղղածիկ առանցքի վերին ծայրն անշարժ



ամրացված է վերին ջրաղացքարին, ստորին ջրաղացքարի միջով այդ առանցքն առանց կապի անցնում է հատուկ գլանաձև անցքի մեջ: Առանցքի ստորին մասում նրան ամրացված է շրով պատեցվող անիվը: Սա իր հերթին բաղկացած է առանցքին ամրացած փայտե թեք անցքեր ունեցող գլանաձև մասից (թոփ), անցքերի մեջ ամրացված փոքր ինչ թեք, շառավղիութությամբ դրված փայտե թիակներից և թիակների աղատ ծալիքը միավորող երկաթե կապերից: Թիակները ուղղաձիգ դրությունից շեղեւու նպատակն է շրի շիթի հարվածն ընդունելը, այդ նույն նպատակով թիակների գեպի շիթն ուղղված մակերևուների մեջ հաճախ գոգավոր փորլածքներ են արվել: Անիվից ցածր, առանցքի ծալը հողավորված է գետնուղու լայնությամբ զցված գերանի՝ նստվածքի մեջ: Այդ նպատակի համար օգտագործվել են փորլածք ունեցող մի պողպատե սալիկ, որն ամրացվել է նստվածքի վրա, այդ փորլածքի մեջ է պտավել առանցքը: Ծփումը փորբացնելու համար այդ մասերի միջև դրել են մի պողպատե գնդիկ, իսկ հնում գրա փոխարեն գերամուր քարի մի կտոր են դրել: Նստվածքի մի ծալը գետնուղու պատերից մեկի մեջ է խրված, իսկ մյուսն աղատ է և կարող է բարձրացվել կամ իշեցվել, համապատասխանարար բարձրացնելով և իշեցնելով ամրող պտավող մեխանիզմը: Այդ հատկությունն օգտագործվում է ջրաղացքարերի շփող մակերեսներն իրարից հեռացնելու և մոռեցնելու համար, որով հնարավոր է զանում ստանալ տարբեր շափի մասնիկներ ունեցող ալյուր և նույնիսկ կորկոտ: Այդ բավականաչափ նույրը աշխատանքը կարգավորվում է ոտք կոչվող հատուկ սարբագրությունը: Նստվածքի պատ ծալիքն ամրացվում է ուղղաձիգ կանգնեցված մի երկաթե կամ փայտե ձող, որի մյուս ծալը դուրս է զալիս ջրաղացքարի հենարան ծառայող գերանների վրա դրված հատուկ գերանի միջից:

Ջրաղացքարերի արանքից դուրս եկող ալյուրը հավաքվում է նրանց առաջ հատուկ պատրաստած, մասմամբ գետնի մեջ խորացող փայտե արկղի՝ ալբատան մեջ:

Ջրաղացքարերի վրա, փոքր-ինչ բարձր, գտնվում է փայտե մեծ ձագարը, որը կոչվում է տող: Այն անշարժ ամրացված է շորուների օգնությամբ՝ կից կառուցված պատնեշներին կամ սյուներին ու պատին: Նրա մեջ լցվում է ցորենը, որը շատ քիչ քանակությամբ թափվում է ստորին անցքի տակ տեղավորված փայտե թեք փոխանցիչի մեջ: Զագարից գեպի կողքի պատը զցված մի թեք ձողի վրա ամրացված է թիակնաման փոքրիկ մի փայտ, որը թեք իշնում է ջրաղացքարի վրա: Վերջինիս պտավելու ժամանակ ցնցվում է այդ փայտը, որն իր հերթին ցնցնում է վերոհիշյալ ձողն ու ձագարը: Այս ցնցումների շնորհիվ է, որ արմտիքը վարի միջից թափվում են ջրաղացքարի անցքի մեջ:


Ջրաղացքարերը բարձրացնելու համար գերշին ժամանակներում սկսել են օգտագործել սյուների վրա ամրացված հատուկ ամրարձիչ մեխանիզմներ:

Մի քանի ալբաղաց մեխանիզմներով (աչքերով) ջրաղացների խիստ սակավ են կառուցել, այդպիսին եղել է Գորիսում:

Ա Բ Հ Ե Ս Ա Ն Ց Ն Ե Բ

Սյունիքում ամենատարածված արհեստանոցները դարբնոցներն էին՝ համապատասխան գլուղական արտադրության և կենցաղային պահանջներին:

Տպ. 37. Բնակելի և անառողջական կառույցներ



Դրանց համար հազվագեց են առանձին շենք կառուցել, սովորաբար նրանք գրավել են տան համակառուցի բաժանմունքներից մեկը, կամ նույնիսկ նրամի անկյունը: Դարբնոց է եղել նաև յուրաքանչյուր պայտարանոցում, որտեղ պայտարը ինքն է պատրաստել իրեն անհրաժեշտ պիտույքները:

Դարբնոցին հատկացված շենքը մի ուղղանկյուն սենյակ է եղել, ցանկացած շափերի, բայց ոչ շատ մեծ: Նրա տարածությունն այնքան էր, որ կարողանար պարփակել քուրան, նրան կից փուքսը, զարբնի սալը և մի քանի գործիք: 37դ նկարում ներկայացրած դարբնոցը այդ պայմաններին համապատասխանող մի սենյակ է, որն անցյալում հնաձան է եղել: Խիստ տարածված են եղել նաև պայտարանոցները: Մեզ հաջողվել է Բասարգելարում շափագրել այդպիսի մի արհեստանոց: Այն գտնվում է Հին և Նոր կառուցամասներով կազմված բնակելի տան համակառուցյում, որի բակը սովորականից ավելի մեծ է՝ հաճախորդների ձիերի համար: Պայտարանոցը գտնվում է ախոռ-գոմի մուտքի առջև և անկյունային, բաց պատշգամբի ձև ունի: Նրա կենտրոնումն է գտնվում ձին պրկելու հարմարանքը, որը բաղկացած է չորս սյուներից ու նրանց վրա ամրացված հորիզոնական, պատտվող և անշարժ ձողերից, նրանց ամրացված փոլերից ու կեռերից:

Սյունիքում եղել են նաև ավելի բարդ ու մեծ արհեստանոցներ, որոնք նույնպես, մեծ մասամբ, տեղ են գտել արհեստավորի տան համակառուցյում: Տան ցանկապատված բակի մեջ մի այդպիսի խիստ ուշագրավ արհեստանոցի պայմանական պատկեր են քանդակել Բռնակոթ գյուղի տապանաքարերից մեկի վրա, որը ուշ միջնադարի ստեղծագործություն է:


Այս տապանաքարին ուսումնասիրող Գ. Սարգսյանը միանգամայն շնորհակալ գործ է կատարել, վերլուծելով մեխանիկ գյուտարարին վերաբերող պատկերի գծվար հասկացվող բովանդակությունը, սակայն պատկերված տունը փայտաշեն լինելու նրա կարծիքը կասկածելի է: Բանը նրանումն է, որ տան պատերի անկյունային մասերի և մանավանդ ցանկապատի պատկերումը խիստ պայմանական բնույթ են կրում (ինչպես ամբողջ պատկերաբանգակը): Երար վրա դասավորված գերանների տպավորություն թողնող հիշալ մասերը արտաքին եղբերում ուղղվ են և ավելի շուտ պատկերում են Սյունիքի ժողովրդական ձարտարապետությանը խիստ բնորոշ պատերի անկյունաքարերը, որոնք շարվածքի մեջ ամենախնամքով տեղադրված մասերն են հանդիսացել: Տան ձականի ստորին մասում հորիզոնական գերանի պատրանք ստեղծող մասը որմանախարիսխն է: Ինչ վերաբերում է բոլորաձեւ լուսամուտի ցանցեն «Փանջարա» լինելուն՝ ապա դա խիստ ուշագրավ երկույթ է հայկական ժողովրդական ձարտարապետության համար ընդհանրապես և Սյունիքի ձուլի համար մասնավորապես: Դա ցույց է տալիս, որ վանդակապատքացվածների ձարտարապետությունը հատուկ է եղել նույնիսկ զլիատներուվ կառուցապատված լեռնային գյուղերի համար:

Կ Բ Պ Ա Կ Ն Ե Բ Ր Ե Վ Խ Ա Ն Ո Ւ Թ Ն Ե Բ

Հայկական ՍՍՀ հարավ-արևելյան շրջաններում խանութները շատ քիչ են եղել: Դրանք կառուցվել են քաղաքներում: Բայց եղել են անթիվ կրպակներ,

⁷ ՏԵ՛՛ Գ. Սարգսյան, հոսում են տապանաքարերը, «Էջմիածին», էջմիածին, 1963, № 11, էջ 29—33, նկ. 6:

որոնք փայտե կամ քարե հասարակ, ուղղանկյուն, միաբաժանմունք շինություններ էին և ճարտարապետական ոչ մի ուշագրավ տարր չէին պարունակում։ Քաղաքների խանությունները մեկ կամ երկու բաժանմունքով, երբեմն շենքերի տակ, մեկուսի կամ իրար կից կառուցվածքներ էին լայն բացվածքներով, որոնք միաժամանակ զուան և լուսամուտի դեր էին կատարում (նկ. 8ը, 8դ)։ Դրանք մեծ մասամբ կառուցվել են նախագծերով և շատ մեծ շեն եղել իրենց շափերով ու տարողությամբ։ Այդ կարգի խանություններով հատկանշական էր Գորիսի նոր շուկան, ուր իր մեծությամբ աշքի է ընկել 19-րդ դարի վերջին քառորդում կառուցված պասաժը։ Այն առջևից այլունասրահով պատաժ միաբաժանմունք խանությունների երկու շարքով է կազմված։ Այդ շաբթերը կից են իրար և բացվում են հակադիր կողմերի վրա։



Նկ. 38. Աղբյուրի շինություն Գեղանուշի մերձակայքում

Իրենց ինքնատիպությամբ և ազգային երանգավորումով աշքի են ընկել ժողովրդական վարպետների 19—20-րդ դարերի կառուցյները։ Ուշագրավ են Գորիսի հին շուկայի գետնամած, թաղակապ խանությունները։ Նկ. 7-ում ցուց է տրված Կամոյի շուկայում կառուցված մի հին բնակելի շենք, որի առաջին հարկը խանություններ են՝ իրենց ետնակողմում գտնվող պահեստներով։ Հետաքրքիր մի նմուշ է նաև նկ. 59-ում ներկայացված շափագրությունը։ Պահանջման կամ պատաժի խանություններից մեկի մուտքն է, կառուցված քաղաքի հին եկեղեցու պարսպի դարպասի նմանությամբ։

Ա Դ Յ Յ Ո Ւ Խ Ե Բ

Լեռնային բնությունը սյունեցուն առատ չուր է մատակարարել։ Գրեթե բոլոր գյուղերում կան տեղում բխող կամ բերովի զուլալ չըներ։ Ձուր վերցակլու համար աղբյուրի հատուկ կառուցվածքներ են ստեղծվել։

Զանգեղուրում տարածված են թաղակապ, ուղղանկյուն, երեք կողմից տրմափակ շինությունները, որոնցով ծածկել են աղբյուրը, չրավազանն ու մի փոքր տարածություն նրանց առաջ: Դրանք առանձնապես օգտակար են եղել սակալաշուր աղբյուրների գեպրում և գեղեցիկ, ճաշակով մանր ճարտարապետական ձեւեր են՝ առաջից կամարակապ բացվածքով ու երկթեք կտուրով, կտուրված ստվերախոհ կամաչի մոտ, դարավոր ընկուզենիների տակ և ալլն (նկ. 38):

Սովետական իշխանության տարիներին լայն տարածում է գտել երկաթե խողովակներով ջրամատակարարումը, կառուցվել և կառուցվում են բազմաթիվ աղբյուր-ջուշարձաններ:

ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐ


Պարբերաբար օգտագործվուի կառուցվածքներ են ամառանոցային բնույթի շենքերը, վրանները և այգեգործական շինությունները: Ընդհանուր առմամբ ամառանոցային շենքերը բնակելի համակառուցքի շինություններից շեն տարբերվել բացառություն է կազմել Մելրու շրջանը, ուր գերազանցագիս տարածված են եղել փայտաշին կառուցվներն ու մանավանդ վրանները: Վրաններուն օգտագործվել են արտավագրերուն (նկ. 4, 39):

Ծանոթագր գլուխի ամառանոցային շենքերը, ինչպես նշեցինք, բարաշեն են եղել և երեսն օգտագործվել նաև աշխան ցորա պայմաններում: Այլ շենքերը շատ հասարակ հատակագիծ ունեն, մեկ սենյակից կազմված, զասավորված են լանջի վրա և ուղղված դեպի հարավ և արևմուտք: Մեծ մասամբ նրանք միացած հակատաներով շարեր են կազմել, որոնց մեջ զգալի թվով թաղակապ ծածկեր կան, երկթեք կտուրներով: Յուրաքանչյուր սենյակում եղել է բարերով եղերված ջողե մի թումբ կամ ցցերի վրա, բարձր, ճյուղերով կազմված մի հարթակ՝ անկողնի համար, պատի մեջ ծխնելուզով մի օշախ և մի բանի փոքր որմնախորշեր:

Ժամանակավոր օգտագործման համար նախատեսված, բայց չբանդվագ կառուցվներ են շաղախներն ու բալկոնները, որոնք տարածված են եղել Մելրու շրջանում, հատկապես Կարձեսանի ամառանոցներում: Զալպախը բնակելի տան պատշամբն է, միայն առանց կից շենքերի: Եթե չալպախը կողքերից ևս պատեր ունի, կոչվում է բալկոն: Այսպիսի կառուցվածք են ունեցել կալերին կից շինությունները՝ կլապանները, խոտանոցների որոշ շինվածքներ և ալլն:

Քանդովի և հավաքովի վրաններ են օբաններն ու ալաշուխները: Ալաշուխները տարածված էին Սևանա լճի ավագանում, իսկ օբանները՝ ամենուեք: Երկուսն էլ ճյուղերով կազմված վրաններ են, բայց կառուցվածքով՝ փոքր ինչ տարբեր: Օբանները ավելի մեծ մակերես են պարփակում: Նրանք կազմվում են մկուն, ուղիղ, ոչ շատ հաստ ճյուղերով, որոնց սրած, մոտ 5—6 սմ հաստություն ունեցող ծայրերը խրում են գետնի մեջ այնպիսի զասավորությամբ, որ ստացվի ուղղանկյուն տարածություն, մի կողմից կիսաշրջանաձև ելուստով: Ուղղանկյան երկար կողմերի ճյուղերի ծայրերը կորացնելով՝ հասցվում են իրար և կապում բրդե պարանով: Այսպիսով ստացվում է կամարաձև կապված ճյուղերի շարք և ապա գմբեթարդի նման կմախք: Կմախ-

№ 39. Фрагмент храма в Гиманах.



քը պատում են եղեգներով կազմված ճկուն փողոցի՝ չաթանով։ Վերջինիս ծայրը թողնվում է աղատ և ծառայում որպես դուռ վրանի նեղ, ուղիղ ծայրում։ Այսուհետեւ որպես ծածկ փոռում են անշրանցիկ թաղիք կամ կտավ և այն թելերով ամրացնում կմախրին։ Հաճախ նրա ստորին մասերում քարեր են կախում որպես ամրացնող միջոց։ Վրանի ետնամասը սովորաբար վարագուրում են և օգտագործում իբրև իբրի և մթերքների պահեստ։ Ալաշուխը նույնպես ձեռն ձգողեր, բով է կազմված։ բայց այդ ճյուղերը ցցվում են շրջանաձև։ Հավաքվում են դեպի կենտրոն և կապվում փայտե միջնասյան վերնամասին։ Գրա ծածկումն է կտարարվում է վերևում նկարագրված ձևով։

Խիստ տարածված գյուղատնտեսական շինություններ էին մարագները, որոնք հատկացվել են հարդգ կամ ծղոտը պահելու, ուստի մեծ մասամբ կառուցվել են կալերին կից։ Դրանք ուղղանկյուն շինություններ են եղել՝ երկթեր, ճյուղերի վրա ծղոտով կազմված կտուրով, որի մակատացին եռանկյուն տարածությունները փակվել են ճյուղերով։ Շենքի վերնամասում, կտորի տակ, երբեմն հորիզոնական գերանների և ճյուղերի ցանցով կազմված հարթակ է ստեղծվել խոտ գարսելու համար, իսկ հարդգ մնացել է նրա տակ, օդի համապատասխան շերտով անշատված։ Կտորի կառուցվածքը ապահովել է շենքի օդափոխումը։

* * *

Տնտեսական-արտադրական բնուլիթի կառուցվածքները երկրի պատմական անցյալի պերճախոս հուշարձաններն են։ Նրանք արտացոլում են Սյունիքի տնտեսության մանր ապրանքային թերումը։ Այդ շինությունների՝ ըստ քանակի տեղական պահանջներից գերազանցելը մատնացուց է անում, որ քաղաքական և սոցիալական ծանր պայմաններում ժողովորդը պայքարել է իր կենսապայմանների բարելավման համար։ Շինություններն ունեցել են պարզ կառուցվածք, նրանք թե համազգվածքային և թե կառուցվածքային առումով նորություն չեն և կրկնում են բնակելի տան համակառուցների այս կամ այն կողմը։

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ

Ա. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

1. Շինայիւրեր

Մյունիքի ժողովրդական ճարտարապետության կառուցների շինանյութերը գերազանցապես ձևոք են բերվել բնակավայրերի տարածության սահմաններում։ նրանք բարդ մշակման չեն ենթարկվել։ Բացատիկ դեպքերում, Հատկապես ունկնդերի կառուցների համար, որոշ շինանյութեր բերվել են հեռու տեղերից, որոշ շինանյութեր էլ ենթարկվել են զգալի աշխատանք պահանջող մշակման։

Հնագույն ժամանակներից իրեւ շինանյութ են ծառայել միջակ կարծրության ժայռերը, որոնք մետաղ գործիքներով փորվել ու կոփվել են կենցաղային և պաշտամունքային շենքերի համար։ Այստեղ ժայռակոփումը, կենցաղի շափալանց սահմանափակ պահանջներին համեմատ, երբեք չի հասցել կատարելության։ Այդ է պատճենը, որ կենցաղային նշանակություն ունեցող կառուցների մեջ ողորկված մակերեսներ և անգամ կանոնավոր երկրաշափական ձեր ունեցող ծավալներ չկան։ Պատերի հարթ թվացող մակերեսներն անգամ կրում են փորող գործիքի թողած հետքերը։ Միայն մոնումենտալ կառուցներում է ցուցաբերվել որոշ բժանագրություն, այդպիսի օրինակներ են կոփածո խաչերը՝ ժայռերի վրա և մատունների մեջ, Մարտիրոս գյուղի վիմափոր եկեղեցիները, թերեւս նաև վերը հիշատակած Կամոյի վիմափոր սենյակները։ Ժայռափորման այդ նախնական վիճակն է եղել պատճառը, որ բարանձավային բնակարանների և անասնանոցների դռներին կանոնավոր տեսք հաղորդելու համար օգտագործել են սրբատաշ կամ կիսատաշակ քարերի շարվածքը։ Պետք է նկատի ունենալ սակայն, որ տեղ-տեղ ժայռերի կազմվածքը անհամասեն լինելու պատճառով մակերեսները ողորկելն անհնար է եղել։

Գրեթե ամենուրեք շափալանց լայն կիրուում է ունեցել քարը իր մշակման տարրեր ձևերով, որն օգտագործվել է պատերի, հատակների և նույնիսկ ծածկերի համար։ Ամենից ավելի օգտագործվել է անմշակ որձարոր, Հատկապես իրեւ պատի շինանյութ, երբեմն նաև գոմերի հատակների համար։ Պատերի մեջ լայն օգտագործում է գտել նաև բնականորեն կամ արհեստական եղանակով ճեղքված կամ կոտրատված քարը։ Այդ քարերի մեջ մակերեսներ ունեցող սալերն օգտագործվել են հատակների, ճանապարհների, ջրանցքների համար, երբեմն նաև դրվել են ծածկերի փուլիր շերտերի տակ կամ քարուկիր

ծածկերի մեջ: Հարթ կամ կոպիտ մշակված որձաքարերն իբրև պատր շինայութ լայն կիրառում են ունեցել, օգտագործվելով կարելը կառուցվածքարին և հարզաքարանքային նշանակություն ունեցող կառուցամասերուն, շրամանների և աղբյուրների համար և այլն: Տուփ քարի մշակումը շափառաց աշխատատար լինելու պատճառով նույնպես սակագէ կիրառվել պատերի մեջ: Այն կիրառվել է Կամոյի, Սիմեոնի, Գորիսի և Զավանի շրջակայրում: Կամոյում տուփ քարն է լայնորեն օգտագործվել, իսկ Գորիսում՝ որձաքարը:

Քարի մշակումը Սյունիքում շատ հին ժամանակներում է սկսվել: Դեռ Հնուց բերդշների պատերի համար կոտրելու միջոցով քարերի հարթ մակերեսներ են ստեղծվել: Այդ գործողությունը կատարվել է նույնիսկ քարե գործիքով: Քարերի մշակման այս հնագույն շրջանին են պատկանում Պոշունգաշի մենչիրները: Դրանք տուփից են, բերված հեռու տեղից, պարանով քարը տալու միջոցով: Այդ ժաման են վկայում քարերի սրածայր վերնամասերում պահպանված մեկ և հավաքներ երկու ձագարաձև անցքերը: Այդ քարերը բավականաշափ մեծ են (ամենամեծերը մինչև 1,75 մետր լայնություն, 1,5 մետր հաստություն և ավելի քան 2 մետր բարձուություն ունեն): Դրանք ընտրված կամ մշակված են այնպես, որ մի ժայրից դեպի մյուսը զգալի լայնացում ունենան: Ամենայն հավանականությամբ քարի սրբատաշ մշակումը կիրառվել է երկաթի զարաշքանից ոչ շուր (մ.թ.ա. 1-ին հազարամյակի):

Ամենատարածված և սովորական շինանյութ են հանդիսացել հողն ու կավը: Դրանցով են ծածկվել հաստակներն ու տանիքները, համախ և ծեփել պատերը: Պատերը մեծ մասամբ շինով են շարվել, ողով կամ կավով են պատրաստվել պատերի հում աղյուսներն ու բլոկները: Որմնազրական և ծեփագործական շաղախների մեջ ավելացրել են հարդ, երեխն նաև արմտիքի թեփ, իսկ հում աղյուսի ու կավարետոնի մեջ՝ մոխիրը: Վերջին միջոցառումը շաղախը պնդացնելու համար է նախատեսվել: Կավարետոնը կամ հում աղյուսը պատերի համար օգտագործել են այնտեղ, որտեղ քրար քիչ է կամ չկա, այսինքն՝ կայոց ձորի:

Կիրը իրրե թանկարժեք շինանյութ քիչ է կիրառվել. նրա գործածության հետքերը համեմատարար շատ են հանդիպում Զանգեզորում, հատկապես կամարակապ և թաղակապ շնչերում, ինչպես նաև Գորիս և Կամո քաղաքներում: Կիրը պատրաստել են փոսերի մեջ, որոնց պատերը ներսից մինչև 70 սմ բարձրությամբ շարվել են քարով և կրաշաղախով: Փոսի ստորին մասում, մինչև պատի եղերքները ցախ է լցվել, որի վրա՝ շարդկած կրաքարը, այնուհետև զարդար ցախ և ապա կրաքար և այսպես մի քանի շերտ մինչև փոսի եղերքներից վեր գմբեթածե կույտ առաջանալը: Այդ կույտի միջին մասում թողնվել է ծխի հետացման անցք, օդանցքներ են թողնվել նաև փոսի տարրեր մասերում: Կույտը ծածկվել է մանր քարերով, իսկ քարերի արանքները լցվել են խոտվ կամ մամուսով: Այրվելու ընթացքում կույտն աստիճանաբար իջել է և հավասարվել փոսի եղերքին: Կիրը պաղել է 3—4 օր հետո: Յուրաքանչյուր փոսից ստացվել է 9600—12200 կգ կիր: Կրափոսերը պատրաստվել են անտառների մեջ կամ նրանց մոտ, ինչպես փայտածուխի փոսերը: Ածխի փոսն ունեցել է մոտ երկու մետր լայնություն, նույնքան խորություն և երեքմն ավելի փոքր չափեր: Կրի փոսերը դրանցից համեմատարար ավելի փոքր են

Եղել¹: Կիրն օգտագործվել է ավագախառն շաղախի մեջ, քարի մանրութիւն և ավազի հետ խառնված բետոնի ձևով, իրեն քարի առանձին կտորները համաձույն շաղախի բազագրիչ տարր և պատերն սպիտակիցնող լուծութիւն մեջ: Ավազի նստավածքներ հանդիպում են գրեթե ամենուրեք:

Որոշ տեղերում, հատկապես Մեղրիում վերջին երկու դարում սվազի անկյունային մասերի, պարակաների, ներսի գոտիների ու բիճերի համար օգտագործվել է նաև ալերաստրը, որը բերվել է Նախիչևանի կողմերից: Ալերաստրին, ըստ երեսութիւն ցածրորակ լինելու պատճառով, խառնել են թեփ կամ անասունների բարակ մազ:

Փայտի օգտագործումը շինարարության մեջ նույնպես մեծ տարածում է ունեցել, ամենից շատ կիրառվել է իրեն ծածկանյութ, փայտամած և այն: Խիստ բազմազան են եղել շինարարական փայտի տեսակները, բայց նախընտրելի են համարվել դիմացկունները: Համախի դիմացկունության անհրաժեշտությունից զրդված հաշվի շեն առել փայտի գծվար մշակելու համար: Ամենաշատ տարածվածներից է եղել կաղնեփայտը, որով պատրաստել են թե՛ սյուներ, թե՛ գերաններ և թե կահուրք: Այն համեմատաբար ավելի շատ կիրառվել է Սևանա լճի ավազանում և Զանգեզուրում, բացի Մեղրու շրջանից: Վայոց ձորում առավել շատ օգտագործվել են բարդին, իր գերանների երկարության համար, և արգուշը (գի, գիճի), եղնելով նրա դիմացկունությունից և ամրությունից: Վերջին ծառատեսակը բավականաշափ գծվար է մշակվում, սակայն իրեն հարգի անտառանյութ օգտագործվել է նշանակալից շենքերի մեջ և անգամ մոնումենտալ կառուցներում²: Որպես արդարի օրինակ կարելի է նշել Հորսի մելիքական տոննը, որի առանձին արդուշն սյունները զենուս մնում են: Այս տեսակետից շափազանց կարենոր մի վկայություն է 11-րդ դարի գիտնական մատենագիր Գրիգոր Մագիստրոսի նամակներից մեկը, ուղարկած Պահապանյաց բգեշխության մեջ ժանող, Սասունում իշխող և իր ազգական Թոռնիկ Մամիկոնյանին: «Մեր իսկ սեփական Աղվանական աշխարհի Շար կոչված ավանում, և աջա իրեն կատակ շնեղաթյուրելով խոսքերը՝ ասում եմ, որ հնուց եեթ աճում էր փարթամասաղարթ գին, որից պատրաստված ոչ նվազ հզոր և ստվար սյուներ, գերազանց և երկայնաձիգ գերաններ տեսել ենք այնտեղ, կոչարանում, որը սուրբ Հակոբի վկայարանն է: Ասում էին, որ այդ մեկ ծառից է կազմված տաճարի ամբողջ կահուրքը, գերազանց տախտակները, և խոյակները, և խարիսխները, և թակաղակները, և դաները, և շեմքերը բարավորներով հանդերձ և ստորին հատակները: Այդ և նույն աշխարհի մի քանի այլ, այն տաճարի ներքին տարածության նման ընդարձակագույն սրահներ այլ տեղ չենք տեսել, բացի մայրաքարարից³:

Մեղրու շրջանում գերանների համար օգտագործել են բարդու, կաղնու,

¹ Е. Մելուկ-Ռախնազարօս, նշված աշխ., էջ 28: Կիրը պատրաստվել է նաև վերեկց շծածկող փոսերում, որ կրակը վառվել է ստորին մասում թողնված պատ տարածության մեջ:

² Այդ փայտի հատկությունների մասին Վ. Փափագլանը գրում է. «Վանի փաշայության ենթակա կարձանը, որ լենալին է և խիստ անտառներ ունի, հարուստ է արտուճ կոչվող փայտով՝ որ առանց փափելու մնում է հարյուրավոր տարիներ: Տերենները բարակ, կլոր են և մշտագլաւար: Պոլսեցիք գործածում են սրա ճյուղերը պատկի և հանդիսի մեջ կամարները զարդարելու համար» (Վր. Փափագլան, Նամակներ թուրքաց Հայաստանից, «Օրեկերի ժողով. աժու», Հայ. 5-րդ, Երևան, 1959, էջ 492):

³ Գրիգոր Մագիստրոսի թղթերը Կ. Կոստանյանցի առաջաբանով, ծանոթագրություններով, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 221 (աշխարհաբարի վերածումը մերն է—ն. Պ.):

թխկու և կնձնու, խոյակների համար ծիրանենու, կեռասենու, ընկուզենու և թթենու փայտ: Հճաշենի դամբարաններում հայտնարերվել են կաղնու, թեղու և կարմրածառի փայտ, որոնք լայնորեն կիրառվել են մեր թվագրությունից մի քանի հազարամյակ առաջ իրենց բարձր տեխնիկական և հարդարանքային հատկությունների պատճառով: Թեղու փայտը ամուր է, նրա վրա կարելի է նորր փորագրումներ կատարել, կաղնու փայտը աշքի է ընկուզ զիմացկունությամբ, իսկ կարմրածառի փայտը՝ հաճելի գույնով և զղկման բարձր ունակությամբ⁴: Սառի փայտը ծածկերի մեջ օգտագործվել է որոշ մշակումնից հետո միայն: Հաճախ գերանների վրա զրվող ճյուղերն անգամ մաքրվել են կեղեցից և երթեմն նաև որոշ շափով կոկվել: Ժողովրդական ճարտարապետության մեջ օգտագործվել են մշակված փայտի շատ տեսակներ, սկսած կացնով և ուրագով ճեղքված կամ տաշված կոպիտ գերաններից ու տախտակներից մինչև սոլոցված, տաշված և փորագրված փայտները: Դռները, լուսամուտները, պատշաճբները չներկվելու պատճառով զիմացկուն փայտից են շինել (կաղնու, ընկուզենու և այլն):

Մածկերի մեջ օգտագործել են բուլսերի տարբեր տեսակներ: Լճի ու գետերի շամբուտներից ձեռք բերվող եղեգն օգտագործվել է նաև չաթանի (եղեգնյա փողց) պատրաստման համար:

Կուսամուտների ապակեպատումը հատուկ է վերջին դարերին, հնում սակավ հանդիպող փորբիկ պատուհանները ծածկվել են յուղոտ թղթով կամ մագաղաթով պատած փեղերով:

Մածկերի թթենդապատումը և ներկերի օգտագործումը սկսել է տարածում գտնել անցյալ դարի վերջին բառորդում միայն: Ենիարարության մեջ երկաթի կիրառումը մեծ չի եղել: Հնում անգամ դռներ պատրաստելիս երկաթյա մասերի փոխարեն օգտագործվել են կարծր փայտի միացումներ (ծխնի, գամ, մղլակ, փական, բանալի, թակաղակ և այլն):

2. Շինարարական աշխատանքների կատարումը

Ժողովրդական ճարտարապետության մեջ շինարարական աշխատանքների կազմակերպման ասպարեզում գերիշնում է կաղեկտիվ աշխատանքը: Գյուղական շինությունները տնտեսության և հասարակության տոհմացին կառուցվածքի պայմաններում գրեթե պարտադիր կերպով կառուցվել են կողեկտիվ միջոցով: Մեծ ընտանիքների բացակայության դեպքում ևս հարեւանների փոխօգնությունն այս հարցում սովորական երեւով է եղել: Առանձին վարպետներ՝ օգնականով կառուցել են ունկորների շենքերը: Որմնադիր, հյուսն և ծեփագործ վարպետների միջոցով են կառուցվել նաև քաղաքների ու ավանների, ինչպես նաև գյուղերի քաղաքատիպ և մոնումենտալ շենքերը: Այս վարպետներն իրազեկ լինելով իրենց երկրի շինանյութերին նրանց հաջող ընտրությամբ պատճենվել են կառուցման բարձր որակը:

Շինարար վարպետները թշնող վերնախափակից շինելով դատապարտված էին անհայտության մեջ մնալու, թողնելով ստեղծագործական մեծ ժառանգությունն: Մինչև իսկ նախատութետական մի քանի տասնամյակների ընթացքում իրականացած ժողովրդական վարպետների ստեղծագործությունները մեզ են հասնել առանց կառուցողի անվան:

* Տե՛ս Վայլ Պալանջյան, Լեռվայրական նովօքն և քառական պատճեն Սևանական գագաթաւորության մասին պատճենական պատճենական թանգարանի, համ. 5-րդ, 1959, էջ 259:

Միջնադարյան Հայաստանում շինարար վարպետներն ու բանվորները օգտվել են քաղաքային և ավանային բնակչության արտոնություններից: Շինարար վարպետների խմբերն արհեստավորական խմբերի մեջ ամենից ավելի կազմակերպվածներն ու շրջագայողներն են եղել: Նրանք ունեցել են իրենց ավագ վարպետները, որոնք հանդիսացել են խմբի առավել փորձառու անդամները⁵: Նրանց գործունեության շառավիղը Ս. Մնացականյանը հասցընում է մինչև Վրաստան և Աղվանիք: Հենվելով իր և օտարերկրյա զիտնականների ուսումնասիրությունների վրա՝ Թ. Թորամանյանը այն ավելի հեռուներն է տանում: Քաղաքային բնակչությանը հատուկ արտօնություններ ունեցող «վարձկաններից» և «շակներից» էր գոյանում «անարուեստ» բանվորների, «քարկիրներից» և այլ շինարարական սևագործ բանվորների հոծ դասը, որն առանձին խմբերով շրջում էր այն վայրերը, որը շինարարություն կար:

Շինարար վարպետներն ամենուրեք գնահատվել են, երկրի սահմաններից գուրս նրանք աշխատել են վարձակալման հիմունքներով և կամ իրեն ուղարկերի: Երկրի ներսում, քաղաքական բարենպաստ պայմաններում նրանք բարեկարգել են բուն երկիրը: Այդ պատճառով հովանավորվել են տեղական իշխողների կողմից, որոնք աշխատել են գոհացնել նրանց պահանջները և պահել իրենց մոտ: Սյունիքում մի այդպիսի գեղարք վկայություն է Սիրանես ճարտարապետին առնչվող արձանագրությունը, Գորիսի շրջանի Հալիծոր գյուղից գեսպի Շինուացը գնացող ճանապարհից աշ գրված մի խաչարձանի պատվանդանի վրա: Այսուեղ նշված է, թե Վնասար կամ Վանասար կոշվոր տեղում նրավանքի տաղանդավոր ճարտարապետ Սիրանեսին ի վարձարություն հողամաս է տրվել⁶, որով Տարսայի Օրբելյանը նրան կապում էր իր տիրուցիներին հետագայում իր շինարարական մեծ ծրագրերի և առգործման համար: Նշանագոր է նրան հաջորդած բազմահմուտ արվեստագետ Մոմիկը (13-րդ դարի վերջ, 14-րդ դարի սկիզբ): Ժողովրդական վարպետների բազմաժամանակի փորձի հիման վրա առանձին մարդիկ դարձել են մասնագետ ճարտարապետներ, այսպես կոշված «քարգործներ»՝ օդինակ Սիրանեսն ու Մոմիկը: Գրանցից ոմանք մասնագիտացել են որպես խաչարեր «կազմողներ» և արձանագրություններ փորագրող «գրիչներ»: Կապված լինելով վանական շինարարության հետ՝ դրանցից մի ստվար թիվ կազմել են վանքերի համար աշխատողները, որոնց շարքում են եղել նաև վանական միաբաններ: Մեծածավալ շինարարության զեկավարները կոշվել են գործակալներ, այդպիսին էր Գնեկվանքի նկարիչ երեց Եղիշեն, որին Ս. Օրբելյանի վկայությամբ ենթարկվել են «արվեստագործներ ճարտար քարտաշներից»⁷: Նորավանքում բազմաթիվ կառուցումներ կատարած Տեր Սարգիսը Արփայում,

⁵ Տե՛ս Բ. Առաջիվան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., Երևան, 1958, էջ 188—189:

⁶ Տե՛ս Ս. Մնացականյան, Միջնադարյան Հայաստանի շինարարական գործի կազմակերպման մի քանի հացեցիր և քարագործ վարպետների նշանակագրերը, «Պատմա-բանասիրական հանգես», Երևան, 1958, № 3, էջ 98:

⁷ Տե՛ս Բ. Թորամանյան, Նուուեր հայկական ճարտարապետության պատմության, Հայոց ժ. ին, Երևան, 1948, էջ 36, 68:

⁸ Տե՛ս Ս. Բարխուդարյան, Դիման հայ վիմագրության, պրակ 2-րդ, էջ 51—52: Սիրանես մասին ետք ենումի, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարագործ վարպետներ, Երևան 1963, էջ 62—75:

⁹ Ս. Օրբելյան, նշված աշխ., էջ 260:

Տարսային իշխանի հրամանով, սրբատաշ քարով շինում է մի գեղակերտ, բազմածախ, բարձր և լոնդարձակ կամուրջ¹⁰:

Եղել են նաև բազմաթիվ այլ վանական շարքային վարպետներ: Սյունիքին գերաբերող այդպիսի մի վկայություն է տալիս Սևանա կղզու Առաքելոց եկեղեցու հարավային, խաչքարակերպ քանդակագրված ընկույզափայտի դռան շրջապատով գրված հանգավոր արձանագրությունը, որտեղ նշված է, թե գուրը ծաղկել են Ներսես եպիսկոպոսի աշակերտներ Արքահամն ու նրա հոգեոր եղաբար Գրիգորիս 1522 կամ 1557 թվականին¹¹: Որոշ գեղքերում միաբանները խմբով մասնակցել են ըստ էության ժողովրդական բնույթի վանական օժանդակ շնչերի կառուցմանը: Այդ մասին է պատմում Սևանա կղզու Աստվածածին եկեղեցու գավթի արևմտյան դռան առաջ երրեմնի կանգուն միաբանների սենյակների հյուսիս-արևմտյան պատի վրացից քաղված հնայիշալ արձանագրությունը: «Ծոնորհին Աստուծոյ շինեցան սենեակքս արդիամբ Տիգիսայ Հայոց, ժողովրդոց, ձեռլուսութեամբ Տիառն Յովհաննէս վարդապետին Դաղախցոյ, աշխատութեամբ միաբանից տեղուց Յովհաննէս վարդապետին Դաղախցոյ, աշխատութեամբ միաբանից տեղուց ԱՄՁԳ (1835)»¹²:

Մեզ հայտնի ժողովրդական սակավաթիվ վարպետներից է Հյուսն Հովհաննեսը, որն ապրել է 12-րդ դարում: Նրա մասին իմանում ենք Սևանա կղզու Առաքելոց եկեղեցու արևմտյան դռան վրա փորագրված արձանագրությունից: «Ի թվին Հայոց Ռիի (1176) նորոգեցաւ գուն սուրբ եկեղեցւոյն, հրամանաւ իշխանաց իշխան Քրդին, և ձեռամբ Յովհաննիսի Հիւսանն, որը ընթեռնոյք յիշեւչիք»¹³: Մեր գարասկրին գործող վարպետներից Հայտնի էր այժմյան Մարտունու շրջանի Աստղաձոր գյուղի բնակիչ Միսիթարյան Ավետիսը, որն իր որդիների ասելով, մեծ համբավ է ունեցել Թիֆլիսում իբրև փայտյա իրերի գրվագման հմուտ վարպետ: Նկ. 40-ը ներկայացնում է այդ վարպետի գործերից մեկը: Հստ երկույթին այդպիսի վարպետներից էր Ստ. Լիսիցյանի հիշած, Մամիկոնյանների տունը կառուցող վարպետ Մուզի Հակոբը¹⁴:

Գյուղական վայրերում շինարարական աշխատանքները մեծ մասամբ կատարվել են գարնանը՝ վարուցանքից կամ աշնանը՝ կալից հետո: Շինառարական աշխատանքներին մասնակցել են թե՝ մեծերը, թե փոքրերը, կանաչք ու տղամարդիկ, չեն բացառվել նաև երեխանները: Առանձնապես հետաքրքիր են Եղայանի հնետեցյալ տողերը, որոնք վերաբերում են Սիսիանի շրջանի բնակարանաշինությանը: «Շինության համար ցեխը այսպես են պատրաստում: — Գետինը փորում են և հետո որևէ առվից ջուրը են կապում փորված հողի վրա: Ապա թիով խառնում ու ձի, կով, եղ բերում, վրան ման են ածում, աճսպես որ սրանց ոտների տակ հողն ու ջուրը շաղախիլում, ցեխ են կազմում: Հետևյալ օրը բահերով խառնում են կավացած ցեխը. եթե բավական պինդ չի լինում, կրկին կենցանիներ են բերում և ման ածում: Սրանից հետո իրենք տղամարդիկ


¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 429—430:

¹¹ Տե՛ս Մ. Սմբատյանց, նշված աշխ., էջ 86: Այդ գուրը պահպում է ՀՍՍՀ պետական պատմական թանգարանում:


¹² Պ. Ալիշան, Սիսիան, էջ 86 (բնդգծումը մերն է— Խ. Պ.):

¹³ Մ. Սմբատյանց, նշված աշխ., էջ 120:

¹⁴ Տե՛ս Հ. Ա. Լիսիցյան, Աշխատանքները Հայոց պատմության մեջ, Երևան, 1970:



0 10 20 30 40 50 60 70 80 90 100 cm



Նկ. 40. Դռւն Աստղաձորից

Են կոխկրտում և ապա կանանց ու հարսներին բորիկ ոտներով կոխկրտել տալիս: Երբ ցեխը արդեն այնքան պնդանում է, որ կանայք, առանց մեջը խրվելու, կարողանում են կանգնել վրան, ցեխը պատրաստ է համարվում: Ոմանք ցեխն ավելի պինդ անելու նպատակով հետք մոխիր են խառնում: Հետո բաշով նրան կտրատելով՝ սկսում են պատ շարել: Մինչև այս շինության հիմքը փորած են լինում 3/4—1 մետր խորության և մի մետրից ավել լայնության: Երբ պատը մի մետր բարձրանում է, երեք օր սպասում են, որ չորանա, հետո նորից են ցեխ պատրաստում և այդ պատի վրա նոր, դարձալ նույն բարձրության, միայն փոքր ինչ նեղ, պատ դնում: Այսպես շարունակում են՝ մինչև որ հասնում են ցանկացած բարձրության: Շենքը ծածկելուց հետո, Արտաշի հողից, որ կրային է և գտնվում է առավելապես Բռնակոթի արևելյան և արևմտյան բլուրներում, փոքր քանակությամբ ցեխ են պատրաստում, հետք դարձան խառնելով և այս անդամ միայն կանայք են կոխկրտում: Հետո այս ցեխով ծեփում են պատրեի ներքին, երբեմն էլ արտաքին երեսները և լցնում են ճեղքված տեղերը: Ապա այս միենալուն հողից շրալի շաղախ (շարքաթ) են պատրաստում, հետք մղեղ (հարդի մանրութ) խառնելով և ավելով կամ հին գովազյով քսում պատին, որ սպիտակի»¹⁵:

Կոտորի ամրացման համար օգտագործել են փայտե տոփանիշներ, որոնք Արժվանիկում կարծ, հաստ տախտակներ են եղել՝ մի ծալրից հողավորված բռնակներով: Կոտորներն ընդհանրապես տոփանվել են կոխկրտելու միջոցով, որի համար անձրեներից հետո երեխաներին հավաքել են կտրի վրա խաղալու¹⁶:

Խմբային ուժերով շինարարական աշխատանքներ կատարելու համար համախ ճորտական պարտավորություններից աղատել են մարդկանց: Այսպես են վարդել նաև պարսիկները, որի մասին վկայում է ի. Շոպենը, նշելով, որ կամուրջների վերանորոգման և պահպանման համար հարկերից աղատվել են գրուզացիական ընտանիքներ¹⁷:

Հանրային նպատակներին ծառայող բոլոր կառուցումները (ճանապարհներ, ջրմուղներ, ջրանցքներ և այլն) կատարվել են համայնական ուժերով: Այս երեսությը հատկանշական է ամբողջ Հայաստանի համար, որտեղ հատկապես ջրանցքների կառուցման և պահպանման նպատակով նույնիսկ միջուռդական համայնքներ են ստեղծվել:

Փողովրդական ճարտարապետական կառուցների իրականացման համար օգտագործվող գործիքները մեծ բարդություն չեն ունեցել (երեմն նույնիսկ հասարակ շինությունների համար գործիք էլ չեն օգտագործել): Այդ գործիքները հանրահայտ են՝ ծանր, երկու բութ կողմերով, ավելի փոքր և նույն ձևի, ծալրերից մեկը սուր և այլ ձևի մուրճներ, երկու ծալրը հաստ, ուղիղ կամ ատամնավոր շեղերով մուրճներ (տարազներ) փափուկ քարերը տաշելու համար, քառակուսի ատամիկների ցանցով պատաժ տափակ ծալրեր ունեցող մուրճներ (բուլարդա), սեպեր և հատիչներ, կացիներ, լծակներ, բաջեր, բրիչներ, մալաներ, ուղղալար, լար, զարթաշափ, ուրազներ, սղոցներ, փորիչներ (տարեկը ձևի ու չափի), խալող կարկիններ: Այս գործիքները 19-րդ դարից ավելի վաղ գործածվելու մասին տեղեկություններ շկան, բայց նրանց գերազանց մասը հավանաբար օգտագործվել է ավելի վաղ ժամանակաշրջանում:

¹⁵ Ե. Լալայան, Միսիան, էջ 199—200:

¹⁶ Տե՛ս Ե. Մելուկ-Ռախնազարօս, նշված աշխ., էջ 15—16:

¹⁷ Տե՛ս Ի. Ռուսեն, նշված աշխ., էջ 725:

Ճարտարապետական կառուցվածքների համար առաջազրով նպատակաշարմարության, ամրության, տնտեսականության և գեղեցկության հարցերը սերտ առնչություն ունեն շնորհերի կոնստրուկտիվ իրականացման հետ: Ամենից ավելի այստեղ է, որ հանգստ է գալիս ժողովովի ստեղծագործական հնարամտությունը: Բոլոր ժամանակաշրջաններում ժողովրդական ճարտարապետությունը բոլոր կառուցվածքների համար գոյություն է ունեցել մի ընդհանուր ընորոշ գիծ: զա կառուցվածքային ձևերի, միջոցների համապատասխանությունն է նրանց իրականացման տեխնիկային:


Ամենահին կառուցվածքների կոնստրուկցիաներից ուշագրության է արժանի թագակապ շինության նմանող ժայռափոր կառուցվածքը, որի ժամկամասին թաղի ձև տալն անակնկալ փլուզումից կամ ճեղքագրեներից խուսափելու համար է: Տեղ-տեղ էլ առաստաղի մեջ բացվող երդիկով ծփի հնարյաման անհրաժեշտությունը ևս թելագրող հանգամանը է եղել առաստաղների կորության համար: Ուշ միջնադարում, երբ ժայռափոր կառուցվածքներ էին ստեղծվում իրեն բնակելի համակառուցվածքների բաժանմունք, հաշվի են առնվել թաղանձման փորձագրի ավելի բարձր կրողունակությունը հատկապես այն գեպերում, երբ արհեստական կառուցվածքը գտնվում էին գրանց վրա (նկ. 11, 12, 41):

Խիստ ուշագրավ երեսով է կեզծ գմբեթաձև վիմափոր ժամկերի երեսն գալը: Այդ ժամկերի կատարելաւախափերն են Գեղարդածորի վիմափոր տաճարները: Յն հիշելի ժամանակներից զանգեղարցիք վիմափոր կառուցվածքը օգտագործել են իրեն բնակարաններ, տնահասական և արտադրական բնույթի շենքեր, մատուններ, ճգնարաններ: Բայց այդ կառուցվածքներն իրենց հարգարանքով աշքի չեն ընկել, նույնիսկ ժավաները բժախնդիր կանոնավորում չեն ստացել: Նրանց մեջ սակայն եղել են երդիկավոր սենյակներ զրափ հետ հազորդակցով միակ դռնով, որոնք իրենց կառուցվածքով վլխատունն են հիշեցրել (առաստաղը բարձրանում է դեպի երդիկի բացցածքը): Այս տիպի պարզունակ կառուցվածքի և Գեղարդածորի նշանավոր հուշարձանների միջև կառուցվածքն սկզբունքի կավալը բացահայտող հուշարձան են հանդիսանում Վայոց ձորի Մարտիրոս գյուղի իրար կից երկու վիմափոր եկեղեցական շենքերը (գավիթ և եկեղեցի): որոնք ժամանակակից են Գեղարդածորի հուշարձաններին (13-րդ դար): Այստեղ կարելի է տեսնել ժողովրդական բնակելի տան համադրվածքը ավելի մեծ չափերով և կառուցման խնամքով, որը բացակայում են զանազան մասերը ձևավորող բանդակներն ու բարաշեն կառուցվածքների պատրանքն ստեղծող մանրամասները:

Կառուցվածքային որոշ մտահացումներ, որոնք պատկանում են զոլցենատիպ շինվածքներին, հետաքրքրական են այն տեսակետից, որ հիմք են հանդիսացել ավելի ուշ շրջանի բնակելի տների կառուցվածքային որոշ միջոցառումների համար: Այդ սկզբունքային միջոցառումներից է պատերի կայունացումն ու տաքացումը կիսով չափ կամ լրիվ գետնի մեջ խորացնելու

¹⁸ Գեղարդածորի ճարտարապետն է Գալճագր, իսկ Մարտիրոսի հուշարձաններինը՝ Հավաքար նրա աշակերտ, Սյունիքի ակնառու ճարտարապետներից Գրիգորիկը (տե՛ս Ս. Բարխունյան, Միջնադարյա՞ն հայ ճարտարապետներ և քարագործ վարպետներ, էջ 86—92):

միջոցով: Պատսպարանների փայտյա հարթ ծածկերն իրենց նախօրինակներն ունեն զոլմենատիպ դամբանային կառուցներում գերանաշար և քարաշար հարթ ծածկի ձևով: Քարե թաղերի նախնական գաղափարը նույնպես գալիս է այն զոլմեններից, որոնց պատերը գեղի վեր շեղվելով ուղղաձիգությունից



Նկ. 41. Վիմափոր գետնահարկով տուն Ջորաշենում

Ա քար առ քար հակվելով գեղի ներս՝ փոքրացրել են ծածկվող թոփշքը: Առավել հետաքրքրական է Էմաշենի որոշ դամբարանների ծածկերի իրականացումը մինչև հինգ շաբթ քարերի իրար վրայից առաջ կարկառվելու միջոցով: Ստացվող կեղծ թաղերը չորիզոնական հրող ուժեր չունեն և կարծին հիշեցնում են գաղարաշեն փայտյա ծածկը¹⁹:

Էմաշենի դամբարանները հետաքրքիր են նաև այն տեսակետից, որ դրանց մեջ 2-րդ հազարամյակին վերաբերող (մ.թ.ա.) փայտի սյունահեծանային համակարգեր են եղել²⁰:

¹⁹ Տե՛ս Ա. Օ. Միացանյան, Культура эпохи бронзы на побережье озера Севан Армянской ССР (Доклад на XXV международном конгрессе востоковедов), М., 1960.

²⁰ Տե՛ս նույն գետմամբ, ի՞նչպես նաև Ա. Օ. Միացանյան, Раскопки курганов из побережья озера Севан в 1951 г., „Советская археология“, 1957, № 2.

Գյուղական կառուցվածքներն ուսումնասիրելու համար ամենից ավելի նպատակահարմար է դիտարկել բնակելի տների համակառուցները, որովհետեւ դրանց մեջ օգտագործվել են տեղական շենքերի գրեթե բոլոր կոնստրուկցիաները: Գլխատների և Սեղուու շրջանի հարթածածկ տների կառուցամասերի մեջ կարելի է մատնանշել շատերը, որոնք կիրառվել են նաև բազաբատիպ շենքերում նույնությամբ կամ այնտեղ կիրառվողների նախատիպարներն են հանդիպացել:

1. Հիմնատակեր և նիմիներ.

Բնակելի հնատիպ կառուցները գերազանցապես կիմագետնափոր լինելու պատճառով պահանջնել են կառուցապատվող տեղանքի գրունտի մշակում: Զափման միավորներն օգտագործել են բացառիկ գեպքերում, նշանաբան աշխատանքները կատարել են աշբաշափով կամ քայլերի միջոցով: Հայտնի է, որ համախ լար անգամ չեն գործածել²¹: Այդ իսկ պատճառով է, որ հին տիպի շենքերը գերազանցապես անկանոն երկրաշափական ծավալներ և հատակագծային շափերի անհամապատասխանություններ ունեն: Սակայն չպետք է կարծել, որ դրանք համամասնություններից զուրկ անձոննի շինություններ են: Ժողովուրդը միշտ էլ իր ուժերի սահմաններում բնակարգին հաղորդել տեսք, ուստի և նշված անհատություններն ու խախուսումները շատ գեպքերում հազիվ են նշմարվում:

Նշանաբումից հետո գրունտը քանդելով՝ շինարարները ստացել են իրենց շենքին հարկավոր խորությամբ փոս (հարթ տեղում գետնի մեջ խորացող և լանջերի վրա՝ առջևից բաց): Այս քանդվածքի հատակը ինսամքով հարթեցվել է, որովհետև այն կառուցվող տան հատակն էր դառնալու: Այնուհետև նշվել են հիմքերի տեղերը և փորվել: Հիմքերի խորությունը տարրեր՝ վայրերում համապատասխանեցվել է գրունտի ամրությանը. Թույլ գրունտի գեպքում հիմքը խորացվել է, հասցելով մինչև 100 սմ, լայնությունը՝ 70—100 սմ: Սակայն գեպքերում, երբ տեղանքը ժայռոտ է եղել, հիմքեր բոլորպիին չեն փորվել. կան և այնպիսի շենքեր, որոնց հիմքերի և պատերի մի մասը ուղղակի ժայռակոփ է: Այս ավանդույթը որոշ գեպքերում հանդիս է եկել նաև վերգետնյա շենքերում: Խիստ բնորոշ օրինակ է ինածախի վերնատունը, որի ճարտարապետական արտահայտիչ ձևավորում ունեցող հակատը բարձրանում է ժայռաբեկորի վրա: Նրա անկյունային մասում վերջինս հմտութեն մացվել է ճակատային համագրվածքի մեջ, դառնալով ընդհանուր լուծումը թելադրող տարրերից մեկը (նկ. 22, 41):

Հիմքերը շարվել են մեջակ մեծության անմշակ քարերից, որոնք ձեռք են բերվել տեղում: Հիմքերի համար կրաշաղախ են օգտագործել այնպիսի շենքերում, որոնց պատերը և երեսն նաև առաստաղը քարուկիր կառուցվածքը են ունեցել:

2. Պատեր

Ժողովրդական ճարտարապետության մեջ պահանջի համաձայն օգտագործել են պատերի կրող կամ սահմանազարդ հատկությունները առանձին-

²¹ Կավալմածների սահմանները որոշելու համար Ս. Օրբելյանը հիշում է «քարբնից», «Ճարտարապետության» տերմինները, ինչպես նաև առուների երկարությամբ հողատարածությունները որոշելու եղանակը (տե՛ս Ս. Օրբելյան, նշված աշխ., էջ 262—263, 265):

առանձին կամ միասին վերցրած: օրինակ՝ գլխատների արտաքին հաստ պատերը ծածկի սյունահեծանալին համակարգի առկայության դեպքերում այլևս չեն կրում ծածկի գիմնական բեռը: Պատաշնել է աշնպես, որ երկրաշարժից պատերը փլվել են, բայց ծածկը սյուների վրա կանգուն է մնացել: Կրելու հատկություն շունեն նաև շենքի տարրեր մասերի միջնորմ հանդիսացող պատերնեշները: Հին գյուղական տների պատերի մեջ զանազան մեծության խորշերում իրեք պահելու և օջախ կառուցելու սովորութիւն պատճառով պատերը կառուցվել են զգալի հաստությամբ: Երբեմն առանց այդ էլ հաստ պատերի թանձրությունն ստորին մասում ավելի է մեծացել քարե շարվածքով պատի՛ տարրեր լայնության ու բարձրության ելուստներ կառուցելու հետևանքով (իրրև թումբ, զարակ կամ նստարան):

Որմնագործությունը Սյունիքում շատ հին ծագում ունի: Նախնադարյան ժամանակների կիկլոպյան շարվածքով պատերի կառուցման տեխնիկան նույնությամբ կամ փոքր բարեփոխումներով կիրառվել է ամբողջ միջնադարի գյուղական ձարտարապետության մեջ: Փոքր ինչ կանոնավոր պատի շարվածքներ հանդիպում են բրոնզի գարաջրանում: Այդ ժամանակ պատի ամբողջ լայնությունն ընդգրկող քարերի անկանոն շարվածքի կողքին հանդես է գալիս երկերսանի պատի հաստ շարվածքը մինչև 5 մետր թանձրությամբ, մանր քարերի անշաղախ միջուկով: Նորատուսի թերակղու վրա Թ. Ավդալբեկյանը նկատել է պատի աստիճանավոր պատվանդանի հետքեր, նույնպիս հետքեր Կամոյի Բերդշենում նկատել է ի. Մեշանինովը²²: Պարիսպների քարերի մեծությունը համախ 2—3 խորանարդ մետրի է հասնում:

Անդրագանալով Անդրկովկասի մի շարք շրաններում, որոնց թվում Մանա լճի ավաղանում, տարածված բրոնզեգարյան ամրոց-բնակվայրերի կառուցվածքին Բ. Պիտարվակին նշում է. «Երանց պատերի ստորին մասերը կազմված են հսկայական, կոշտ մշակված քարաղանգվածներով, վերին մասերը, որոնք սովորաբար շեն պահպանված, ներկայացնում էին հում աղյուսի շարվածք: Հենց սրանով է բացատրվում քարե պատի ոչ մեծ բարձրությունը (2—4 մ) և հարթ վերնամասը²³»: Այդ ժամանակ հաղես են գալիս նաև լանջերի ամրացումները կառուցների տակ, ինչպես այդ նկատվում է Սովինարի բերդում:

Սյունիքում գյուղական հնատիպ շենքերում պատերը գերազանցապես կառուցվել են անմշակ քարարեկորներով, իրեք մածուցիչ օգտագործել են հարդարան կավաշաղախը կամ ուղղակի ցեխը: Միայն Զանգեզուրում է կրաշաղախ օգտագործվել՝ հատկապես թաղակապ շինությունների համար: Այդպիսի պատերի արտաքին եղբերք շարվել են համեմատաբար մեծ ու փոքր պատահական ձեւ քարերով, իսկ նրանց միջակայքը լցվել ավելի մանր քարերով ու շաղախով: Այդ կարգի պատը կայուն դարձնելու համար պահանջվում էր զգալի հաստություն՝ ոչ պակաս 60 սմ-ից: Ժողովրդական ձարտարապետության մեջ առհասարակ բոլոր հնատիպ կառուցներում

²² Թ. Ավդալբեկյան, Նոր-Բայազետի նորագուտ սեղադիքն ու նրա հնագիտական միջավայրը, էջ 205: Խ. Խ. Մաշանուս, Циклопические сооружения Закавказья, «Известия ГАИМК», т. 13, вып. 4—7, 1933, стр. 17—18.

²³ Բ. Ե. Պատրոչյան, Արքունիքան Զակավազյան գետափական մասերի պահպանը մասնաւոր աշխատավայր առ առ 1947, стр. 57.

պատերը հաստ են, անգամ կրող ֆունկցիա չունենալու դեպքում: Այդ միջոցառումով ապահովվել է շինություններում միկրոկլիմայի պահպանումը: Պատերը շարվել են ձգված լարի օգնությամբ շերտ առ շերտ, 30—60-սմ և ավելի բարձրությամբ: Անձն բարերի անշաղախ շարվածքը կիրառվել է միայն ցածր ցանկապատերում:

Կանոնավոր բարերով շարված պատերը բիշ են, այնուամենայնիվ Զանգեզուրում պահպանվել են նույնիսկ «միջին» շարվածքով և սրբատաշ բարերով պատեր, որոնք ընդհանրապես արտաքին պատեր են, այն էլ մեծ մասամբ գլխավոր ճակատներում: Մրրատաշ բարերն օգտագործվել են ճատկապես պատերի անկյունային մասերի և բացվածքների, որմնախորշերի և կամարական ճնշապատերի ամրացման համար: Շարվածքի այս տեխնիկան նույնությամբ կիրառվել է մոնումենտալ շենքերում ինչպիսիք էին Սևանի, Հայրավանքի, Վանեվանի, Չաղացքարի, Քարկոփի և այլ Հուշարձանները²⁴:

Հատուկ ուշադրություն է դարձվել պատերի միջուկի կազմությանը՝ հատկապես կրաշաղախի օգտագործման դեպքում, որովհետև, ինչպես հատկանշական է հայկական միջնադարյան մարտարապետությանը, պատի հիմնական կրող մասը նրա միջուկն է: Ճնշրված բարաբեկորների խորովորդումները, նրանց փորբությունն ու ծակուակնությունը նպաստել են համաձույլ զանգվածի ստեղծմանը:

Քարե պատերը ներսից հաճախ սվազվել են ոչ միայն հարդարանքալին, այլև առողջապահական նկատառումներով: Յեխաշար պատերը դրսից ևս պաշտպանիչ կավաշաղախնով են ծեփվել պարսկահայ և ուստի վերաբնակիչների ապրած տեղերում (Վայոց ձոր, Զանգեզուր): Մինուրուտային տեղումներից սվազը պաշտպանելու միջոցառումներ են հանդիսացել խորը պատշվամբները, երբեմն նաև կտորներից կարկառվող գերանների ցլիքները:


Մեկրու շրջանին և պարսկահայ վերաբնակիչների ապրած վայրերին հատկանշական են նաև կավարետոնն և զում աղյուսի պատերն ու պատնեշները: Այսպիսի պատերը ե' դրսից, և' ներսից ծածկվել են սվազով և սպիտակեցվել: Սպիտակեցումը բացի գեղեցկացներուց սվազը պաշտպանում է մինուրուտային ներգործություններից: Այս պատերի հաստությունը նույնպես եղել է ոչ պակաս 60 սմ-ից: Պատերը պաշտպանելու միջոցառումներից են նաև մեծ մասամբ փայտե շրջորդանները՝ կտորների ցլիքներին, ինչպես նաև պատերի վերնամասերի ամրացումը միջին մեծության բարերի մեկ-երկու շարքով:

3. Բացվածքներ

Ամենահասարակ բացվածքը ուղղակիուն ձև ունի, ուղիղ բարավորով: Վերշինս կազմվում է անտաշ կամ մշակված գերաններից, հեծանաձև բարերից կամ շատ հազվագետ, այն էլ բարուկիր լինելու դեպքում՝ սեպաձև շարվածքից: Դարպասների այս տիպի բարավորները սովորաբար փայտակերտ են: Յանկապատի լայնության կեսի շափ խորն ընկած փեղիերը մասամբ պաշտպանվում են տեղումներից՝ բարավորի գերանների ու նրանց վրա բարձրացող հաստ պատի շնորհիվ: Հաճախ դարպասը գտնվում է հատուկ որմնախորշի

²⁴ Տե՛ս Ս. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի գպրոցը, Երևան, 1960, էջ 25:

մեջ, որի անկյուններում պատի ելուստների միջոցով քառակուսի նստարաններ են ստացվում (նկ. 42):



Նկ. 42. Գոներ և դարպասներ Մեղրոց

Զանգեզուրում տարածված են կամարակապ բացվածքները, որոնք ավելի ամուր են և իրականացվում են առանց փայտի կամ մեծ քարերի: Միծ թոփշների զեպքում հատուկ կամարակալ քարի տակ (նկ. 22) պատի ելուստների ձևով հենարաններ են լինում, իսկ դռների և դարպասների տակ այս հենարանների և պատերի միջև ընկած անկյուններում՝ քարի նստարաններ: Հաճախ այդ քարե նստարանները հենարանների համար ծառայում են որպես խարիսխ: Այդպիսի դռներն ու դարպասները քարե շեմք են ունենում: Տեղանքի թերության պատճառով շեմքի քարերը լինելու դեպքում դրսից քարե ստիճաններ են պատրաստում:

Բացվածքների կամարներէ լինում են միաշար կամ երկշար, մեկ կամ երկու շարթության վրա: Սովորաբար մեծ թոփշների կամարները սրբատաշ քարերով են շարպում, քայլ պատահում են նաև անտաշ կամ կուպիտ մշակված քարերով կամարներ: Մի շարթության մեջ երկու իրար վրա բարձրացող կամարներից վերինը սովորաբար անմշակ քարերից է լինում և ծառայում է ստորին կամարի աշխատանքը թեթևացնելուն (նկ. 11, 22): Բացվածքների կառուցման այս տեխնիկան նույնությամբ կրկնվում է մոնումենտալ շենքերում:

Տան դոները սովորաբար եղել են միափեղկ, իսկ գարպասները՝ մեծ մասամբ երկփեղկ: Լուսամուտները փեղկեր հազվագեց են ունեցել, այն էլ մեծ բացվածքի դեպքում: Հայն տարածում են ստացել երկաթի վանդակով պատաժ լուսամուտների շրջանակները: Մեղրու շրջանում օգտագործվել են նաև փայտի վանդակներ տարրեր չափերի ու ձևի (նկ. 34):

Դոներն ու գարպասների փեղկերը պատրաստվել են հնարավորին շափ լայն, հաստ և դիմացկուն տախտակներից, որոնք իրար են միացվել Հորիզոնական փայտե կամ երկաթե գոտիներով: Միացման համար օգտագործել են երկաթե գամեր, մեխեր կամ փայտե բութակներ (ահԱ): Երկաթե ծխնիներ չնուց են կիրառվել, փեղկի վերին և ստորին անկյուններում փայտե ելուստներ են թողել, որոնք մտնելով շրջանակի համապատասխան անցքերի մեջ՝ ծխնու դեր են կատարել: Հաճախ շրջանակի հետ միասին դռան փեղկը թեք են ամրացրել, որպեսզի դռար ինքն իրեն փակվի: Դռան փեղկի վերնամասում երբեմն անցը են թողել իրրե պատուհան, իսկ ստորին մասի անկյունում մի ուրիշը՝ հավերի երթևեկի համար (նկ. 22, 42): Դոների և գարպասների համար իրեւ փական օգտագործել են երկաթե մղակներ, կողպերներ, կեռեր: Հնում եղել են նաև փայտե փականներ (բլլան), փայտե բանալիներով: Այս գեղքում դռան կողքից հաճախ անցը (փակածակ) են թողել ձեռքով դռան ետերից բան ետեր գցելու համար:

Մեծ գարպասների փեղկերից մեկում մի փոքր դռնակ է եղել հաճախ ուղղանկյուն կամ բոլորածե վերնամաս ունեցող մի փեղկով: Առանց գարպասի, բաց մուտքեր թեև խիստ սակավ, այնուամենայնիվ, եղել են (նկ. 42, 43):

4. Հատակներ

Ժողովրդական շենքերի մեջ հատակների կառուցվածքը շափականց պարզ է: Նրանց մշակման համար կիրառվել են զանազան եղանակներ: Ամենահասարակը հարթեցված, խոնավացած և տոփանելով կամ կոխկրտելով պնդացված հողե հատակներն են, որոնք լայն տարածված են գլուզական շքավոր խավի մոտ: Այսպիսի հատակը հաճախ ծեփել են հարդախառն կավաշաղախով: Այդ ծեփը մի բանի տարին մեկ մաշվելու պատճառով նորից սվաղվել է: Սալարկած հատակները կիրառում են գտել հատկապես գոմերում, ինչպես նաև օժանդակ շենքերում, բակերում և փողոցներում: Սալարկման համար օգտագործվել են ամենատարբեր տիպի բարեր, սկսած հասարակ գետարարերից մինչև սրբատաշ մշակվածները: Ամենից շատ կիրառվել են ձեղքված և մեծ մակերեսներ ունեցող բավականաշափ հարթ, բայց անկանոն ձեռքով սալերը: Բնակելի սենյակները, ինչպես նաև փարախները, երբեք չեն սալարկել, որովհետեւ քարե հատակները սառն են լինում: Մայրածեղ գեպքիրում սալարկվել է սենյակի մի անկյուն՝ լողաւ ալու կամ այնտեղ անասուններ պահելու համար: Հատկապես ուներդների ոներում, անհամեմատ պեղի սակավ, հատակները ծեփվել են կրաշաղախով կամ ծածկվել տախտակամածով, այն էլ միայն հյուրասնյակներում: Երկրորդ հարկերն անգամ շատ գեպքերում տոփանված հողե կամ կավածեփ հատակներ են ունեցել: Հատակների մաքրության և չերմամեկուսացման լրացուցիչ միջոցներ են հանդիսացել խսիրները, թաղիքները, կարպետները ու գորգերը: Հողե հատակների վրա, գորգերի տակ գրեթե միշտ խսիրներ, և ն փռել:




Նկ. 43. Բակ Շինուհայրում

5. Ծածկեր

Կառուցվածքի բազմազանությամբ ամենից շատ աչքի են ընկնում՝ ծածկերը: Այնուանդերձ դրանց տիպարները միմյանց հետ կապված են շատ կողմերով: Բոլորին հատուկ է ամրությունն ու պարզությունը, որը վկանացնությամբ և նրանով ամփոփված տարածությունը ընկալվում են հեշտությամբ: Գերանների փոխադարձ միացումներ չկան նույնիսկ ամենաբարդ ծածկերում, նրանք իրար վրա դրված են ազատ կերպով: Մեր ու ձարձաննդ օգտագործել են միայն 20-րդ դարում ծածկի ենթաշերտի տախտակներն ամրացնելու համար:

ՀԱՐԹ ԾԱԾԿ: Ծածկի ամենապարզ կառուցվածքը թոփչքի ընդլայնական ուղղությամբ գցված գերաններին կամ հեծաններին հենվող հարթ կտորն է (նկ. 44ա, 44բ): Այս դեպքում ծածկաշերտերն են՝ ստորին, զուգահեռ գերանները, դրանց վրա դրված ճյուղերը կամ տախտակները, այնուհետև եղեղի, խաղողի մատների, շիվերի կամ այլ բույսերի շերտը կամ հյուսած խսիրը, ապա ծղոտի և բուսական փափուկ ցողունների շերտը և վերջում



Նկ. 44. Պարզագույն ծածկերի սխեմաներ

Հարդախառն կավաշաղախը հողի հետ կամ ուղղակի տոփանված հողը²⁵: Սոսրին երկու շերտը իբրև հենարան են ծառայում վերին շերմամեկուսիչ և

²⁵ Ծածկերի մեջ խսիրի գործածությունը լայն տարածում է ունեցել հայրենակ շատ վայրերում: Վանի շրջակայքում եղել են կտուրների հատուկ խսիրներ՝ պատրաստող արհեստավորներ:

անջրանցիկ շերտերի համար: Անձրկից հետո վերին կավաշերտն ամրացրել են կտրաքարը գլուխով: Վերջինս Մեղրու շրջանում ծանր զլանածն մի քար է: Մեանա լճի ավազանում հանդիպում են նաև գնդան քարեր: Կտորների հղային մասերը, պատերի վրա փոքր ինչ բարձրացված են, որոնց մեջ տեղ-տեղ ամրացվել են փայտե, թիթեղն, երկաթե կամ քարե ջրհորդաներ մինչև 50 սմ կարկառումով: Հարթ կտորների վրա ժխնելովիք անցերն ինչպես նաև երդիկները տնկումներից պաշտպանվել են հատուկ շարվածքներով, տաշված քարերով, կարասների վերնամասերով և կավածեփ: Կողովանման ձյուղահյուս երդիկներով: Վերջին ձեզ հատկանշական է եղել միայն Մեղրու շրջանի համար:


Հարթ ծածկի այս տեսակն օգտագործվել է բոլոր շրջանների ամենատարբեր կառուցյներում, որոնց թիվը 5—6 մետրի է հասնում:

Մեղրու շրջանի բնակելի համակառուցյների ծածկերը թեև անխափի հարթ են, այնուամենայնիվ, թոփշների մեծության պատճառով ունեցել են ափելի բարդ կառուցվածք: Ըստերկայնական պատերին հենվող գերանների նոր շարքը ծածկվել է երկրորդական գերաններով, որով ինսայվել են գդվար ձեռք բերվող երկար գերանները (նկ. 44դ), թոփշը մեծ լինելու գեպքում սառըին գերանների միջնամասերում պյուներ են կանգնեցվել (նկ. 24, 44դ): Դիսավոր և երկրորդական գերաններով կազմված այլ համակառուցյներից են մեկ կամ երկու սենյակի երկարությամբ զցվող մայր գերաններով ծածկերը: Այդ գեպքում գերանների տակ սյուները մեծ մասամբ մեկական, բացառիկ գեպքերում երկուական հատ են եղել (նկ. 24, 25, 44ը, 44ժ, 44ժա): Օժանդակ կարիքների հատկացվող սենյակներում հանդիպում են նաև միջին մեկ սյունաշարով ծածկեր (նկ. 44թ):

Սյուներն ունեցել են բարի խարիսխներ, տաշված ու քանդակված, տակից գերանի ուղղաթլամբ դպիմած խայակներ, որոնք ունենալով բավականաշակ մեծ երկարություն (մինչև 1,5 մետր) նպաստել են կառուցվածքային համակարգի կայտնացման ու բեռնաթափիչ աշխատանքին (նկ. 25, 45): Պատերի վրա հենվող գերանների տակ սառըներ (մատուերլատ) գրվել են այն գեպքերում, երբ պատի շարվածքն անկայուն է եղել, այլևնք՝ բազկացած կավաբետոնից, հում աղյուսից կամ մանր քարերից: Մածկերի մեջ անցքեր են թողել լուսավորման և օդափոխման համար, անկախ նրանից, թե պատերի մեջ լուսամուտներ կան, թե ոչ:

Երկթերք ԾԱԾԿ: Մածկի այս ձեզ կիրավում է կտորին փոքր ինչ երկթերք կառուցվածք հաղորդելու համար: Ամենաշատ տարածված է եղել Սիսիանի շրջանում, հատկապես ուսու վերաբանակիշների մոտ: Այսակեղ զլխավոր ծածկագերն իրեն պիտի (КОНЕК) ձգվում է շենքի միջնամասով, թոփշը երկարությամբ: Նրա ծայրը երեխն ուրու է գալիս շենքի փոքր հակատի հարթությունից, ինչպես ուսուական ժողովրդական հարտարապետության մեջ: Սևնյակների ներսում, եթե թիվը մեծ է, հենագերանի վտանգավոր հելվածքը վերացվում է լրացնելով հենարան սյան միջոցով, որի վրա գերանի ուղղու-

ընդ որում կտորի խսիրները որոշակիորեն տարրերին են հատակի խսիրներից (տե՛ս Վեր. Փափազյան, երկերի ծողովառ, հա. 5-րդ, Երևան, 1959, էջ 473): Խսիրի գործածությունը կտորի մեջ հայտնի է եղել նաև Օրբելյանում (տե՛ս Մ. Աբելյան, Ա. Բրետանական, Ա. Սալամաձե, նշված աշխ., էջ 332), Վրաստանում (Քարթի, տե՛ս Լ. Սոմբաձե, նշված աշխ., էջ 16): Հավանաբար այդ հատկանշական է եղել Սրբերին ընդհանրապես:



Նի. 45. Գորգառնութեան Մելոյան կամաց առաջնային քանդակներ

թյամբ խոյակ կա: Մպեղագերանները կամ չոսսուհները հանգըռում են դրա և առորմու վրա: Հետաքրթիք է, որ սյունը գրվում է հենագերանի ամենավլանգավոր, բարակ մասում, հաշվի չառնելով սիմետրիկությունը: Կտորի կավածեփ շերտի լվացումն ու սահքը կանխելու համար նրան տրված է փոքր թերություն (նկ. 44է):


Մպեղագերաններով և մեկ գլխավոր գերանով ժածկերն օգտագործել են երեխն նաև փոքր գոմերում: Դրանք կառուցվում են կենարոնական մեկ սյունաշարով, երկթիք ժածկով և պատերին կից մսուրներով: Մսուրները եզերող գերաններին հենվող սյուններով ու նրանց վրա գրված հորիզոնական գերանով ժածկի համար լրացուցիչ հենարան է ստեղծվել (նկ. 18, 44ի, 44դ):

ՈՒԽՈՒՅԻԿ-ՀԱՐԹ ԾԱՌԿ: Գոմերի փայտե ժածկերը մեծ մասամբ երկու սյունաշարով լուծված ուռուցիկ կազմվածք ունեն: Նրանց հարգարման և կառուցման համար հատուկ խնամք չի ցուցաբերվել: Եռանավ հատակագիծ ունեցող շինությունների ժածկադիրաններ Սևանա լճի ավազանում դասավորված են եղել հետեւալ կերպ: Սյունաշարքերի ժայրի սյունների վրա, ընդուանական ուղղությամբ այսպես կոշված վզի գերաններն են գրված, այդ գերանների միջև սյունաշարքը փոքր ինչ բարձրացված է՝ կրելու համար երկարությամբ գցված հորիզոնական (բոյի) գերանները, որոնց ժայրերը հենվել են հիշյալ ընդլայնական գերանների վրա: Երկայնական ուղղությամբ գցված այս գերանների վրա գարձալ երկու ընդլայնական (վզի) գերան են գրվել զեպի կենարոն զզալի շեղումով: Այնուհետև կարող էին գրվել գարձալ մեկ կամ երկու ընդերկայնական գերան, որոնք վերևակ են կոշվում: Մեկական գերան է գրվել նաև մսուրների եղբափալտերից բարձրացող սյունաշարքերին՝ իրու ժածկի լրացուցիչ հենարան: Շինափայտի խնալության համար, երբեմն վերևակներն ու նրանց հենարան ծառայող ընդլայնական գերանները շեն գրվել (նկ. 17, 44է—ԺԱ.): Խիստ երկար գոմերն ունենում են նշված եղանակով կառուցված ժածկերի մի քանի հատվածներ: Փոքր գոմերում կամ փարախներում երբեմն ժածկի այս կառուցվածք հանդես է գալիս շատ ավելի պարզ (նկ. 44Ա.՝ Գ.): Նկ. 15-ում ընակելի համակառուցի մուտքից աջ գտնվում է մանր եղջերավոր անասուններին հատակացված բաժանմունքը, որի ժածկի ձևն ավանդական լինելով հանդերձ զգալիորեն տարբեր է սյունների դասավորությամբ:


Գոմի սենյակը (օդան) ունեցել է սեղանաձև ժածկ, ընդ որում նրա բեկված մասերն անմիջապես նստել են երկու գերանների վրա, որոնք ձգված են եղել սենյակի երկարությամբ: Սենյակի կիսապատճեցված եղբային մասում ժածկը կրող պատի փոխարեն սյունաշեծանային համակարգեր են եղել: Գոմի սենյակի հենցաղային նշանակությունը հաշվի առնելով՝ նրա կառուցմասերը խնամքով են շինվել (նկ. 37ա, 44գ, 44ի):

ԲԲԳ.ԶԵՎԸ ԾԱՌԿ: Իրենց կառուցվածքային լուծումների բազմազանությամբ աշքի են ընկնում զիխատան ժածկերը: Սյունիքին հատկանշական է եղել զիխատան ժածկի ամենապարզ կառուցվածքը: Երկու հանդիպակաց պատերի կամ միջանկյալ սյունների վրա իրար զուգահեռ գրվել են երկու ժայր ժածկադիրանները, որոնց վրա, ուղղահայաց կերպով տեղափորվել է իրար զուգահեռ գերանների հաջորդ շարքն այնպես, որ առաջին շարքի հետ ստացվի քառակուսի կամ ուղղանկյուն շրջանակ: Տրշանակի այդ ձևը պայմանավորված է եղել սենյակի հատակածնով: Երկրորդ շարքի վրա հաշորդաբար հենվել են՝ երրորդը, չորրորդը և այսպես շարունակաբար այնպես,

Ար. 46. Մոնիկը և դիմատերի ձագեր




Գլ. 47. Բրունա ծառակերպության մասնակտություն



որ զուգահեռ գերանների միջակայք ըն աստիճանաբար նեղանալով բրդի ձև ստանան (նկ. 46ա, 46գ, 47): Երբորդ շատրվ երկու կողմի գերանները համախ անմիջականորեն դրվել են առաջին շարքի գերանների վրա, որի հետևանքով մի գերանի հաստության շափ տարածություն է մնացել այդ գերանների միջև: Այդ տարածությունը լցվել է փայտե, երբեմն նաև սալածե քարժ միջադիրներով, որոնց միջոցով ծածկի բենի մի մասը փոխանցվել է ստորին գերաններին, վերացվելով վտանգավոր ձևվածքի հնարապորթյունը (նկ. 47ե): Երկրորդ շարքի, ինչպես և ազելի բարձր զասավորված գերանների ամբողջան սահմանը մեծացնելու միջոցառում է եղել նաև դրանց զուգ-զուլդ տեղադրելը: Այս ձեզ կիրառվել է նաև բոլոր այն գեպքերում, երբ գերանները բարակ են եղել: Մածկի կմախքի գերանաշարքերի բանակը և ծածկի բնդշանուր բարձրությունը այս և այլ տիպարներում կախված են եղել թոփշքների մեծությունից, կառուցողի ցանկությունից, անտառանյութի երկարությունից, բարձրությունից և քանակից: Ընդհանուր օրինաշափություն է ունեցել նաև գերանների կամ հեծանների կտրվածքի աստիճանական փոքրացման եղանակը դեպի վեր:

Բարձր ծածկերը շինանյութ շատ են պահանջել, բայց ավելի նպաստավոր են եղել արագ օգափոխման և զրոյից անձեռաշըների արագ հետացման համար: Զանգեղղուրում ծածկերի բարձրությունը շատ չի եղել, օքրանների հազիվ մի քանի շարքի առկայության հետևանքով ծածկերի վերնամասերը երբեմն սրածայր չեն եղել: Այդ գեպքում վերին մասը ծածկվել է ուղղանկյուն գերանաշարքով, որի մեջ կենտրոնից զգալի շեղամով տեղավորվել է երդիկը (նկ. 16, 47ժ, 47ժա): Երդիկի ապահեպատ փեղկը կամ բաց շրջանակը բոլոր գեպքերում դրվել է գերանաշարքերի զագաթային մասի գերանների վրա, այսուղ ամրացվել է նաև մի խաչաձև երկաթ, որպեսզի երեխանները երդիկից ցած շննինեն: Բայց շրջանակը ցուրտ եղանակներին փակվել է փայտե, կամ գերանների մասով, իսկ ապահեպատ փեղկը բացվել ու փակվել է մեծ մասամբ տան միջից՝ պարան հատուկ սարքի միջոցով: Շինուհայրում եղել են ծածկի փայտե կմախքի վերին շրջանակի վրա գրված քարովիր կոռային մասի վրա: Անձեւի ժամանակ վերին անցքը փակելով հնարապոր է եղել օգափոխումը կատարել կողքի անցքերի միջոցով: Այդ կոնաձև երդիկը ձուլվել է հատուկ կաղապարի մեջ, կրաշաղախի և մանր խճերի խանուրգով (նկ. 19):

Նկ. 13-ում ներկայացված զլսատան ծածկի մեջ իբրև փուլը մասի ենթաշերտ գերաններին հանդուղ փայտերի վրա տափակ քարեր են շարել: Այդ միջոցառումը կիրառվել է Զափանի շրջանում: Երբ կտրալանշերը թեք են ստացվել, ծածկաշերտի կայտնությունն ապահովվելու համար ստորին ծածկաշերտ աշխատել են անել երկար ճյուղերից կամ փայտից: Փոքր թեքությունների գեպքում հնարապոր է եղել կարճ փայտեր օգտագործել, որոնք դասավորվել են երկու, իրար անմիջապես հաջորդող գերանաշարքերի վրա: Հասկանալի է, որ ծածկի բարձրությունը կամ թեքությունը չեր կարող շատ մեծ լինել, այլապես գերանների հետ ունշով չկապած ծածկաշերտերը թեթև ցնցումից կարող էին ցած հոսել: Մեծ թեքությունների գեպքում ծածկի ենթաշերտ հանդիսացող կարճ փայտեր օգտագործելու և նրանց ավելի գեղեցիկ ու կայուն դասավորելու համար գերանների ու նրանց միջև դրել են միջանկյալ գենարաններ: Դրանք դրվել են գերանների վրա նրանց ուղղահայց ուղղու-



Կի. 48. Սկանա լճի ավտոմատ դիստանսերի մակրութասներ




Ա

Բ

Գ

Շ

Ե





Զ

Ռ

Ը

Շ

Ժ

Ա₁Բ₁Գ₁Շ₁Ե₁Զ₁Ռ₁Ը₁Շ₁Ժ₁

ՔԱՂՋՄԵԼ ԵՆ ՔԱռԱԿՈՒՍԻ ՀՐՑԱՆԱԿԻ: Այդ ՀՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԱՆԿԱՊՈՆԱՅԻՆ ՄԱՍԵՐԸ ՃԱՏԿՎԵԼ ԵՆ ՃԻՇՄ ԱՅՆՎԵՍ, ԻՆՉՎԵՍ ԱՊԱՏԵՐԻ ԱՆԿԱՊՈՆՆԵՐԸ: ԱՅՆՈւՅՆԻՆ ՊՐՎԵԼ Է ՊԱՐՃԱԼ ՉՈՐՄ ԳԵՐԱՆ, ՊԱՐՃԱԼ ՃԱՏԿՎԵԼ ԵՆ ԱՆԿԱՊՈՆԱՅԻՆ ՄԱՍԵՐԸ և Այդ ԱՐԴՅՈՒՆՎ ՀԱԶՈՐՊՎԵԼ Է, ՄԻՆՉև որ գերանաշարքերի բացվածքներն իրար նկատմամբ 45 աստիճան շեղված քառակուսիների ձև ստանան: Կառուցման այս եղանակի շնորհիվ՝ իրար վրա ազատ հենվող գերանաշարքերով պարուրված ազատ տարածություններն աստիճանաբար դիպի վեր փոքրացել են այնքան, որ գագաթում մնացել է մի քառակուսի փոքր բացվածքը (առավելագույնը 70×70 սմ), որի վրա երդիկի շրջանակն է ամբաջվել: Գերանաշարքերի ստորին մասերում առաջացած սեղանաձև բաց տարածությունները, ոթէ

Նկ. 49. Հազարաշն և խառը տիպի ժամկերի սխեմաներ

կաղմել են քառակուսի շրջանակի: Այդ շրջանակների անկապոնային մասերը ճատկվել են ճիշմ այնվես, ինչպես պատերի անկապոնները: Այնուչեսև դրվել է պարճալ չորս գերան, պարճալ ճատկվել են անկապոնային մասերը և այդ պրոցեսը հաջորդվել է, մինչև որ գերանաշարքերի բացվածքներն իրար նկատմամբ 45 աստիճան շեղված քառակուսիների ձև ստանան: Կառուցման այս եղանակի շնորհիվ՝ իրար վրա ազատ հենվող գերանաշարքերով պարուրված ազատ տարածություններն աստիճանաբար դիպի վեր փոքրացել են այնքան, որ գագաթում մնացել է մի քառակուսի փոքր բացվածքը (առավելագույնը 70×70 սմ), որի վրա երդիկի շրջանակն է ամբաջվել: Գերանաշարքերի ստորին մասերում առաջացած սեղանաձև բաց տարածությունները, ոթէ

ძებ շեნ ხელ, ծածկվել են խիտ գերանաշարքով ճիշտ այնպես, ինչպէս անկունային մասերի եռանկուն հատվածները. Մեծ լինելու գեպքում այդ տարածությունները կառուցվածքի թեթևության և գերանների ինայողության համար ծածկվել են թեքաղիք ծածկափայտերով (ձյուղեր, տափատակներ և ալյն): Երբեմն հօգ գերանաշարքի փոխարեն այգպես են ծածկվել նաև անկունային մասերը պարփակող գերանների ետեւում առաջացած եռանկուն տարածությունները (նկ. 17): Եթե ծածկի հիմքը եղել է փոքր, սկզբից ենթ գերանները դասավորվել են անկունազօծերով՝ իրար նկատմամբ 45 աստիճանն շեղումով գրգած քառակուսի շրջանակների ձևով:

Հազարաշեն կառուցվածքը հնարավորություն է տվել ավելի մեծ թոփշբներ ծածկել, բան հնարավոր էր ուղղանկյուն դասավորությամբ գերանաշարքերով կազմված ծածկի գեպքում: Դրանով էլ բացատրվում է նրա լայն կիրառումը. Սևանա լճի ավագանում: Դրա շնորհիվ է, որ զիսատունն ստացել է մի ամբողջ գերդաստան պատսպարելու մեծությունն Ալյափիսի մեծ զիսատներն ունենում էին բազմաթիվ սյուներ, մինչև 8—12 հատ: Հազարաշեն ծածկը փոքր թոփշբների գեպքում անսյուն է եղել, իսկ մեծ թոփշբների համար սյուներն ու նրանց վրա ամրացված բեռնաթափիչ հենակները պարտագիր կառուցամասեր են հանդիսացել: Նկար 49 ե—ժ սխեմաներում պատկերված են սյուների և հենակների կիրառման տարրերակները:

Կամոյում եղել է Հազարաշեն ծածկերի մի ուշագրավ տարրերակ, որը մեզ չի հասել: Դրանցից մեկը, ինչպես նշել ենք, նկարագրել է Ստ. Լիսիցյանու: Դա քառակուսի հիմքի վրա գեպի վեր փոքրացող ութանիստ շրջանակների աստիճանաձև մի հատած բուրգ է (նկ. 24): Այս տիպի ծածկերի կառուցվածքի ավելի հանգամանալից գծագրեր կարելի է գտնել Վրացական ՍՍՀ Հարավային Հայաբնակ շրջաններին գերաբերող հետազոտական նյութերում²⁶: Հիշալ ծածկը Սևանա լճի ավագանի հազարաշեն ծածկերից տարրերվում է նրանով, որ գերանաշարքերն իրար նկատմամբ զուգահեռ են և անկյան տակ չեն հատվում, բացի այդ ութանիստ շրջանակների աստիճանաբար նեղացումը կատարվում է աննշան շափով, ուստի գերանաշարքերի միջև ազատ տարածություն չի մնում և ստացվում է բրգանման մի կառուցվածք:

Վայց ձորի հազարաշեն ծածկերը մեծ չեն և մեծ մասամբ լինում են չորս սյունով պահպաղ, գերաններով կազմված քառակուսի հիմքի վրա: Նրանք կարող են առնչվել խառը կառուցածենով իրականացած տիպարին:

ԱԱ.Ռ. Տիգի ՇԱԾկեթ: Խառը կառուցածենով զիսատան գերանները տեղադրվել են՝ ստորին շարքերում ունենալով ուղղանկյուն, իսկ վերնամասում՝ հազարաշեն դասավորություն կամ հակառակը (ստորինում հազարաշեն, իսկ վերնամասում ուղղանկյուն դասավորություն): Այս երկու մասերի իրար նկատմամբ ունեցած համամասնություններով և մանական կառուցվածքային լրացուցիչ մանրամասներով առաջացել են շատ տարրերակներ (նկ. 49):

Սևանա լճի ավագանում խառը կառուցվածքով ծածկերը թիւ բանով են տարրերվում հազարաշեն ծածկերից, նրանք ստորին մասում գերազանցապես հազարաշեն կառուցվածք ունեն: Ալյափիսի միջոցառումով հնարավոր է եղել ծածկել մեծ թոփշբներ, այսինքն այնպիսիք, ինչպիսիք ծածկվում էին հազարաշենով: Վերնամասի գերանաշարքերի ուղղանկյուն դասավորությամբ,


26 Տե՛ս R. Յ. Ագաբեյան. Արխիտեկտուրա գրանցության առաջնային աշխատավորության մասին. Տիգի ՇԱԾկեթ, 1945; M. Գարսկանիձե, Կամոյա աշխատավորության մասին. Տիգի ՇԱԾկեթ, 1945.

Հատկապես մեծ թոփքների դեմքում, ծածկագերանների զգալի խնայողություն է կատարվել: Ստորին մասի հաղարաշեն կառուցվածքում կիրառվել են բենաթափի բոլոր միջոցառումները: Պահպանվել են նաև հաղարաշեն ծածկի սյուների դասավորությունն ու նրանց կառուցվածքային դերը:

Վայոց ձորում հատկապես տարածված է եղել ստորին մասում ուղղանկյուն և վերնամասում հաղարաշեն կառուցվածքով ծածկի տարբերակը: Նույն շրջանի ուղղանկյուն դասավորությամբ գերանաշարքերով կազմված ծածկերի նման այս տիպարներում էլ ծածկի ստորին, պարագային մասն ունեցել է զգալի լայնություն, ուստի և առաջացած մեծ թոփքների ծածկափայտերի տակ նույնական լրացուցիչ հնագերաններ են դրվել, հորիզոնական կամ փոքր ինչ թեք գիրովով: Այս միջոցառման շնորհիվ զգալի փոքրացել է սյուների վրա բարձրացող միջնամասը, որից շահել է ճարտարապետական կողմը: Փոքր տարածության համար մեծ գերաններ չեն պահանջվել, իսկ փոքր ծածկամասերի մշակումն ու մանրանկար դասավորումը հեշտ լինելով՝ հնարավոր է եղել բավականաշափ գեղեցիկ նմուշներ ստեղծել (նկ. 46դ). Այս տիպարի ծածկաշերտերն էլ նույնն են, ինչ ծածկի վերոհիշյալ տիպարներինը: Մածկի հնթաշերտի դասավորությունը բրգած մասի վրա կատարվել է երեք եղանակով. այն դրվել է կամ ուղղակի գերանների վրա թեք դրությամբ, կամ սյուների շուրջ եղած ծածկի ստորին մասի գերանների շարունակության վրա կամ հորիզոնական ուղղությամբ, զույգ առ զույգ դրված հաստ ճյուղերի վրա, որոնք հենվել են բրգած դասավորված գերանների հաջորդական շարքերի վրա: Մածկի հաղարաշեն վերանամասը բաղկացած լինելով իմիտ գերանաշարքերից, հանդիսացել է միաժամանակ ծածկի հնթաշերտ (ծածկափայտեր ու ճյուղեր չեն դրվել): Այսպիսով Վայոց ձորի խառը կառուցվածք ունեցող ծածկերի ստորին մասերը լիովին համապատասխանել են ուղղանկյուն դասավորությամբ գերանաշարքեր ունեցող ծածկի կառուցվածքին: Բացառություն չեն կազմել նաև կրող սյուները և նրանց մանրամասները:

ՔԱՐՈՒԿԻԹ ՄԱՍԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՄԱԾԿԵՐԸ: Զանգելուրը հարուստ է քարուկիր կառուցվածք, ինչպես նաև կամարակապ հնարանային համակարգեր ունեցող ծածկերով: 50 և 51 նկարները հնակամարով գլխաւների շափակություններ են, որոնցից առաջինն ունի մեկ, իսկ մյուսը երկու լուսակ միջին պատ: Բացի հնակամարներից շենքերի տարածական ամբողջությանը նպաստում են պատերն ու որմնակամարները, որոնք երկրաշարժագիտացկուն համակարգ են ստեղծում: Քարուկիր ծածկի մի այլ տարբերակ է անկյուններում սահուն անցմամբ կլորացած քարե բրգած ծածկը, որն իրականացվել է հատուկ պատրաստած փայտամած-կաղապարի վրա: Այն բարձրանում է որձաքարի քիչ թե շատ կանոնավոր բեկորներով: Ստորին մասում պատի հարթությունից դեպի զուրու հակած քարերի մի քանի շարքով կազմված է թեք փոխանցող մաս, որը մեղմացնում է պատի և ծածկի հատման անկյունի սրությունը և հեշտացնում ուժերի փոխանցումը բրգած մասից պատերին: Մածկի սալիկաձև որձաքարերը զրված են կողային հարթություններին (նիստերին): Ուղղահայաց և միաձուլված են կրաշաղախով: Սրբատաշ քարե երկշարք, շրջանաձև գոտին օղակում է ծածկի վերնամասը և կայունացնում այն երդիկի մասում, որը նրա առավել խոցելի մասն է (նկ. 20):

Գիտատան կամարակապ և թաղակապ տարբերակները, ինչպես նաև ձուլածող երդիկը հիշեցնում են մոնումենտալ ճարտարապետության մեջ




Նկ. 50. Մեկ հենակամարով զիխատուն Տեղ գյուղում

գմբեթների, գմբեթանման այլ ծածկերի և նրանց հենարանալին համակարգերի առաջացած առողքների որոշ օղակներ։ Ավանդույթների հիման վրա ստեղծված այս կառուցածեները իրենց ծագմամբ պատկանում են անհիշելի ժամանակների։ Հասկանալի է, որ զրանք հիշալ մոնումենտալ ձևերի նախօրինակների հետ կապված կառուցածամսեր են։ Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ կամարակապ համակարգերը թևել փայտե ծածկեր են պահում, այնուամենայնիվ, կարող էին հեշտությամբ քարուկիր ծածկեր ունենալ²⁷։ Փետք է ենթադրել, որ Սյունիքում ես գյուղացին են ունեցել

²⁷ Սյունիքում զիխատունը գալիքների ճարտարապետության նախատիպար լինելու արտահայտության կարելի է համարել Մաքենաց վանքի գալիքը։ Լինելով հայկական առաջին զավիթներից մեկը, առավելագույն անմիջականությամբ է գրանորել այս կապը, որի մասին Ս. Մնացականը գրում է. «Կենարոնական քարե պյուների և նրանց համապատասխանող որմնատյուների բացահայտությունը, ինչպես նաև պատերի ոչ մեծ հաստությունը ընդարձակ ներքին տարածության պայմաններում, հիմքերը են տախիս ենթադրելու, որ կառուցածքը ծածկված է եղել փայտով, և ամենայն համարականությամբ, ունեցել է հազարաշնիք տիպը մի ծածկ» (Ս. Խ. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի զգացքը, էջ 160—161)։

գմբեթածեւ քարուկիր ծածկի ավելի կատարյալ ձևեր, քառակուսուց շրջանաձև հիմքին անցնելու համակարգերով, որպիսիք ցարդ պահպանվել են Արցախի ալեւյլ մասերում:



Նկ. 51. Երկու հենակամարով զինատուն Տեղ գյուղում

Թաղերը նույնպես կազմվել են փայտամածի վրա՝ նրա կտրվածքի շառավղի ուղղությամբ դասավորված քարերով և պլաստիկ շաղախով²⁸: Երկրաշարժակայուն դարձնելու նպատակով շատ բնակավայրերում շենքերի գգ ովի մասը այդպես է ծածկվել: Եթե շենքը խիստ երկարավուն հատակագիծ է ունեցել, ինչպես անասնանոցները, միշին մասում կայունացվել է մի հենակամարով, որը հաճախ լինում էր սրբատաշ քարերով շարված (նկ. 19): Թաղերի, ինչպես և կամարների ամենատարածված ձևերը կիսաշրջանաձևն ու աղեղնաձևն են եղել: Պատահել են նաև սլաքաձև թաղեր ու կամարներ: Մածկերի այս ձևերը նույնպես լայն տարածում են գտել Արցախում:

Քարուկիր կառուցվածքով ծածկերը գյուղական վայրերում ունեցել են նույնպես տոփանված կավաջողի կտորներ, ունեորների մոտ կրաշաղախով սվաղված ձև են ստացել: Հարուստ վերնախավի բնակելի համակառույցների կտորները հավանաբար ունեցել են սրբատաշ քարով ծածկված մակերեսներ, ինչպես մոնումենտալ կառույցներում: Ըստ կրամությին այդպիսի ծածկ է ունեցել Մելիք-Հայկաղլանների վերնատունը (նկ. 22):

Զանգեզուրի ժողովրդական ճարտարապետության մեջ լայն տարածում գտած թաղակապ շինություններն իրենց կամարներով այնպիսի դիմացկուն և դեղեցիկ կառուցվածք ունեն, որ համարյա ունչով շեն տարրերվում մոնումեն-

²⁸ Մեր հին մատենագիրները թաղակապ շենքն անվանել են «սագաշեն», դժբախտարար մեր լեզվում այն չի կիրառվում և փոխարենն օգտագործվում է «թաղ» բառը, որը հնուց եել բնակավայրերի առանձին հատվածների իմաստով է գործածվել:

տալ շենքերի համապատասխան ձևի կառուցամասերից: Բնակելի համակառուցների կազմում թաղակապ շինվածքներն առհասարակ առաջ են եկել շատ հին ժամանակներում՝ թերևս ի փոխարինումն բազիլիկանման սյունաշարեր ունեցող փայտե ուռուցիկ-հարթ ծածկի: Բնավ զարդանալի շպետը է թվա, որ հայկական առաջին գավիթները, որոնք 10-րդ դարում հանդիս են եկել Սյունիքում, թաղակապ են եղել (Գնդեվանք, Յաղացքար վանք, Վահանավանք և այլն): Ժողովրդական ստեղծագործության այդպիսի գծերի փոխանցումներ են նկատվում Սյունյաց Օքքելյան իշխանական տոհմի կառուցների մեջ: Նշանավոր է հատկապես Սուլեմա լեռնանցքի քարավանատունը, որի մէջ Հիշյալ կապերի գրսեռումներ են շթաբարավոր որմնախորշերը ինչպես նաև առաստաղի երդիկավոր հատվածների բաժանվելն ու եռանավ կառուցվածքը, որոնք հիշեցնում են հին գոմերի կիսագետնափոր ծավալը²⁹: Այստեղ առկա է նույնիսկ միջին նավի աղբափոսը: Նույնպիսի գծեր կարելի է տեսնել Ցայշիի քարավանատան մեջ: Աղբենդի (լեռնանցքի) քարավանատունը Զանգեզուրի թաղակապ, միանավ գոմերից տարրերվել է միայն իր մեծությամբ և սրբատաշ քարե ծածկով: Պատահական չէ, որ այժմ այն իրքն գոմ է օգտագործվում:

6. Պատշգամբներ և նախամուտինք


Հնատիպ պատշգամբները հասարակ սյունահեծանալին կառուցվածք են ունեցել: Դրանք, ինչպես նշվեց, հիմնվել են ուղղակի գետնի կամ փոքր ինչ բարձրացված հատակի վրա, կառուցամասերի հատման անկյուններում, շենքի առաջ:

Պատշգամբների ծածկերը նստել են նրա լայնական ուղղությամբ գրված գերանների վրա, այդ գերանները հենվել են մի կողմից պատի և մյուս կողմից սյունաշարով պահվող հեծանի կամ գերանի վրա: Այդ գերանների տակ, երբ պատն անկայուն է եղել, դրվել է առորմի: Գերանների մյուս ծայրերը երբեմն զգալի շափով են առաջ եկել հենարանից և կրել ծածկի առաջ կարկառված մասը: Հողե կտորի եղբաշերափ լվացումն ու հողմնացրումը կանխելու համար այս գերանների ծայրերին դրվել է մի հորիզոնական գերան, ճյուղեր կամ տախտակ, որոնց վրա մինչև 40 սմ բարձրությամբ քարեր են շարվել իրքն պաշտպանիչ եղբաշերտ: Այդ քարերի միջով առաջ են կարկառել փայտե կամ քարե ըրճորդանները:

Պատշգամբի ծածկը կրող սյունները անհավասարաշափ նստվածքից զերծ պահելու համար, նրանց տակ մի չորսու են դրել՝ պատշգամբի ամբողջ երկարությամբ: Եղել են նաև քարե խարիսխներով սյուներ: Սյունների վրա երբեմն փոքր խոյակներ են դրել հեծանի ուղղությամբ, կամ նրան ուղղահայց: Վերջին ձեր կիրառվել է հատկապես վայոց ձորում: Պատշգամբների սղոցված զարդամասերը հատկանշական են քաղաքատիպ շենքերին միայն:

Պատշգամբների ոչ պարտադիր մասերն են քաղրիքներն ու պատնեշները: Բազրիքները հնում հասարակ կամ զարդաներով սղոցված տախտակներից էին կազմված, որոնք իրար են կցվել վերի ու վարի փայտե գոտիներով: Վերջին դարերում, ավաններում և նրանց մերձակա վայրերում երեսն են եկել պատվող սարքի վրա տաշված սյուններ և քաղրիքի կանգնակներ (նկ. 52):

²⁹ Ի տարրերություն բազիլիկ հին եկեղեցիների այստեղի համաշափությունները խիստ պետական առաջին հաւաքրել ներքին տարածությանը:



Նկ. 52. Բաղրբների նմուշներ

Զանդեպուրում եղել են պատշգամբի կամ նախամուտքի դեր կատարող քարուկիր շինություններ՝ առչելից կամարակապ բացվածքով կամ կամարաշարով (Նկ. 11): Նեզ լինելու դեպքում դրանց երկայնական առանցքներն ուղղված են եղել մուտքին ուղղահայց, իսկ երկար լինելու դեպքում՝ կամարաշարին զուգահեռ: Այս կառուցամասերի կամարները աղեղնաձև ու ուղքաձև են եղել, թաղերը՝ նույնպես: Պատահում են նաև քարե կամարակապ բացվածքով, բայց փայտի ծածկով՝ նախամուտքեր: Նախամուտք կարելի է համարել նաև տան համակառուցի դռան առջևի այն փոքրիկ բաց տարածությունը, որը ծածկված է անսյուն ծածկով՝ ցվիքով: Դա կամ լինում է շենքի

ծածկագերանների շարունակության կամ դռան կողքերից առաջ և կող պատերի վրա (նկ. 17):

Սլունիքի մոնումենտալ շենքերի մանրամասներից ժողովրդական ճարտարապետության հետ են կապվում նաև կամարակապ բացվածքներով սյունաբանները: Դրանք կցվել են եկեղեցիների հարավային, Հյուսիսային և արևմտյան ճակատներին. 10—13-րդ դարերի նմուշներ Տաթի, Վահանավանքին, Որոտնավանքին և Յաղացքարի կամարասրանները ժողովրդական ճարտարապետության նույն ձևերն ու կառուցվածքն ունեն: Առավել վաղ նմուշ է Թանահատի սյունասրանը: Այդ տիպի կառուցվածքները տարածված են Եղել իրեն հովանի՝ գերեզմանների վրա³⁰:

Վանքապատկան շենքերին կից ժողովրդական բնակելի տների նման առկա են կամարակապ բացվածք ունեցող թաղակապ նախասենյաններ: Վանական խոցերը հիշեցնում են ժողովրդական թաղակապ սենյակները հողածածկի կտորներով, փոքր լուսամուտներով, որմնախորշերով, բուխարիկներով, երբեմն նաև երդիկներով:

7. Քաղաքատիա շենքերի կառուցվածքի մի ժանի առանձնահատկություններ

Քաղաքային շենքերում պահպանվել են գուղական քաղաքատիա կառուցների շինարարական ավանդությունները: Հիմնական տարբերություններն ան գմբեթանման կտորի բացակայությունը, հարթ կամ երկթեք հողե ծածկերի՝ փայտե հեծանների վրա կառուցվելը, հատակների և երբեմն նաև առաստաղիտափակապատումը³¹, ծպեղավոր երկանչ կամ քառալանջ կտորների առկայությունը, ապակեպատ լուսամուտները, ավելի մեծ խնամքով կառուցված պատշգամբները, պատկերի նվազ հաստությունը (50—80 սմ), շարվածքի կանոնավորությունը, ուղղաձիգությունը, հարթությունը և այլն:

Գերանների ճառագայթածե գասավորությունը երկու ճակատների միացման անկյունային մասում, պատշգամբների հատկանշական գծերից մեկն է: Երկրորդ հարկի փայտաշեն պատշգամբի համար հանձնի հենարան են ծառայում առաջին հարկի ճակատային պատը կամ նախամուտը եղերող մուցթերն ու կամարները:

Խիստ ուշագրավ կառուցամասեր են պատերի ճականերկաշարժային փայտե գոտիները: Դրանք սովորաբար զրվում են պատի շարվածքի երկու կողմում, նույն մակարդակի վրա և վրայից պատի ընդլայնական ուղղությունը ամրացվում են իրար կարճ փայտերով կամ երկաթե ճարմանդներով: Ընդհանրապես դրանք մի մակարդակի վրա ընդգրկում են ամբողջ շենքը և կազմում դուիթ: Միահարկ շինություններում մեծ մասամբ երկու այսպիսի դուիթ է դրվել, մեկը ստորին մասում, մյուսը պատի վերնամասին մոտ:

Այս տիպի շենքերում որմնախորշերը պահարանի նման փեղկերով ծածկելը տարածված երկությ է: Մի քանի հարկից կազմված համակառուցներում շատ անգամ պահպանվել է ստորին հարկերի թաղակապ և կամարակապ մասերի կրառելու ավանդությը:

30 Տե՛ս Ս. Խ. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Ալունիքի դպրոցը, էջ 167:

31 Տախտակների փոխարեն առաստաղները երբեմն ծածկվել են թղթով կամ կտավով:

Քաղաքատիպ շենքերի կոնստրուկցիաները կրելով որոշ ավանդական գծեր՝ այժմ գրեթե չեն տարրերվում ժամանակակից առանձնատների կառուցամասերից:

Ի տարրերություն գլուղական շենքերից Գորիսի, Կամոյի ու Նրանց մերձական բնակավայրերի քաղաքատիպ շենքերի պատերը և հիմքերը կրաշաղախով են շարված: Կամոյում երբեմն միայն կավաղաղախ է օգտագործվել պատրզուց սվաղելու համար: Այս դեպքում կիրառվել են նաև փայտե զտափները: Կամոյում փափուկ մուգ կարմիր քարն է օգտագործվել սրբատաշ, հարթ պատերի համար «միդիս» շարվածքով, սվաղվող պատերի համար օգտագործվել է նաև որձաքարի բեկորների անկանոն շարվածքը: Շենքերի մեծ մասն ունեն սրբատաշ քարի հարթություններով, զտափներով, անկյունաքարերով և սվաղով համակաված: Լամ համապատասխանաբար անկանոն «միդիս» շարվածքի զուգորդմամբ կառուցված պատեր: Գորիսում ևս խառը շարվածք է կիրառվել: Սրբատաշ քարերն օգտագործվել են կառուցվածքային տեսակետից առավել պատասխանատու մասերում: Այստեղ շենքերի ու նրանց բացվածքների ներերի հարթ, սրբատաշ քարերն ու պատի հարթությունից գուրս եկող քար, հաճախ նրբորեն տրամատավորված զտիփները, պարականները, պատուհանապատկերն ու քիվերը, ոչ միայն հարդարանքային կառուցամասեր են, այլև գարավորքնություն բռնած կոնստրուկտիվ միջոցաւումը: Գորիսի շենքերի մեծ մասի բացվածքները աղեղնաձև քարավորներ ունեն (հազվադեպ ևն հարթ քարավորները), մինչդեռ Կամոյում մեծ մասամբ կիսաշրջանաձև են: Լուսամուտների կիսաշրջանաձև քարավորների մեջ ճակատակալ քարեր պարփակելու ավանդությունը համորեն կիրառվել է նաև այստեղ: Բարավորների աղեղնաձև պատկերը, հատկապես երկու քարից լինելու գեպքում, ստորին մասում հորիզոնական ելուստներ ունեն, որոնք խրվելով պատի մեջ՝ հավասարակշռություն են ստեղծում: Այդ ելուստները մեծ մասամբ կորչում են պատուհանապատկերն ընդունելով անընդմեջ զտում, կազմելով նրա հորիզոնական հատվածների ծայրերը: Զգալի տոկոս են կազմում առանց տրամատավոր պսակի բարավորները, մասնավանդ մեծ բացվածքների վրա: Պատերը 70—80 սմ թանձրությամբ շարված են ճեղքված, ճակատի կողմից հարթեցված որձաքարով ու կրաշաղախով: Ներսից, ինչպես Կամոյում, սվաղված են կրաշաղախով, իսկ դրսից շարվածքի անկանոնությունը չի քողարկված, այլ, ընդհակառակը, շեշտված է հարթեցված ու կոկված շաղախի կարաններով:

Միշհարկային ծածկերը սովորաբար հեծանների վրա են կառուցել, բայց Գորիսում հաճախ այն թաղակապ է:

Կամոյում կտորները հողաշեն են եղել, իսկ Գորիսում ծպեղային հիմքի վրա մեծ մասամբ թիթեղապատ կառուցվածք ունեն:

Հետաքրքիր կառուցվածք ունեն Գորիսի գարպասները: Դրանք, ի հակագրություն լուսամուտների, ունեն ավանդական ձևով կիսաշրջանաձև բարավորներ: Մեկ բացվածքով գարպասներն ունեն լայնանիստ կամարներ, իսկ երկու բացվածք ունեցողների նեղ բացվածքներն ունեն ձգված համաշփություններ, մինչդեռ մյուսը լայնանիստ է: Բոլորն էլ ունեն քարե շեմք: Մեկ մուտք ունեցող զարպասների փեղկերից մեկի մեջ մարդկանց երթեւելի համար փոքր զոնակ են սարքել: Ներքին դռների բարավորները սովորաբար հարթ են, փայտից, սակայն Գորիսում զրանք համախ ունեն աղեղնաձև քարե կառուցվածք, ինչպես արտաքին բացվածքներին է (նկ. 8, 29, 30):

* * *

Շինարարական տեխնիկային ու կոնստրուկցիաներին վերաբերող տվյալների վերլուծությունը ցուց է տալիս, որ ժողովրդական ճարտարագետության մեջ հմտորեն օգտագործվել են տեղական բոլոր շինանյութերը, ժամանակի տեխնիկային համապատասխան ստեղծվել շենքերի զանազան կառուցամասերի ուշագրավ լուծումներ, հատկապես ծածկերի խիստ բազմազան տեսակներ: Ժողովրդի շինարարական ավանդույթները պահպանվել են մասնագիտական և ոչ մասնագիտական, անհատական և կոլեկտիվ աշխատանքի կիրառման պայմաններում: Վիմափոր ծածկերի զարդացման և մոնումենտալ կատարելության հասնող երեսույթը, դոլմենների ծածկերի սկզբունքային առնչությունները գերանաշար ծածկերի հետ, նախնադարյան պատի շարվածքի կամ նրա միջնադարյան բարեկոխված տեսակների ապա «միդիս», խառը և այլ ավանդական շարվածքների զոյնությունն այսօր, շարվածքի հակաերկրաշարժային կայունացման միջոցների մշակումն ու պահպանումը ժողովրդական և քաղաքային ճարտարագետության մեջ, բացվածքների և պատշգամբների կառուցվածքային ավանդական ձևերի կիրառումը նույնիսկ մեր օրերում և շատ ուրիշ երեսույթներ՝ ավանդույթների ժառանգականության և նրանց նկատմամբ ստեղծագործական մոտեցման բացահայտ գրանորումներ են:

**ԿԱՌՈՒՅՑՑՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍԱ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ժողովրդական ճարտարապետության մեջ նպատակահարմարության և տնտեսականության պահանջների թելագործ նշանակությունը հարկադրել է հարդարանքներին վերաբերվել չափազանց զուսպ, սակայն թեկուղ ամենահասարակ հյուզակներում կարելի է տեսնել հարդարանքի տարրեր, որոնք ստեղծվել են զարավոր ավանդությունների հիման վրա:

Շատ գեղեցիկ հատկապես քաղաքատիպ շենքերում, ճարտարապետական ձևավորման պարզագույն եղանակը կառուցման խնամքն է, ընդունուած կառուցմասների նպատակահարմարությունը հանդիսացել է թելագորող գործոն: Այս կապակցությամբ պետք է նշվեն ուշագրությամբ կառուցված շենքերի մակերեսների որոշ հարթությունը, ծածկագերանների հավասարամեծությունը, նրանց սիմետրիկ զասավորությունը, ծածկագերանների հանթաշերտի և ընդհանրապես առաստաղների ու հատակների փայտամասերի մշակումն ու խնամքով աելազգործը, գոների, լուսամուտների որմանախորշերի, սյուների և այլ կառուցմասների համամասնություններն ու նրանց դասավորությունը ընդհանուր հորինվածքի մեջ և, վերջապես, կառուցման որակը: Իրբու կառուցմասների նպատակահարմարության հիշյալ գրակորման լրացում, շատ հաճախ կիրառվել է զարգը՝ ամենաբարգմազան ձեերով: Այս հանդես է եկել գլխավորապես այն կառուցմասների վրա, որոնք առանց նրան ճնշող, տաղտկալի տպավորություն պիտի թողնեն: Եթեմն զարդը տեսնում էնք նաև այնտեղ, որտեղ նրա անհրաժեշտությունը չկա, բայց նրա կիրառումը ավելի հաճելի է զարձնում շենքի տվյալ մասի գիտումը և հարստացնում ամբողջ համարվածքը: Այս, իջարկե, չի նշանակում հարդարանքի շոալլում: Ավելորդ զարդերով ծանրաբենված կառուցմասներ երբեք հանդես չեն եկել ժողովրդական կառուցներում: Հատուկենա շոալլումներ կարելի է տեսնել այնպիսի կառուցների վրա, որոնք ընթարկվելով ավանդություններին՝ առանձնանում են ընդհանուրից: Դրանք անփորձ մարդկանց ձեռքով կառուցված շինություններ են, որոնք արտահայտում են տիրոջ անճաշակությունն ու ցուցամոլությունը:

Ժողովրդական ճարտարապետության մեջ շենքի հարդարումը երբեք չի հակասում կառուցվածքին, այլ նպաստում է նրա արտահայտչականությանը, շենքի մանրամասներն ամբողջի մեջ միասնաբար ընկալելուն:

Հնատիպ կառուցները, քաղաքատիպ գյուղական և քաղաքալին շենքերն իրարից զգալի տարբերություններ ունեն ոչ միայն ըստ կառուցվածքի, այլև ըստ հարդարանքի:

ի տարբերություն բաղաբատիպ շնչերի՝ գյուղական հնատիպ կառուցների հարդարումը կատարվել է առավելապես ներսի կողմից: Այդ անշուշտ կապված էր շնչերի շահագործման և բնակավայրի կառուցապատման պահանջների հետ: Արտաքին վատանգներից է լեռնալին բնությունից պաշտպանվելու անհրաժեշտությունը հարկադրել է՝ մարդկանց իրենց կենցաղը պարփակել խուզ, հաճախ իրար կապած և կիսաթաղված պատերի մեջ, հողեանհրապուրը կտուրների տակ: Այդ առավել ցայտուն երեսն է Սևանա լճի ավազանի գյուղական հնին կառուցներում: Այնուամենայնիվ որոշ հարդարում կատարել են Մյունիքի հնատիպ կառուցների որոշ մասի գլխավոր ճակատներում: Հարդարման օբյեկտներ են հանդիսացել բացվածքները, պատշգամբներն ու նախամուտքերը, դարբասներն ու ծխանցքածածկ քարերը:

Հնատիպ կառուցների մեջ ամենից շատ ուշագրություն է գարձել բնակելի սենյակների հարդարմանը, ընդ որում պատերի զարդամասերն ավելի բիշ են եղել, քան առաստաղինը: Պատերի ամենահասարակ ձևն է անձակ կամ կիսաձակ քարերի շարվածքը առանց սվաղի: Այս տիպի պատերի մշակման միջոց է որմնախորշերի և բացվածքների սրբատաշ քարերով եղերումը, հաճախ նաև կամարակապ ձևավորումը: Պատերի միապաղպ հարթությունների մեջ հարդարանքային շեշտեր են նաև սվաղված կառուցամասերը և հատկապես սրբատաշ քարե բուխարիկները (նկ. 19, 20): Հնատիպ կառուցների բուխարիկներից առանձնապես ուշագրավ են Զանգեզուրի գլխատների և թաղակապ շինությունների բուխարիկները: Դրանք տարբեր տեղերում տարբեր աստիճանի մշակում են ստացել և ունեցել են սլաքածե կամ կիսաշրջանածե պսակող վերնամաւ: Տարածված են եղել քանդակագրությունները, որոնցից առանձնապես աշբի են ընկել ծխահավաք ելուսաներ ունեցողները: Երբեմն այս ծխահավաքը վերնամասերը բանդակագրով էլուսաներ ունեցողները: Երբեմն այս ծխահավաքը վերնամասերը բանդակագրով էլուսաներ ունեցողները: Գագաթային մասից գեպի ցած սովորաբար եղել են ճառագայթածե զարդակուսներ, նրանցից ցած՝ բուսական և երկրաշափական ձևերով կազմված գոտիներ (նկ. 53): Բուխարիկի ստորին մասում, նրա բացվածքի մեջ, քար ելուսաները հենարան են ժառայել երկաթածողերի համար, որոնց վրա գրվել է կաթսան: Այդուեղ, առջեց մի փոքր բարձրությամբ, քար թմբիկը խանգարել է մոլորի և կայծերի տարածվելուն: Խիստ բնորոշ է բուխարիկներով, նրանց կողքերին գտնվող պահարանախորշերով և նրանց վրա գտնվող լամբաքարերուի կազմված համագրվածքը (նկ. 13):

Տների սվաղած պատերի մեջ հարդարանքներ են հանդիսացել նաև պահարանափեղիքը, որոշ գեպերում նաև չածիկող որմնախորշերը: Վերջիններս ոչ միայն գտնվում են օգտագործելու տեսակետից հարմար տեղերում, այլև սենյակի ընդհանուր համագրվածքին ներդաշնակող գասավորություն ունեն: Մեղրու շրջանի բնակարաններում եղել են երկհարկանի որմնախորշեր, նոյնիսկ սիթմիկ շարքով գասավորված: Խիստ յուրօրինակ մշակում ունեն Շորսի Մելիքական տան որմնախորշերը, որոնց հարդարանքը կատարելագործելու համար մուտքի բացվածք ունեցող պատը ամրողովին սրբատաշ քարերով են շարել ի հակագրումն մնացած սվաղված պատերի: Որմնախորշերից շրջ երկուական գասավորվել են մուտքի աջ ու ձախ կողմերում, երկհարկանի են և պահավորված սլաքածե կամարներով: Կան նաև մի քան փոքր որմնախորշեր:



Նկ. 53. Բուխարիկ Հալիձորից



շթաքարասկով գագաթներով (Նկ. 23): Վերջիններիս վրա ներկերի հետքեր են նշամարվում:

Պատերի հարդարանքով աչքի են ընկնում Սևանա լճի ավազանի գոմի սենյակները (օդանիբուր): Դրանց սյուները համախ կազմվել են հաստ շրոսուներով և ձևավոր փոքրիկ խոյակներով: Սյունահեծանային ձևավորում են ունիցել խորքի ընդլայնական պատերը, որոնց կից են նստարանաթմբերը և որոնց միջնամասում է գտնվել պատի մեջ խորացող բուխարիկը: Փայտե սյունահեծանային այս զարդաձեր մեծ մասամբ փայտե դարակները պահելուն է ծառայել: Այդ դարակները համախ գեղեցկացվել են սղոցված զարդատախտակներով, որոնց վրա ցուցադրվել է տնային թանկարժեք սպասքը: Բուխարիկների վերնամասերն այստեղ պատի հարթությունից դուրս չեն եկել, մեծ մասամբ շարվել են սրբատաշ քարերով և ունիցել իրենց շափերին համապատասխանող փոքրիկ կամարձեկ կամ սլաքաձեկ վերնամաս, քանդակված մի քարի մեջ: Ստորին մասի ձևավորումն այստեղ նույնն է, ինչ վերոհիշյալ բուխարիկներինը: Օդանիբուրի ձևավորման ամբողջական նմուշներ չեն պահպանվել, բայց նրանց մասին պատկերացում են տալիս առանձին մնացորդները (Նկ. 15, 37ա):

Փայտի մշակումն ու դրվագումը շատ հին է իր պատմությամբ, այն նախորդում է մետաղների և անգամ քարի համապատասխան մշակմանը, քանի որ նրանցից վաղ սպասարկել է մարդկանց բազմազան կարիքներին: Սյունիի մասին այս մասին պատկերացումը նյութերը խոսում են այն մասին, որ մեր թվագրությունից հաջարամայակներ առաջ այնտեղ զարդացած է եղել զարդ-

արվեստը: Հնատիպ բնակարանների սակավաթիվ զարդամասերը նախապատմական ժամանակների համապատասխան նմուշների վերապրուկներն են անկասկած: Աշխատանքային գործիքից հետո տունն առաջին օրվեկտներից մեկն էր, որի նկատմամբ մարդը գեղարվեստական վերաբերմունք է ունեցել:

Գլխատների փայտե կառուցամասերի դրվագման լավագույն նմուշները գտնվել են Սևանա լճի ավաղանում, առավել շատ քանդակագրդվել են հազարաշեն ծածկերի մանրամասները երդիկի մասում չորսուներով կազմված քառակուսի շրջանակը սովորաբար օղակված է լինում շրջանաձև փորվածքով: Այս մասը երբեմն քանդակագրդվում է երկրաշափական պարզ ձևերով: Սուլիսիցյանի նկարագրած Կամոյի բնակելի տունն այս մասում ունեցել է տերևանման զարդափորկածքներ: Այդտեղից ցած, մի քանի գերանաշարքեր կամ հեծանաշարքեր երբեմն կազմված են եղել ուղղանկյուն կտրվածք ունեցող չորսուներով, որոնց շրջանակ կազմող ներքին մասերը քանդակագրդվել են երկրաշափական փորվածքներով: Ստորին գերաններն առջասարակ Սյունիքի



Նկ. 54. Գլխատուն Վարդենիկում

բնակավայրերում շեն փորագրազարդվել (նկ. 46, 48, 54)¹: Գլխատան ծածկի հատկապես այսպիսի փորագրազարդ տարրերակները սկզբունքային առնչություններ ունեն հայկական գավթիների, վանքային սեղանատների, գրադարանների և այլ շենքերի ծածկերի հետ²: Այստեղ հայ ճարտարապետները մեծ ջրմտությամբ կարողացել են օգտագործել վերին լույսի շիթը՝ ծածկի աստիճանաբար բարձրացող մասի հարդարանքը լավագույն ձևով ընկալելի գարճներու համար: Փանդակազարդումը հաջող կերպով ընդգծում է լույսի ու սույների ակնախտիդ համակցումները:

Հետաքրքիր մշակումներ ունեն կրող կառուցամասերը բոլոր հնատիպ կառուցաներում: Այստեղ էլ լավագույն նմուշները վերաբերում են հավաքաշներ ծածկերին: Գրվագվել են սյուների խարիսխները, բները, խոյակները, Սևանա յնի ավագանում՝ նաև հենակներն ու պահունակները:


Ամենապարզ սյուներն առանց խոյակի գերաններ են: Սյունիքի զլխատներին հատկանշական է ուղղանկյուն կտրվածքով՝ կազմնեփայտե հաստ սյունը, որի վերնամասն աստիճանաբար լայնացվելով դարձել է բոլորամեկ: Դրա անկյունները թթացվել են թեր տաշվածքով, որը մարվում է լայնացող մասում և վերշահում բոլորամեկ մասի տակ: Անկյունացին մասերի հենց այս վերին ծայրերում մի քանի հաշակով փորվածքներ հաճելի տեսք են տալիս այդ հաստաբուն սյուներին: Սյունների ծանր կերպարանքի ճնշիչ տպավորությունը մեղմացվել է նրանցից կախված իրերով, հատկապես քանդակապարդ ճարպակալներով (նկ. 13, 46): Այս սյունները քարե բարձր խարիսխներ չեն ունեցել, թեև դրվել են գետնի մեջ խորացած տափակ քարերի վրա: Վայոց ձորի գլխատներում սյունները մշակվել են ուղղանկյուն, մեծ մասամբ քառակուսի և ութանիստ կտրվածքով: Դրանց վրա հաճախ դրվել է խոյակ՝ գերանի ընդլայնական ուղղությամբ, որը ձևավորվել է մեծ մասամբ սղոցած փորվածքներով: Հետաքրքիր մշակում ունեն ութանիստ կտրվածքով սյունների այն նմուշները, որոնց վերնամասը նույնպես ութանիստ, բայց ավելի լայն կտրվածք ունի: Այդպիսով ստացվել է խոյականման, բայց ուղղաձիգ վերնամաս, որն օրգանապես չի անջատվել սյունից (նկ. 55, 46):

Սյունների քանդակապարդ խարիսխների նմուշներ եղել են Սևանա լճի ավագանում և հատկապես Վայոց ձորում (նկ. 23): Նրանց զուսպ հարդարանքը, քանդակներով շծանրաբեռնված մակերեսները, տարածական ձեւ ու համարդիվածքը լավագույն կերպով արտահայտում են ժողովրդական ճարտարապետության մեջ զարդի կիրառման նպատակահարմար մոտեցումը: Ճարդարանդակված վարդյակների ձեերը հանդիպում են Մեղրու շրջանի խոյակների վրա (նկ. 45):


Սյունների և կրող մանրամասների մշակումը առանձնապես մեծ խճամբով ու բազմազան կատարվել է Սևանա լճի ավագանի զլխատներում: Այստեղ դրանք ունեցել են բոլորամեկ, քառակուսի, ուղղանկյուն կամ բազմանիստ կտրվածք: Հաճախ դրանց վերնամասը լայնացվել է հաստ մեխերի օգնությամբ ամրացված փայտե ձեավոր վերադիմների միջոցով: Այստեղի սյունների մեծ մասի վրա խոյակներ են դրվել: Դրանք վերևությամբ ձգված փոսիկի կամ ականական ձգված փոսիկի

¹ Սևանա լճի ավագանում տոնախմբությունների ժամանակ առաստաղի սև գերանները սպասակ ծաղկաձև թերով են զարդարել, դրանք արվել են ձողի ժամբի ամրացրած ալրամբախ շրջով հարվածելու միջոցով:

² Տե՛ս C. X. Մհապականի, Արխիգետր արմանակի պատմությամբ, Երևան, 1952.



չ չ Շ Շ Շ Շ Շ Շ Շ Շ



1 0 1 2 3 4 5 6 7 8

նկ. 55. Գլխատուն Գետափում

ունեն գերանի համար, ներքեց ձևավոր փորվածքներ՝ կիսաշրջանաձև, աղեղնաձև, եռանկյունաձև, սղցանաձև և այլն: Այսնը հենվող թեքագիր հենակը ճակատային կողմից ունեցել է ուղղանկյուն, քառակուսի, բազմանիստ, ոռմբաձև, եռանկյունաձև, շրջանաձև, կիսաշրջանաձև ձվաձև, զսպանակաձև, սղցանաձև և գծիկավոր զարդարվածքներ: Շատ հազվագետ այս հենակների վրա դրվող փոքրիկ խոյակներն ունեցել են սեպաձև կամ աղեղնաձև մշակում: Հենակի վրա գրեթե հորիզոնական ուղղությամբ դրված պահունակի առաջ կարկառված մասը մշակվել է կլորացվելով և մի քանի փոսիկներով ու խազերով կազմված զարդաձևերով: Այդ ազատ ծայրի վրա բարձրացող երկրորդ հենակն ու պահունակը նույնպես մշակվել են հիշյալ զարդաձևերով (նկ. 46, 48, 54):

Իրենց յուրօրինակ մշակմամբ առանձնահատառուկ տեղ են դրավում Մելլոր քրցանի տների սյուները: Գրանք նույնպես անմշակ քարե ցածր խարիսխներ ունեն և տաշված ու քանդակված, մեծ մասամբ փորագրավարդ խոյակներ, դրված գերանի երկարությամբ: Այսների բունը մշակվել է բոլորաձև:

բառանկյուն կամ բազմանիստ կտրվածքով: Խոյակը գեպի վեր աննշան շափով լայնանում է: Լուսավորված կողմից այն զարդարված է փորվածքներով: Խոյակները երկու երեսից բանդակիվել են միայն այն գեպքում, երբ բավարար լուսավորություն է եղել երկու կողմի զարդարվածքները տեսնելու համար: Զարդածերը երկրաշափական են, մեծ մասամբ վարդակների ձևով. գրեթե բոլորի վրա կան հավերժության կամ խաչի նշաններ: Խոյակի վրա կառուցվածքի շինարարական արձանագրություն փորագրելը ընդհանրացած սովորություն է եղել (նկ. 45, 46դ, 46է): Նման փորագրապարզեր են եղել տնային կահույքի վրա:

Սյունիքի բաղաբացիական ճարտարապետության պատմության մեջ իրենց կարևոր տեղն ունեն Սևանա կղզու Աստվածածին եկեղեցու գավթում հայտնաբերված փայտակերտ, բանդակազարդ խոյակները, որոնք բազմից ուսումնասիրության առարկա են դարձել: Ուսումնասիրողները ենթադրում են, որ դրանք բերվել են ավելի հին պալատական շենքից և իրենց համարվածքով նման են հայկական ժողովրդական և մոնումենտալ ճարտարապետության մեջ հայտնի այլ նմուշների, թեև նրանց մակերեսների համատարած, խիստ բանդակազարդման երևությը այլ տեղ շնորհ հաւելիքում: Սյունիքի՝ մեջ հասած փայտակերտ խոյակների հետ դրանց համեմատումը ցույց է տարիս մի շաբթ ընդհանուր գծեր: Ամենից առաջ այդ ընդհանրությունը կայանում է նրանում, որ բանդակազարդված են խոյակների մեկական երեսները, ալիսինքն այն կողմերը, որոնք լուսավորված են եղել: Սյունիքի երկու խոյակների ընդհանուր համապատճեքային ընդհանրության հետ առկա է զարգածեների որոշ տարրերություն: Նույն ավելի շեշտված ձևով հանդիպում է Մեղրու շրջանի այն տներում, որտեղ մի սենյակի մեջ երկու սյուն է եղել: Վերջապես այս խոյակների վրա գրված ենթահեծանային վերագրին նմանվող կառուցածաս պահպանվել է Սևանա լճի ավագանում (նկ. 48դ):

Սևանի խոյակների թվագրման վերաբերյալ Ս. Մնացականյանի հայտնած կարծիքն ընդունելի է: Խոյակները 9—10-րդ դարերից ավելի վաղ կառուցված լինել չեն կարող: Հստ երեսութիւն գրանք բերված են եղել Սևանա լճի հարավարելան մասում գտնվող Մար գավառից, որտեղի փայտակերտ դաշինքների մասին մեծ հիացմունքով խոսում է Գրիգոր Մագիստրոսը, նրանց համեմատելի համարելով միայն մայրաքաղաքի (Անի) կառուցյաների հետ³: Խոյակների պերճությունը կարող էր համապատասխանել միայն այդ շինություններին, քանի որ Մագիստրոսը նշում է, որ նման այլ կառուցյաներ չի տեսել ոչ մի այլ տեղում, հետեւար և Սևանա կղզում կամ նրան մերձակա առափնյա վայրերում: Նրանց տեղափոխումը հետեւարար կարելի է ենթադրելը, որ տեղի է ունեցել ոչ միայն Սեղորու շրջանին:

³ Այդ մասին ուշագրավ վկայություն է տալիս Դ. Ալիշանը, նշելով, որ Սևանա կղզու ու Աստվածածին եկեղեցու գավթի փայտյա սյան վրա եղել է արձանագրություն վահապատկան շինքերի նորոգման, ինչպես նաև 1837 թվականին Նիկոլայ Պավլովիչ ցարի Հայաստան այցելելու մասին (Սիսական, էջ 86): Սա վկայում է այն մասին, որ արձանագրելը յուրահատուկ է եղել ոչ միայն Սեղորու շրջանին:

⁴ Տ. Իշմանւազ. Սևանские капители. „Труды Отдела истории культуры и искусства Востока.“, Гос. Эрмитаж, т. III, Ленинград, 1949; Յ. Մնացականյան ճարտարապետության Սյունիքի գրքուր, էջ 37—40:

⁵ Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 221:

դար): Թերեւս զրանց՝ Սևանա կղզում երեան գալը կապված է սելջուկների ավերումներից հետո Զաքարյանների կատարած Հայունաշեն գործերի հետ:

Սյունիքիք ժողովրդական ճարտարապետությունը նաև բազմաթիվ այլ յուրահատկություններով կապված է եղել մոնումենտալ ճարտարապետության հետ:

Հայաստանի բաղաբացիական ճարտարապետությունը հարուստ է եղել փայտածածկ գաջիմներով, որոնք ժողովրդական բնակելի տան զարգացած տարատեսակներն են Հանդիսացել իրենց որմնախորշերով, սյուներով և ծածկի այլ մանրամասներով։ Դրանց ամբողջ ճարտարապետությունը բխիլ է վերին լուսավորումը կազմակերպելու և նրան ենթարկելու խնդիրներից։ Այդպիսի կազմությունն են ունեցել անգամ եկեղեցական շենքերը։ Իրեկ օրինակ կարելի է նշել Դիբինի, Արուճի և Զվարթնոցի պալատական գաջիմները, 12-րդ դարում Միթթար հյուսն ճարտարապետի կառուցած Գոշավանքի փայտաշեն, առաջին «գեղակերտ» եկեղեցին⁶, Կարճկանի բազմագմբեթ ծածկով տունը, Կարինի բարավանատոնի⁷, Լինչի նկարագրած Վանի եկեղեցիները⁸, Քարուլի Հայոց եկեղեցին⁹, Սոֆիայի առաջին Հայ եկեղեցին¹⁰ և այլն։ Բայց ցայս կարգի շենքերի մեջ, ինչպես նշվեց, ամենից ավելի հոյակապ են եղել Սյունիաց Շար զավաորի փայտակերտ եկեղեցիներն ու գաջիմները։

Մեղրու շրջանի խոյակները զարդաձեկերով չեն ծանրաբեռնված, ինչ որ նպաստում է կառուցվածքի աշխատանքը բացահայտելուն։ Հիշյալ խոյակները շատ նման են վաղ միջնադարի պալատական շենքերի բարե խոյակներին, որոնք նույնպես իրենց համարվածքով և միակողմանի բանդակաղարդմանը կրկնում են ժողովրդական ճարտարապետության մեջ տարածված սկզբունքը։

Պալատական գաջիմների թվին պետք է դասել նաև Հորսի Մելիքական տունը։ Նրա մուռթի և գաջիմն մեծությունը, դռան պարակալի կառույցան խնամքը, որբատաշ քարե, կրկնահարկ և շթաբարավոր որմնախորշերը, սյուների բանդակաղարդ խարիսխները, արտասովոր չափերի բեմահարթակը կովաններ են Հանդիսանում ժողովրդական բնակելի տնից գեպի մոնումենտալ շենքերն անցնող հատկանիշներն ի հայտ բերելու համար։ Քարակերտ սյունախարիսխների վարդակները հանդիպում են ժողովրդական կառուցվածքի (խոյակներ) և միջնադարյան Սյունիքի մոնումենտալ շենքերի վրա։ Վերջիններին բնորոշ են նաև շթաբարավոր որմնախորշերը։ Ուշագրավ է նաև, որ այս տան երկրորդական նշանակություն ունեցող սյուների պահպանված նմուշները 19-րդ դարի գիտատեսների սյուների ձևն ունեն՝ բնի ութանիստ կտրվածքով և փոքր ինչ լայն, երկարավուն խոյակով։ Բազմանիստ կտրվածքով, բայց քարաշեն սյուներ է ունեցել վաղ բրիստոնիական շրջանին պատկանող Սյունիքի տաճարներից Թանահատի (Սիսիանի շրջան) միանալ բազմւայի

⁶ Ս. Բարխուդարյան, Միջնադարյան Հայ ճարտարապետներ և քարագործ փարպետներ, էջ 43։

⁷ Վ. Հարությունյան, Դիլինի 5—7-րդ դդ. ճառատարապետական հուշարձաններ, Երևան, 1950, էջ 74։

⁸ Խ. Փ. Լինչ, Արմենիա, տոմ I, Տիֆլոս, 1910, էքր. 130—131.

⁹ Բաֆֆի, Հայերը քարուլի մեջ, «Երկերի ժողովածու», Հա. 10, Երևան, 1967, էջ 22։

¹⁰ Ս. Փաշանիան, Նյութեր Բուլղարիո Հայ զաղութի պատմութենեն, «Էջմիածին», 1963, № 4, էջ 48։

սյունաբահը: Ժողովրդական տան գեղի վեր լայնացող սյան ձեփ կրկնությունը կա նաև Մարտունու շրջանի վերին Գյուղակարա կոչվող այժմ ավերակ գյուղի սաւածածկ եկեղեցում¹¹:

Մոնումենտալ Վիմափոր կառուցյաների մեջ ժողովրդական ճարտարապետության հետ սերտ առնցությունը ունեցող գահին-սենյակի սկզբունքով մի հուշարձան է եղել Գեղարդաձորում, որը պեղել է թ. Թորամանյանը: Այն կառուցվել է 13-րդ դարում, ուստի ժամանակակից է վերոհիշյալ ժայռափոր մոնումենտալ շենքերին և նույնպես պատկանում է Սյունիքի ճարտարապետական դպրոցին, քանի որ արգասիքն է Սյունյաց Պոռշ իշխանի շինարարական գործունեությանը: Այս հուշարձանի պեղմանը նվիրված հոգիածում թ. Թորամանյանը նկարագրելով շենքի ճարտարապետական հարդարման կատարելությունը, տալիս է մի քանի նրբակերտ մանրամասների՝ Տարագրոսի կատարած չափարկությունները, որոնց թվում ժարավային պատի որմանախորշի գծափերը¹²: Ուշագրավ է որմանխորշի շթափարավոր գագաթը, ինչպես նաև պատերի, հատկապես շթափարերի գոնազարդման հետեւը (կարմիր ու դեղին), հատկանիշներ, որոնք առկա են նաև Վայոց ձորի Հորս գյուղի Մելիքական տանը: Ֆայուափոր բաղադրացիական շենքերի մեջ թերևս հրաշազան կոթողներ էին Կամոյի ֆայուարլի սենյակները:





Հնատիպ բնակելի համակառուցյաներում, ինչպես նշվեց, հարդարման տեսակետից երկրորդական պլանի վրա են գտնվում արտաքին մանրամասները, որոնց մեջ ամենից ավելի աշքի են ընկնում պատշգամբներն ու նախամուտքերը: Վերշիններս գտնվում են բնակելի համակառուցյի մուտքի առաջ և մեծ մասամբ զրագեցնում են ամբողջ ճակատային մասը, պարագակելով շենքի կողքերից գուրս եկող պատերի մեջ: Եղել են նաև պատշգամբ-նախամուտքերի այլ գասավորություններ, որոնք բացառություններ են հանդիսացել: Նրանք առաջացել են տեղի նեղվածքի, տեղանքի բարդության և ձգված, երկար ճակատների գեպքերում:

Նախամուտքերի և պատշգամբների պարզագույն ձեփ մասին խոսվեց վերևում: Մրանց հարդարանքային նշանակությունը մեծանում, ընդգծվում է թեր տեղանքի պայմաններում, երբ ստացվում է շինությունների բազմահարկ համագրվածք, թե առանձին շենքում և թե աստիճանաձև դասավորված ամբողջ բնակալիքը բարձրացնում է: Առավել գեղեցիկ համարդիվածքներ են կամարակապ նախամուտքի վրա պատշգամբ ունեցող կառուցյանը (նկ. 41, 56):

Պատշգամբների սյունահեծանային կառուցվածքի հարդարման ամենաառաջարանակակ են զարդերը: Հնատիպ կառուցյաներում դրանք գենու շատ սահմանափակ են եղել փայտամշակության նախանական մակարդակի վրա գտնվելու պատճառով: Սյունիքի բարդ մշակումները, նուրբ սղոցված զարդերը երեան են եղել բաղաբային ճարտարապետության ազգեցությամբ: Սյունիքը մշակելին լավագույն դեպքում գերանը տաշում էին քառակուսի կտրվածքով, անկյունային մասերը թեր կտրելով բազրիքից մինչև վերին ծայրից փոքր ինչ ցածր: Խոյակներ մեծ մասամբ դրվել են հորիզոնական մասի կլոր գերան լինելու դեպքում, վերշինիս կայունացման համար: Հեծանը ուղղանկյուն

11 Ս. Խ. Մեծագալանյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի գպրոցը, էջ 141:

12 Թ. Թորամանյան, Գեղարդաձորի մեջ կատարած պեղմաների տեղեկագիրը, «Հեծանկություններ», Հա 1-ին, Երևան, 1935, էջ 134—141:



! ՀԱՐԳԻ ՄԹԱՍԱՐ

■ ՀԱՐԿԻ ՀԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ

Նկ. 56. Բնակելի տուն Շվանիձորում

զարվածքով լինելու դեպքում խոյակի փոխարեն սղոցված զարդատախտակներ են գրվել այնպես, որ կրող տարրի պատրանք ստեղծեն: Պատշգամբի ընկայութեական ուղղությամբ զցված ծածկագերանների ճակատային կողմում հեծանից տուաչ կող մասերը մշակվել են զանազան ոչ բարդ ձևերով, իսկ գրանց միջի ընկած ազատ տարածությունները փակվել են սղոցված հեծանի կտորներով: Բազմիքները առավելապես հատկանշական են երկրորդ հարկերին, գրանց մշակումները նույնպես կատարվել են քաղաքատիպ շենքերի ազգեցությամբ: Որոշ ուշագրություն է դարձվել Զանգեղուրի պատշգամբների բուխարիկների ձևավորման վրա (նկ. 53):

Կամարակապ նախամուտքերն ունեցել են թիվ զարդամասեր: Անմշակ կամ կիսամշակ քարերով կազմված պատերի հարթության մեջ սրբատաշ քարերով շարված են կամարներն ինքնըստինբյան գեղեցիկ համարդրվածք են ստեղծում: Միգուցե տրամատափորման անհրաժեշտություն լիներ պատերը ևս սրբատաշ քարից լինելու դեպքում, ինչ որ շատ սակավ է եղել: Զարդամասեր են հասարակ անշատոցները, որոնց վրա հանգչում են կամարները, ինչպես նաև կարճ սյուները: Բացվածքների կառուցվածքային պարզ ձևերը սրբատաշ քարե կառուցմասերի մերկ ցուցագրումներ են, որտեղ հարդարանքային միջոցառումներ կարելի է համարել կամարակալ քարերի և ուղիղ քարավորների վրա կատարված արձանագրությունները, անշատոցները և առանձին մասերի իրար նկատմամբ ունեցած համամասնությունները: Թերեւս այս տեսակետից բացառություն են կազմել պալատական շենքերը, որոնցից մեկն է Հորսի Մելիքական տան գուռը: Այդ գուան կամարակապ մասը թեև այժմ չկա, բայց տրամատավոր պարակալի մնացորդները վկայում են նրա զարդագրուման մասին: Ավելի շատ ուշագրություն է դարձվել դարպասների ձևավորմանը, այստեղ արդեն ավելորդ չեն համարվել տարամատափոր պարականներն ու անշատոցները, քիվերն ու մակագրությունները, ինչպես նաև այլ զարդամասեր:

Ոչ բնակելի շենքերի հնատիպ կառուցների հարդարանքը շատ քիչ է հանդես գալիս: Այն սահմանափակվել է սովորաբար սյունահեծանային համակարգերի դրվագմամբ և կառուցմասերի նպատակահարմար դասավարությամբ ու շափերով: Այս տեսակետից ուշագրության են արժանի հատկապես Մելլու հնաձանները, որոնց սյուններն իրենց խոյակներով հանդերձ դրվագված են հար և նման բնակելի տների սյուններին: Խոյակների վրա նույնիսկ եղն են շինարարական արձանագրություններ (նկ. 45 ժա—ժե, 46է):

« Ժողովրդական ճարտարապետության մեջ հատուկ ուշագրության է արժանացած գուների զարդարումը Ամենահասարակ հնատիպ կառուցներում անգամ կարելի է հանդիպել տան արտաքին դռան զարդերի տարրեր: Ինչպես նշվեց, դռներն առջասարակ հաստ, լայն տախտակներից կազմված փեղկեր են եղել: Եղել են գոներ, որոնք նույնիսկ մեկ լայն կամ երկու տախտակից են ուստրաստել: Զափազանց սակավ են եղել շրջանակի մեջ առնված փեղկերով կազմված գոները, որոնք հնում հավանաբար միայն մոնումենտալ շենքերի համար են օգտագործել: Վերջին երկու դարերում քաղաքային ճարտարապետության աղջեցությամբ հատուկինտ այդպիսի դռներ գլուզական կենցաղ հն մուտք գործել և դրվել են հնատիպ համակառուցների քաղաքատիպ սենյակների բացվածքներում: Հնուց սովորություն է եղել փորագրել տախտակները միացնող փայտե գոտիները (նկ. 25): Երկինքի դռների միացման

Ճեղքը փակող ուղղաձիգ փայտը նույնպես փորագրվել է երկրաշափական զարդածերով, նույն զարդերով են ծածկվել նաև փայտյա դռների երկաթե մասերը (բռնակներ, օղակներ, թակաղակներ և այլն) (նկ. 42): Այդպիսի դռներ կառուցող հյուները կատարել են նաև ավելի բարդ աշխատանքներ: Այս տեսակետից առանձնապես նշանավոր են եկեղեցական շենքերի ամրակուռ, զարդարուն դռները, որոնց դրվագման երկու եղանակ է եղել, երկուսն էլ երկրաշափական զարդածերով: Համեմատաբար պարզ են եղել փոքր, բարակ փայտիկներով դռան փեղկի վրա մեխերով ամրացրած զարդածերը և անհամեմատ ավելի նույր և բարդ՝ կարծր փայտի վրա փորագրածները: Իրեւ առաջին դեպքի նմուշ կարելի է հիշել Մելրու 17-րդ դարի եկեղեցու դռու և երկրորդի՝ Սևանա կղզու Առաքելոց եկեղեցու դռները: Այդ ավանդույթը պահպանվել է ժողովրդական ճարտարապետության մեջ (նկ. 40):

Բ) ՔԱՂԱՔԱՏԻՊ ՇԵՆՔԵՐ


Քաղաքատիպ շենքերի հարդարման գլխավոր առանձնահատկությունը ձականական և արտաքին համադրվածքի ձևավորման ավելի մեծ տեսակաբար կշիռն է ներքին տարածությունների ձևավորման նկատմամբ: Գեղարվեստական մոտեցումն ի հայտ է բերվել նաև շենքերի տեղադրման ժամանակ: Համալիրային գեղագիտության հարցերը որոշակի գրսկորում են գտնում հատկապես քաղաքային ճարտարապետության մեջ:

Ուղիղ փողոցների դեպքում առաջնակարգ նշանակություն է ստանում առանձին տների ձականական ձևավորումը: Փողոցի ձականական ձևավորումը Սլունիթի համար նոր երևույթ էր, 19-րդ դարի երկրորդ կեսի քաղաքաստեղծման աշխատանքների հետ կապված: Պատշգամբավոր ձականի ավանդույթը պահպանում էր իր նշանակությունը նաև նոր պայմաններում առանձնապես պատշգամբների ձևավորման մեջ (նկ. 5, 8, 28—30, 57, 58, 60):

Գյուղերում կառուցվում են այնպիսի քաղաքատիպ շենքեր, որոնց մանրամասների որակն ու տեսքը չեն զիշում քաղաքային շենքերին:

Բայց տարբերություններ կան քաղաքային շենքերի և գյուղական քաղաքատիպ շենքերի հարդարման միջև: Քաղաքներում սրբատաշ քարի կիրառումն ավելի շատ է: Ակնառու են տաշված քարի ձևավոր կառուցամասները, փայտի մշակման ավելի քարձոր տեխնիկան ու արվեստը, լնդհանուր համադրվածքին լուծումները և այլն: Գյուղական շենքերի լնդհանուր հորինվածքը և անգամ ողջ բնակավայրը համապատասխանեցված է շրջապատի լեռնային բնությանն իրեւ կապող տարր ունենալով մեծ մասամբ ձականական պատշգամբները, մինչեն քաղաքում շենքությունները լուծված են ավելի շատ մոտիկ տարածությունից գիտելու համար: Իրար հաջորդող զանազանակերպ լուծված շենքերի ձավալները, ցանկապատերն ու զարպասները ստեղծել են գիտելու համար շատ հաճելի համալիրներ, ընդ որում Գորիսում այդ հաջորդականությունը ոիթմիկ, կանոնական բնույթ է կրում, մինչդեռ Կամոյում անհամեմատ ավելի ազատ է: Անշուշա այս տարբերությունների մեջ մեծ դեր է խաղացել մասնագիտական ստեղծագործությունը, կանոնականություն մտցնելով քաղաքների ընդհանուր կառուցապատման մեջ:

Գյուղի և քաղաքի կառուցապատման որոշ տարբերության կողքին նկատելի են ավանդույթներով պայմանավորված խոր լնդհանրություններ,




Նկ. 57. Բնակելի տուն Կամոյում

մասավանդ ցանկապատերի ու դարպասների միջոցով փողոցները եզերելու առումով (նկ. 29, 30):

Քաղաքներում բակային պատշգամբների փողոցից հեռու պահելու կանոնը փողոցների ճակատները գեղարվեստական լուծումից չի զրկել: Ծավալային աշխուժություն են մտցրել բարձակավոր պատշգամբները, հարթությունները դարձել են պլաստիկ՝ շնորհիվ գոտիների, քիվերի, պարակալիների, որմնայունների և այլ ճարտարապետական միջոցների զանազան համակցումների: Ուշագրավ է, որ ստորին հարկում բացվածքները գ. եթե միշտ փոքր են և հաճախ քանակով պակաս քան վերին հարկում, բայց իրենց ոիթմով խստորեն համապատասխանեցված են վերին շարքին:


Գորիս քաղաքում համալիրային հարգարանների գեր են կատարել նաև կանաչ տարածությունները թաղամասերի ներսում, փողոցների եզերելում, քաղաքային այգում և բնակավայրի շրջակայթում՝ ձորում և լանջերի վրա (նկ. 8): Կամոն այս տեսակի տիպը ավելի ազգային է եղել նախ կլիմայի խստության և ապա նրա կառուցապատման որոշ տարերայնության ու խտության պատճառով: Այնուամենային եղել են ծառազարդ բակեր: Յուրօրինակ երանգ ունեն Մեղրին ու Կարձեանը, որոնք թեև քաղաքներ չեն եղել, բայց ունեցել են քաղաքատիպ շենքեր՝ շափազանց ինքնատիպ ճարտարապետությամբ: Այստեղի բնակիչները սիրում են իրենց բնակաբանի զանազան մասերն ստվերավորել և զարդարել բույսերով, վաղուց հետեւ բացի ծաղիկներից կենցաղ են մուտք



1 0 2 3 4 5 6



1 2 3 4 5 6 7 8 9 10



1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45 46 47 48 49 50 51 52 53 54 55 56 57 58 59 60 61 62 63 64 65 66 67 68 69 70 71 72 73 74 75 76 77 78 79 80 81 82 83 84 85 86 87 88 89 90 91 92 93 94 95 96 97 98 99 100

Կ. 53. Բնակելի տուն Կամոյին

գործել մերձարևագարձային մշակութիներ, մանավանդ որթատունկը, որ մաղլցում է ամեն տեղ, զարդարելով ճակատները, ցանկապատերը, բակերը, պատշաճմբները և անգամ փողոցները:

Քաղաքներում ըստ երեսչին յուրահասուկ երանդ են ճակորդել փողոցների լապտերները, որոնք այժմ փոխարինված են էլեկտրական լուսավորությամբ: Քաղաքատիպ շենքերի հարդարանքի տեսակետից խիստ լուսավորինակ և շափականց ինքնատիպ են Գորիսի բնակելի տները: Գրանց պատերի մշակումը բավականաշատի նուրբ ճաշակով ճամապատասխաննեցվել է որդարաբին, որը գրեթե միակ շինաքարն է բնակավայրում: Նկատի ունենալով նրա մշակման գծվարությունը՝ շենքերի փողոցի կողմից ճակատները բացառիկ դեպքերում են ամբողջովին սրբատաշ քարով կառուցվել (նկ. 8, 29, 30): Այստեղ ամենալայն կիրառում է գտնել նուրբ մշակված քարե կառուցամասերի զուգորդումը ճեղքված քարաբեկորներով շարված պատի ճարթությունների հետ: Ծենքերի ու նրանց բացվածքների եզրերի հարթ, սրբատաշ քարերն ու պատի ճարթությունից գուրս եկող քարե, ճաճախ նրբորեն տրամատավորված գոտիները, պարականները, պատուհանապատկներն ու բիվերը ոչ միայն կառուցածքաբային նշանակություն ունեն, այլև դարերի քննություն բռնած միջոցներ են ճակատների հարդարման ճամար: Ճեղքված քարերով շարված մասերում պահպանված է պատերի շարվածքի անկանոն կազմվածքը՝ ճարթեցված և կոկված շաղախի կարաններով:

Ցանկապատերի ճարթությունների մեջ իրենց ճարտարապետական մշակմամբ ընդգծված են զարպասները: Ի ճակադրություն աղեղնաձև կամ ուղիղ բարավորներ ունեցող լուսամուտների, դրանք ունեն ավանդական կիսաշրջանաձև բարավորներ: Սրբատաշ քարերով կազմված կամարն ինքնին գեղեցիկ է ցանկապատի միօրինակ ճարթության մեջ: Այս միջոցը լավ ճայտնի է եկել Զանգեզուրի որմանպիր վարպետներին զեռ շատ վաղոց, այն Հանգսի է եկել անգամ գյուղական բնակավայրերում: Գորիսում կան նաև զարպասներ, որոնք ունեն պատի մնացած մասերից որմանայուներով անջատված ճարթություններ: Համագրվածքի տեսակետից այս զարպասները կամ շեշտ են կապված սրբատաշ քարե գոտիներով ու քիվերով: Կամարների վրա ուղղանկյուն շրջանակի մեջ երեւն շինարարական արձանագրություն է փորագրվել:

Ի տարբերություն այլ բնակավայրերի Գորիսի բակային պատշաճմբները շատ զուսակ են մշակված, նկատի ունենալով նրանց մեկուսացվածությունը փողոցից: Այս կողմից ճակատների հարդարանքային տարբերը նույնն են, ինչ փողոցի ճակատներինը, միայն թե շատ ավելի պարզ մշակմամբ:

Գորիս քաղաքի բնակելի տների ճարդարման սկզբունքային մի շարք գծեր կարելի է հանդիպել շրջակա գյուղերում, նույնիսկ ամբողջ Զանգեզուրում: Աղեղնաձև բարավորներ, տրամատավոր քիվեր, գոտիներ, մշակված և անմշակ քարե մասերով ճակատներ, կամարակապ զարպասներ և այն կազմում են ճակատների ձեւագործան քաղաքային ձևերը: Գրանցից շատերը անշուշտ միայն քաղաքի աղղեցության հետեանը չեն, այլ հնոյա եկող ավանդույթների: Նշված շենքերը, այնուամենայնիվ, չունեն քաղաքայիններին ճատուկ զուխությունը: Այստեղ շենքի գրեթե ամեն մի տարր գործնական նշանակություն ունի:

Փողոցի և բակի ճակատների մշակման բեկսային ճակադրություն զոյլություն ունի նաև կամոյի բնակելի տներում: Այստեղ ճարդարման խնամքի

տեսակետից գժվար է գերազանցություն տալ ճակատներից որևէ մեկին, որովհետև բոլոր պատշգամբները մեծ մասամբ մշակված են բժախնդիր նրբությամբ ու շրեցությամբ: Փողոցները եղերված են տների հարթ ճակատներով, որոնք ունեն սվաղի և մշակված քարե հարթությունների, գոտիների, թիվերի, ջրհորդանների, պարականների և անկյունաքարերի միջոցով ստեղծված ճաշակավոր համադրվածքներ լուսամուտների սիթմիկ դասավորությամբ, շլատվածքների համելի համամասնություններով և զուսպ մանրամասներով: Նշանակալից երևութ է հարդարանքային տարրերին քանդակների զուգակցումը, որն անշուշա հանդես է եղել ուներդների տներում: Սլացիկ համաշափություններ ունեցող պատուհանների սիթմիկ շարքը պատկող գոտիները, պարականները խմատ յուրօրինակ երանդ հաղորդել փողոցի ճարտարապետությանը (նկ. 5, 28, 57, 58):

Ենքերի միջակա տարածությունները փակված են հասարակ պարիսպներով, իսկ դարձանական գորիսի դարպասների մշակվածությունը շունեն: Դրանցից լավագույնը իրեւ քարագործության ճաշակավոր արտադրանք ներկայացված է նկ. 59-ում, այսուղե ուշագրավին այն է, որ նուրբ և յուրօրինակ մշակված սյուների վրա հանգուղ պարզ տրամատով կամարը հարդարանքային նշանակություն ունենալով հանդերձ, պարփակում ու կայունացնում է շարվածքը:

Փողոցի ճարտարապետությունն աշխուժացնող կառուցցներից է նաև նկ. 59-ում ներկայացված խանութի գուռը, որի և՛ փայտե, և՛ քարե մասերը խնամքով կառուցված մի ամբողջական գործ են ներկայացնում: Շթաքարանման քանդակներն այսուղե կամարին հարմարեցված են ճաշակով:

Քաղաքի ձևավորման մեջ իր ուրուցն տեղն է ունեցել նկ. 7-ում ներկայացված եկամտարեր տոռնը (այժմ քանդված), որը յուրահատուկ է իր քանդակագրութմամբ և քաղաքի կառուցապատման մեջ առանձնացել է թե՛ համագրվածքներով և թե՛ դիրքով: Շուկայի հրապարակին կից այդ տոռն իր համապատասխան կառուցվածքով և ընդհանուր համադրվածքով բացառիկ տեղ է գրավել: Մտորին հարկը սրբատաշ քարից է ոչ միայն ամրության, այլև հարդարանքային գեր կատարելու համար: Կամարակապ բացվածքներն ու գրանց մեջ գտնվող պատկերագանդակները լիովին համապատասխանել են գավառական քաղաքի կենցաղին: Բնակելի հարկը, չնայած հողաշեն, կավածեփ պատերին, մեծ ու փոքր լուսամուտների սիթմիկ շարքով ստորին հարկի հետ համադրվածքն միասնություն է կազմել: Լինելով անկյունային շենք՝ մշակվել է երկու ճակատներով: Փոքր ճակատը գտնվում է մեծի հետ ուժական միասնության մեջ, որին նպաստել է ոչ միայն շինանյութերի մշակման տեխնիկայի պահպանումը, այլև քարե հորիզոնական գոտին և նրանից վեր տեղափորված քանդակների միասնական շարքը: Ուշագրավ է այն, որ քանդակների թեմատիկան տարբեր է երկու ճակատներում: Գլխավորի վրա մարդիկ ու կենդանիներ են քանդակված, մինչեւ կողքինում քանդակները ունավորված բուսական ձևեր ունեն: Բակային կողմից եղել են ճետագայում կցված շենքեր, հավանաբար այստեղ եղել է փայտե պատշգամբ, որտեղով և հաղորդակցել են հարկերն իրար հետ (մեր շափագրման ժամանակ փայտե աստիճաններ կային, ամփոփված շենքին կպցրած մի անկանոն աստիճանավանդակի մեջ): Այս շենքն ավելի քան հարյուր երեսուն տարվա հնություն է և քաղաքի առաջին կառուցցներից մեկը, ուստի և ամենից ավելի է արտացոլում հին բայազետցիների շինարարական պալանգությունը:

Նոր բայեզդցիք զգալի նվաճումների են հասել նաև պատշգամբավոր ձակատների մշակման գործում: Ձակատներում պատի մշակման վրա քը ուղարկություն է դարձված, որի շնորհիվ, պարզ, չծանրաբեռնված ֆոնի վրա պատշգամբների շքեղությունն ավելի է ընդգծված: Պատշգամբավոր ձակատները մյուսների համեմատությամբ ձարտարապետական տեսակետից տառաջնային նշանակություն են ստացել այն գեպօւմ, երբ շենքը փողոցից հեռու է գտնվել: Այդ հանգամանքը ավելի շեշտված ձևով արտահայտվել է քաղաքի ազգեցությամբ գյուղերում կառուցված քաղաքատիպ շենքերում: Պատշգամբի և նրա առջև գտնվող բակի կենցաղային նշանակությունը վճռական գործուն է հանդիսացել զիսխավոր հակատի այգափսի մեկնաբանման և ձևավորման համար, որի ժամանակ զգալի նշանակություն է ունեցել շենքի բացվածքները համարից մեկուսացնելու ավանդությը (նկ. 28, 57):

Կամոյի պատշգամբները սովորաբար կցված են եղել շենքին՝ ծածկելով ամբողջ ձակատը, կամ շենքի կառուցածաներով՝ կազմված անկյունային խորությունը դրակելով և կամ ուղիղ ձակատի կենտրոնական մասում համապատասխան տարրեալույթուն, դրաղնեցնելու: Պատշգամբի զարդարությունը տեսակետից բոլոր գեպերում կիրառվել է ընդհանուր համակարգ, բայց հարդարանքի կրկնություն երբեք չի եղել: Զարդարվել են ոչ միայն կառուցվածքային, այլև քողարկող և հարդարանքային նշանակություն ունեցող մասերը: Ի տարբերություն այլ քրշանների (օրինակ Մեղրու) պատշգամբների բարդիքները շատ պարզ են, կառուցվածքն արտահայտված է բացարձակ մերկությամբ: Սյուներն ունեն քառակուսի կտրվածք, միակ հարդարանքը նրանց անկյունային տաշվածքներն են բաղրիքից մինչև զարդացանցերը, որոնց տակ սովորաբար դրվել են իրեն հենարան ծառայող խոյակածն վերադիրներ: Հաղվագեպ սյուններն ունեցել են շրջանաձև կտրվածք, զարդացանցերը դրվել են սյունների միջև, նրանց վերին մասում, կրող հեծանի տակ: Հեծանի վրա ընդլայնական ուղղությամբ գցված կարճ հածանների առաջ կարկառված ծայրերը շրջարկվելու գեպօւմ պահունակաձև մշակում են ստացել՝ համապատասխան տրամատով: Երբեմն զարդեր են ամբացրել և ակատայի հեծանի վրա, ինչպես նաև սյան վերնամասում (խոյակից վեր): Բնդլայնական հեծանաշարիք վեր եղել են կտորի եկրաբարերը և երբեմն նաև բարե քիվը պահող հեծանը: Համախ ընդլայնական հեծանաշարը և անգամ հակատային հեծանը քողարկվել են զարդարված տախտակներով և զարդացանցեր կազմող այլ փայտերով: Կան գեպեր, երբ պատշգամբներն այսպիսի զարդամասեր ունենալով հանդիքը ապակեպատվել են ուղղանկյուն մակերեսների բաժանված վանդակներով: Պատշգամբը երկի արկանի լինելու գեպօւմ առաջին հարկը գրիթե շեն զարդարել, նկատի ունենալով նախ գեղարվեստական կողմը, ապա նաև նրա տնտեսական նպատակների հատկացվելու պարագան:

Թիթեղապատ կտորները և աղյուս ծխնելուցները քաղաքում հանդես են եկել շատ ուշ:

Հիշյալ քաղաքատիպ տների ներքին տարածությունները հարդարանքներ չունեն, բայց կառուցածաներն ու մակերեսները մշակված են բավականաշափ խնամքով: Ըստ երկությին ներքին ձևավորման հիմնական շեշտը դրվել է կահավորման վրա, ճիշտ այնպես, ինչպես ընդունված է մեր ժամանակի կենցաղում:


Իր հարդարանքային միջոցներով ուրույն տեղ է գրավում Մեղրու

շրջանի տաք գոտին, Հատկապես Մեղրին: Սանդղածե ու խիտ կառուցապատումը այստեղ խորապես անդրադարձէլ է նաև Հարդարման վրա: Տեղանքի նեղվածքը, ճանապարհների և անցուղիների բեկրեկումները նպաստել են, որ ամեն մի տուն ստանա ոչ միայն յուրօքինակ Հատակածե, այլև ծավալալին համադրվածք, որից են լուզ հարդարումն էլ մեծ մասամբ կատարվել է յուրովի: Այդ է պատճառը, որ յուրաքանչյուր տուն դիտվել է առանձին և անդրդին, ընթանալով նեղիկ փողոցներով, նորանոր ճարտարապետական լուծումների է հանդիպել: Փողոցների եղբերին կարելի է նկատել ցանկապատերի ու պատերի խուլ զանգվածներ, որոնք աշխուժացված են երկրորդ հարկերի բացվածքներով, մերթ պահունակային պատշգամբներով, մերթ կամբչածե սենյակներով, մերթ դարպաններով ու ցանկապատերի վրայով գուրս կախված որթատունկերով: Այստեղ էլ գլխավոր ճակատները պատշգամբբավոր են եղել և ուղղված գեպի բակ, որը հաճախ իրենից ներկայացրել է հարկանի տան կտորը: Այդ ճակատները երբեմն գեպի ձորամիջան տեսարաններն են ուղղվել՝ մեծ թեքությունների վրա կախված իրենց պատշգամբներով:


Մեղրու շրջանի շենքերի ճակատների հարդարման համար վճռական նշանակություն է ունեցել տաշվող ու հղվածող քարի բացակայությունը: Կավածեփի, երբեմն միայն ալեբասարով սվաղած ճակատները բնականաբար չեն կարող քարի նման գարդարելու հնարավորություններ ընծայել: Այդ պատճառով հարդարման շեշտը դրվել է ընդհանուր ծավալային լուծման և մանավանդ փայտամասերի դրագման վրա (նկ. 10, 27, 60):



Պատշգամբների զարդարման մեջ նույնպես առկա է եղել բազմազանություն: Ապահեպատ պատշգամբներ բոլորովին շեն եղել: Զարդամասներ նույն նաև սյունաշարերի վերին մասերում ու բազրիների վրա: Կարելի է ասել, որ այստեղ հարդարման զինավոր շեշտը դրվել է բազրիքի վրա: Հնուց ևեթ տարածված է եղել բազրիները ցանցկեն եղանակով կառուցելու սովորությունը: Զարդացանցը կազմվել է իրար կից, ուղղածիկ զիրքով շարված տախտակներով, որոնք սղոցված են եղել ամենատարբեր զարդառներով: Տարածված են եղել նաև բազրիքածողերի և սյուների պատվող սարքի վրա պատրաստված տեսակները: Բազրիքների հարթություններն աշքի են ընկնում իրենց թեթեռությամբ և մեծ մասամբ, մշակման սիմետրիայով՝ հորիզոնական և ռողղածիկ առանցքների նկատմամբ (նկ. 52): Պտտման միջոցով տաշված գեպի վեր նեղացող կլոր սյուները փոքրիկ խոյակներ ունեն: Այլ զարդամասներ այդպիսի պատշգամբներում բացառիկ գեպերում են եղել: Ենքերի դլամփոր ճակատներում, Հատկապես պատշգամբների մեջ բացվածքները շրջանակվել են ալեբասարեր սվաղով կազմված պարականերով, պսակներով և զոտիներով (նկ. 27, 60):

Մեղրու շրջանի ժողովրդական ճարտարապետությունն աշքի է ընկնում նաև ներքին տարածությունների մշակմամբ: Բնակելի սենյակներն ունեցել են տարբեր նպատակների ծառայող որմնախորշեր և ձևավոր բուխարիկներ (նկ. 27): Հատակները կամ հողից են եղել կամ հասարակ տախտակամածով: Հյուրասենյակը մեծ է եղել մյուս սենյակներից, բացվածքներով՝ ավելի հարուստ: Նրա բուխարիկն ավելի ճոխ է հարդարվել և աշքի է ընկել իր սիմետրիկ կառուցվածքով ու դասավորությամբ: Հյուրասենյակի պատերը երբեմն ջատվել են գեղեցիկ համամասնություններ ունեցող ուղղանկյուն հատվածների կամ խորշերի: Իրար վրա դասավորված մեծ և փոքր խորշերով





İsl. 59. Qaraqulan hə kamianlı türbəninin





1 2 4 6 8 10 11



II I II III

1 2 3 4 5 6 7 8 9 10 11

Նկ. 60. Բնակելի տուն Մեղրիում

ստացված ռիթմիկ շարքը ժողովրդական ճարտարապետության ավանդույթն է հիշեցնում¹³: Մեղրու Մհծ թաղում չափազանցած այսպիսի սենյակներից մեկն ունի փայտիկների ուղղանկյուն ցանցով պատած առաստաղի գեղեցիկ համագործածք: Դռան հանդիսակաց նեղ պատի մեջտեղում, երկու կամարակապ լուսամուտների միջև որմնաբանդակի է եղել, որը չի պահպանվել,

¹³ Այդ խորշերի մեջ ցուցադրվել են տան գեղեցիկ ամանեղենն ու իրերը, որոնք նույնական ճարդարանի դեր են կատարել: Այդպիսի սենյակներն ունեցել են քիվեր, երբեմն նաև դռիչ՝ վերին խորշերի տակ:

բայց Հետքերը մնացել են (նկ. 33): Փոքր թաղում շափագրված՝ մի այլ համակառուցի Հյուրասենյակն ունեցել է գեղեցիկ վանդակով՝ մի մեծ լուսամուտ, որի փայտն ցանցի միջի գունավոր ապակիները չեն պահպանվել (նկ. 27, 34):

Փայտի գեղեցիկ վանդակիները, անտարակուլս, տեղական վարսետների դորձն են, բայց նրանց այսուեղ հանդես գալը Պարսկաստանի ակնհայտ ազդեցությանը պետք է վերագրել¹⁴: Պարավոր մշակովթային կապերից բացի այս հարցում վճռական նշանակություն է ունեցել Հայ արհեստավորի դիրքը Պարսկաստանին ենթակա բնակավայրերում ու երկրներում: Պարսկաստանին լավ ժամով լինելով, Բաֆին այդ մասին Գետեցալն է զրում: «Ուկերությունից հետո արհեստաների մեջ երկրորդ տեղն է բանում Հյուսնությունը: Ով որ փոքրիշատե գաղափար ունի պարսիկների լուսամուտների մասին, կարող է հասկանալ, որ Հյուսնությունը Հայերի մեջ չափազանց ղարգացած է, որ այնքան ճիշտ մաթեմատիկական համաշխափությամբ գուրս են բերում իրենց ձեռագործը: Պարսից ճաշակը այս արհեստի մեջ նույնպես պահպանել է յուր հատկանի առանձնահատկությունը: նա չի սիրում, որ արեգակի ճառագայթները իրենց բնական գուներով ներս ցոլան յուր սենյակի մեջ, անպատճառ ցանկանում է նրանց գույն տարա... կուսամուտների փանջարանները կազմում է գույնզգույն ապակիների փոքրիկ բացվածքներով, որոնք հորինում են զանազան նկարներ, և լուսար այս նկարների միջից անցնում է որպես գույնզգույն ծաղիկի փոնչերի միջից և գեղեցիկ փանջարանիկական ճառագայթներ է արձակում սենյակի մեջ... Հայ Հյուսնը կամ ատաղծագործը պարագում է միայն նուրբ և բարակ գործվածքներով...»¹⁵: Ուշագրավ վկայություն է տալիս նաև Շանտըրը նշելով: «Հաջիմիները (պարսկաստանցիք—Ն. Պ.) վիտում են (Մերու—Ն. Պ.) փողոցներում: Նրանք զալիս են և այլ վայրեր աշխատելու որպես որմնադիրներ և կարագործներ: Նրանք հավասարապես խոսում են պարսկերներ և Հայերներ»¹⁶:

Հարեան ժողովուրդների հետ մշակովթային որոշ փոխազդեցությունն այս պայմաններում անխուսափելի էր: Սյունեցիք եւ ըստ հնարավորին Ճոխացրի են իրենց տունը հատկապես Հյուրասենյակներին հաղորդելով հանդիսավոր տեսք այնպես, որ մարդը տան միջավայրը գերադասելի համարեր դրսի տարածովթյուններից, մանավանդ խոզ պատերով եղերված փողոցներից¹⁷:

Հայ-ազգրեցանական ճարտարապետական կապերի, անցյալում Հայ վարսետների ներկայիս Աղքահանի տերիտորիայում կատարած աշխատանքների մասին վկայում են Կոնավաքենդի և Լենքորանի շրջանների խոյակները, որոնց վրա զարդարելու կան հար և նման Մեղրու և այլ հայրանակ վալրերի խոյակների զարդարելիքն՝ վարդյակներին, խաչի և Հավերժության նշաններին և այլն, Օրդուրագի դրսերի ու գարպասների մետաղյա մասերի՝ թակաղակների,

¹⁴ Հայկական ճարտարապետության մեջ փայտը գեղեցիկ վանդակներով բացվածքների տարածման լինելու մասին ակնարկում է Թ. Թորամանյանը («Նյութեր Հայկական ճարտարապետության պատմության», հա. 1-ին, էջ 144):

¹⁵ Բաֆֆի, Հայոց ազգաբնակչությունը Պարսկաստանում, «Երկեր», հա. 9-րդ, Երևան, 1958, էջ 148—142:

¹⁶ B. Chantre, նշված աշխա. էջ 140:

¹⁷ Ներքին տարածության ձևավորման այս արեւյլան ուկրունքի մասին տե՛ս Г. М. Алиզаде, Народное зодчество Азербайджана и его прогрессивные традиции, Баку, 1963, стр. 28.

բռնակների, գամերի և նույնիսկ ամբողջ դռների նմանությունը՝ Մեղրու համապատասխան կառուցամասերին նույնպես խոսում է կապերի մասին¹⁸ (նկ. 42): Հայ արհեստավորներն ու ճարտարապետները զգալի աշխատանք են կատարել Շուշու, Բաբկի և այլ խոշոր քնակավայրերի կառուցապատման համար: Այս տեսակիտից ուշագրավ երեւցիթ պետք է համարել գլխատան նման համարվածքների յուրօրինակ զարգացումը Աղբեշանի արեմտյան լեռնային շրջաններում, հատկապես Կիրովաբադի (Գանձակի) գմբեթավոր տներում:

Անկասկած է, որ Մեղրու ժողովրդական ճարտարապետությունն ամուր կապեր է ունեցել Հայկական ժողովրդական ճարտարապետության հետ ընդհանրապես: Նրա կառուցցներն իրենց անմիջական նմանակներն ունեն, օրինակ՝ Վանի շենքերում¹⁹:

* * *

Կառուցցների գեղարվեստա-ճարտարապետական առանձնահատկությունները վերլուծելիս առանձնապես աշքի են ընկնում Հետկյալ օրինաշափությունները: Կառուցման խնամքը, շափաղանց զուսպ հարդարանքը՝ ընդգծում են կառուցվածքի արտահայտչականությունը, նպաստում մանրամասների ամբողջի մեջ միանալար ընկալելուն: Յուրաքանչյուր կառուցց ունեցել է ուրույն ձևավորում նույնիսկ ընդհանուր համագրվածքի նույնության դեպքում: Ի տարբերություն քաղաքատիպ շենքերի, գյուղական հնատիպ կառուցցների հարդարումը կատարվել է առավելապես ներսի կողմից, հատկապես փայտյամասերի վրա: Երբեմն այն հասցվել է այնպիսի նրբության, որ վերացել են մոնումենտալ ճարտարապետության հետ ունեցած սահմանները և բացահայտվել փոխադարձ կապի ուշագրավ կողմեր: Քաղաքատիպ շենքերում ճարտարապետական ձևավորումը, ընդհակառակը՝ գերակշռում է ճակատներում, ուր նոր մեկնաբանմամբ հանդես են գալիս ավանդական ձևավորման միջոցները: Քաղաքներում գրանուրվում են նաև համալիրալին գեղագիտության ուշագրավ կողմեր, ուր ավանդույթների օգտագործմամբ հնարավոր է դառնում քաղաքաշինարարական: նոր երեսությները համապատասխանեցնել տեղի պայմաններին:

¹⁸ Հմեմա. Մ. Սայենօս, Ա. Բրետանուկով, Ա. Սալամզած, նշված աշխ., էջ 332, 335, 346:

¹⁹ Տե՛ս Ե. Լալայան, Վասպորական, Աղքագրություն (արտատպված «Աղքագրական հանդեսից», Թիֆլիս, 1911, էջ 8—15):

ԲՆԴՀԱ ԱՆՈՒԻՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սյունիքի տերիտորիայում մեր թվազրությունից հաղարամյակներ առաջ ծագել և բնապատմական յուրօրինակ պարմաններում զարգացել է մի հարուստ և ինքնատիպ ժողովրդական ճարտարապետություն:

2. Ուսումնասիրությունը ցուց է տալիս, որ այստեղ կատարվել են քաղաքաշնաբարական բավականաշափ ուշագրավ աշխատանքներ, որոնց արդյունքն են եղել տեղական և միջազգային նշանակություն ունեցող ճանապարհների ու նրանց վրա բաղաբատիպ բնակավայրերի, կամուրջների ու քարավանատների կառուցումը: Գյուղերը հարթ վայրերից բացի, մեծ մասամբ առաջացել են լեռնային բնության խուլ անկյուններում: Բնակավայրերի կառուցապատման մեջ պաշտպանության, առողջ և հարմարավետ կենցաղի վերաբերյալ նկատառումներն արտահայտվել են խիստ որոշակի:

3. Արտագրական հարաբերությունների անկման պատճառով քաղաքատիպ բնակավատմը միջնադարից այս կողմ չի եկել, մինչդեռ գյուղերի կառուցապատմական հնավանդ եղանակները հասել են մինչև սովորական իշխանության հաստատումը:

Բնակավայրերի կառուցապատումը տեղական ավանդությների վրա հիմնված զարգացման մի ընդհանուր գիծ է ունեցել, որը հարստացել է հատկապես 19-րդ դարում, ժողովրդի զանգվածային տեղաշարժերի հետ կապված նոր սկզբունքներով: Այդ ժամանակ առաջացել են Սևանա լճի ավազանի, Վայոց ձորի ու Զանգեզուրի որոշ շրջաններից կազմված ազգագրական նոր շրջանները: Ամբարագած բարձունքների շրուցը չափազանց խիտ կառուցապատվելու սկզբունքը գալիս է շատ հնուց, այն պահպանվել է միջնադարյան ավաններում: Գյուղերի կառուցապատումը ևս այս սկզբունքի վերապրուկային տարրերն է պարունակում:

Գյուղերի կառուցապատման երկու հնավանդ եղանակ է գոյություն ունեցել. ա) խիտ կառուցապատում կառուցների հոծ զանգվածի տեսքով համեմատաբար հարթ վայրերում (Սևանա լճի ավազան, Արփա գետի ավազանին պատկանող որոշ վայրեր), բ) սանդղաձև խիտ կառուցապատում լանջերի վրա (բոլոր մնացած վայրերը):

Հիմնականում պարսկահայ վերաբնակիչների հետ եղեգնաձոր և Զանգեցուր է ներթափանցել համեմատաբար աղատ կառուցապատման սկզբունքը, 19-րդ դարի ոսւս վերաբնակիչների ավանդն է կանոնավոր, տողաշար կառուցապատումը Սիսիանի մերձակայքում: Ժողովրդական ավանդությների վրա հենվող մասնափառական ստեղծագործության կիրառմամբ, կանոնավոր հատակագծերով կառուցապատվել են 19-րդ դարում ստեղծված Գորիս և Կամոքաղաքները: Սոցիալիստական տնտեսաձևը և կենցաղը հիմնովին վերա-

փոխական բնակավայրերը, կառուցապատման արդիական եղանակներով, ժողովրդի փորձի հիման վրա ստեղծվեցին և ստեղծում են նոր բնակավայրեր:

4. Հնուց և եթ ժողովրդը կազմակերպել է բնակավայրերի շրամատակարարությունների, շրանցքների և նույնիսկ շրանցուցքների միջոցով, որոնք դարձվոր փորձի և երեսմն նույնիսկ մասնագիտական կարողության արտահայտություններ են հանդիսանում:

5. Բացառությամբ խստաշունչ ցուրտ գոտիներում ընկած բնակավայրերի, ամենուրեք շրջապատի կանաչապատման համար ժողովրդը կարողացնէ է մեծ հմտությամբ օգտագործել բնության բոլոր հնարավոր պարագաները: Սոցիալ-պատմական հանգամանքների թերարանքով գյուղերի ներսում գերազանցապես բացակայել է ծառատունկը: Բացառություն են կազմել Արարտի ափամերձ, տար գոտին, 19-րդ դարի բաղադրները, ինչպես և Վայոց ձորի ու Զանգեզուրի վերաբնակեցված գյուղերը, ուր կանաչը հանդիս է եկել նաև բնակավայրերի ներսում:

6. Պատսպարանների և բնակելի համակառուցցների զարգացումը աեղական բնություն կրող մի ընդհանուր զարգացման շղթա է կազմում, որն սկսվում է պարզագույն միարժիշտ պատսպարաններով և զարգանում երկու ուղղությամբ՝ համակառուցի համագրվածքային կենարոնում ունենալով ա) հարթ ծածկով բնակելի սենյակը, բ) զինատունը: Զարգացման վերջին փուլն են կազմում քաղաքատիպ բնակելի տները: Այս բնակարանների հատակագիծի համապատասխան յուրօրինակ գծերը վառ կերպով արտահայտում են լեռնաբնակ ժողովրդի կեցության և նյութական մշակույթի շատ արժեքավոր կողմերը: Որոշակի կերպով զանազանվում են Սևանա լճի ավագանի, Վայոց ձորի ու Սիսիանի բնակավայրերի մեծամասնության, Հին Զանգեզուրի, ինչպես նաև Մեղրու բնակելի տները, որոնք արտացոլում են 19-րդ դարում առաջացած ազգագրական համապատասխան շրջանների առանձնահատկությունները:

7. Բնակարանային դարգացումը մեկուսացած պրոցես չի եղել: Մանավանդ ամենատարածված բնակարանային տիպարի՝ վլխատան զարգացումը որոշակի ընդհանրություններ է ունեցել ոչ միայն հայ ժողովրդի, այլև հարեւն և հեռավոր ժողովրդների համապատասխան բնակարանային տիպարի զարգացման հետ:

8. Արտադրական և տնտեսական բնույթի կառուցվածքների բազմապիտիլունը ցուց է տալիս, որ Սյունիքի ժողովրդի կենսանակությունը աշխատափրկության և հայրենաշեն զործունեության արզունքն է: Սեփական արտադրանքով նաև բավարարել է ոչ միայն իր կարիքները, այլև զգալի քանակությունությամբ զյուղանահասական և արհեստագործական արտադրանք է ուղարկել մերձակա շուկաները, տոնավաճառներն ու թերևն նաև ավելի հեռաները: Նշված կառուցվածքները թեև կորցրել են իրենց այժմեականությունը, այնուամենայնիվ, որոշակի արժեք են ներկայացնում պատմագրության, ազգագրության և արվեստագիտության համար:

9. Այս շրջանների ժողովրդական հարտարապետությունն ամբողջովին ստեղծվել է տեղական շինանյութերով և զրանց հատկություններին լիովին իրավել մարդկանց ձեռքերով: Այդ իսկ պատճառով շինությունների կառուցվածքային մանրամասները համապատասխանել են իրենց ժամանակաշանի տեխնիկային, նրանք ամուր, էժան, դիմացկուն և արտահայտիչ են եղել:

10. Նշված կառուցների գեղարվեստա-ճարտարապետական արժանիքները ևնթարկված են ժողովրդական ստեղծագործությանը բնորոշ օրինաչափություններին: Այստեղ բացահայտ կերպով զգացվում է կառուցվածքների և ճարտարանքի միապաղապությունից խուսափում: Ամենապարզունակ զարդերով անգամ շինությունները տարբերվում են իրարից, սակայն իրենց ընկալելի ամբողջականությամբ, զուսակ ճարդարանքով նրանք գեղարվեստական համույթ են պատճառում: Գյուղական պարզությունը հմայիշ ու բնաստեղծական է դառնում ժողովրդի գարավոր փորձն ու իմաստությունը խացնող ավանդությունների շնորհիվ: Քաղաքային ճարտարապետության մեջ ժողովրդի այս ավանդական անկեղծությունն ու ճշմարտությունը ինքնավստահությունն ու լավատեսությունը գրանուրվել են ավելի վառ և կատարյալ ձևով: Մասնագիտական ստեղծագործության համար, անտարակույս, միակ ճշմարիտ ուղին ավանդությունները գնահատելու այս կերպն է:

11. Ծինությունների կառուցվածքային, համադրվածքային և գեղարվեստական առանձնահատկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Սյունիքի մոնումենտալ ճարտարապետական դպրոցի ակունքները պետք է որոնել նաև տեղի ժողովրդական ճարտարապետության մեջ: Այսպիսի ճանապարհով կարելի է լավագույն ձեռվ փաստարկել մեր ազգային ճարտարապետության ու նրա դպրոցների տեղայնության գաղափարը:

12. Սյունիքի ժողովրդական ճարտարապետության ուսումնասիրությունը մեզ հանգեցնում է նաև այն եղբակացությանը, որ հայ ճարտարապետության պատմությունը շարադրելիս պետք է ճատուկ ուշադրություն դարձնել սովետահայ ճարտարապետությանը նախորդող և հատկապես քաղաքային ճարտարապետությանն առնչվող փուլին: Այն Հայաստանի քաղաքացիական, հատկապես ժողովրդական ճարտարապետության դարավոր ավանդությների խիստ արժեքավոր մի օջախն է, որի անտեսումը սովետահայ ճարտարապետության մեջ դասական տարբերի անհաջող գրանորումների պատճառ է հանդիսացել:

13. Ժողովրդական ճարտարապետության ավանդություններից շատերն այսօր էլ կարող են պիտանի զառնալ ստեղծագործական վերամշակման ևնթարկվելուց հետո: Այս տեսակետից ուշադրության է արժանի 19—20-րդ դարերի քաղաքների կառուցապատման փորձը: Շատ ավանդությներ այժմ էլ կիրառվում են տարերայնորեն, գրանք շատ ավելի արդյունավետ կարող են դառնալ մասնագիտական հսկողության պայմաններում:

14. Բնակավայրերի դիրքի ընտրության հարցում այժմ էլ կարելի է հաշվի առնել կենցաղային լավագույն պայմաններ ստեղծելու և հողատարածությունների ըստ տնտեսության բնույթի և բնակլիմայական առանձնահատկությունների բաշխելու սկզբանքները: Զքուղաց անցկացնելը շատ վայրէրում զգալի ծախսերի և տեխնիկական բարդությունների հետ է կապված, հետեւար բնական ակերին մերձակա տարածությունները չեն դադարեցվում բնակեցման ժառանակությամբ:

Այսեմշակության, արտերի, արտաների և կառուցապատման հողամասերը ավանդական կերպով բաշխելիս պետք է նկատի ունենալ բնակավայրերի ներքին կանաչ տարածությունները ևս չըով ապահովելու խնդիրը: Այսուամենայնիվ ներքին կանաչ տարածությունները պետք է սահմանափակալ լինեն, որպեսզի հաղորդակցության, էներգետիկ գծերի, ջրմուղի, կոյուղու

և այլ աշխատանքների բարդություններ շառաջանան: Այս հանգամանքը թելազրում է հատուկ ուշագրություն դարձնել բնակավայրի մերձակայքը բնական և արհեստական կանաչ տարածություններով ապահովելու ավանդություն:

Ներկայումս որոշ մարդկանց մոտ, նույնիսկ մամուկում երևան են գալիս ցածրաճարկ գյուղական շինարարությունից հրաժարվելու կարծիքներ: Առանձնատաներով կառուցապատճելը հետամնացություն համարելը միանգամայն սիսալ տեսակետ է. ժամանակակից ամենազարդացած երկրներում, նույնիսկ քաղաքների ծալքամասերում և մերձակայքում ստեղծվում են տառանձնատաներով կառուցապատճած առողջապահիկ շրջաններ: Համալիրացին գեղագիտության հարցերը քաղաքի և գյուղի համար նույնացնելը միայն ցավալի հետևանքների կարող է հանգեցնել: Բայց սիսալ կլինիք նաև ցածր հարկայնությամբ շենքերի խիստ ցրված կառուցապատումը նպատակահարմար դիմելու: Հասարակական, տնտեսական նշանակություն ունեցող որոշ շենքեր, ինչպես նաև գյուղական բնակության որոշ խավի համար նախատեսվող մի քանի բնակելի շենք անշոշատ պետք է ունենան մնից ավելի հարկեր: Տնամերձ հողամասերի փոքրությունը չպետք է խորթ թվա, որովհետև անհրաժեշտության դիպրում կարելի է գյուղամերձ տարածություններում ևս լրացուցի հողամասեր բաժանել: Հավանաբար անշատ հողամասեր ունենալու անհրաժեշտությունն ապագայում կվերանա, և գյուղը կվերածվի շկրտված տարածություններով այդիք-բնակավայրի:

Գյուղերի ներքին կանաչապատման համար այժմ էլ կարելի է օգտագործել լավ ստվերանկարներ առաջացնող տարբեր տեսակի ու մեծության ժառեր, ինչպես բարդին, ընկույզնին, թթենին, սոսին և այլն: Դրանցով կարելի է ստվերավորել լայն ճանապարհներն ու հրապարակները, ուր մարդկա սիրում են հավաքվել: Կարելի է գյուղամերձ կանաչը ծառայեցնել նաև գրոսանքի ու հանգստի նպատակների և այնտեղ ստեղծել համապատասխան բնույթի փոքր շինություններ: Վերջիններս կարելի է ծառայեցնել նաև տնտեսական նպատակների, ինչպես այդ անում էին մեղրեցիք:

Բարեխառն կլիմա ունեցող գյուղերի ու ավանների համար մեծապես օգտակար կարող են հանգիսանալ Մելլու շրջակայքում ընդհանրացած որթատունի աճեցման եղանակները տան շրջապատում, բակերում, այգիներում, ցանկապատերի և պատշգամբների՝ վրա ճաշակով և համարու դիրքով ու միթմով կառուցված հենարանալին համակարգերով: Լանջերի կառուցապատման աստիճանաձև եղանակը ժամանակակից տեխնիկայի ույացմաններում շատ ձեռնարու լուծուններ կարող է ստանալ բնական պայմանների հարմարությունները լավագույն ձևով օգտագործելու տեսակետից:

15. Պահան կարելոր խնդրո չէ բնակելի տների տիպարների ստեղծումը՝ համապատասխան տվյալ վայրի բնական, տնտեսական և կենցաղային պայմանների: Այս տեսակետից շատ ուսանելի կողմեր ունեն անցյալի քաղաքատիպ բնակելի տները, քանի որ դրանք իրենց ժամանակաշրջանում լավագույն ձեռով են համապատասխանել տեղական ույացմաններին և մոտ կանգնած մեր ժամանակների կենցաղային դրվագին:

Առաջին հերթին պատշգամբը պետք է դիտել տան ամենակարևոր բաղկացուցիչ տարրերից մեկը՝ որոշ դեպքերում իբրև սենյակները միացնող բաժանմունք և կամ այլ պայմաններում՝ իբրև նախասենյակ: Երկու

դեպքում էլ այն ցերեկային կացարանի դեր է կտաարում հատկապես ամռանը: Նայած կլիմայական պայմաններին՝ այն կարելի է ապակեպատել կամ ոչ: Նրա կողմնորոշման հարցում ևս կարելի է հենվել ժողովրդի փորձի վրա, հաշվի առնելով մերթ արեի չերմության անհրաժեշտությունը, մերթ նրա աղղեցությունը մեզմելու կամ շեղորացնելու կարիքը, մերթ օդի ուժեղ հոսանքների գոյությունը, մերթ զով ու թարմ օդ ընդունելու, գեղի լավագույն տեսարաններն ուղղելու հարցերը և այլն:

Նույնը կարելի է ասել շենքի ճակատային բացվածքների կողմնորոշման վերաբերյալ: Դրանք պետք է ճամապատասխանեցնեն միջավայրի պայմաններին, առավելություն տալով լուսավորման և արևահայացության, միկրոկլիմայի և օպաֆիխման, ինչպես նաև շահագործման հարցերին առանձին-առանձին կամ համատեղ, նայած հնարավորությանը: Ավաններում և այնպիսի բնակավայրերում, ուր փողոցների ձևավորումը առաջնակարգ նշանակություն է ստանում, շենքի կողմնորոշման հարցն ավելի բարդ է: Այստեղ պետք է նկատի ունենալ երկու՝ զեպի փողոց և գեղի բակ ուղղված ճակատների լավագույն կողմնորոշման հարցը: Կերպինս պետք է կապել ամբողջ փողոցի և նույնիսկ բնակավայրի կամ նրա առանձին մասերի կառուցապատման խնդիրների հետ, ինչպես այդ հաջող կերպով արխում էր նախատեսվեական բաղաքներում: Բնակելի շենքի տեղադրման լավ ավանդությ է նաև բակով կամ կանաչ տարածությամբ նրան փողոցից անշատելի, որը հնարավորություն է տալիս ավելի ազատ մոտեցում ունենալ ճակատների լուծման և կողմնորոշման հարցերում, իսկ բնակիչներն ազատվում են փողոցի աղմուկից ու փոշուց:

Սենյակների միաշար և երկշար դասավորություններով հատակագծերի կիրառումը պետք է բնեցնել առավելապես կլիմայի պայմաններից և բնակեցման խտությունից: Ցուրտ կլիմայով կամ խիտ բնակչություն ունեցող վայրերում կարելի է գերակշռություն տալ երկշարք դասավորությանը: Գյուղական պայմաններում սենյակների միաշար դասավորությունը չպետք է հնացած համարվածք համարել, քանի որ այն՝ պատշգամբի և բնության հետ անմիջականորեն հաղորդակցելու լավագույն պայմաններ է ստեղծում: Ուշագրության արժանի է Г-աձև և Π-աձև հատակագծային համարվածքների հարցարարվետությունը սենյակների միջն հաղորդակցումը՝ դյուրացնելու, հողամասը նպատակահարմար օգտագործելու, կառուցների շարքի երկարությունը կրամատելու, ինտեր ու հարմարավես բակեր ստեղծելու տեսակետներից:

Գյուղական առանձնատառների հատակագծերը լուծելիս կարող է օգտակար հանդիսանալ առաջին հարլի տնտեսական բաժանմունքների դասավորության և ընդհանուր մակերեսի այլքառործական, երկրագործական, անասնապահական և տնտեսական այլ գործոններով պայմանավորելու ավանդությը: Կիրառելի են նաև ցերեկային կացարանների դպավորեն ավելի միծ և լուսառատ անելու, պատի մեջ պահարաններ կառուցելու ավանդությները:

Շենքերի ձևավորման համար այժմ ևս կարելի է կիրավել բարձակավոր կամ սյունավոր պատշգամբներ, գոտիներ, քիվեր, պարականներ և պատի ալուստներ առանց շռայիման: Տնտեսապես ձեռնտու, հաշակավոր և ամուր լուծումներ են սրբատաշ քարի և սպազած հարթությունների: Կամ ձեղքված քարի շարվածքների զուգորդումներով ստեղծված ավանդական

Համագրվածքները: Այստեղ ավելի շեշտված նշանակություն են ստանում
ոխթմի, համամասնությունների և դույնների հետ կապված խնդիրները:
Պատշպամբների զարգարման ավանդույթը անշուշտ նույնությամբ չի
կարելի կրկնել, բայց այն հնարավոր է նկատի ունենալ ապագայի մեքենա-
յացված շինարարության համար, ձուվող կամ մամլվող նյութերով շատ
գեղեցիկ և միաժամանակ թեթև բազրիքներ կարելի է ստեղծել:

Ժողովրդական ճարտարապետության առաջադիմական ավանդույթների
կիրառման սահմանները բավականաշափ լայն են. պատշաճ ուշադրություն
դարձվելու և հիմնական շեշտը սկզբունքային հարցերի վրա դնելու միջոցով
հնարավոր է լավագույն արդյունքների հասնել:

Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ն

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Մ Ո Ւ Ն

5

Գ Լ Ո Ւ Խ Ա Պ Ա Զ Ի Ը

Բնակավայրերի կառուցապատումը	11
Ա. Համառոտ տեղեկություններ հնագույն բնակավայրերի և միջնադարյան բաղաբների ու ավանների մասին	11
Բ. Գյուղերի կառուցապատումը	15
Գ. Ուշ միջնադարի ավանների և նախասովհետական բաղաբների կառուցապատումը	27
Դ. Բնակավայրերի շրամատակարարումը	41
Ե. Բնակավայրերի կանաչապատումը	44

Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Կ Ռ Ո Ւ Դ

Փատովարաններ և բնակելի տների համակառուցներ	48
Ա. Հնագույն պատմապարաններ	48
Բ. Գլխատուն	55
Գ. Մեղրու շրջանի հարթածածկ գյուղական տունը	74
Դ. Քաղաքատիպ բնակելի տներ	79

Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Ր Ո Ւ Դ

Արտադրական, աճախսական և կենցաղյին բնույրի այլ կառուցվածքներ	95
---	----

Գ Լ Ո Ւ Խ Հ Ո Ր Ր Ո Ր Դ

Շինարարական տեխնիկա և կոնստրուկցիաներ	108
Ա. Շինարարական տեխնիկա	108
Բ. Կոնստրուկցիաներ	116

Գ Լ Ո Ւ Խ Բ Ի Ց Ե Ր Ո Ր Դ

Կառույցների գեղարվեստա-նարարավետական առանձնահատկությունները	143
Ա. Հնատիպ կառույցներ	144
Բ. Քաղաքատիպ շենքեր	154
Ծնդհանուր եղանակագործություններ	164



ՆՈՒՐԱՐ ՄԵՐՈՒՆԻ ՊԱՊՈՒԽՅԱՆ
ԽՈԲԱՐ ՇԵՐՈՎՈՎԻ ՊԱՊՈՒԽՅԱՆ

ԱՅԼՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ.
արվեստի ինստիտուտի
գիտական խորհրդի ոռշմամբ

Նկատված վրեպակներ

Էջ	Տար	Տպագրված է	Գետք է կարդալ
74	9 ն.	Մերզա Քօխվին Պայունունու:	Մերզա Քօխվին Պայունունու:
105	18 դ.	Գյուղին Մանա	Գյուղին Մանա
119	24 դ.		

Պատասխանառու խմբագիր	Ռ. Հ. ԱՂԱԲԱԲՅԱՆ
Հրատարակչական խմբագիր Ժ. Մ. Ա.ԴՈՆՑ	
Տեխնիկական խմբագիր Մ. Ա. ԿԱՓԱԱՆՅԱՆ	
Կազմի Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ	
Սրբագրիչ Մ. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ	

Վ.Յ. 08533, ԽՀԽ 1282, Հրատ. 325, Պատվեր 772, Տնյամակ 1000

Հանձնված է արտադրության 25/VII 1971 թ., ստորագրված՝ է տպագրության 8/IX 1972 թ., տպագր. 10,75 մամուլ+4 ներդիր, հրատ. 12,82 մամուլ, պայմ. 15,4 մամուլ, թուղթ № 1, 70×108^{1/16}: Գինը 1 լ. 75 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Էջմիածնի տպարան:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0069323

ЦЕНА

111

3908